Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԸՆՏԻՐ

## ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

---

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ

# ԳՐԻԳՈՐԻ

## ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆԻՑ

ՎԱՆԱԿԱՆԻ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՔ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1875

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
1-1003 ահ

# ԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԴՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ
ԱՊԱՇԱՒԱՆԱՑ ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ
ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ
ՋՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ
ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆՑ
ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՅՏՆՈՒԹԱՆՑ
ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ
ՑՈՒՑՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ
ՏԱՐԱԾՄՈՒՆՔ ԾԱԾԿԵՑԵԼՈՑ
ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱԳՈՒՑԵԼՈՑ
ՍՊԵՂԱՆԻՔ
ՋՕՐԱՒՈՐՔ ՎԻՐԱՑ ԱՆԲԺՇԿԱԿԱՆԱՑ
ԴԵՂՔ ԱԶԴՈՂԱԿԱՆՔ
ՑԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԲԱԶՄԱՄԱՍՆԵԱՑ
ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ
Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ
ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԻԹՔ
ԱՐՏԱՍՈՒԱՑ ՊԱՏՃԱՌՔ ԱՂՌԹԻՑ
Ի ԽՆԴՐՈՅ
ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ
ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ
ԱՍԱՑԵԱԼ

## ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

## ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

## ԴՐՈՒԹԻՒՆՔ

# ԳԼԽՈՑ ԱՂՕԹԻՑ

Աղօթք առաւօտու . ԲԱՆ Խ . ՁԴ . ՁԵ . ՂԲ .
Աղօթք գիշերի . ԺԲ . ԽԱ . ՂԱ . ՂԴ .
Աղօթք զղջման . Է . Ը . ԻԲ . ԻԶ . ԻԷ . ՀԱ .
Աղօթք խնդրելոյ զշնորհս և զթողութեան մեղաց .
Գ . ԺԵ . Ի . ԻԴ . Լ . ԼԲ . Խ . ԽԷ . ԽԹ .
Ծ . ԾԷ .
Մաղթանք հաւատոյ . Ժ . ԺԱ . ԺԴ . ԼԴ . ԽԴ . ՀԵ .
Մաղթանք յուսոյ և սիրոյ . Բ . ԺԲ . ԼԳ . ԼԷ .
ԽԲ . ԽԹ . ԿԵ . ՁԸ .
Աղօթք յառաջ քան զպատարագն ի ժամ զհաղորդելն .
Դ . Ե . ԻԴ . ԼԳ . ԽԷ . ԾԲ . ԾԴ .
Աղօթք զկնի պատարագին ի ժամ հաղորդելոյն .
Ա . Ե . ԻԴ . ԿԷ . ՂԵ .
Աղօթք 'ի սուրբ չարչարանս Յիսուսի . ԻԷ . ԻԸ .
ԼԶ . ԼԷ . ԽԴ . ԾԲ . ԾԸ . ԿԶ . ԿԷ .
ՀԶ . ՀԸ . Ղ .
Աղօթք առ սուրբ Աստուածածինն . ԻԶ . Զ .
Աղօթք Բարեխօսութեամբ սրբոցն . Լ . Ա . Հ . ՀԱ .
ՁԲ . ՁԶ . ՁԷ . ՂԱ .

Աղօթք առ Հրեշտակս և առ պահապան Հրեշտա-
կըն • ՁԱ •
Աղօթք վասն քաղցր մահուան • Բ • ԿԶ • ՀԳ • Ձ • ՁԵ •
Աղօթք վասն բժշկութեան • Գ • ԺԴ • ԺԷ • ԺԸ •
ԻԵ • ԼԱ • ԽԲ • ԽԳ • ԽԸ • ԿԳ • ԿԴ • ԿԶ •
Աղօթք վասն հոգեվարաց , յիշատակաւ մահու •
գերեզմանի • յարութեան և դատաստանի •
Ա • Բ • Է • Ի • ԻԳ • ԼԲ • ԼԷ • ԼԹ •
Խ • ԿԵ • ԿԶ • ԿԷ • ՀԳ • ՀԴ • ՀԹ •
Ձ • ՁԱ • ՁԸ • ՂԱ • ՂԵ •
Աղօթք վասն ննջեցելոց • ՁԶ •
Աղօթք վասն հարուածոց արտօրէից • Գ • ԿԳ •
ՁԸ • ՁԹ • ՂԲ •



Ընկալ զսակաւամասնեայ բանիցս յօժարուած քեզ ՚ի հաճութիւն.

Բան Ա.

# ԳՐԻԳՈՐԻ

## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

### ԲԱՆ Ա.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ՁԱՅՆ հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց, և մատուցեալ եդեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ընձիւղ ճենճերոյ տատանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Այլ հոտոտեսցիս հայեցիս, գթած, քան ՚ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծըխոյն բարգութեան։ Ընկալ զսակաւա-

մանկաց բանիցս յօդուած քեզ 'ի հա-
ճութիւն, և մի 'ի բարկութիւն. ելցէ
'ի խորոց սրտի զգայութեանց խորհըր-
դակիր սենեկիս՝ փողփողակի ժամանել
առ քեզ՝ կամաւորական նուէր բանական
զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճար-
տոյ՝ որ յինն է պարարտութիւն. Եւ 'ի
գնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ ա-
ղերսիւ, հզօր, մի՛ իբր զհամբարձումն
ձեռաց ամբարշտեալն Յակովբու՝ ըստ
բողոքելոյն Եսայեայ, եւ զանխրատու-
թիւնն Բաբելոնի՝ տաղտկալի քեզ երե-
ւեսցի, զոր առեալ եօթանասներորդի
երկրորդի սաղմոսին ասէ, այլ իբրև
զբուրեալ խունկն հաճոյական 'ի խո-
րանին Սեղոմա, զոր Դաւիթն կանգ-
նեալ Նորոգեաց տապանակին հանգըս-
տեան 'ի գերութենէն դարձելոյ, որ 'ի
վերստին գիւտ կոչուեալս հոգւոյ ա-
ռակի, ընդունելի կամաց քոց լիցի.

Բ. Բայց քանզի ձայնդ ահաւոր դա-
տաստանիդ հատուցման՝ ուժգին հըն-
չեցեալ 'ի ձայն վրէժխնդրութեան, կըր-
կինս ինձ երկնէ մարտից յարուցմունս,
այժմէն գուշակեալ շարժմունս յուզ-
մանց ներհակականաց որ յիմումս ան-



ձին ցուցանի, խռովութիւնս ամբո-
խից, հարեալք ընդ միմեանս զէն առ-
ասեր՝ խորհրդոցն հոյլք, չարացն ընդ
բարիսն. եւ գերեալ զիս 'ի մահ ըստ
հին գլխաւորածոյն՝ որ նախ քան զշնոր-
հին ժամանել առ իս. զոր ընտրեալն ա-
ռաքելականացն դասուց Պօղոս՝ առօրի-
նակեալ զՄովսէս, զՔրիստոսի փրկու-
թիւնն յաղթող ցուցանէ. Վասն զի
թէ մերձ է օր Տեառն, որպէս գիր ա-
սէ, 'ի հովիտն անձուկ ատարիզըն
Յովսափաթու և հեղեղատին Կեդրոնի,
փոքր հանդիսարանացն խռովանց ժա-
մանդրութեանց, որ կենցաղականաւ այսր
յաւիտենիս զհանդերձելոյն ինձ կեր-
պարանեն, ապա եւս յաւէտ մերձեցաւ
'ի վերայ իմ արքայութիւնն Աստուծոյ
մարմին եղելոյ, մեծապէս դատեալ զիս
առիթ վնասուց բազմաց տոկոսեաց՝
զանազան մասանց յանդիմանողաց ճըշ-
մարտապատմից, քան զձեռին նորին վե-
րացումն անդ ուրեմն երբեմն 'ի հար-
ուածոյն Եգովմայեցւոց և փղշտացւոց,
և այլոց բարբարոս ազգաց. Քանզի այն
ընտրութիւն ամենայն չափեցաւ, իսկ պա-
տուհաս խնամս պարտուց առանց ա-

ւարտման ունի զպահման ։ Ահ , գուբ
և որոգայթ անձողոպրելի , ըստ մար-
գարէին և առակողին , տայնտալու մե-
ծաւ առ դուրս ինձ հատեալ՝ զամօթն
մշտնջենաւոր առաջին դնադրել ։ Զոր
միայն քո է հրաշագործել պտուղս դե-
ղոց ՚ի հնարս կենաց ամենափրկան տա-
րակուսանաց հոգւոյ վտանգից . քաւիչ
ամենայնի , գոլեալ ՚ի փառս անճառս
անսահմանելի բարձրութեան , յաւի-
տեանս յաւիտենից ։

---

## ԲԱՆ Բ.

Վերստին յաւելուած ճչին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ազերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն
Աստուած յօդաւորական շղթամբք կար-
գաւ , որ գործովք միայն գրաւի և ոչ
ստեղծագործութեամբ կոչաւ , որ յԵ-
գիպտոս միշտ ունի զորոնց զդարձն ,
զինչ օրինակ առ այս քեզ ՚նմանագոյն
և յարմարական աստանօր եդից , անձս



իմ պարտաւոր , պատժականս կործանե-
ցելոյն Սոդոմայ . ըմբերանեալ դատա-
խազս Նինուէի . անարի բարբարոսս քան
զոփկլին հարաւային . վատթարագոյնս
քան զՔանան . յամառեցեալս քան զԱ-
մաղէկ . անբժշկականս քաղաք դրօշե-
լոց . նշխար մնացեալ ապստամբութեան
հինն կոյսելք . յիշատակարան պահեալ՝
ուխտազանցութեանն Յուդայ . կշտամ-
բեալս գեր քան զՏիւր , տարամերժեա-
լս քան զՏայդան . խորդաբարոյս քան
զԳալիլեա . աններելիս քան զանհաւանն
Կափառնաում . պարսաւեցեալս իբր ըզ-
Քորազին . բամբասեցեալս ընդ Բեթսա-
յիթայ . անպարկեշտ ծաղկեալ ալքս
Երբեմն . աղու աղանիս միշտ յիմա-
րութեան՝ այլ ոչ հանդարտութեան ,
՚ի կորեանց աւիծուց անձնական օձս
Եղեռնային . կերպս ձուոց քարբից լցեալ
ժանտութեամբ . պատկերս վերջին հա-
րուածոյն Երուսաղեմի , ըստ բանին տէ-
րունի և առաքելոյն ձայնի . տաղա-
ւարս մերժեալ՝ հասեալ ՚ի կործանու-
մըն . խորտակեալ գրաց վտահարան ,
և կլլին ծրգեալ չինուածս խօսուն .
թողեալ ժառանգութիւնս յարմարա-

կան · մռայլեալ տունս աստուածա-
կերտ , ըստ բանից նախագրելոյն՝ Մով-
սէսի , Դաւթայ և Երեմիայ · յորկս բա-
նական՝ ունող փորոտութեան · հարուա-
ծեալս խրատու քերմանն օրինիւ կող-
գուրեալ · ծծեալ կաւոյն՝ ողջախան
հեղութեամբն · անճարակ դառեալ յեր
հնայից · քակտեալ վերստին ձեռամբ
շինողին · արտաքս ընկեցեալ իրաւացի
հատուցմամբ հրամանաւ հզօրին ՚ի տե-
ղի անսուրբ · հերքեալ տարագրեալ
խորշաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց
խնայելոյ · ծածկեալ գրանս յերկրի չա-
րեաց , ըստ աւանդակորոյս ժխտողին՝
որ յԱւետարանին ցուցանի ·

Բ· Աւլգու , Աստուած , Աստուա-
ծըդ հօգւոյ և ամենայն մարմնոյ՝ ըստ
դաւանելոյ աստուածաշնորհին , երկայ-
նամիտ և բազումողորմ՝ ըստ որբոյն
Յովհաննու ձայնին , շնորհեա կատարել
՚ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝
զեկեղեցնաւորեալ մատեան մաղթանաց
այսր ողբերգութեան ։ Եւ ընդ լոյլ
սերմանել բանիս ՚ի նախընթաց շուս
ատրիճանաց օթեւանացս պատրաստու-
թեան , ՚ի կատարածն ժամանելոյ հա-



ւաքման հնձոյն , դարձայց բերկրեցեալ
լութեամբ քաւութեան՝ պտղոյն ե-
րանութեան որայիցն բարութեան ։ Մի՛
տայցես ինձ արգանդ որովի անորդի՝ իբր
Ճորայնլի , և ստինս աչաց ցամաքեալս ·
մլ ամենայնութ ։ Լուր բանական մաղ-
թողիս , հզօր և ողորմած , նախ քան
երկնի , և երկլին երկրի , և նա ցոլենոյ
և գինւոյ և ձիթոյ , և Նորա Ճորայնլի ։
Եւ երկնաւորացն ողերս որ առ քեզ՝
հոգւոյս աղգեայէ , քան թէ տարերաց
ապականացուաց ։ Դու տեղծիչ՝ և ես
կաւ · բաց տարակուսելոյս ՚ի մուստ մաղ-
թանաց այսր հեծութեան՝ կամս քաղց-
րութեան՝ զօրանալ առաջն · զի մի ՚ի
բանալ վերնոյնին երկնի՝ անընտիր զը-
տեալ կրթութեան վայելման լուսոյ ,
իբր զնիւթ մամոյ ապառեցայց ջնջեալ
՚ի միջոյ ։ Ոգի զրկելոյս , ըստ մաղթանաց
գոչման սաստին · և ուժ թալկացելոյս ,
և կեանք մաշելոյս՝ մնացս խղճիս · այլ
ոչ ստաժանմամբ կրից աշխատութեան
գքեղ խնդրելոյ , առ զաւանդ մաղթա-
նացս , և տուր զողորմութիւն քո շնոր-
հայդ · ընկալ զփորձս ՚ի տկարէս , և շը-
նորհեա զմեծդ առ ՚ի հզօրէդ · զօրացո

զբանս զղջման , առաքեալ 'ի մեզ հո-
գի 'ի բարձանց՝ աստուածաշունչ պատ-
գամօքս 'ի սմա եղելոց : Պարգևեա ,
բարերար , զառաւլն Նոյեան , լուսա-
ւորեալ առ ճշմարտութիւնն , մատու-
ցանելով մահու արժանոյս՝ ընդ պղըն-
ձոյս գոյի անարգս ձայնի՝ զոսկի քո շը-
նորհի , ընդ անզգդութեան երկաթոյս
սեւութեան գունոյս՝ պղինձ պճնելի ,
ցոյց.ք առաքինութեան , հրաշէկ Լի-
բանանու : Ընդէր կործրոտուցանես ըղ-
ոխրս եղկելոյս չերկնչել 'ի քէն . անճառ
և ահաւոր : Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր
վաստակոցս՝ իբր արմաջան սերմանող
անբեր երկրի : Մի՛ լիցի ինձ երկնել՝ և
ոչ ծնանել , ողբալ՝ և ոչ արտասուել ,
խորհել՝ և ոչ հառաչել , ամպել՝ և ոչ
անձրևել , ընթանալ՝ և ոչ հասանել ,
ինձ ձայնել և քեզ ոչ լսել , պաղատիլ՝
և անսես մնալ , կողկողել՝ և ոչ ողոր-
մել , աղաչել՝ և ոչ ինչ օգտել , զոհել՝
և ոչ ձենձերել , զքեզ տեսանել՝ և դա-
տարկ ելանել : Լուր ինձ նախ քան ըղ-
կարդալս իմ առ քեզ , միայնդ հզօր ,
մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ
թուով աւուրց մեղօք կեցելոյս չարա-



գործիս ինձ հատուցանէր : Կեցո զիս
զկթած , լուր ինձ ողորմած , մարդասի-
րեա Ներող , խնայեա երկայնամիտ ,
պաշտպանեա ապաւէն , բարերարեա հը-
զօր , ազատեա ամենակալ , կենագոր-
ծեա Նորոգող , վերականգնեա ահաւոր ,
լուսաւորեա Երկնային , բժշկեա հնարա-
ւոր , քաւեա անքննին , պարգևատրեա
առատ , շնորհազարդեա աննախանձ ,
հաշտեա անոխակալդ , ընկալ անխա-
կալ , սրբեա 'ի պարտեաց , օրհնեալ :
Եթէ յառեսցիս զաչս իմ , Նայեսցեալ 'ի
հայեցուածս երկուց վտանգից յաւուր
թշուառութեան , զքոյդ տեսից փըր-
կութիւն , յոյս և խնամակալ . եթէ նը-
կատեալ զխոսեցից 'ի վեր յամենագրա-
ւուղին սակայն . Հրեշտակ քո խաղա-
ղութեան քաղցրութեամբ ինձ պատա-
հեսցէ : Ցոյց ինձ Տէր , 'ի յելսն աւուր
շնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի
լուսով ամփոփեալ 'ի յերկնաւորացն եր-
ջանկաց՝ պարգևօք սիրոյ քո եկեալ
հասեալ : Ի յարդարոցն կատարելոց՝ կա-
րեաց ինձ կցորդ ժամանեցուսցես , զա-
նակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատու-
թեանն աւուր շնորհեսցես : Փառք լիցի

քեզ, բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացելոյ քո ոչխարի՝ գազան դժնդակ տայես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք՝ կործանելոյս պատուէր՝ փրկութիւն։

Գ. Արդեօք մնասցես զբարերարելդ, ամենակալութիւն. անտեսեսցես զգթասիրելդ, խնամող. այլայլեսցես զմարդասիրելդ, անխափան. նախանձեսցես զկենդանագործելդ, անխախտ. թողուցո՞ւս ողորմութիւնդ, երջանիկ որդուղ։ Ագուաղեսցես զքաղցրութեանդ բարեշնորհ ծածկեդ. անպատուեսցես զնիւթ պանծանաց քումդ ճոխութեան. յեղանակեսցես զփառս հերաց քումդ բարձրութեան. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պատուի։ Եթէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն. ո՞չ մատուցանիցես դեղ վիրաց. ո՞չ սպեղանիս խոցուածոյս. ո՞չ դարման տկարութեանս. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ անեղելոյ, որ միայնդ



ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և յարակայ մշտնջենաւորութեամբ, մնայեալ 'ի բնութէից, օրհնեալ և փառաւորեալ յերկինս յաւիտեանս, և անդր քան զայսման սահմանի իմանալեացն յաւիտենից, ամէն։

---

## ԲԱՆ Գ.

**Վերստին յաւելուած նոյին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։**

**Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։**

Ա. Տէր իմ, Տէր, տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից արարող հաստատապէս, միայն արարիչ զընաւս յոչէից, փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու, սաստկալի, հզօր, զօրաւոր, անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի, անճառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի, անօրինելի, անսկիզբն, անժամանակ, անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն,

անտուէր ծագումն · ամենափայլ ճառագայթ · խոստովանեալ լոյս · անտարակոյս վստահութիւն · անսպառամ հանգիստ · անյեղլի կնիք · անսահմանելի տեսիլ · մկայեալ անուն · ճաշակ քաղցրութեան · բաժակ բերկրութեան · հաստիչ հոգւոց հաց · օտար մթութեանց սէր · աներկբայ խոստումն · ծածկոյթ ցանկալի · զգեստ անկապուտ · օթոց բաղձալի · զարդ փառաց · ձեռընկալու մեծ · ապաւէն գովեալ · աննուաղելի շնորհ · անպակասելի գանձ · անապական անձրեւ · արփիայնցող ցօղ · ամենապտղաց դեղ · ձրի բժշկութիւն · երկնաձիր առողջութիւն · մեհագոյն խրախոյս · անպատիր կոչումն · համօրէն աւետիս · ամրակամեծար թագաւոր · աղքատասէր պաշտպան · մշտահարուստ տուիչ · անխափան գիմեցումն · աննահանջելի հրաման · անհամառօտ յոյս · երկար տեսողութիւն · անզղջական սէր · ամենաքաշխ աջ · արդարակշիռ ձեռն · անաչառ ատեան · մխիթարութեան ձայն · սփոփանաց լուր · բերկրութեան բերումն · անուն կենդանի · նախախնամող մատն · անդադ-



թափելի ելք · անխորդակ ընթացք · կենդանարար կամք · աննենգելի խրատ · աննախանձ պատիւ · լայնական հնարք · անձկական պայման · անգտանելի հետք · աներեւոյթ շաւիղ · անշախազիր պատկեր · ողքանութիւն անսահման · աննըմանական տիպ · անզուգական գութ · ողորմութիւն բազմազեղ · խոնարհութիւն տանելի · համբոյր փրկական ։ Եւ ես քան զայս ազդմունք փայլչականք՝ աստուածութեանդ նուիրելիք · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ · քաղցրեալ · աւետարանեալ · հռչակեալ · հնչեցեալ · պատմեալ · անխափելի կամօք աղաչեալ · և որ ինչ առ մեզ բերին առ 'ի քէն հասմունք քաղցրութեան · զոր հանդերձելոյն ճաւխ լուսաբանեն կերպարանութիւնք · որով զուարթ ցուցանիս 'ի փրկութիւնն իմ · երանութիւն · իբր 'ի պարարտութենէ խմբէք ախորժ անուշանոց լցեալ · զի ոչ խմոյս ինչ մնոտիապատուական փառասիրիս երգով · այլ զի պատճառ իմն աւելիս զինքըս աղէկս՝ մեծիդ փրկանաց ։

Բ · Եւ քանզի առ ամենայն հասակ

ընկեցեալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի · որ զամենեցուն ունի զկիրս պատահմանց նշաւակեալ յիւրում՝ պատկերի · իբր կցորդ մեծագիտական կարեաց համայնից · առ բոլոր գունդս բազմահոյլ աշխարհակոյտ քրիստոնէից · առ նախնի ժամն ժամանակաց · և առ երկրորդ կոչեցեալ չափու արքունն · առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութեամբն · առ պարտաւորս և արդարս · առ ինքնարգոյ բարձրայօնն և սխալեալ անձնադատ գտեալն · առ բարիս և եղեռնագործս . առ նկունս և առ արիս · առ ստրուկս և ներքսյանկեալս · առ սեպուհս և գերաշխարհիկս · միջակայնոց և պայազատաց · շինականաց և տոհմականաց · արուաց և իգաց · հրամայողաց և հնազանդելոց · պերճելոց և նուաստից · վեհից և փոքունց · պատուականաց եւ ռամկաց · ձիավարժից և սակականաց · քաղաքականաց եւ գեղջկաց · արքայից գոռոզութեանց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց . միայնակեցաց՝ վերնակա-



նացն խոստակցաց · մաքրակենաց տիրանուէր զգաստութեանց · քահանայական երջանկակրօն ընտրութեանց · այցելութեանց բարեզգեստից գիտողութեանց · ածուակալութեանց նախագահից սրբանուէր տեսողութեանց · որոց ոմանց աղերս աղաչանաց · և ոմանց խրատ բարեաց առ դէմս աղօթից այսու մատենիւ մատակարարեսցի · ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիմիս · եւ ամենեցուն սոյին խնդրուածս՝ գթութեան մեծիդ յանդիման լինել սալահանապազ ։

Գ. Եւ արայսես զայն ընթերցողայն 'ի սկզբս յատակս՝ բժշկութիւն հոգւոյ եւ մաքրութիւն յանցանաց · թողութիւն պարտեաց եւ արձակուրդ մեղաց կապանաց ։ Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժեցն · և պարգեւեալ սոցի 'ի ձեռն սորին աղաչաընձից ։ Շնորհեսցի · Տէր · և ինձ ընդ նոսին առ. 'ի քէն զղջումն կամաց · և նոցա խնդս ձայնիւ շունչս բարեհամբոյր · նուիրեսցի վասն իմ՝ այսու մատենիւ պաշտամանք նոցին · և բանիւ"

այսու հեծութիւնք նոյին ընդ իմ խղն-
կեացին ։ Ընդ համբոյր ճաշակման այսր
ողբերգութեան , շնորհ լուսոյ քոյ մը-
տեալ բնակեսցէ ։ Եթէ ելցեն ինձ բա-
րեպարիշտք ընծայիւ տալու , ընկալ
կենդանեօքն վասն քո , գթած , և զիս
ընդ նոսին . Եթէ ախտս ինչ որբանը-
ւէրս կաթուածոյ աչաց տեսլեամբ բերի-
ցի , եղիցի 'ի քեն խնամակալ՝ և յիս
անձրեւեալ ։ Եթէ դրեսցի և 'ի փր-
կութիւն կարդեսցի հաղորդելոցն յայս
կիրս կենաց , արասցես կամաւ քո
օրհնեալ եւ ինձ համարեալ ։ Եթէ
հեծութիւնս աստուածաճոյս 'ի ձե-
ռըն այսր բանի 'ի գաղտնեաց ուրուք
յառաջ եկեսցէ , օգտեցայց քեւ Բարձ-
րեալ՝ և ես ընդ նմին ։ Եթէ ձեռըն մա-
քուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ
համբարձցի , հասցէ միասցի ընդ իմս
ձայնի և աղաչողացն աղերս յառաջ մա-
տուցեալ ։ Եթէ պաղատանս բաղմադի-
միս ընդ իմս երկնեսցի , լիցի և ինձ
քեւ վասն սորին կլկլին նուիրեալ ։ Ե-
թէ յարգեսցի , այս անձին բանի պա-
տարագ՝ քեզ 'ի հաճութիւն , նախ այ-
լոցն ընդ իս քեւ ընծայեսցի ։ Եթէ 'ի



տխրանաց ինչ ձանձրութենէ որ նուա-
ղեսցի , կանգնեսցի վերստին հաստա-
րանաւ այս հառաչանաց՝ 'ի քեզ յու-
սացեալ ։ Եթէ համբարտակին վստահու-
թեան մեղօք յատակի , այսու արձա-
նօք պատկանեցելովք աջով քո պաշտ-
պանել՝ դարձեալ կառուսցի ։ Եթէ
յուսոյն ձգարան տուներըն յանցանաց
հատեալ կորեսցի , կցեսցի դարձեալ
միւսանգամ կամօք ամենակալըդ բար-
ւոք պատուաստեալ ։ Եթէ վտանգ մա-
հու անձնական ցաւոյ զոք պաշարես-
ցէ , գտցէ փրկութիւն տալու առ 'ի
յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կե-
ցուցիչ ։ Եթէ տագնապաւ որ տարա-
կուսի 'ի սիրտ խոցիցի , քաղցրութեամբ
քո տալու ապրեալ ողջասցի ։ Եթէ ան-
քուելի կորստեամբ պարտեաց յան-
դունդս որք խորոց իցէ ընկլուզեալ , ե-
կեսցէ 'ի լոյս կարթիւ այս հնարից՝ քեւ
պատապարեալ ։ Եթէ թմբրութեամբ
հաղըից խաւարին գործոց իցէ որ վը-
նասեալ , զօրասցի անդրէն վասն քո՝ մի-
այն տպաւէն՝ 'ի քեզ ապաստան ե-
ղեալ ։ Եթէ պաշտպանակին վստահու-
թեան զմնձն ուրուք լքցէ , ընկալցի



ՀԱՄԱՐ

այսու միջնորդիւ. ձեռն քո զնա՝ ամ-
փոփեալ 'ի նոյն հաստատութեան: Ե-
թէ ամայի 'ի զգուշութենէ պահողա-
ցին որ դեգերեսցի, սպասեսցէ ամփո-
տա 'ի նոյն գործ նորոգողին: Եթէ
տարերս. գիտասցին ջերման՝ զօդու-
թեամբ ինչ զոք խռովեսցէ. սթափեսս-
ցի 'ի նոյն յայս նշան խոստովանեալ
և երկրպագեալ խաչին խորհրդոյ: Ե-
թէ անօրէնութեան մրրիկ խորտակիչ
հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատուած
մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային
ծովու. հանդարտեսցի անդրէն զեկա-
այս թեւոյ 'ի քեզ պատկանեալ:

Դ. Եւ արասցես լինել դեղ կենաց
առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց
քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ
սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յա-
նուն քո, Բարձրեալ. Զախտեալս իմ դու
կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ
'ի սա. շունչ զօրութեան մեծիդ մի-
ասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծագործու-
թիւնս. զի դու տաս զօրութիւն վե-
հաւեալ սորին. և ընդունիս փառս
յամենեցունց. ամէն:

---

## ԲԱՆ Գ.

Վերստին յաւելուած ջերմին հեծութեան Նորին
հանդերձ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօ-
սել ընդ քեզ՝ որ 'ի ձեռին ունիս ըզ-
շունչ կենդանութեան հոգւոյս բազ-
մամեղի, յիրաւի ստրուկ զաղաչեալ
տագնապաւ մեծաւ յաւէտ երկնչիմ,
վասն զի ահաւոր և անտանելի և 'ի
սահմանէ բանէ փախչելի յիշատակ ան-
ճողոպրելի անաչառ քո ատենի՝ 'ի
կշռամբութեան իմ՝ պարտաւորի՝ արարիչ
երկնի եւ երկրի: Նա զի և չէք իսկ
բժշկութիւն բազմախառնից ստամբու-
թեան վիրաց անդարմանելի, խայթ-
մանց խածուածոց մահաբերին բերանոյ
ժանեաց՝ որսացողին զանձն իմ 'ի կո-
րուստ: Մանաւանդ զի ոչ գոյ պա-
տասխանի, ըստ առակողին. յաւուր
պատերազմի. և ոչ բանիւ խրատանե-
լի, և ոչ վերարկու ապաստանելի,
և ոչ զինմունք կեղծաւորելի, ոչ առ-

երեսս բանիւք մատչելն, և ոչ կերպա-
րանօք երբէք խաբելն, ոչ յօժարածովք
բանից տալն, ոչ արագամտի ոտից
փախչելն, ոչ թիկանց դարձուցանելն,
ոչ գլխոց ընդ երկիր մածուցանելն, ոչ
բերանով ընդ հող հատանելն, ոչ ՚ի խա-
ւարս երկրի ղօղելն։ Քանզի մերկ են
քեզ ծածկեալքն, և հրապարակեալ
են աներեւոյթքն. արդարութիւն իմ
նուաղեալ եւ խաղաղ ունայնացեալ.
մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առա-
ւելեալ։ չարիքն իմ մնացական և եւ
կորստական. խրատանցն կշիռ պակա-
սեալ. և անխրատութիւնն խիստ զօ-
րացեալ. բարեացն բերք հալեալ. եւ
սխալմունքն արձանացեալ. ուսանդն
կորուսեալ, եւ դատակնիքն այժմէն
գտեալ. մահուն մուրհակ գծեալ, և
աւետեացն կտակ եղծեալ։ Բարերարն
տխրեցեալ, և բանսարկուն ուրախա-
ցեալ. Հրեշտակաց գունդն թաղծեալ,
եւ սատանայ խնծղիւք պարեալ. վեր-
նական զօրքն ողբացեալ, եւ ստորնա-
յինքն բերկրեցեալ. ապականողին մթերք
լցեալ, և պահողին գանձն կողոպտեալ,
օտարին կողմն կանգնեալ, և առաջողին



պարգեւ մատնեալ. հատողին ձիր մո-
ռացեալ, և կորուսչին հաղւք պահեալ.
երախտիք փրկչին հենգնեալ, և բժիշկ
զուարթացեալ, կենացն աղբիւր փա-
կեալ, և դատողին ժանդ ժանտախս ժա-
մանեալ։

Բ. Եւ արդ, ո՞չ ապաքէն ըղձալի էր,
ըստ գրոյն կանխաւթեան նախաձայնե-
լոյ, ոչ ստեղծանելն երբէք յարգանդի
և ոչ նկարիլն ՚ի յորովայնի, ոչ ՚ի ծը-
նունդ յառաջագայիլ և ոչ ՚ի լոյս կե-
նաց հասանիլ, ոչ ՚ի թիւս մարդկան
գրիլ և ոչ ՚ի հասակ աճման ամբառ-
նալ, ոչ ՚ի պատկեր գեղոյ զարդարիլ
և ոչ բանիւ հանդերձաւորիլ, քան ընդ
այսպիսեաց սատակագունից և սարսա-
փելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ
վիմաց կարծրութիւն բերէ, թող թէ
մարմնոյ լուծականութիւն։

Գ. Եւ արդ, տուր բարեգութ, ա-
ղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութիւն,
որ զայսմիկ դու ինքնին քեզէն քոյովդ
բանիւ մեզ սահմանեցեր ասելով. Թէ
տուք զայդ նուէր յանուն փրկութեան
ձերոյ Աստուծոյ, և ասըր եղերուք.
զի զողորմութիւն կամիմ, և ոչ զպա-

տորաց ։ Ահա բարձրացիր վերստին խնկեալ, այր յիշատակաւ, որ ունիս զամենայն, և 'ի քէն է ամենայն, եւ քեզ փառք յամենեցունց․ ամէն ։

---

## ԲԱՆ Ե․

Վերստին յաւելուած յիշեն հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա․ Եւ արդ՝ ես երկրածինս մարդ, կենցաղականաւ անկայուն գոյիւ ղեկավարեալ, և յիմարութեամբ պատրողականաւ զինեալս յիմարեալ, որ ամենայնիւ սուտ, և ոչ միով իւիք ճշմարտեմ ։ Քանզի որովք գինաք վերագրեցելովք նշանակօք աղօթակցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում փառատատանիդ, ո՛վ կրաւագատ ահաւոր, անճառ, անպատում, հզօր, Աստուած բոլորից ։ Քանզի գաւեալ ատաղածին 'ի սոյն զաղերսախառնութիւն մեղուցեալ անձինս առ քում երախտիս ցուցից զկրաւունս քո միշտ զօրացեալ



և զանխրատութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ ։ Որ արարեր զիս 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն մեծիդ արքաւորութեան, զսկարս օժանդակելով ։

Բ․ Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք անձեցուցեր, համեմատեալ հաստատեցեր, 'ի չնչականացն որոշեցեր, հռչակեալ իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ պճնեցեր, ծնար հայրաբար, սնուցեր դայեկաբար, տածեցեր ստացողաբար, անկեցեր զամբարիշտս 'ի քում գաւթի, չքնաղ կենաց ուղեցեր, առագաստին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հայիւք երկնայնով չամբեցեր, աստուածային արձանիդ օրհնեցեր, անհոգին և անհասանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրէ զէն 'ի քեզ համարձակեցեր, լուսով փառաց վերածածկեցեր, զհոգանութ մտաւոնս անմաքուր ձեռաւս 'ի քեզ մատուցեր, զմխիթրս անարգ մահացու՝ իբր զերշով լուսոյ յարդեցեր, զձայն քո հզօր ահաւոր օրհնեալ, մարդասիրապէս եւ

անարժանիս իմոյ անձին կնքեցեր ։ Ոչ կիզեր զբերանս լցեալ նանրութեամբ` 'ի ժառանգակցն կարդալ զքեզ, ոչ կշտամբեցեր զյանդգնեալս 'ի քո կցորդութիւն, ոչ ստուերացուցեր զտեսիլ աչաց 'ի քում ակնարկութիւն, ոչ արգելանաւ կապանաց ընդ մահապարտացն տարապրեցեր, ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս` որ անմաքրապէս առ քեզ համբառնայր, ոչ մանրեցեր զոտս իմոց մտանելոյ 'ի շօշափելն ըղճանդ կենաց, ոչ պատեցին զինեւ մառախուղք 'ի ձօնելն զքեզ` ահաւոր, ոչ փչեցեր զպարս սաստամանցս յըմբոշխնելն զքեզ` անսահմանելի, ոչ զնացեր բարկութեամբ խստորնակ` խոտորնակի ընդ քեզ հետեւողիս, իբր ընդ վրիպեալ ուսմն Իսրայելի ։ ոչ խայտառակեցեր 'ի հարսնարանին զանարժանս քում պարկեշտութեան, ոչ 'ի գձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռաց և ոտից յարտաքին խաւարն հալածեցեր ։

Գ. Զայս ամենայն մատուցես բարեաց և զներելոյդ երկայնմտութիւն ընկա-



լեալ 'ի քէն, բարերար, օրհնեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, փոխարեցի չնաակարս պարտեաց` անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս, մարմնականաց և անձնականաց` ամենակիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկբաքարշութեանց ։ Զայսոսիկ քեզ, Աստուած իմ և Տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխարերեցի ։ զայս քեզ ինձէն հատուցի չարիս, ըստ Մովսիսեան յանդիմանութեանն առակի, մատուցեալ զանմտութիւն և սիրտս յիմարութեան ։ Զայոց բարեաց երախտեաց կաճառու` ընդունայնութեան գնացիք` չարաչար, ունայնացուցի ։ զայս լուսաւորութիւն շնորհաց անճառից 'ի ճարձրեցուց խնամոց բարգեցեալ` մրրկաւն խելագարութեան ցնդեցի ։ Եւ թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելութեան ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ զԻսրայէլէ ամբաստանութեան ։ և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այոլմ` սահմանաւ ուխտիւ փակեցայ, այլ զարձեալ զնոյն նիւթեցի չարիս, ան-

գլտին յանձն առաջին մատեայ , փշոյն
մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յո-
րամանն արգասաւորութիւն : Առ ի
ելանեն առանց աստուածային սուրբ
մարգարէիցն . քանզի մնացեր յինէն խա-
ղաղս , և ես ընդ այնորիկ փուշ շառա-
ւիղեցի . դարձայ յանախորժ դառնու-
թիւն պտղոյ՝ այգիս օտարացեալ .
բուռն հարի զանհաստատ հողմս , ո-
րովք միշտ տատանեալ այր անդր տա-
րաբերիմ . ըստ ձայնի երանելւոյն Յոբ-
բայ ընդ Ճանապարհ իմն անդարձ գը-
նացի . 'ի վերայ աւազոյ շինուած յի-
մարութեան կառուցի : Լայնատարր
հետովք խոտելոյ կենացն անձկալեաց
հասանել . փակեցի ինձէն զելսն ուղե-
ւորութիւն . բացի կամաւ զկորստեան
խորխորատն : Խցի զպատուհան լսելեաց
իմոց առ բանին կենաց ընդունելու-
թիւն . կափուցի զաչաց հոգւոյս հայե-
ցուած առ 'ի զկենացն գեղ նկատել :
Ոչ ընդոստեայ 'ի թմբրութենէս լքմա-
նէ մտացս 'ի պատրաստ փոյթ աճաւ-
րութեան . ոչ զգաստացայ 'ի բողք
զուժի հրաւիրական աւուրն ընթրու-
թեան . ոչ երբէք զարթեայ 'ի նիրհ-



ման քնոյն մահացուի . որ 'ի կորուս-
տըն կարապետէ , Ոչ ետու հանգիստ
քոյ հոգւոյդ 'ի մարմնեղէնս տաղաւա-
րի . ոչ ընդ բնութիւն շնչոյս խառնե-
ցի զմասն շնորհաց քումդ պարգեւի .
խմելի ձեռօք կոչեցի կորուստ ըստ ա-
ռակողին , զհոգիս կենդանի մահացու-
ցանել :

Դ . Եւ զի՞նչ է ինձ սակաւս և նը-
ւաղագոյնս յօդել սահմանս կսկծելիս
շախարեբականս , մինչ անցեալ է ըստ
քանակութիւն և վերացեալ ըստ բժըշ-
կութիւն : Արդ՝ քո է ընձեռել կեանս
հոգւոյ մեռելոյս և անախտակալութեամբ
մաշել առ այժմութիւն զատապար-
տելոյս , որդի Աստուծոյ կենդանւոյ ,
քեզ փառք յաւիտեանս . ամէն :

---

## ԲԱՆ Զ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին
հոլովի առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Իսկ արդ զի՞նչ բարուոք գոյ առ
այս , և կամ ո՞ր օգուտ ինձ առ այն՝

զահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վէրիս խարանաւ բանիս արտաքոյ հերքել, և կամ զծանրութիւն սըրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հընարաւորութեամբ, մատնամուխ զըզուանօք փոխել:

Բ. Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս ընդ որբոցն դաս, արոց լի են բերանք նոցա ծաղու, և շրթունք խրախից ցնծութեամբ ըստ առակողին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանելն իմ' յիշատակել համայն աստանօր. Թէպէտ ախմուլ՝ թերութեան բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք լցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն. Տօնելի եղև Մանասէ առ խնոյ պարտուցս առաւելութիւն. պատուեցաւ և փարինեցին առ դժնէկս անքարշաւթիւն, գովեցաւ անառակ որդին առ անզարձիս ուխտադանցութիւն. յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն Ամառեայ առ անձնորհութիւն ապախտաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ



դատախազն է անհաւատից. պատուեցաւ և կինն պոռնիկ՝ ոկզբնամայրն ապաշաւողաց. Ոչ պակաս քան զփարաւոն զատեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օրինակի խուլութեան մրկաց ծամու ծփեցայ. ոչ այնքան տարակցի եւ պատկառեցի 'ի սատակութենէ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերացն. Ընդ թիւս չափուց կշռութեան առ իմն գործոց՝ և ոչ աւաղոյն կոյտ առհմանեցաւ, պակասեաց անբաւիցն շիղջք առ համբարս իմոցս անօրէնութեանց.

Գ. Ջի թէպէտ և յոյժ բազում են մանուկքն 'ի յախուռն ջրոյն համահաւաքեալք, այլ ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց աճելութենէ. իսկ մեղանք իմոցս յանցանաց անթիւք, զորս անհնար է առնուլ 'ի միտ. Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր, ոմն և բիծք իւր, ոմն և արկածք իւր, ոմն և փուշք իւր, ոմն և արմատք իւր. ոմն և հաստուածք իւր, ոմն և պտուղք իւր, ոմն և նշխարք իւր, ոմն և ճիւղք իւր, ոմն և ոստք իւր, ոմն և որմեկունք իւր, ոմն և ճիրանք իւր, ոմն և

մատունք իւր , ոմն և խլրտմունք իւր , ոմն և զօրութիւնք իւր , ոմն և արդ-մունք իւր , ոմն եւ 'նշմարանք իւր . ոմն եւ ախտք իւր , ոմն եւ մտա-ցածք իւր , ոմն և ասուերք իւր , ոմն և մթութիւնք իւր . ոմն և յար-ձակմունք իւր , ոմն և հնարք իւր , ոմն և պատիւք իւր , ոմն և դիտմունք իւր , ոմն և դիմեցմունք իւր , ոմն և չարք իւր , ոմն և խորք իւր , ոմն և գար-շութիւնք իւր , ոմն եւ կայծակունք իւր , ոմն և կիրք իւր , ոմն և մթերք իւր . ոմն և գանձք իւր , ոմն և ցըն-ցուղք իւր , ոմն և աղբերք իւր , ոմն և գիտք իւր , ոմն և շանթք իւր , ոմն և հրդեհմունք իւր , ոմն և պատկա-ռանք իւր . ոմն և վէհք իւր , ոմն և անդունդք իւր , ոմն եւ բորբոքմունք իւր , ոմն և աղջութիւնք իւր , ոմն և ամպրոպք իւր , ոմն և կայլակք իւր , ոմն և հոսմունք իւր , ոմն և հեղեղք իւր , ոմն և առատանանք իւր , ոմն և դրունք իւր , ոմն եւ շաւիղք իւր : Հնոյն և տապ իւր , հրատն և գոլոր-շիք իւր , հալոյն ճարպին և ճենճեր-մունք իւր , օշինդրն և դառնութիւն



իւր , կործանիչն և հնազանդեալք իւր . բռնաւորն և յելուզակք իւր , գուսանն և ոտնատաշէնք իւր , ուսողականեան և գուսմարտակք իւր , գաղտնն և կը-րիւնք իւր , խածանողն և ծակոտուածք իւր , ապականագործն և նմանիք իւր :

Դ . Արդ՝ այսոքիկ պէսք են գլխա-ւորութեանց ապականողաց ոգւոց հա-մայնից , դասեալք ընդ ինքեամբք նը-ւաճութիւնք մտաց իւրաքանչիւրոք 'ի այսանէ բնիւթք բնիւթոց և հազարք հազարաց . իսկ զհամայնիցս թիւ նա միայն զօրէ իմանալ , որ զատ 'ի մէնջ չէութիւնն զբեալ կեր զէութիւն գոր-ծոց անեանէ : Եւ արդ՝ եթէ ոք զանձն ոչ խարեայէ , և առ երեսս ոչ կերպա-րանեալի , և կեղծաւորաբար ոչ անհա-ւատայէ . և մարդ զինքն ծանիցէ , և հաստատակաց բնութեանն վարեալի , և երկրածին զանձն գիտասցէ , և 'ի չա-փու իւրում կանոնին կացցէ , իմասցի ծանիցէ զնախաթիւ մտաւնս արկա-ծիցդ վերագրելոց , թէ ոչ ընդունայն ինչ գրեցի և կամ զունաւ խնկութիւն սահմանեցի՝ որ 'ի մերս բնութեան ըզ-տաւոկի ազգի ազգի վերակառնա-

թիւն . այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ մի երեւեցուցի , զի նոքօք և զայլսն խնամատարեսջիք , թէպէտ և ոչ բաւանդակապէս :

---

## ԲԱՆ Է.

Վերստին յաւելուած իրին հեշտութեան նորին հոգւոյն առ նոյն աւերս մոլորանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ .

Ա. Եւ զի մի զփրկութեանն վստահութիւն 'ի սպառ կորեցից , և ապաղէն եղեալ մտանիցայց այքաննեաց աներեւութից ընդդիմամարտից , որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բռնաւորք , զոր վերագրեալքդ սահմանեցին՝ զրբանութիւն պատկերին ձեւոյ եղեալ անհարկուս , ցուցից առ ամին բազմաբոյլ բռնութեան մարտկոցդ՝ զօրեղ ախոյեանս աստուածակամս՝ ամենայաղթողս և անպարտելիս , թէ և կոխեսցես կիրս եւ դժուարակութ պտուղս ծառոց անհասանելեաց , և անկոխ ճանապարհաց



երկ.ք և տաժանմունք : Քանզի զայն ամենայն գունդս չարութեան բանսարկուին զօրաց՝ տակաւ մի արտօսր կաթուածոյ աչաց , իբր զձձիս զեռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլրամանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ կամ դոյզն դեղ ինչ սատակչական , յամօթեցուցանէ . և դոյզն մի հառաչումն սրտի հեծութեան ելեալ 'ի հոգւոյ , իբր զշնչումն հարաւային ջերմութեան խառնեալ յարեւու , զսառնամանեաց սաստկութիւն հալէ . քանզի ըստ միում նմանութեան հեշտածինք են , և ըստ միասնում դիմադրութեան դիւրամեռք :

Բ. Այլ ես ոչ երբէք կասեցից դատել զդատապարտեալս՝ բանից կսկծմամբ , պարտել զպարտաւորեալս՝ իբր զխաստակոր անփրկանաւոր անհամոզելի . վասն զի զոմանս սատակեալ 'ի յիմոց նեղչացն , ոմանց զօրութիւն տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ : Տունկս դառնութեան , որ զգարշութիւն անուանակ վարուց ծաղկեցի . բարունակս ապականաքեր և մահողկուզեան , որ զկորստեան գինին երկնեցի :

Քանանու զաւակս՝ և ոչ Յուդայի, ըստ ասից մեծին Դանիելի. որդիս գեհենին, և ոչ արքայութեան. ժառանգս դժոխոց, եւ ոչ փառացն փափաքելեաց. նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախտս առ երախտաւորդ, ապաշնորհս առ բազմապարգեւդ, միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ, դառնացուցիչս քաղցրութեան Բարերարիդ, ծառայս չար և վատ, ըստ տէրունեան յանդիմանութեանն, իմաստունս չարիս գործել ըստ Եսայեայ նախատացութեանն, ժիրս առ ժանդագործութիւնս ղաղրութեան. Փոյթս առ 'ի բարկացուցանել զՏէրն, մշտաշարժս առ գիւտս սատանայականս, հնապաղորդեան վիշտս ստացողին, Թոյլս առ բարեացն Թուիչս, ծոյլս առ երանութիւնն ընտրութեան, դանդաղս առ դիմունս խոստացելոյն, անպիտս առ կարիս պիտանեացն և օգտակարացըն, պաշտօնեայս տիրադրուժ երախտամուաց։

Գ. Վայ անձինս մեղաւորի, զի զԱրարիչն իմ բարկացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեանն ձիր



մոռացայ. վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց՝ որ ոչ գոյ հատուցանել. վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ դառնալ առ հանգստարանն. վայ վնասակարիս տէրունեան պարտուցն, որ չէք հնար յանդիման լինել հզօրին. վայ եղեգնախուխ կիզանողականս նիւթոյ, որ տաչորելոց եմ 'ի գեհենին. վայ ինձ առ այս յիշատակ, զի նեղք բարկութեանն Աստուծոյ յորեցելովք են գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի զծածկելոցն յայտնութեան հանդէս. վայ ամբարշտիս, զի միշտ անդադար սատայնս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից. կատաղացն Թունաւորաց զխարդ համբերեցից. վայ ինձ առ արքունին մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց. վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս. Երբ դատաւորին յանդիմանեցայց. վայ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, զի անպածարծելի է աղօտանալն. վայ ինձ առ ձեռ տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փա_

կեացի • վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութիւն դողացուցչաց եւ սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ ոչ գիտեմ զքեզ։

---

## ԲԱՆ Ը •

Վերոյին յաւելուած յիշին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա • Եւ արդ զի՞նչ գործեցից անձին իմ կորուսեալ, կամ ու՞ր թագիցես, կամ զիա՞րդ ապրեցից, կամ ո՞րպէս ելցես 'ի մեղաց բանդէ։ Քանզի բազում են պարտիքդ եւ անթիւ հատուցմունքն • սաստիկ կշտամբանքն եւ անվախճան նախատինքն • անողորմ են Հրեշտակքն եւ անկաշառ դատաւորն • Հզօր ատեանն եւ անաչառ բեմն • քըստմնելի տառապանքն եւ անողորմ հատուցմունքն • ահարկու հրամանն եւ մերկապարանոց յանդիմանութիւնքն • հրեղէն են գետքն եւ անանցանելի վըտակքն • թանձրամած խաւարն եւ արտաքոյ այցելութեան մառախուղն • ապականութեան է գուբն եւ մշտնջենաւոր է տագնապն • ամենագրաւ տարտարոսն եւ անզերծ տանջանքն։ Եւ արդ՝ արդարեւ քեզ են գանձեալ դաւինքս այսքիկ գժնդակք եւ տաժանելի օթեւանք անըմբերելեաց պատուհասից, ով անարժան անձն իմ մեղաւոր, չարագործ, պոռնիկ, բազմաբիծ • եւ սահման անդաստանի բնաւին անմաքրութեան։ Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց եւ զառածեալդ 'ի մաքրութեանց, տարապրեալդ յարդարութեանց եւ 'ի կարգաց պարկեշտութեանց, ունայնդ 'ի լրութեանց հոգեպարգեւ հարստութեանց • նախանձարկու բարերարին եւ ամենակալ Թագաւորին։

Բ • Եւ քանզի կառուցեր քեզ անել արգելան եւ անխախտելի որոգայթ, խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր եւ զանօրինակդ հարուած, վըկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկութիւն, որ չարդ 'ի բարեաց, ով դառնութիւնդ

'ի քաղցրութեանց , ով խաւարդ 'ի լու-
սաւորմէ , ով կապտեալդ 'ի պճնելոյ,
ով դալկեալդ 'ի գովելոյ , ով անբա-
րիշտդ 'ի բարեպաշտից , ով չնչականդ
'ի բանականաց , ով անմիտդ 'ի մտա-
ւորաց , ով անհամեմատդ յիմաստնոց ,
ով անմաքուրդ յընտրելոց , ով մահա-
ցուդ 'ի կենդանեաց , ով խոհերակա-
նըդ 'ի սրբոց , ով արբշիռդ 'ի պար-
կեշտից , ով կեղծաւորդ յարդարոց, ով
անպիտանդ 'ի պիտանեաց, ով անարգդ
'ի փառաւորաց , ով նուաղդ յառաքե-
լութեանց , ով գերիդ 'ի գերագունից ,
ով նուաստագոյնդ 'ի վեհից , ով աղ-
քատդ յընչեղաց , ով անարժանդ 'ի
փրկութեանց , ով անանկդ 'ի բարձ-
րութեանց և 'ի հոգևոր հարստու-
թեանց , և հատուածեալդ յօրհնելոց ։

---

## ԲԱՆ Թ.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հոլովոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր լուծ



քեզ բարձրասցես շարադրեցից 'ի կատակ
մաղթանաց մատենի այսր ողբերգութե՛,
ով անձն իմ թշուառ ամենապատկառ
և առ պատասխանիս բանից անբարբառ ,
անպիտան Աստուծոյ և սրբոյն մար-
նակցութեան ։ Զի եթէ զլիճ մի ծո-
վուց 'ի յորակութիւն դեղոյ յեղյեղե-
ցից , և զերաշտս ապարխօք բազմօք
համեմնեալ 'ի տարածումն լայնութեան
քարտենի չափեցից , և զպուրակս յո-
քունց անտառաց շամբից եղեգանց 'ի
հատուածս գրչութեան գրչաց կազմե-
ցից , և ոչ զթիւ մի 'ի բարդելոյն ա-
նօրէնութեանց զօրեցից ընդ գրով հաս-
մանի գրաւել ։ Նա՛ զի թէ զմայրն
Լիբանանու 'ի մի լուծ կշռոյ զօդե-
ցից , և կամ զլեառն Արարատեան 'ի
կէտ ամբարձման նժարի միոյ արդարու-
թեան միջնորդ կացուցից , ոչ հաւա-
սարէ այնր հարթութեանն համաղու-
գակցել ։

Բ. Ծառս ամբարձուղէշ՝ սաւարա-
տեղն՝ տերևալից ունայն 'ի պտղոյ ,
նմանակից յաւէտ հարազատ այնր թը-
զենւոյ՝ զոր Տէրն զօսացոյց . քանզի սա-
ղարթօք վարսից , այս է արտաքին գի-

մեք բարեշուք կերպիւ՝ իբր պատկա-
ւիմիք պաճուճեալ · բազականացն գոս-
բաղձալի · իսկ եթէ մերձեցի անձողն
խուզել զինդրելն · գայցէ դքեզ ու-
նայն 'ի բարեաց և գարշելի 'ի դեղեց-
կութեանց · ծաղր անարգաց և նշաւա-
կութիւնք նախատողաց · Զի եթէ ա-
պաժամն յանգգոյշ ժամուն հերապանծ
տուենկն պատմակորոյս անկենդան · որ
դոյզն պատկերն է անպատրաստից · եկն
ընդ անիծիւք · և կամ երկիր սուզեալ
ցօղով · և ոչ բազմապատիկ զաւանդս
արգասեաց երկրագործութեան տածո-
ղացն մատուցանէ՝ լքեալ մուանի · իսկ
դու՝ ով անձն իմ եղկելի · սահման բա-
նաւոր և տուենկ կենդանի՝ և ոչ 'ի ժա-
մու խեբուսմ պատշաւոր · Իբր ոչ զմին
կրեսցես պատիժ նախնում աւանկիդ :
Վասն զի զհամայնն ընկալար 'ի քեզ
անպակաս յաւանելութեանց · սկզբնա-
ւորեալ 'ի մարդն առաջին և մինչև 'ի
սպառուածն ծննդոց նորին · զերբս գոր-
ծոց նանրութեանց և զգլուխս նորոգս՝
ատելիս և անախորժելիս հատաաղին ըղ-
քեզ Աստուծոյ :

Գ · Եւ վասն զի եդի զքեզ նպատակ



հանդէպ երեսաց տեսութեան մտացս ·
անձն իմ անպիտան · վիմօք ձգելոց ար-
ձանաց բանից · իբր զանընդել գազան
վայրենի՝ անողորմաբար դքեզ քարկո-
ծել : Որ թէպէտ և ոչ պատահիմ ա-
նուանիլ արդար · սակայն յաւաշնումն
պատասխանեալ՝ իբր ընդ աւսի սեմե-
մին՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ս-
գոյիմ · ըստ իմաստութեանն բանի · և
զայդս մտաց խորհրդոցս գաղտնեաց իբր
զգլխաւորեալ յանդաւորութիւն չա-
րութեան գործոց խոստովանեալ · քեզ
տարածեցից՝ Աստուած իմ և տէր · Զի
որով չափով չափեցից զանձինս ասըղ-
տանք · 'ի քոյդ անսուաղ զթութեանց
այսրէն չափեսցես՝ ընկալեալ զշնորհս
յաճախագոյնս ընդ մեծագունիցս պար-
տեաց : Եւ որքան վերայն հարուածք
անբժշկականք և անհնարաւորք ճարա-
կեացին · այնքանեօք չափովք կրկին աւ-
ելին և իմաստք արուեստից բարձեալ
բժշկիդ բարեհաչակեալ լուսաւորեցին ·
և 'ի պարտուցն առաւելութիւն · նոյն-
քան փոխատուիդ առատութիւն
բարեբանեալ միշտ պակեացի · ըստ
խնկաւորդ քում առակի · Զի քո է փըր-

հութիւն, և 'ի քէն է քաղցրութիւն, և աջով քո նորոգութիւն, և մատամբ քո զօրեղութիւն, և 'ի հրամանաց քոց որդարութիւն. և յողորմութեանց քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և 'ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգւովդ քո բարութիւն, և օծմամբ իւղոյ քո ախորժութիւն, և յոլով շնորհի քո զուարթութիւն. և դու տաս մխիթարութիւն, և մնացուցանես զհաստատութիւն, և բառնաս զխաւար վշտաց. և զհեծութիւն ողբոց 'ի ծաղր փոխես: Եւ քեզ վայելէ օրհնութիւն գովութեամբ հանդերձ յերկինս, և յազգս հարցն և 'ի ծննդոց նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ Ժ.

Վերստին յաւելուած իւրին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ արդ՝ քանզի միայնես մատնէ կորստեան և զղջումն ուժգնապես



և մեղանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ իմն են 'ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն, սակայն զկերպարանս իւրաքանչիւրոցն առ միմեանս եղեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն: Զի մինն զհզօրին ձեռն իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ նմանութեան քաւատանեաց սանձարեղինաց յանդգնայս եղեալ՝ զյուսոյն առասան խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութեան լախլըղող դժոխորվայն գազանի՝ իբր կերակրով արեամբ պարարի:

Բ. Եւ արդ՝ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ և յաւին մահու ժամանեալ, զոյզն ինչ դարձուածն ինչս ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց. կանգնեցայց. յարեսցս յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ Քրիստոսի ձեռամբն՝ որ գթածն է յամենայնի. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս, ախտացելոյս և մահացե-

լոյս ։ Եւ սկզբնաւոր ողջերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոյն շինուած կառուցից . քանզի և սմա 'ի նախնեացն սրքիմէք զինեալ , փոխեցաւ խոկոյն յանմահականն վիճակի վերին . զապաշխարութեանն գեղ ընկալեալ , ապաշաւանաց թաշակաւն՝ զգլուականն անեղծութեան աստէն ժառանգեաց . 'ի վեր քան զորոց Առաքեալ ընդ նմին ցուցանէ , որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ . ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին և անտեսիցըն ճոխութեամբ փարթամացան ։ Իսկ զորախոյս տէրունի պաշտելի բանին յիշեալ առ սմին . զի ամենայն ինչ հընարաւոր է այնմ՝ որ հաւատայն . է զի և զշամին ընտրականացն բարեմասնութեան Աստուծոյ հաճելեացն զննեալ աստանօր . զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահերէց առ 'ի սրբութեանցըն մուտ ամլիմբ հանդերձել , առանց որոյ և ոչ Տէրն փառաց զիւրան առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս , եթէ ոչ նախ լծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ զհաւատան մեր . ուստի և կեանըս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւա-



կանութեամբ աւընթեր գոլով Աստուծոյ . քանզի հաւատք քո կեցուցին ըզքեզ , օրհնաբանեալն Աստուծոյ բերան վկայեաց ։ Քանզի արդարեւ սեան տեսութիւն եւ կատարեալ իմաստութիւն եւ առ Աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոյ մասն երջանիկ և ընտրեալ անուն , որ յարաձգեալ միայ անվթար և անփակելի . պատուակից գոլով սիրոյ և յուսոյ ։ Զի եթէ փոքու սերմանի զոյի հատի մանանխոյ չափոյ նըւաստի հաւատք զերանց մեծութիւն փոխէ զօրէզապէս 'ի սիրտս ծովու , ապա յիրաւի ընկալաք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ Աստուած , որ զապաւէնին և զծածկեալն առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ ։ Երկրորդութեանն փառաւորելի անուամբն պատուեալ հաւատք ընդ սիրոյն դասեալ և յուսոյ ։ Զի թէ և զերկին հաստուածս առանձնաւորականս 'ի մի և 'ի նոյն խորհուրդ գիտեսցես , յաւէտ մեծացիս նոքօք 'ի յԱստուած . քանզի թէ հաւատս 'ի նա , և սիրես . պատ և յուսաս անե-

րեւութից պարգեւեաց նոցին : Նմա փառք յաւիտեանս . ամէն :

---

## ԲԱՆ ԺԱ.

Վերոյին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Եւ արդ՝ ես յետինս գաւառա-ցւոց՝ ունայն 'ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն իմ եղելութիւն 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից յառաջ հաւատամ Յիսուսի Քրիստոսի առնել զիս կամի . Քանզի հաւատացի վասն որոյ և խօսեցայ խոստովանեալ Պօղոսիւ , ուսեալ 'ի Դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արարցէ , որպէս հաւատովք ճանաչել զնա . և զզօրութիւն յարութեան նորա , ըստ Առաքելոյ , և զհաղորդութիւն չարչարանաց նորա , և որ զկնի բերին ասացեալքն : Կցորդ է որմին և յոյժ նմանատիպ հաւատոյն խոկալէս և 'ի նորոգս այս փոխադրութիւն , որ 'ի մեղացն 'ի քաւութիւն ,



և 'ի չարագործութենէ յարդարութիւն. և 'ի յանմաքրութենէ 'ի սրբութիւն. և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութիւն, և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութիւն : Քանզի զիա՞րդ ոչ արդեօք չքնաղ քան զքան՝ և 'ի մթութենէ երկեւանութեան խաւարի զըտեալ՝ և Աստուծով օժանդակեալ եւ օգնեալ սիրտ մեղաւորի , որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպէս : Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից՝ ստորասուզեալ ծանրութեամբ յանդընդային վհին խորխորատ գբոյն կործանման , նորագիւտ մեղօքն անջրելեօք . ունի եւ նշխար նշուլից՝ փրկութեան կենաց հրաւէր . իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս եւ յոգի . որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն . Ուստի և մեղուցելոյն խոպառ թախծելոյ , եւ անկարութիւն բարւոյն Բարձրելոյ , եւ համարձակութիւն շնորհին լքելոյ , յուսալ վերստին

անդրէն միւսանգամ նախապարգեւելցն փառաւորութեանց դարձեալ հասանել․ քանզի եւ յաստուածօրէն անդուստ հանդերձի եւ այս ներգործիլ առ ոյնս․ վասն զի սա զտուողին զօրութիւն ամենահնար աւետարանէ ։ Ցոյ խունկ հաճութեան մեծապէս հոտոտի Աստուած , քան յամենայն բուրումն անուշից , և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ 'ի սպաս խորանին , որ է կերպարան անձանց խոնարհից զլջեալ բեկութեամբ առ 'ի միութիւն նոյն նըմանութեան ։ Ըստ որում հայցեալ Փրկչին ամենից ցուցանս ախտացեալս տեսանելեօք , հաւատո՛յք , ասելով ․ առ այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ․ ոչ պարգեւեաց աչաց նոցա լոյս ․ եթէ ոչ նախ զհաւատոյն զրաւ ընկալաւ ։ Քանզի զի՞նչ քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ առ կենդանութիւն մեղ անյուսագոյն , առ որ կանանցն ժամանելոց 'ի յասս արարչին հաւատոյն հանդերձանօք , անյապաղաբար զփառացն Աստուծոյ տեսին զհանդէս 'ի յեղբօրն կենդանութիւն ։

Բ․ Իսկ աստանին անկապուտ շնոր-



հին մնացելոյ զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք ․ Նախ Ենովք , զկնի Ահարոնն , յետ նորա Դաւիթ , դարձեալ և Պետրոս ․ ընդ որս և փոքրն Եղիազար , որ 'ի մեծէն Աստուծոյ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ ։ Աւելորդ է առ այս և բանն առակի անառակ որդւոյն ․ թողում զպոռնիկն՝ որ 'ի Տեառնէ գովեցաւ , և զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ ․ և զաւազակն երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն հաւատովքն պսակեցաւ , և զոր անքաւելին են արարիք՝ զհաղորդեալքն սպանման մահու արարչին ․ առ որս և գլխաւորն ընտրելոց Պօղոս , որ երբեմն նախնին էր անօրինաց ։ Ցորոց ոմանք ծանօթութեամբ օրինին զլըրեալք անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութեամբ քան ըզնախակրօնիցն առաւելութիւն ։ Իսկ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահեալ հայրենի մերձաւորագոյն զօղ պատուիրանի սկզբնահօրն գաւանութեան , որ և զնախնեացն զարտիս ինքեան վարկուցեալ , զնորայն խւրովքն տուժեաց կրից տաժանմամբ ․

ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի , այլ չարչարելեաւն մարմնով՝ բանականաց բնութեան կենաց կարապետ՝ յաղթող զօրաւոր բանութեան մահուափոխեցաւ : Իսկ ամենք 'ի բուսոյ տըհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ . 'ի կատարեալ տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հոռեցան , քան թէ 'ի ստորնակայաց թըշուառութեանց գմնեցից կենացս 'ի կամարն երկնից համբարձան : Եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեայն դարձ , որ մինչեւ յանկեղէն նիւթ յեղանակեալ հոգւոյս գոյութեան , եւ պատկերն արքունի 'ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով , անկորուստ և անփոփոխագիր և յաղթող գաւաձանութեան զմեօս ենթադրեալ ըընութիւն , այս առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անեքող և անվերարկու՝ տերամբ Քրիստոսի ուխտեալ . որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ Բանն տէրունի , ըստ մարգարէին ձայնի , ուխտ խաղաղութեան և կենաց հաստատութեան առ



հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի եւ մշտնջենաւոր բարեխօս : Այս ուրեմն ըստ այսու կանոնի ճըշմարտադաւանի , և անփոփոխադրելի սահմանի , և արարչութեան պայմանի , համբուրեմ հաւատոյ շրթամբք զպատկեր բանիս , և ակն ունիմ փառացն շնորհի . քանզի որդարեւ յարդարացուցանեն զմեզ Աստուծոյ՝ ոչ որք զօրէ դատապարտ առնել , ըստ առաքելական բանին սահմանի :

Գ . ԱՌ յայս անսատուերագիր վըստահութիւն ապաստան , կամ կործանեալս՝ կանգուն , թշուառացեալս՝ յաղթող , վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական , ամենաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն , մահու մատնեցեալս՝ 'ի կեանս , ընդ ապականութեամբ վաճառեալս՝ 'ի ձիրն , դժոխային գործովք գրաւեալս՝ 'ի լոյսն . ստորնաւէր անսանձակենցաղս՝ յերկինս , կրկին գայթակղեալս՝ 'ի վերնային փրկութիւն , մեղօք կապեցեալս՝ 'ի հանդստեանն խոստումն , անբժշկական վիրօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ , ստամբակեալս վայրագութեամբ՝ 'ի սանձն հանդարտու-

թեան, որացեալս փրկատական՝ ՚ի կո-
չումն, ապաւուծ գծնդակս՝ ՚ի հեղու-
թիւնն, ընդգրկմարան լուսացոյս՝ ՚ի
ներումն։ Ի Քրիստոս Յիսուս և ՚ի Հայր
նորին հզօր և ահաւոր, յանուն և ՚ի
կամս բարերարութեան հոգւոյն ճշմա-
րտի. օրհնաբանեալ խորութեանն
և մի աստուածութեանն՝ զօրութիւն
եւ արքայութիւն, մեծութիւն եւ
փառք յաւիտեանս. ամէն։

---

## ԲԱՆ ԺԲ.

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին
հոլովել առ նոյն ողբերգ մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ քանզի յաւէտ յա-
ւաճնում զղջմանն յուսահատութեանն
բանիւ լքայ, և տարակուսանաց հե-
ծանաւն ՚ի մահ ձաղկեցայ, աստանօր
՚ի յուսոյն կերպարան փոխեալ յարգա-
հատել համարձակեցայց, զներողու-
թիւնն ասելը կարդալով յօգնականու-



թիւն ինձ մեղաւորիս։ Որ և անդրու-
ոյն իսկ յօրհնաբանելն և ՚ի դաւանելն
զկենդանարարին բնաւից Աստուած, խո-
կոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւո-
րութեան անուան շնորհաձիրն բարե-
րարի՝ մահացելոյս է կենդանութի, ըստ
մարգարէին նախաձայնութեան, թէ
որ կարդայ զանուն Տեառն, նա կեց-
ցէ։ Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ
նախ հաւատամ մեծութեան նորին.
ոչ եթէ վասն պարգեւաց նորա մատու-
ցեալ յաղագս դեգերիմ, այլ իբր զկեն-
դանութիւն խնկայես, և զինչպս տու-
րեւառութիւն հաւատոյ, առանց ո-
րոյ ոչ է շարժողութիւն կամ ընթա-
ցութիւն, զի ոչ այնքան յուսոյն համ-
դուցիւ, որքան սիրոյն կապանօք բե-
րիմ։ Ոչ ՚ի տուրսն, այլ ՚ի տուողն
յաւէտ կարօտիմ. ոչ փառքն են ինձ
անձկալի, այլ փառաւորողն է համբու-
րելի. ոչ կենացն փափագանօք, այլ կե-
նարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ.
ոչ վայելչոյն տարփանօք հեծեմ, այլ
հանդերձողին տենչանօք յերկնամանց
աստի կակամնիմ. ոչ զհանգիստն խըն-
դրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղա-

չեմ. ոչ հարմարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութեամբ մաշիմ. Ի ձեռըն որոյ զօրութեան վտանգապէս ակընկալութեամբ վերագրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յաղթութիւն և 'ի գթութիւն և յերկնիցն ժառանգութիւն, թէպէտ և յոյժ եմ տարագրելի:

Բ. Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոց դիմաց կորացեալ, զմիջնորդ ազդման կախուցմանց երկակի շղթանցըս՝ արժանաւոր աղխիւ կարկելոց՝ առ անհամեմատ լեզուիս շարժութիւն, նորոգեցից 'ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանց աղեողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ:

Մաղթանք ցօրաւորք արհաւրաց գիշերայնոց:

Գ. Ընկալ քաղցրութեամբ. տէր Աստուած հզօր, զդառնացեալս զաղա-



չանս. մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա, ամենապարգեւ, զամօթալից տխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա, հնարաւոր, զմահացու կրթութիւնս. սաստեա, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացատրեա, վերինային, զմըլերյն մառախուղ. կնքեա, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս. ցրուեա, ծածկատես, զմքենողին չար զօրմունս. խորտակեա, անքննելի, զմոլորողին գիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբըդ զուսանելոց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո դու նշանդ 'ի հետս եղից մաղթողիս. ամփոփեա քո աջովդ զհանգստեանս խշտիս. մաքրեցես 'ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զառաջեալ անձն ողբոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոց. կարգեսցես 'ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տուր հանգիստ բերկ-

ութեան մահահանգոյն նիրհման 'ի խորութեան գիշերիս , բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց . Ափոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից . անզարհուրելի զետեղմամբ 'ի ծփական խռովութեանց կենցաղական ըզբաղմանց , անրջական երազոց . խօլականաց ցնորից . յիշատակաւ քո յուսոյդ անճառելի պաշտպանեալ . Եւ սթափեալ վերստին 'ի նինջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ . հոգենորոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ , զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոյ քեզ , ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից . փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել . Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

# ԹՈՂՆ ԺԳ.

Վերջին յաւելուած իրիկուն հետևութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի .

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. ԱՍՏՈՒԱԾ բարերար , հզօր , ահաւոր , հայրդ բարի ողորմութեանց շնորհի , որոյ անունդ իսկ մեծիդ զգթութիւն և զնուաստութիւն աւետարանէ , քաղցր գժնէից և անզոհացողաց : Ընդ քեզ և որդիդ քո իբրև զքեզ , զօրաւոր ձեռն իբրև զքոյդ , անժամանակ տէրութեամբ ահեղ , ընդ արարչութեանդ քում բարձրացեալ : Եւ հոգիդ սուրբ Ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անպատառութեամբ , կատարեալ իսկութիւն գոյի , էութիւն մըշտընջենաւոր , հաւասար քո ամենայնիւ փառակից որդւոյ քո տէրութեամբ . Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքըննին , տրոհեալ 'ի դիմաց ուրոյն զատուցմամբ . իսկ միաւորեալ համագուգութեամբ , նոյնագոյ բնութեամբ տիրապես անշփոթ և անանջրպետ՝ միով

կամօք և կցորդութեամբ . ոչ երկուութիւն ունեմն 'ի յումեմն , և ոչ քըլթթել մի ակամ առ նուաղութիւն միոյն ժամանեալ , քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերըն է ծանօթութիւն , միով պատկառորբառացութեան անխղճնաբար աստուածաբանեալ : Քանզի արդարև մերաձայնեալս այս խոստովանութիւն երեք փառատրեմք գաւանութեան զկէմն Հաւատոյ Պետրոս երանեաց . իսկ զգատապարտելոյս անձն մեղօք՝ բարեհրամանն քո անհարկութեամբ , ով խնդրողգերելոյս , հրաշանօրոք արդարացուցէ : Քանզի թէպէտ և քո լսեն պարգևք , և քո ողորմութիւնք , այլ ոչ 'ի պարգևսն ես այնքան հաշակեալ , որքան յողորմութեանն . զի երկրորդն զքոյդ յանձանէ զփառս , իսկ առաջինն զձըրնաւորացն յայտնէ զգործս . զի պարգևք՝ վաստակոցն են փոխարէթիւնք , իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյ բարերարութիւնք ,

Բ . Եւ արդ՝ մի զօրութին մարդկայինս գործք առաջի քոյոյդ շնորհաց , Աստուած գթութեանց . թէ և անգր



իսկ լսեն քան զօրէնս հատուցակաց ըննաւորականս հատանից , այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան , նուաղ եղիցի առ քումդ մասին ընթացք երկնածնաց : Քանզի և որ մեղքութեամբ ողերձանային օրինականացն վստահութիւնք , 'ի լուսաւորել քոյդ արդարութեան զուշակ ներկայիս , ամենանուաղ անձկութեամբ լքեալ հրէութիւնն յետնեալ և յաւէտ ընդ տապադրական օղորմելոյն , առաւել նոքա գտան կարօտեալ մարդասիրութեան : Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ , բարերար , լոյր պատուանաց զուշման հեծութեանս՝ որ կարդամ առ քեզ , ողորմեա , կեցո և մարդասիրեա : Զի քո է երկայնմտութիւն , քաղցրութիւն , փըրկութիւն , քաւութիւն , և փառք յամենեցունց յաւիտենից ազգաց . ամէն :

---

## ԲԱՆ ԺԴ.

Վերոյին յաւելուած ճշին հետեւութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ՊԱՂԱՏԻՄ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անճառ ծնելդ Աստուծոյ, խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց աղբիւրն, նորոգ մերձեցեալ կրկին տառանօք 'ի յառաջուեն նուաղս ձայնի վիրաւորելոյս։

Բ. Ոչ ցուցեալ է երբեք, եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն որոյ խաղխաղեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զինչ արձակեաց, քանզի անկալինչ էր. ոչ մատամբքն տառապելոյ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց բարերարին յանդիման կացոյց, քանզի վհատատարած էր. ոչ 'ի պատգամ բանից միջնորդի զողորմածին



կամս հաճեցոյց, զի անյայտելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. նա և ոչ ծնգովքն հաստատութեամբ իբր գարշապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն առել կենդանւոյն՝ ամպակինչ նուաղ է 'ի մեռելութենէ։ Մանաւանդ զի 'ի քոյոց խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութեամբ, և փառօք քո լուսազարդեալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակըն քո ընթացից, այլ տտահակեալ ապըստամբութեամբ յետ թշնամեացն թիւ յաւելու, ընդ նոսին գաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց։

Գ. Իսկ դու բազմապարգեւ, բարերար, անոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զձեռնդ։ Ոչ քահանայապետ ըստ Ահարոնեան տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն

անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ 'ի խորտակումն խոցելցն որազեալ մատեար . և ոչ որպէս ղեւտացին կարապետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց , հնոյն լուծն և նորոյս ակիզբն , ունայն 'ի հոգւոյ յապաշխարարային հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ . զի մի սատակիչն օրինակութեամբ տապարաւն արմատակորաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ , յառաջ քան զիջուծ աւակիցն սատակեսցի . այլ հեթանոսացն պահպան անուն աստուածնեայցն , որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս ամբողջ պահեցին , զոր նոքա մոռացան , նոյին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ մերակերպական խաւարութեամբ , զաղատարարն գծագրեցեր զուեւտս առ օտարազգիսն . և աստուածաշարդ նկարագործութեամբ անապականաւ ձեռն կարկառեալ , յարուցեր զմարդն նախնի մեղուցեալ 'ի մահ խորոյքն ծննդոյք : Զարամեցելոյն սիրտ բերկրեցուցեր , և զկհատեալն հաստատեցեր , և զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր : Աւազանին կենարար օծմամբն և բաժա-



կաւն լուսոյ լցեր . հացիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնովն որ յեղանակեցեր : Վերափոխութեամբ երջանկայն ազանց ընտրելոց յանձանձեցեր , զրգեցեր և խնամարկեցեր : Հանդարտ ընթացս զըրասաւն տածողութեամբ անզղուելի պահեցեր , մինչեւ յարկն լուսոյ ածեր : Ի ձեռն երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց եւ երկրորդաց տուչութեան կտակաց կենդանականաց . մարդասիրապէս զարմանատրեցեր : Եւ որպէս երբեմն ընդ Մովսիսի թեւս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա , և 'ի հանդիսան հանդարտութեան երկրին բարութեան առաջնորդեցեր , և զանին կերակուր ջամբեալ հրամանատրեցեր վարդապետութեանց :

Դ . Եւ արդ՝ որ զենաւն ծայրագունին բարութեան լուսոյ յամենայնի բավանդակապէս հրաշագործեցեր , զօգտակին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր , կեցո և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց որ ձրի պարգեւես եւ անպատրաստից . ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն , բարեգութ ,

զօրեղ, անքննին, աննեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ԺԵ·

Վերստին յաւելուած ներքին հեծութեան Նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Իսկ դարձեալ աստուստ վերըստին առ նոյն հեծութիւն սրտիս վտանգի յինձէն մատուցեալ. այլին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արգահատեցից. տագնապեալ ոգւոյս վտանգիւ 'ի սպառ. իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ՝ Աստուծոյ՝ խոստովանեալ ընդ փառացըդ քո զիմս անարգութիւն, և առ չարեօքս խմոլք դըքոյդ բարութիւն, որովք յաղթեալ գտայ քան թէ բըժըշկեալ, և ամաչեցեալ քան թէ համարձակեալ. ախտավորս աւանդամնաց:



Բ. Իսկ կրկին առայն որ առ խս. որ ոչխարին տրուսյն տարագուցիւ. որ յետին անդգայութեանն էր մատնեցեալ մոլորեալ. և 'ի լերինս ուր ոչ է այցելութիւն՝ ընդ գազանականայն գիւաց և կուոյն վայրենութեան թափառեալ. ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէի, որով եւ զցաւոցն աղէտ պատմէի. ոչ ձեռն ձգողական, որ համերցն է աղաղակն: Իսկ դու միայն գոլեալդ յոկղեանցն յաւիտեանց եւ յարդի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին՝ զիս զմեղուցեալս յանհնչոյն մոլորութեան, խնամածօրէն տեսչութեամբ կամաց հոլեւ կոչեցար. և ոչ միայն հոգացար. այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն. հրաշագործ. այլ անճառելիդ բարերարութեամբ սիրոյ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրուն դասեցեր 'ի հայրենիդ քո ժառանգութիւն: Եւ արդ՝ դու հզօր, կենարար օրհնեալ, այցելու, գթած յողորմութեան, եթէ զնոսա ընկալար զապաշխարեալսն աղերսանաց, որ միան 'ի մէջոց մահու սահմանի էր չարչարեցեալ. իսկ միւսն

ըստ անբանիցն անզգայութեան փոխա-
քանդի բացամերժութեամբ յանբնականն
վայրի վարանեալ . 'ի բառաչ ձայնին
բարբառոյ , որ անկերպաւոր աննշա-
նական , աստուածային բարեխնամու-
թեամբք տնտեսեցեր զտիեզերահրաշն
խնամողութիւն առ կորուսելոյն մեծ-
թշուառութիւն . յայտնեալ վերստին
և սրտ գթութեանց խորք և բարե-
րարութեանց հոսանք՝ առ անօրինելոյս
ապաւէնութեամբ վերադարձելոց օրինա-
կութեամբ , առ բազմօրինակ մահու-
պարտականս , առ որ 'ի բարութեանց
խառնից քաղցրութեանց յառուկ համե-
շալ , առ անգամ մարմնոյ արժանա-
ւորս համման , առ համաձայնակ ամե-
նաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւորս ,
առ հաւատարեալս անկայութեանց ա-
նանոց , առ սատարացեալս յընտանու-
թենէ իմաստնոց , առ աննմանս հան-
գունակից բանաւորութեանց : Որ եթէ
տարածոյ գոյր , ես ասէի . թէ նմա-
նակից գոյր իմ , պատմէի . թէ հան-
գունակից գոյր , ես ճառէի . թէ հա-
ւասար գոյր , ես գրէի . թէ զուգա-
գործ գոյր , ցուցանէի . թէ օրինակ



գոյր , ես աղէի . թէ յանցեալսն ,
հայթայթէի . թէ 'ի ներկայումս աստ ,
ես յուսայի : Բայց քանզի անցեալ է
ըստ օրինակ , և հրաժարեալ ըստ նը-
մանութիւն , գոր միայն քո է քաւել ,
բժշկել և կենագործել , կենդանարար
համայն մեռելոց Նորոգութիւնդ տիե-
զեաց :

Գ . Զի եթէ որբոյն սրտի տեսու-
թեամբ երջանիկին Դաւթայ՝ անօրէնութիւն
չարեաց բարձրացեալ առ ի քան զգլուխ ,
և ըստ ծանրութեանց բեռանց դը-
ժուարակրելոց յանցմունք մեղաց , իսկ
որ առ իս կրին սխալմունք գերազանցէ
քան զհեղեղն ջրակուտակ տիեզերա-
յոյզ ամենապատ ծովուն յորդու-
թիւն , եւ գլխոց լերանց վերագրէ :
Այլ հնչեսցէ ու՛ քո քաղցրութեան
իւր առ նոյին , և որ զերկինս հալէ
զօրութիւն , ցամաքեցուցանել զհեղեղ
ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրագոր-
ծան խմցս պարտեաց և լեռնակարկառ
բարձրութեան մեղացս անբարձելոց .
Նա համառօտեալ զբան քո հզօր ամե-
նակար հնարաւորութեամբ հակիրճ հա-
տուցմամբ , սրանցես ահա եւ քաւու-

թեան ըստ մարգարէին, առ երկարա-
ձիգս անօրէնութիւն. և ներելով իմ
յամառութեան. ո՛վ երկայնամիտ ո-
ղորմած օրհնեալ, Թողցես միանգա-
մայն, բարեգործեսցես խնայես, հաս-
ցես բոլորովին զանվճարելի պարտուցս
զարժանահատոյց տանջանացս տոյժս
տարժանակիրս։ Նա զի և չէք իսկ
առ քեզ ցասումն սրտի և կամ բոր-
բոքումն բարկութեան. որպէս ոչ կրին
նենգութիւնք և կամ նշմարանք մը-
թութեան. քանզի կեանք են 'ի կա-
մաց քոց և լոյս, և ոչ արարեր զմահ,
և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ
Դաւթի և Սողոմոնի։

Գ. Եթէ մարդկան կարգեցեր զայս
կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բա-
րեվլճակն քո կանոնաց ոչ փոխադրել
անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս
եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւ-
րաքանչիւր մեղանաց զպարտս, և այդ-
քան առ մեզ, որ միշտ 'ի բնութեան
ունիմք բնաւորաբար ուղերձեալ զգիծս
չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտ-
նելոց, որք օրինաւորին երևելին 'ի յան-
դատան սահմանի ամենաբոյս փշածին



բնութեանս, ըստ անսուտ քո վկայու-
թեան, որ թէ միտք մարդոյ 'ի խնամ
չարի են արձանացեալ 'ի մանկութենէ։
Զի որ զկատարեալ մաքրութիւն ունէր
աւետարանիչն կենացդ բանի Յովհան-
նէս, և զինքն ընդ հասարակաց բնու-
թեան ծակցեալ, հաստատեաց զճշմար-
տութիւն քո առ իմ ստութիւն յայտ
արդարացեալ. թէ ասեմք, ասէ, մեղս
մեք ինչ ոչ ունել, սուտ առնեմք զնա։
Եւ արդ՝ կատարեալ է բան քո խնկեալ
և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի ստու-
գութենէ առ իմ մոլորութիւն և զը-
ժընդակ անխրատութիւն։ Վասն որոյ
խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրու-
թեան ճաշակաց աղբիւր, միայն օրհ-
նեալդ յամենայն յաւիտեանս. ամէն։

---

## ԲԱՆ ԺԶ.

Վերստին յաւելուած ի բանին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ դու միայն Աստուած
երկնաւոր, բարձրեալ, բարեգործ, քո

է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն. քո են պարգեւք, քո միայնոյ են ձիրք ձըրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն. քո հնարք անխափանելիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն եւ դու կատարած: Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ ժամամբք ախտից 'ի վերդ քան զբան: Պատկեր անպարագիր անդր քան զորքանութիւն կշռութեան, անչափ լայնութիւն փառաց, անտարրաւորակ ընդարձակութիւն հաստատ զօրութեան, անամփոփելի առատութիւն բոցարձակութեան. անտկարանալի բարերարութիւն գթութեան: Դու դարձուցանես, ընդ մարգարէին, յայդ զաւուրըս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին արգելականացն բանտի, յորում եւ մաղթանացն ձայն էր աղխեալ. եւ գերեալ անտի զմթերեցն կապուտ վտարանդելոցն հոգւոց, սուսերք հրամանի յաղթական բանիդ զկապ տատակման մահուն խզեցեր, եւ զմեղացն



կարծիս ցրուեցեր: Դարձ առ իս՝ որ զընդամ զընդմանաւ վհիս տղմալից զըբոյս յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանսարկուին նետից:

Բ. Այլ դու յամենայնի Տէրդ բարերար, լոյսդ 'ի մէջ խաւարի, օրհնութեանդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքնին, անձառ, բաւական ըստ որքոյն Յակոբայ, անհնարինդ ամենից դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխաւիս մեղաց, ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութեան խորհրդոյ մեծի, յիշեա զիս յողորմութեան քո, օրհնեալ, եւ մի՛ յիրաւունս քո. 'ի ներողութեան քո, եւ մի՛ 'ի հատուցման. յերկայնմըտութեան՝ քան 'ի հաւասարութեան: Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո եւ մի՛ ընդ արդարութեան. զի առ սակ նախնումն յոյժ է նուաղեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս յաւէտ ծանրակիր:

Գ. Արդ՝ մատիր առ իս, բարութիւն, որպէս յունկանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի

մեղուցելոյս զհողմ մահու խռովութեան, զի հանգիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

## ԲԱՆ ԺԷ.

Վերստին յաւելուած երկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Արդ՝ աղաչեմ զմնամանկալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թախծութեանց հոգւոց վշտացելոց. մի յաւելուր հեծութեանս ցաւ, մի խոցեր զվիրաւորեալս, մի զատապարտեր ըզպարտեալս, մի տանջեր զչարչարեալս, մի վաներ զհարուածեալս, մի գլորեր զանկեալս, մի կործաներ զգայթակղեալս, մի մերժեր զհեռացեալս, մի տարագրեր զհալածեալս, մի ամաչեցուցաներ զպատկառեալս, մի կշտամբեր զհարթուցեալս, մի խորտակեր զբե-



կեալս, մի խռովեցուցաներ զամբոխեալս. մի աղէկոծեր զլքացեալս, մի սասանեցուցաներ զդողդեալս, մի շփոթեր զմրրկեալս, մի կեղեքեր զգիշատեալս, մի ջախջախեր զբեկեալս, մի փշեր ըզմորմոքեալս, մի կուրացուցաներ զխաւարեալս, մի զարհուրեցուցաներ զապշեալս, մի խորտակեր զխարշատեալս, մի մահացուցաներ զհիւանդս, մի բեռանց ծանրութեան մատներ զտկարս. Մի անուր յաւելուր կարկամեալ թիկանցս, մի կրկնակի ողբումն զառն հեծութեանըս, մի ուժգնապէս վարեսցիս առ հողս, մի սաստկապէս առ մոխիրս, մի անաշառապէս առ ստեղծուածս, մի ահարկութեամբ առ փոշիս: Մի ընդհարկանիր խստութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ ընդ ստորնականիս, բնութեամբ բարիդ ընդ 'ի բնէ չարիս, ողկոյզդ օրհնութեան ընդ պտղոյս անիծից, քաղցրութիւնդ խակապէս ընդ համայն դառնութեանս, փառաւորեալդ անփոփոխ ընդ ամենեւին անարգիս, կենացդ նշխար ընդ կաւոյս զանգուածոյ, Տէրդ տերանց ընդ տղմիս երկրայնոյ, աննուաղ լիութիւնդ ընդ

չքաւոր սորկլս , անկապուտ ճոխութիւնդ ընդ անպատսպար տառապելոյս անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթ-շուառ աղքատիս : Քանզի ո՞վ որ հառեալ յառաւօտ՝ և 'ի ծագման լուսոյն խիթայ մթանալ , և կամ ընթերակաց կենաց՝ մահանալ , կամ առողութեան՝ և պարտաւորիլ , կամ շընորհաց՝ և դատապարտիլ . կամ փրկութեան՝ և մատնիլ , կամ նորոգման՝ և եղծանիլ , կամ օրհնութեան՝ և տարագրիլ , կամ բժշկութեան՝ և վիրաւորիլ , կամ լնութեան՝ և նուաղիլ . կամ յաճախութեան հացի եւ քաղցնուլ , կամ գետոց հոսմանց՝ և պապքիլ , կամ մայրենի գթոյ՝ և նենգիլ , կամ խնամոց աստուածեան աջոյդ՝ և զզուիլ :

Բ . Նա արդ՝ ընդ ախտացելոյն սատակապէս մարմնոյն քոսոտութեամբ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ , Տէր եթէ կամիս , կարող ես զիս սրբել : Ընդ աչացուացն նեղելոց մշտագիշերին խարխափանօք՝ մեծակական ձայնիւ հառաչեմ . ոչ որդի անուանեալ Դաւթի , այլ ծնունդ էիդ Աստուծոյ դաւանեմ . ոչ միայն ռաբբի կոչեմ , որ վարդապե-



տացն է պատիւ կարծողական զինքն գիտելոյ , այլ Տէր երկնի և երկրի հաւատամ : Ոչ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան , ո՛վ բարեգութ Աստուած մերձաւոր , այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն : Ոչ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի , որ երկմտութեանն կարծի նըշանակ , 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմութեանն , այլ կամիս որպէս բարեգութ , և կարես որպէս արարիչ . ասա բանիդ՝ և բժշկեցայց : Ընդ հարիւրապետին հաւատոց և ես լծակցիմ . ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ հաւատամ ազդել քոյ կարողութեանդ առ յարութիւն և բժշկութիւն , այլ 'ի վերինն երկնի բազմելով և 'ի ստորինս երկրի բովանդակ , առ հրաշէին սքանչելութիւն ոչ ունիմ հատուցանել :

Գ . Շնորհեա ինձ , որպէս դատակնիկ բանին քո վճռեալ առ պռունկին ընդունելութիւն , հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհապարտութիւն ,

Աստուած բարութեանց և Տէր երա-
նութեանց . որ յանձին ընձեռել բա-
զումս փառաւորիս , եւ 'ի շատն մա-
տուցանել՝ նուլին չափ սիրիս , եւ յա-
ռաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս ,
և յայսքան բարիս իրաւամբք գովիս ,
և ամենայնի Տէր գոլով՝ հաւատարիմ .
ճանաչիս , եւ որ զբոլորն ունիս՝ ընդ
մերումս կշռիս , և անճառելեաւդ ձըր-
րիւ մերայնովքս վճարիս , և ընդ երկ-
րաւորիս զանխախճանն պարտ վարկա-
նիս , եւ մեծարեալ քո զմերն՝ մեծա
գոհաբանիս , և 'ի սակաւուն տուչու-
թիւն՝ զայդ փառաւորիլ ոչ ամբարտա-
ւանիս : Այս և ինձ զնոյն գթութիւն
ունողիս զգործս անհամար պարտուց .
զի և 'ի ճառս երախտեաց քումդ պար-
գեւաց՝ նորին իսկ սակով սիրելն կար-
գեսցի . և քեզ փառք յամենայնի . ամէն :

---

# ԲԱՆ ԺԸ.

Վերստին յաւելուած նշկին հեծութեան նորին
հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Արդ՝ ես ծնունդս մեղաց , որ-
դիս՝ մահացու երկանց , արդարեւ ան-
տահման բիւրուց քանքարաց տուժից
գոլ հատուցանող 'ի միում աւուր : Այլ
ոչ թէ առ փոքրկութիւն մարդկային
մտաց հայցեմ ներութիւն , այլ առ ան-
նուաղ լիութիւն փրկչիդ Յիսուսի Քրի-
ստոսի պաղատիմ մարդասիրութիւն .
որ չէի երբեմն՝ և ստեղծեր , չմաղթե-
ցի՝ և դու արարեր , չեւ եւս եկեալ
'ի լոյս՝ և տեսեր , ոչ յայտնեցեալ իմ՝
և գթացար , ոչ կարդացեալ՝ եւ խնա-
մարկեցեր , ոչ ամբարձեալ ձեռն՝ և նա-
յեցար , ոչ պաղատեալ՝ և ողորմեցար ,
ոչ կերպացեալ ձայնիս և լուար , ոչ
հեծեծեալ՝ և ունկնդրեցեր . զխոկըւմ
զարդեան զխղուածոյս՝ եւ չանտեսե-
ցեր , նախահայեացդ աչօք նկատեալ
զպատժապարտիս չարագործութիւն՝ և

յօրինեցեր ։ Եւ արդ՝ զքո սրբեալս և զքեւ փրկեալս և զայսքանեաց խնամոց յանձանձեալս մի՛ թողուր կորուսցէ մեղացն հարուած՝ գիւտք բանսարկուին . մի՛ յաղթեսցէ յամառութեանս իմոյ մառախուղ՝ ներողութեան քո լուսոյ, մի՛ որոտս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեանդ, մի՛ մահացու մըռեղխ՝ ամենակատար լուութեան, մի՛ տկարութիւնս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեան ։

Բ. Աhա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, հզօր, արասցես ողջ իբրեւ զաւազակն մինչ 'ի դրախտին փափկութեան զպտուղն կենաց կթէի ։ Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պշուցեալ մեղացն կշռմամբ՝ սատանայական բռնն կապանօք, զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց ա՛ռ իս, միայն ողորմած, զի բարձրացուսցես զիմոյս խոնարհ բանաւոր անկեալ. և զչորացեալս ծաղկեցուսցես 'ի բարի կրօնս վայելչութեան, ըստ աստուածաբա-



նութեան սուրբ մարգարէին ։ Որպէս զի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծիչդ նկատեալ զկերպ մաղթեցից, հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խընամօք անճառ քո սիրոյ՝ 'ի չնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութիւն լուսոյ հաստատեսցես ։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ. հայեաց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ՝ ուր ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ ։ Ոչ օծութեամբ իւղով՝ պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բազկացս ընդոյդ գաւանմամբ հոգւոյ ողջունիւ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեմ, խառնեալ հեծութիւն աղբերցս արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ ։ Կասնեալ մեղանօք

հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկու-
թեամբ , և յերկուց կայից միայնակող-
մամբ անհաստատ հետովք , զընթացից
գործին՝ նահանջմամբ չարին՝ զհետե-
ւակամն բարձողութիւն շինուածոյ մար-
մնոյս՝ առ ելս ծառոյն կենսաւէտ պըտ-
ղոյն խախանեցելոյ , պատուպարեցես
անդրէն վերստին , միայն հնարաւորդ
առ 'ի փրկութիւն : Զփառաբանարան
հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ան-
բաւական խցմամբ համրացոյց արգել հողմ
բանսարկուին . հոգիդ քո ազդեալ մեծդ
ողորմութեամբ , ըստ յԱւետարանին
բժշկեցելոյ , հրաշափառապէս բարե-
գործեցես բանդ կենդանի՝ ինձ խօսա-
ղութիւն անայթաքելի : Անկեալ կամ
չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մե-
ղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ ,
կարեկցեալ իմում թշուառութեան՝
ողբականօք ք.քուանաց ձայնից , ով բա-
րերար որդի Աստուծոյ , օրհնաբանեալ
աչայդ ցոյլ վերականգնեցես 'ի կեն-
դանութիւն , իբր զկիրելին յանշնչական
մեռելութենէ : Սոյդ դառնացողս 'ի
գբի մեղաց կամ ապականեալ , ձեռն
մատուցեալ՝ արեւ անստուեր Որդի



Բարձրելոյ , հանցես զիս 'ի լոյս քումդ
նշուլից : Ընդ աղխողորմ թշուառու-
թեան կականման ձայնի այրւոյն 'ի Նա-
յին մօր միամօրին , տառանմամբ մա-
տանցն , կոծմամբ կրծիցն , հառմամբ
արտասուացն , տուայտանօք տխրու-
թեան դիմացն , և ես պաղատիմ վեր-
ջին հեծութեամբս . տուր յուսահա-
տելոյս դ.քաջալերութիւն մխիթարու-
թեան գթած քո բանիդ , առեալ ես
ինձ գովեալդ բարի առեղծիչ աշխարհի ,
թէ մի լար գերի բազմաց ողբալի . ո-
րով ընդ պատանւոյն կենդանացելոյ 'ի
վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենա-
պարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նը-
մին կրկին նորոգեալ : Ընդ այսակիր
անդգայելոյն դիւաղուկ և քարակոծկոծ
հեղձամղձուկ եղկելի անձանցն . քըստ-
մնելի գխախտիւ հերացն , վայրենէրես
բանդագուշելոյն , 'ի քէն ողորմեալ
Փրկիչ բոլորից . իբրև զնոսին առ քեզ
դիմեցից . հերքեալ մերժեցես զգուն-
դըս չարացն ապականողաց 'ի քո խո-
րանէս , զի ժամանեալ Հոգիդ քո բարի
այսրէն հանգիցէ , լցեալ զմարմինս մաք-
րութեամբ հնչչյս՝ զգեցմամբ անդամո-

ցըս, զգաստ արասցես զնեղագարեալս
ամենաթշուառ ։ Ընդ գերեցեալ դժո-
խայնակաց վտարանդելոցն հոգւոց ար-
գելեալ կամ 'ի վտանգի, զճառագայթ
ողորմութեան փառաց քոց ծագեալ՝
լոյսդ իմ անձկութեան. 'ի կապանաց
օտարոտին զերծեալ զնս ապրեցուսցես ։
Գաղտնորդայթ աներեւութերակ վը-
րիպակ արահետ գայլութեամբ մեղա-
ցըս չըգողեցեալ ոգւոյս կերպարան կայ
'ի տագնապի. զծածկեցեալն 'ի տեսո-
ղութեանց զչարագործին թինիցն այ-
տուցմունս, քո ինքնաւորդ զօրեղու-
թեամբ Որդի Աստուծոյ, գթածաբար
առողջացուսցես ։ Զբազմազան տարապա-
ցեղիցն զանազանից ախտաւորութեանց
մահացուցանողաց իւրականօք կոտտեան
բերիւք, զմնդափարմատն շաւանղօք
հաստատեցելովք 'ի յանդաստանի անօ-
րէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձե-
ռըն ձեռնիդ ամենակալի, որ արօրա-
գրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հո-
գւոց առ բանիդ կենաց արդիւնաւորու-
թիւն ։

Գ. Եւ քանզի անցաւ ըստ նմանու-
թիւն օրինակութեանց յանցուածոցս



վէր, ըստ Ճարտկողն քաղցկեղի, առ-
բնաւ անդամս մամնաւորեալ զախտին
տարածումն, չիք ապեղանի իբր խորա-
յելի առ անշարժութիւն խարանացն
մատուցանել. 'ի խարխաց բարձիցս
մինչեւ ցաւին կառուցման լոութեան
անդամոցս չէ առողջութիւն, այլ ա-
մենեւին անբժշկութիւն. Իսկ դու,
ողորմած բարերար օրհնեալ և երկայ-
նամիտ Թագաւոր անմահ, լուր պա-
ղատանաց արգահատութեան սրտիս
վտանգի, որ կարդամ առ քեզ Տէր
'ի նեղութեան ։

---

## ԲԱՆ ԺԹ.

Վերստին յաւելուած խորհին հեծութեան Նորին
հոգւոյն առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ՆԱՅԵԱՑ ամենահայեաց տե-
սութիւն կենաց բարութեան յուսոյ 'ի
մեծարարեալ աղաղակ ցաւագնեալ
անձինս հեծեծանաց ։ Անհաս մեծու-

թիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի, լուր ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի. ազդումն խնկելի, խոկութիւն դաւանելի, էութիւն փառաւորելի, գոյութիւն օրհնաբանելի. տէր Յիսուս ընդ Հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ Սրբոյ բարձրացեալ և վերամբարձեալ, որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես զմեզ վասն քո ըստ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային, եւ այժմ զլուծեալ եւ զխորտակեալ հողանիւթ անօթս, աստուածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա. Զ.քոյին պատկերս մեղօք հնացեալս՝ 'ի .քուրայս հալոցաց կայծակամբ բանիդ. պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա. Զխախտեալ շինուածս .քումդ հանդըրտեան խորանի մարմնոյս՝ սահմանահողոյս, մաղթեմ բարերար, 'ի բնակութիւն .քեզ մաքրագործեա. Մի հատուցաներ չարեացն իմ գործոց զնոյն փոխատրութիւն. Արբեալ եմ ըստ մարգարէին բանի՝ եւ ոչ 'ի գինւոյ, 



թափեա զմիտս անօրէնութեան թըմբրութեան մահու բաժակիս աղտաբար հրամանաւդ ամենակեցոյց, զի մի դ.քոյդ .քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն.

Բ. Արդար ես յիրաւունս քո, եւ յաղթող 'ի դատաստանի. եթէ մահու մասնես, ճշմարիտ են գործք քո. եթէ դատապարտես՝ աստուած ակնեալ ըղտանջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց ուղեցես, թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ունայնացուցանես, թէ զաչացըս պատուհանս ստուերացուցանես, թէ զկենացն ճաշակ 'ի .քեղ լինքն ամփոփեցես, թէ զհաստատակից կերակրոյս դարմանս բարձցես, թէ զաւուրս հարըստութիւն համառօտեսցես, թէ ընդ իջման .քաղցրութեան ցօղս՝ և հուր անղայցես, թէ 'ի լրութենէ բանի .քո սովեցուցանես, թէ զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորուսցես, թէ զգետին յատակի ոտից սասանեցուցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ .քո հանցես, թէ 'ի համօրէն աշ-

խարհէ աստի հերքեսցես, թէ փայլատակմամբք հրոյ պակուցես, թէ անբժշկական ցաւօք դառնասցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցանման հոսեսցես, և թէ այլ ինչ նորագոյարած տանջանարանաց կաղնեսցես՝ չար քան զտարտարոսն և սաստիկ քան զգեհեննն, թունաւորագոյն քան զորդունսն. տարակուսելի քան զխաւարն, երկիւղալին քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն, վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտական գոլ սոցա։

Գ. Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւնք փոխաբերութեանցն առ ազդակցութիւն մեղանաց՝ իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհրդոյ. արդ կարեւոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս առ ծանօթութիւն խնդրողին։ Որպէս զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի 'ի նախնումն վտանգին տապնապեալ սառնում։ Եւ զի ոչ ըղցանկականն խոտորականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս զանդն-



վանալի զկիզումն։ Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մթութիւն ըմբռնողական միգին կորստեան վրիպեալ դանդաչեմ։ Եւ զի ոչ խորհեցի զմանունս փոքունցն յանցանաց իբր անխնամակալք վարկանելով, պատկանաւորէս 'ի խաւարանողականացն զազիրն զեռնոց խթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ հիւր վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ ըստ գծագրութեան այսր օրինակի ապականութեանն գբոյ նուիրեալ մատնիմ։

Դ. Եւ արդ՝ ոչ յաստուածուստ ամենաբարի գանձուցդ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից խաւար, և ոչ յապաւինութենէդ դայթակղութիւն, այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս, հոգւոյ իշխանին մարդութեան հնազանդեալ, թողի զտեղի քո նորա՝ ըստ գրոյն խրատու յանդիմանութեան։ Եւ քանզի յայտնեցաւ յետուստ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կեր-

պիս անվայելուչ սուտեր ամօթոյս ,
ըստ մարգարէին առակի , տգէտս ցու-
ցեալ զիս ամենեւին իբր մերկացեալ
խայտառակելոյ պռնկի . ծագեա յիս
զլոյս քաւութեան , արքայ երկնաւոր ,
զի թօթափեալ զմեղաց փուշս , ըստ
աւետեաց ձայնի դարձելոցն 'ի Բաբելո-
վնէ , նստայց վերստին կանգնեալ 'ի հո-
ղոյ . և 'ի հաստատութիւն յուսոյ հի-
մնացեալ անսասանելի , ըստ Եսայեան
բանին , զգեցեալ զզօրութիւն բազկի
կարութեան նախնում մաքրութեանն ,
վասն մեծութեան փառաց քաղցրու-
թեան ամենապարգեւ քոյ աստուածու-
թեանդ , օրհնեալ յաւիտեանս . ամէն :

---

# ԲԱՆ Ի .

Վերստին յաւելուած խնդրին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի .

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Տէր , Տէր անոխակալ և երկայնա-
միտ . ներող , բարեգութ , հզօր , ո-



ղորմած . ահա ճշմարտութեամբ են
գործք քո , և խոստովանեալ դա-
տաստանք քո , վկայեալ են ընտրու-
թիւնք քո , տեսողդ ծածկութից :
Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կի-
զանողական բոցոյն փորձեցան և ոչ
վնասեցան 'ի Բաբելովնի , զնոյս թախ-
ծութեան զերդն հառաչեմ . մեղայ , ա-
նօրինեցայ , յանցեայ , ապստամբեցայ ,
և պատուիրանաց քոց ոչ անսացի : Ե-
քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա ,
և զայս խոստովանութիւն գուշէին , իսկ
ես ընդ նոցայն նովին աղերսիւ ձայնակ-
ցեալ ամին ողբոց երգութեան , և այլ
յաւելից ամենապարտս մահու : Ընդ
Դանիէլի երանեալ և սուրբ մեծ մար-
գարէի , որ 'ի քում հարազատութեան
ազգականութենէ տանն Յուդայի՝ շա-
ռաւիղ ընտրեալ , զնորայն առեալ ըն-
դունական և նուիրական բանից պա-
ղատանս , խնդիր պատժականութեան
գոչմամբ հեծութեանս և այլ կրկնեցից .
Ի մէջ գիտութեանս անպատշաճական
գնացի , զարտուղի սխալեալ գծնդակա-
ղէս , այս է ամենայնիւ ամենայն իրօք
մեղանչելն : Ըստ սահման կշռութեան

կամաց քոց արտաքս վարեցի, որ է հա-
ւատոյ կերպարան բանիդ անօրէնու-
թեան ։ Անգիտոյն չարաց չարութեան
գործոց լրումն յաճախութեան նիւթե-
ցի, որ է ճշգրիտ պատկեր յանցաւորու-
թեան ։ Սպառնացար, և ոչ զարհու-
րեցայ ․ արգահատեցեր, և ոչ երբէք
լուայ, որ է ապստամբութեան յայտնի
նշանակ ։ Քեզ արդարութիւն հանդեր-
ձեցեր ․ բարերար, և ինձ ամօթ և
պատկառանս պատրաստեցեր ․ քեզ փա-
ռըս վայելչականս, և ինձ նախատինս
յարմարաւորս ․ քեզ քաղցրութեան յի-
շատակ, և ինձ մաղձ քացախեալ 'ի կա-
տարածի ․ քեզ բարեբանութիւն անլը-
ռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի ․
քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և
ինձ մերժումն տարագրութեան անյու-
սալի ․ քեզ խրախունս բազմարժանիս,
և ինձ պատասխանատուութիւնս ամե-
նավարանս ․ քեզ բարձրութիւնս անճառ-
գովեստից, և ինձ զաճիւն լիզելոյ պա-
տիժ ձաղանաց ։

Բ ․ Եւ արդ՝ ընկալող դու, բարեաց
ընտրութեանց անկշիռ սահման, զքո-
յոյժ ախորժականաց կնդրկաց պտղոց



վերաւեալ ըստ քեզ, և ես զիմոյս աս-
տէն առ ամէն պարտաւսնս յօգուտս
կրկնակի բարդեալ ինձ ըստ իս ։ Իսկ ե-
թէ անպատմելին մաղթանաց այս էր
յանձնառութիւն, իսկ ինձ զիս հիւ-
սեցից չարս և տաղս բանից գարշելա-
նաց, որ քան զամենայն դժնեայս յա-
ւէտ վրիպեցայ ։ Մոլորեցայ անառակ
ընթացիւք 'ի միտս վայրենիս յանդըգ-
նեցայ շրթամբք խօսից 'ի բանս երկրա-
ւորս ․ զակատեցայ անկասելի 'ի պատ-
կառելեացն գործոց ։ Փքացայ, վերա-
ցայ, որ յետ սակաւ մի ժամանակի 'ի
հող մահու եմ լինելոց ․ գոռոզացայ,
բարձրացայ, որ և ոչ զգլխաւորն հոգ-
ւոյս տուրեւառութեան չնչոյս ունիմ
'ի ձեռին ։ Ամբարտաւանեցայ փոշիս
չնչաւոր, ամբարհաւաճեցայ կաւս ձայ-
նաւոր, հպարտացայ հողս անարգու-
թեան, 'ի վեր ամբարձայ մոխիրս մեր-
ժելի, բազուկ կառուցի բաժակս մահ-
ուելի ։ Տարածեցայ առաւել իբր վէհ,
և դարձեալ իբր զհեղեղեալ առ իս ինքն
ամփոփեցայ ։ Բարկութեան քայլ ցո-
լոցայ տիղմն բանաւոր ․ իբր զոմն մեռ-
ք մեծամեծացի, որ ընդ քառատանեաց

մահու եմ փակեալ ։ Գիրկս արկի կենցաղոյս սորա , և 'ի քեզ թիկունս փոխանակ գլխոյ դարձուցի ․ 'ի թախիծս մնաց ընդ խաւար խորհրդոց ոլորոյ ․ զանարատ հոգիս մարմնոյս փափկութեամբ յաւէտ վատեցի ․ զզօրութիւն աջական կողմանս տկար արարի , ահեկանացս կոյից ուժգնութիւն տալով յաղթեցի ։ Զքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ , զոր չէ աստ գրելի , և ոչ պատկառեցի ․ իբրև զհաւ վայրենի որսացայ , ըստ Ովսէեան բանին առ Եփրեմ , 'ի նախնին իմ ամլութիւն ։ Ցաղօթարանն վայրի ընդ պատարագմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ ․ ոչ կացուցի յատին զերկիւղ մտացս երասանաւ բանին ։ Ընդ հին չարութեանցն նորոգ ինքնաստեղծութիւնս գտի ․ անուրս ըստ Յոբայ ծանունս և անտանելիս ինձէն ինձ սաստկացուցի ․ առիգած անկարկատելի ըստ Երեմիայ՝ զանձն իմ արարի ․ իբր զվիժած անգրելի կոչման ըստ առակարկուին՝ 'ի մարդկանէ համարոյ եղծայ ․ իբր զհանդերձս ինչ ապահարից ըստ Եսայեան բանին , զաղբաւոյ ․ որպէս զթրծեալ ամանն խե-



ցեղէն փշրեցայ անարծածելի ․ ըստ բամբասանացն Եդոմայ 'ի մարգարէէն՝ զչորրորդ չարին անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի ։ Եւ զի՞նչ օգտութիւն առ այս ․ և զայս յաւելուլ ընդ այս ․ քանզի զկամն իսկ գիւանուէր Մողոքայ առի ինձ այսրէն առ գժոխոյն ժառանգութիւն , լքեալ զերկնայինն յեղանակաւ՝ իմն օրինակի նմանագիր ձեւակերպութեան ․ որպէս սուսկ պատկերի ստեղծն Ռեփանայ բաբելականի՝ յԻսրայէլէ պատուեցեալ ցուցաւ 'ի Սինա ․

Դ ․ Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակութենէ դարձեալ փոխեցայ , զրկեցայ , ելայ , հեռացայ , բաժանեցայ և անպատուաստելի կարեցայ ․ արդ ընկալ զիս , Տէր , վերստին կերպարանեալ 'ի պատկեր հոգւոյ , զանարժանս կենաց իբր զմահապարտ , իբր զչարագործ , իբր զպատկառեալ , իբր զկոխան եղեալ բանսարկուին ․ որպէս զանբժշկելի մերժեցեալ , որպէս զհասեալ յատակս մահու , որպէս զգարշեցեալ , որպէս զկոստան գտեալ քո կոչմանդ , որպէս միանգամայն 'ի կորուստ

վարեալ, որպէս դեգերեալ, որպէս վանեցեալ. որպէս տարակուսեալ, որպէս Թշուառացեալ, որպէս վհատեալ, որպէս կործանեալ. որպէս խորտակեալ. որպէս բեկեալ, որպէս Թախծեալ, որպէս հոգի տրտմեցեալ, որպէս Թշնամանեալ: Իսկ դարձեալ ակնարկելով քո՝ գԹած, մարդասէր, հզօր, 'ի յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ, որպէս խոստովանեալ. որպէս 'ի յոյս քո դիմեցեալ, որպէս զապաշխարեալ: Որ կշռես, գրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ և զաղդումն շնչոյ հեծուԹեան, զկսկիծ շրԹանց, զպաղատել լեզուի եւ զտխրականուԹիւն երեսաց, զկամս խորհրդոց եւ զյօժարուԹիւն խորուԹեան սրտից: Որ փրկուԹիւնդ ես անձանց, և տեսող ոչ գործեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներեւուԹից. պաշտպան յուսացելոց. և բարեխնամող Տէր ամենեցուն: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ԻԱ.

Վերստին յաւելուած կրկին հեծուԹեան նորին հոգւոյ առ նոյն այլեր մաղԹանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կայի երբեք 'ի յոյս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ՝ ըստ գրոյն. և քանզի ոչ փոխեցայ 'ի նախակարգելոցդ, եւ ոչ ընդ բարւոք ուղին ընԹացայ, ընդէր ոչ զխոստմնական հետոյն խաւարայնոց զդէմս ցուցից 'ի սահման կարգի այսր ընԹերցուածոյ: Առ որս ածեալ յարմարեալ առ սոյն զկերպարան տեսակի բանից երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ անփոփոխագրելի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ առանձին զմնացեալ չարուԹեանցն զբիծս. զոր յաջորդաւդ է իմանալի:

Բ. Զօտար ժանտագործս արժանապատիժ՝ անձեցուն արարի գնացիւք անսաստուԹեան զգունդն Բելիարայ:

Նաքաւս կայծից և ցոյցս վաղից խա-
ղալկայն գիւաց գարշելեաց ճարտար
խաբողաց ծուլութեամբս խմով չնոր-
հեցի : Գամս դաղմնիս և խոցոտեալս
անյայտս 'ի կործանելոյն դահճաց ըն-
կալայ : Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն
Քրիստոսի , քան.թէ անդրէն առա-
ւել կրկին խոկ զօրացուցի : Վասն ի-
մոյ հկքոյս անօրէնութեան՝ անուանդ
Յիսուսի հայհոյի 'ի մէջ ազգաց ,
որպէս վասն Իսրայելի 'ի մէջ հեթա-
նոսաց : Հարուածս հարուածոց վնա-
սակարս ապականութեանց ժանտոյ և
թրթրոյ և այլոց կերչաց վատնողաց
զծաղիկ հոգւոյս , ըստ որքոյն Յովելեայ
հրաշական ողբոյն , որ 'ի ցոյցս երկրի
վասն Իսրայելի՝ յառակս հինից և չա-
րաց հոգւոց , յիս ինքն անկեցի , ըն-
տեղծանել զնոսա պատրաստեցայ՝ քան
թէ սատակել : Բիւրս կուտեալ հաւա-
քեցի անձին խմուլ մարտիկս մահաղէ-
նըս , կշտամբիչս ինձ գոյացուցի անի-
րաւս և անպատկառելիս . ներհակս ինձ
զօրացուցի ապառումս և անկռուելիս .
դառնիմս ինձ առի մասունս ընդ քաղց-
րաւէնեացն ճաշակաց . առ սատացն



ժիշտ նենգաւորս , և առ բանսարկուն
յաւէտ հաւատարիմս : Աւաղ աղէտիս
փիշտ վտանգիս , խաւար ամօթոյս ,
մութ պատկառանացս . զիա՞րդ և առ
բանիւ յանդիմանութիւն համարձակե-
ցայց . մեծ է ձայնս բուժի , և անբե-
ռելի բողոքս աղաղակի : Քանզի թէ
զհոգիս էր զիմ տեսանել , տգեղս եւ
նսեմս և ամենեւին նկրբեւեալս , ցա-
ւովք հեծութեանս 'ի վերջինս վարեալ
վարանումն , եւ մինչատեալ աղտեղեալ
գունով զազրութեան իրր զպաշտօնա-
տար մեհենի . վասն զի նոյն է տպա
տանել ձուլեալ պատկերի՝ եւ մեղաց
ախտի : Արդ՝ ես գնացի ընդ այս ճա-
նապարհ կորստեան հետոց՝ խաւարի .
եսու զբաժինն քո ցանկալի յանապատ
անկոխ , ըստ մարգարէին որ առ քա-
հանայն Իսրայելի անհաստատութեան :

Գ. Եւ զիա՞րդ ասացից անձին ի-
մում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս . և
ի՞բր անուանեցայց բանական՝ անբանի-
ցըն յիմարութեան կցորդեալս . և ո՞ր-
պէս կոչեցայց տեսանողական՝ մթացու-
ցեալ զլոյս որ յիս . և ընդէ՞ր համբա-
ւեցայց զգայական՝ զիմաստից դրունս

փակեալ. կամ որո՞վք ցուցից տպաւո-
րութիւն նկարագրութեան անեղծին
շնորհի՝ անձամբ լինձին յոգի մաքա-
ցեալ. նա և ոչ շարժողական և կամ
շնչական ունիմ անուանել. թող թէ
հոգեկան կամ միայն ընդունական, ան-
պիտանս 'ի թիւս անօթոց, անարգս
'ի բարինս որմոց, արհամարհեալս 'ի
կարգս կոչեցելոց, վատթարս 'ի յաղգա-
հրաւիրելոց, արհաւրօք մաքուր պակու-
ցեալս, անխրախուսելի 'ի բոլորեցունց՝
ցաւովք եւ տանջանօքն Երուսաղեմէ
ըստ Երեմիայի բանին խրատեցեալ,
պակասեալ աւուրս 'ի հեծութենէ, և
ընթացք ամաց 'ի հառաչմանէ, ըստ
Նուագարանաց երգողին: Իբր ուտեալ
'ի ցեցոյ և փայտ 'ի յորդանէ, ըստ Ի-
մաստնոյն բանի՝ 'ի խիթմանէ սրտի
հալեցայ. իբր զաստոյն տարդից մաշե-
ցայ ըստ սաղմոսողին: և խոտոյն գը-
տայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ
վաղորդայնի, ըստ մարգարէութեանն
ձայնի՝ սպառեցայ: Այլ ոչ 'ի մարդ-
կը ունիմ զյոյս, եթէ անիծեալ 'ի տե-
սանողէն անյուսադրելի վհատիմ. այլ
'ի քեզ, Տէր իմ ոգեսէր, որ ընկալեալ



'ի քոյդ գթութեանց բարեաց անքա-
ւից, և 'ի բեւեռելոյն ժամու 'ի խա-
չին մաղթեցեր մեծդ ողորմութեան առ
Հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն:
Արդ՝ շնորհեա ինձ յոյս քաւութեան,
կեանք և ապաւէն, և 'ի տուր շնչոյս
թշուառի՝ առից զոգիդ քո բարի: Ե-
քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով՝ զօրու-
թիւն, յաղթութիւն, մեծութիւն և
փառք յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ԻԲ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին
հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ԴԱՐՁԵԱԼ պղպջականեցից 'ի
նոյն շառաչնակ բարբառ դկշտամբա-
նաց եղծման ջարավերալ անձինս, ա-
ծեալ մատուցեալ կրկին կացուցեալ նո-
վին պատկերաւ 'ի նոյն պայմանի. Թե-
րեւս գրեսցէ ինձ ամենապէտն զայս
յանդիմանութեան զաստակնիկք կսկծե-

ցուցանողականս բանի ճշմարիտ խոստովանութիւն համայնից գործոց գաղտնութեանց չարեաց։

Բ. Այլ ոմն ձիս խօսնական կարծրեալս սանձակոտոր արձակերասան, յաւանակս անհամբոյր վայրենական և անկրթական, երինջս ուտողական անուղղական և անվարժական։ Մարդս մոլեգնական տարապրական և կրտտական, մանուկս մեղանչական անխրատական և փարատական, տնտես մահապարտական տարտամական եւ անգործական, բանականս անասնական գազանական և անմաքրական։ Զիթենիս անմայական անպտղական և կործանական. մարմինս հոգւոյս իմ թախծողական դատողական և տանջողական, խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական։ Ոսկի շարս կայսերական՝ արդ վատնական եւ անգտական. ծառայս ոխակալական փախստական և թշուառական։

Գ. Ահա ես նոյն ինքն ինձէն կամաւորաբէս անձնատուան և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մնախաբ, կամակոր խոկ և սրտաբեկ, ուշամուաց և



հանճարաղբաւ, զգայաղբիւր և իմաստասպառ, յայրատատես և եղեռնալուր։ Ես աստուստ և անդուստ ընաւ ւիւք բոլորքամեք մահաբեր երկամբք վիրաւորեալ, ոչ միով իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրութեան քեղ պիտանացուս, Տէրդ բոլորից, ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն, որ դիեցուցին, ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ձգեցի, և զը՞երդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեան ջամբեալ մատուցաւ։ Զի եթէ ես ինձէն անձին իմում գժնեայ դատախազ համբարձայ այսքաննօք բանիւք, և ունիմ տակաւին զաւր բարկութեանս անխոնարհելի, ո՞վ օք 'ի յերկրածնաց ատոի զիս ողջերցէ. զամենայն խայտառակեցից, զընաւ էութիւնս դատեալ տուժեցից, զհամօրէն զվնասակարայն զգունդ գանեցից, զխոցողայն զնուորութեանց դատախազեցից, զզայականացն գլխաւորութիւնս կշտամբեցից։ Մեղայ ամենայնիւ յամենայնի, ողորմեա գթած. ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մաւախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ

պարտաւորութեան, անկցելի ձորձով
ոխալեալ առաջի քո՝ անփոփոխելի. և
դու միայն խնկապէս գթած օրհնեալ
մարդասէր, ընդ աջմէ խնդս փրկու-
թեան կանխեալ ներութեամբ անպէլի։

Դ. Արդ՝ մատո, խնամակալ. հը-
ղօր, երկնաւոր բարի, ամենից հաս-
տիչ յոչէից, զեանիդ զօրութեան ի-
մաստից կայծակն 'ի գործի ազդման ըն-
ղուխս շարժութեան, առ իմ մաքրու-
թեան յամենաւոտ զգայական գոյա-
ւորութեանց յիս մաճաւորեալց՝ քո ձե-
ռակերտից, որքոց առ 'ի քէն եղելովք
և բժշկելովք կրկին հանդերձանօք, ան-
պակաս ձայնիւ, անհատ բարբառով,
քեղ վերընծայել գոհաբանութիւն 'ի
փառս մեծութեան Հօրդ քոյ Աստու-
ծոյ մերոյ, յաւիտեանս. ամէն։

---

# ԲԱՆ ԻԳ.

Վերստին յաւելուած չքնին հեծութեան նորին
ձայնոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Տէր. Աստուած ամենայնի. զօ-
րաւոր յամենայնի, անպարագիր և ան-
վայրափակ տեղի ամենեցուն, բոլոր
լրութեամբ հուպ յամենեսին, անու-
րեք վայրից, և չէք սահման առանց
քոյ։ Ոչ երեւեալ երբէք. և ոչ անտե-
սանութիւն առանց քո ծագման լուսա-
ւոր։ Փառք ահաւորութեան, անուն
անհասութեան, կոչումն մեծութեան,
ձայն անբաւութեան, խոկութիւն ան-
քննութեան. անմատչելի հեռաւոր,
և անընդմիջելի մերձաւոր, տեսող հե-
ծութեան, նկատիչ թշուառութեան,
մտակաց թախծութեան, ամենաբուժ
հնար անճարութեան, Հայր գթու-
թեանց, ծագող ողորմութեան, Աս-
տուած մխիթարութեան։

Բ. Հայեաց, Տէր, ողորմութեամբ 'ի
պատկեր վշտաց դառնութեան բազմա-

վտանգ կրիցս կարեաց, զոր հանդէպ
քո տարածանեմ, կցորդակից լեր բժըշ-
կապէս, և մի՛ 'ի խոյս ընտրութեան
կոչէր դատաւորաբար: Արդարև մեծ
է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր
վարանման, յորժամ լցէ մարմինն մե-
ղօք գրաւեալ. և անձն 'ի գործոց չա-
րեաց ոչ մեկուսացեալ, գործնականացն
գործի ամբողջութեամբն կարեաց կապ-
եալ, զանգուածն հանդերձանաց մահա-
ցու կրից շաղախեալ, զգայութիւն
մտին խմորից խեթիւ խոցոտեալ, ա-
կընկալութիւն բարեացն բնաւին բար-
ձեալ, և 'ի բանականութեանն ընդ անա-
սունս դասակարգեալ, և զաղէտ դար-
շութիւն ընդ գոյութեանն շարամանն-
եալ, և տեսականացն աչք եղեալ խմնա-
լեքն վիրաւորեալ. և 'ի սատանութենէ
յանցանացն յիշատակի յաւէտ յուսա-
հատեալ, և տագնապաւ նախագործե-
լոյն միշտ տարակուսեալ, և յատկու-
թիւն աղերսին 'ի սպառ սղոտեալ,
և խղճիւ մտացն յուղմանց կրկին ճեն-
ճերեալ, և ձեռն 'ի մաճի գործոյն ըզ-
յեանոցն հետադարձեալ, և կերպ 'ի յա-
ռաջ գիմեալ՝ ռաք 'ի վերջ կոյն յետս-



հարեալ. և գիտութեամբ էլին՝ 'ի չէ-
լին միշտ խաբեցեալ, և 'ի մտացն մարտ՝
'ի փոքունցն յաղթահարեալ, և 'ի թա-
ռանչ ոտին հապաղին դուռն հրդե-
հեալ, և խոնաւ զօրութիւն քմացն ա-
մենայն ուրեք տոչորեալ, և մնարեալ
միգով յամենայն մտաց պարփակեալ.
և լայնութիւն ակնկալութեանն ամե-
նեւին 'ի սպառ ամփոփեալ, և անբե-
րելեացն այժ 'ի զգալիսն տպաւորեալ.
և եղկութիւն կորստեանն 'ի յուշ անդ-
եկեալ, և դատակնիք հատուցմանն 'ի
գիւանի մտացն գրեցեալ, և բարեկա-
րին ակն 'ի ցասումն իմն երեւեցեալ,
և լոյն բնութեամբ՝ զանկուածոյ հո-
գոյս զայրացեալ, և ահաւորութիւն էին
ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհա-
րեալ. և միշտ սրտմտանք բանից բա-
նաւոր մխրոյս բարկացեալ, և իրա-
ւանցն վիմօք զարժանիս մահու կոչկո-
ճեալ. և որ իմն է տաղանդ՝ յանաւա-
կըս ատէն կորուսեալ, և պատուական
իւրն ատացուած իբրեւ անարգ յերկրի
թաղեալ, և տաժանմանցն արդասիք
ծուլութեանն մթոլ ծածկեալ, և իբրև
զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի չէ-

ընեւեալ, և պատասխանարան լեզուին՝ յիրաւանցն օտար կարկեցեալ, և անհամբոյր շրթանցս դրութիւն՝ օրինաւոր դատմամբ պապանձեալ, և յուզմունք մտացս՝ 'ի զանազան մասունս ցնդեալ, և զկեալն 'ի վերայ օգտին՝ ոչ ինչ գիտացեալ, և 'ի կշռութիւն բարւոյն ընտրութեան՝ յիմար երեւեալ, և ընթացք ելիցն՝ նշանչմամբ չարին խափանեալ, և փառաւորան իւրոյն՝ աճիւնովն հնոցի լցեալ, և անուանս գիր 'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդձրանութեան անդ արձանացեալ:

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ, եթէ պատգամաւոր խռովութեան, եթէ մատենագէտ, մուրհակի կորստեան, եթէ օրինաւոր, անիծից, եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափելոյ. եթէ բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառում, կսկծման: Եթէ ջրովն ընտրութեան փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ: Եթէ բերս նկատեմ բարութեան, 'ի կարծեաց չարեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ, եթէ փոքր ինչ խռո-



վիլ, սպառեմ. եթէ՝ սակաւ մի թընդիւն, ընդոստիմ. եթէ 'ի խրախճանս ընկերեաց հրաւիրիմ, գողամ: եթէ մեծիդ յանդիման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ խրատամբք քննիմ, համրանամ. Արդ՝ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարակուսանացս 'ի վերայ միմեանց բարդելոց, որք զատոյեւ զդայակմանց սրտիս գթութեան 'ի ներքուստ անտասատ անբժշկական ցաւօք՝ աներեւակի նետիւք խոցոտեալ, անպարտաքերելի մշտակիր յարամնայ հանապազանուլ բեւեռեալ սատուստ ընդհզայս, լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակման մահու գուշակեն: Թարախ մթերից պատեալ զերկաթով գաղտնեացս ծածուկք ողջէն ինձ տագնապի՝ վէրս պահեալս անխնամարկելիս ընդ երս չնչոյս տուրեւանութեան. յորոյ նեղութեանց չարաչար ճնշեալ ապաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կոկողագին թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութեան յերկրպատեղծիցնահատակոյ ընդ իմ մաղթողաց. վերջին հեծու.

թեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենաքումբք նուիրողք՝ զաղերսանս ըղձիցս 'ի սորինայնոցս սատի յերկինս առաքեմ։ Շնորհեա, Տէր, անդորրութիւն կենաց հանգստեան ողորմելի վաստակեցելոցս 'ի յընդունայն երկրագործութիւնս, համայնդ յամենայնում, ամենայնիւ առաջեալ քեզ փառս։

---

## ԲԱՆ ԻԴ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին է հոգւոյ առ նոյն ողբերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ որո՞վ խնդրոց արժանաւոր վարկանելով զիս մատչիմ աղերսել, արքայութեա՞ն յորմէ վրիպեցայ, եթէ փառո՞ց վայելչութեան յորմէ զրկեցայ, թէ կենո՞ց անմահականաց յորմէ հերքեցայ, թէ ընդ հրեշտակա՞ն պարակցութեան յորմէ օտարեցայ, թէ ընդ արդարո՞ց մասնակցութեան յորոց ձեղքեցայ, թէ սուրբ որթոյն կենդան-



ւոյ յորմէ քանցեցայ. թէ սուրբ տնկոյն բերկրութեան յորմէ դոսացայ, թէ ծաղկի փառացն շնորհի յորմէ թափեցայ, թէ պանծանացն ժառանգաւոր յորմէ կորայց, թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, թէ դրախտին լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ 'ի սուրբ զարձին յուսացայց յորմէ խոթեցայ, եթէ 'ի լուսոյն խղճի զիմեցից յորմէ մեկնեցայ, եթէ Ցիսուսի յանկերան յօդիմ յորմէ մերժեցայ, եթէ 'ի թեւս նորա մերձիմ յորմէ օտարացայ, եթէ յապաւէնն ապաստանեցայց յորմէ խեթացայ. եթէ 'ի փրկութեանն նորոգութիւն յորմէ մահացայ, եթէ 'ի զգաստութեանն զուարթութիւն յորմէ ես լըքայ, եթէ 'ի կանոնն կենացն ուխտի յորմէ փոխեցայ. եթէ 'ի սահմանն հաստատութեան յորմէ սահեցայ, եթէ յանշարժ վիմին անդութիւն յորմէ սասանեցայ, եթէ 'ի շուրս զաւմարտակին յորմէ հասեցայ, եթէ 'ի քաղաքն անդրանկաց շինիմ յորմէ գերեցայ, եթէ հանապազորդեա՛ն հացին աղօթեմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փոխադրութիւն

երկանցն խնդրեմ յոր ոչ քրտնեցայ․ թէ պարգեւօքն պսակեցայց յոր չհանդիսացայ, թէ արձա՞ն ինձ կենաց գըրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեա՞ցդ ձիր յիշեցից զոր միշտ մոռացայ․

Բ․ Ահա հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն, տկարեցայ 'ի բորոտութեանցն գարշութենէ համայն ախտացեալ, ամենայնիւ ապաւեալ զմարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռայց Աստուծոյ ։ Դոյզն պալար փայլունակ ադեղ լինացեալ, մնացուած ինչ պահեալ նախունակ երկդիմի կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ․ պարծանացն նշոյլ ամենեւին ինձ չիջաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին աւերացաւ, ելք կենացն բընաւին փակեցաւ, մխիթարութիւնն բարձաւ, դատաստանին ատեանն մերձեցաւ, թոյնք մահուն ինձ արծարծեցաւ, ապաւէնն կրկին ինձ կենդանացաւ, լատին դաշտք վիմօք խցաւ, շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելչութիւն աւերացաւ, հանճարն



առաջնորդական խափանեցաւ, կշռամբանոյն փուշ բազմացաւ, անօրէնութեանն ուղէշ ծաղկեցաւ, բոց գեհենին ինձ բորբոքեցաւ, ծառայութեանն լուծ սաստկացաւ, որկրութեանն կամք զօրացաւ, ունողն յարկին կառուցման ահա անկաւ, բարձրութեանն վատահարան կործանեցաւ, ընտանութեանն միաւորութիւն անջրպետեցաւ, որդեութեանն սիրող հոգին Աստուծոյ տըրտմեցաւ ։

Գ․ Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութիւն, տանջանս, խէթս, տըխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյս անյուսալիս, ամօթանս անպարտելիս, խայտառակս անմերժելիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասրելիս, երկայն ուղեւորութեան ապաձեռն անթօշակութիւնս ։ Իսկ դու փրկութիւն զօրութիւն և օգնութիւն, ողորմութիւն լուսաւորութիւն քաւութիւն և անմահութիւն, տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի․ որ

ընձեռեա ջուր պասքելոյն 'ի ծարաւուտ վայրս անապատի. օրհնեալ, բարեգութ, հզօր. մարդասէր, երկայնամիտ, խնամակալ. հնարաւոր, այցելու, պաշտպան, աննախանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լրութիւն անուազ. երանութիւն տօնելի. ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ եւ մատո քաւեալ եւ սրբեալ զիս զամենապարտս, բանդ կենդանի, առ հաւատարապատիւ քո Հօգի, զի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի ։ Եւ 'ի ձեռն քո խորին կամօք մաքուր նուիրեալ, զօրեղն ինքնութեամբ զիս Հօր ընծայեալ, անդէն առ նմին նովիմբ միշտ 'ի քեզ շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանելի ։ Վասն որոյ քեզ ընդ Հօր քում հոգւովդ Սրբով՝ երրեակ անձնաւորութեանդ 'ի միում՝ բնութեան և 'ի մի աստուածութեան փառք. և 'ի ստեղծականաց էից գոհաբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

# ԲԱՆ ԻԵ.

Վերստին յաւելուած իրքին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղէրս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԲԱՑ ք֊անզի 'ի վերայ այսքանեաց գերութեանց ամենաթշուառ վըտանգաւորիս մի զմիոյ եղ և ելս առնելոյ. զոր զկերպարանս անցիցն 'ի մանէ վերաձառեալ քդ նախագրեցին. ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն աղէտիս ։

Բ. Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի ։ Զոր Եսայիաս մարգարէ ըղյանկարծադէպ կատարածն որ 'ի պարսկականն հինից՝ Երուսաղեմի և Սամարիայ կործանմանն, նմանութեամբ այսըր օրինակի կերպաւորեցոյց, որ և առ իմս հոգեւորական խորտակումն զուգաձայնել ոչ է սխալական ։ Քանզի

մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյն կանկած ակնածից 'ի միտ բերելով առխորոց փոքր միջոցին, որ 'ի մէջ հանդստեանն եւ աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամառայնի բքաբեր հողմով ժամանեալ երեքալեանն զխմկցութեամբ՝ ամբոխեաց ըղհանդարտութիւնն: Ուստի նաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ: Թեւոյն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման՝ 'ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին թռչարան յանկարծակի ծուէնս պատառեցաւ, շինուածոյն շուք անզարդեցաւ. առասանք ձգողականացն խզեցաւ: տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամոլոյն կըցորդութեան բաժանեցան, սամիք ուղղչացն հետոց դալարեցան, լաստ հիմանլին հաստատանի ընկղմեցաւ, ղեկացն կառուցմունք անդրէն սուզան, չուոցն յարմարութիւնք պակասեցան, ոլնափայտին պատսպարան խելոյն բեկաւ,



կապարանք զստին հաստատածոյ յօշատեցաւ. պողք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շըթանցն եղերաց խախտեալ ստեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ, գահաւորակին հանգըստարան շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք 'ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղոյսք ամրման բեւեռռացն քակեցան: Արգասիք իմն յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ: Նաւուղիղն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն 'ի ծնօտի եդեալ՝ արտասուաց դետս իջուցանէ: Նշմարք սակաւ մնացուածոցն՝ 'ի ծայրից ծփմանց ալեաց ծովուն, իբր խաղխաղեալ բանաւոր, ողորմագին թախծանօք հեծէ: Վ.ան զի թէ զբարի նաւավարն երկնաւորոքըն զօրօք յաշխարհէս ծովէ առ 'ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս աւցէ աշխարհէ բանիս յարմարութիւն, ոչ ինչ վնասեցէ 'ի լըտուղութենէ: Քանզի արդարեւ եկաց բարեգութն Տէր յառաջ մարդկութեանս զթացեալ ազգակիցն, եկաց առ

նմին և զներուողէմ մոլեալ և զցուգաս մոլեգնեալ, յորոց երկուցն կորեաւ վստահութիւն յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի. խոկ մեւն հասեալ յատակս անդնդոց՝ առատան յուսոյն ձեռամբ ունողին յանքոյթն արտաքերեաց խաղաղութիւն.

Դ. Արդ՝ լոյս թէ յաւելեց հայել զաղմախորտակելի տապանոյ մարմնոյս իմոյ նորոգեալ. լոյս արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ. լոյս արդեօք տեսանել զհամանեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կըցեալ. լոյս արդեօք տեսանել զոյգնաթախիծ սիրտ վշտացելոյս բերկրեցեալ. Արդ՝ լոյս ակն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան ընութեանս կրկին հանդերձեալ. լոյս արդեօք թէ տեսից զբակտեալ տաղաւար թշուառացելուս միւսանգամ կանգնեցեալ. լոյս արդեօք յուսալի նայել զապամերժեալ վերիս ազատեալ. Ապաքէն գուցէ ակն ունել զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազդուրեալ: Արդեօք տեսից զփայլեշութիւն ընտանիկ քո պայծառութեան յողորմութիւն ինձ երեւեցեալ. Եթէ



տեսից երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ ժպտեցեալ: Արդեօք լուայց ընդ ձայնի գուժիս աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ. Արդեօք տեսից զխիւրակործան վնասեցեալըս անօթ կազմեցեալ. Լոյս թէ տեսցեն պատուհանք աչացս խաւարից ըղմուրհակ պարտուցս իմոց պատառեալ: Եթէ յայտնեսցի օրն իմ անձկութեան շնորհին քաւութեան բարւոք ինձ ծագեալ. Արդեօք մտից 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ քեւ առաջնորդեալ. լոյս թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ Եզեկիելի, ցամաքեալս 'ի կենդանութեանց եկաւորութեամբ ազդողական շնչոյս զօրացեալ. Լոյս թէ յաւելից հայիլ 'ի տաճար սուրբ քո, աղաղակաւն մարգարէին 'ի սրտոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ. Եթէ լինիցի խաւարամտունդս մթացելոյ ծագման առաւօտ. Եթէ հասցէ տեսանել զապագնացեալս մշտատուոյց յեղանակս գարնանն մօտ. Եթէ տեսից զցօղ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոյ ինձ արօտ. Եթէ լոյս արդեօք նկատել զգաղտնաբեկ

հերքելն ոչխարս վերստին կամաց զգըթութեան քո հօտ :

Դ • Ես քանզի ըստ բանին Յովբայ շուրջ պատեալ են չարեացն հնարք՝ ընդ որ ոչ կարացից անցանել. իսկ եթէ ըստ ողորմութեան բարերար կամաց քոց ցուցցես , զթութեան քո դուռն բացցի. ճառագայթ փառաց քոց ծաւալեսցի , խնամք ձեռին քո յայտնեսցի , արեգական կենաց օր տարածեսցի , առաւօտին ըղձալի տեսիլ մերկասցի , առատութիւն քաղցրութեան քո աղբերասցի , փոխ Արարչիդ կոչից հասեսցի , ծորումն անապակ սիրոյ քո հեղցի , ծագումն աւետեաց շնորհի քո երեւեսցի , պարգեւիդ քո ծառ ծաղկեսցի , մասունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի • համառօտեալն ակնկալութիւն հանդիպեսցի , հատուածեալն ձայն ողջունի քոյ Տէր , լուիցի , հեռացեալդ խաղաղութիւն մերձեսցի . յայտնիկ յաւէտ տողին սահմանաւ երանականաւ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ , ապաւինեալ 'ի Հոգիդ քո Սուրբ , որ ընդ Հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փառաւորեալ 'ի լոյս անմա-



տոյց , որով կեանք եւ երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս • յաւանդ անկորուստ ընդ իս պահելով առ հաւատչեայ ճշմարիտ յիշատակի , 'ի ձիր անեղծութեան անուամբք անձառելեաւ ահաւորութեան հզօրի սիրոյ միայնոյ եւ անքննելի տէրութեան երրեակ անձնաւորութեանդ՝ որ եւդ յիսկութեան յէութեան եւ յարակայութիւն բարձրութեան • քաղցրութեամբ ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ պսակեալ հանդերձեալ եւ թագաւորեալ : Այո՛ , առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կատար ես , գըթած • եւ քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի եւ 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի , յաւիտեանս • ամէն :

## ԳԼԽ. ԻԶ.

Վ. երագոյն յաւելուած ջրջին հեծութեան նոցին հոգւոյ առ նոյն աղէրս մաքրանայ բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Ե՜ս արդ՝ ստուգապէս և կրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն և զգանիցն յարմարութիւն հանդերձեն, 'ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առ աւել սաստիկ մարմաքեալ ձմեցուցանեն զաղէտս կարեանցն սրտին ըղձից առ այտասուացն բղխմունս, ուստի և բաղմեալ իմ 'ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանայ՝ որք զալեացն յեղանակեն բանաստեղծութիւն, և ես ընդ նոսին նոցին հեծութեամբ աւաղական ձայնարկութեամբ զանձինս տարածանեմ զվշտակրութիւն. որ ոչ ըղնաւին մեռեալ աշխարհի, եւ ոչ խկապէս կենդանի Աստուծոյ. ոչ ջերմ՝ սակ և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի առեստարանչին գրեալ 'ի յայտնութեանն. երկցս առեալ երրեակ անրութեանն և ամենատես սրարչութեանըն. Եւ այս են պատկանեալ թախծականացն կերպագրութիւնք, կրկին ողորմելի այսու երեւեցեալ՝ որ 'ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զթշուառութեանցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ շաղկապեալ.

Բ. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեռամբ մեծաւ 'ի տուժի. ես ապիկար մատնեալ անարժան գործովքս յիրաւի վաճնիչ արքունի գանձուց կրկնապատ և անթափելի. պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի. բիւր քանքարոյ խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ոնկի. Անբարեխօս կալեալ 'ի պահեստ դառն արգելանի. հեծումն եւ վատակ ցաւոց ձաշակեալ յանընդբանտի. անապաւէն տանջեալ անթոշակ կամ ողորմելի. այլ յեղանակ ինձ ողբականաց սաստուստ կնքեցի, փոխադրեցի սովին բարբառով կոծ կոծելի, կարգադրեցի շըջաբերութեամբ 'ի նոյն պայմանի, անհատական թիւ խորհրդական երրեակ սամնեկի. Ադքաստութեանն հնոց յամենուստ մասանց մրկի անպատապար թշուառ վատնեալ սըրտիւ 'ի գրաւի, ապաշխարանաց հոգւով

տաղաչնորհ տըր 'ի վիճակի , անխնա-
մելի հայցմամբ դատաստանն յինէն սպա-
հանջի ։ Մեղաց և մահու զինուք ըղ-
ձայարան գաղտնեաց խոցի , անփրկե-
լի մատնեալ բռնութեան չարեաց գե-
րի , սուր սուսերաւ տատից գթութիւն
բնութեանս յօշատի ։ Յիշատակաւ բե-
մին ատենին 'ի դատաստանի , անծա-
գելի մրայլ շարատես աչաց երեւի ,
անձեռնհատ կապեալ եղկելիս 'ի տարա-
կուսի , աչարկութիւն դիմաց պատկե-
րի վերնոյն տեսանի ։ Յոյժ անարեւ և
անվերարկու 'ի տարտարոսի , անապա-
ւէն մոլար մորմոքեալ 'ի հուր գեհենի ,
անյայտնելի կորուստ կործանեալ 'ի մե-
ղաց վհի ։ Ահա զոր ունիմ արծաթ ան-
պիտան ոչ երբէք յարգի , և ոչ ընդու-
նի և կամ համբարի 'ի գանձ տէրունի ,
հայցուած պղտոր և ձեռն անմաքուր
աննուիրելի ։ Այլ բեկեալ սրտիւ մա-
տանց տառապանմամբ յոյս առեալ դար-
ձի , զդէմս 'ի յերկիր եդեալ պաղա-
տիմ մօրդ Յիսուսի , բարեխօսեա մաղ-
թեա քաւութիւն ինձ մեղուցելի՝ զու-
զօրաւոր փրկանակ կենաց խոկուհի երկ-
նի , քեզ օրհնութիւնք ձայնից և բուր-



մունք խնկոց 'ի յերկրի . և անուշից իւ-
ղոց մատուցումն յամենայնի ։

Գ . Արդ՝ յասացեալ ողորմս հիւսուած
ոյլ մասն յաւելլ , բարեբարին ձօրհաց
արտասուաց պտուղ մատուցի , զկորըս-
տեան խորս չափելով զորքանն երբէք
ոչ գտի , մասնաւորք բանիւք 'ի հան-
դէս նորին ջանացի , զմտացս սրտագեալ
զթեւս յերեւոյթ իրին ոչ հասի . զու-
շին պարտութիւն յանկթարելեացն բա-
ժակ բարկութեան 'ի ձեռն իմ առի ,
զտարտամութիւն տարակուսանացն իբր
ճաշակումն մահու արբի , և այժմ զյան-
ցիցն յանձնութիւն ողորմելի ձայնիւ
յերգ արկի ։ Աներեւոյթ կրակարան
տապոյ բորբոքմամբ մեծաւ անզոլման-
լի , անտեսական իմն քրտաս հալոցաց
ստտիկ եռացմամբ անշիջանելի , ոլոքս
նետից պատրաստեալ դեղովք 'ի շտեմա-
րան խորութեան սրտի , խիթք ցաւոց
խոցոտման մահու 'ի գնացս երակաց գո-
յութեան լերդի . կիրք երկանց անճա-
րակ ճեպոյ 'ի պատուած աղեացս անե-
լանելի . անզօրելի դեղոց չքրմութիւն
'ի յերկիկանաց մասունս երկակի . ան-
հընարաւոր գառնութիւն մաղձի 'ի նա-

խաղուան խնդրոյ կոկորդի · Աւաղս ձայ-
նից լքուցանողաց 'ի փողս շնչոյս խո-
շոյս հնչի · բաղմահատուած կութիւն
չնութեանս ներհակք մխխեանց 'ի պա-
տերազմի · երկչոտութեամբ կարծեաց
վարանեալ ամենայնիւ կայ 'ի վտանգի ·
հարազատաց դաւաճանութիւն անհաշ-
տելի 'ի հաստուածի, ոչ մեռեալ և ոչ
կենդանի թաղեալ 'ի մեղաց գարշու-
թեան տղմի · կասկածաւոր պատժա-
պարտութեամբ վերակենարկելով քեզ
բարերարի, յանակնկալս կենաց վեհ
արտաքսերել 'ի լոյս անձկալի ։

Դ · Նոյն ինքն որ զայս բան տպա-
ւորեաց՝ ընդ երջանկայն պսակեսցի,
ակնարկելով քո ողորմութեան՝ անա-
ռատիցն հաղորդեսցի, վասն զենման
Աստուծոյ բանիդ՝ բարեգործեալ քեւ
կենդանասցի · օրհնութիւն գովեալ քո
շրթանց 'ի գլուխ բաշխողի այսր մա-
տենի, հաստատեսցի ընծայանութիւն
Սողոմոնեան բանիւս առակի, նկարա-
գրեա Հոգւով քո Բարձրեալ 'ի նորո-
գումն անեղծանելի · զի դու միայն ես
երկայնամիտ ներող, քեզ փառք յա-
մենայնի · ամէն ։

## ԲԱՆ ԻԷ ·

Վերստին յաւելուած ձայնին հեծութեան նորին
հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա · Եւ քանզի ըստ ողբաձայնիցս
բանատեղծութեանց վերընծայելոց ընդ-
գրութիւն թղթոյս յարմարեցի կական
և հեծութիւն · հառաչանք կողկողա-
գինք · դառնութեան լալումն և ար-
տասուաց երգ · դարձեալ սկսայց ըն-
ճառ պաղատանաց խոստովանօրէն զըն-
ջականաբար զգաղտնածածուկն յայտ-
նաբերեալ · զի անդրադարձութեամբ
սկզբանն և վերջաւորոքն բանիւք՝ ըն-
նոյն համաձեւութիւն 'ի մի թախանձ
նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնար-
հութեան աստանօր եդից ։

Բ · Մեղայ մեծիդ բարերարութեան՝
անարգս մեղայ · մեղայ ծագմանդ ճա-
ռագայթից՝ խաւարս մեղայ · մեղայ
շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև
մեղայ · մեղայ սիրոյդ վերնում գթու-
թեան՝ յայտնապէս մեղայ · մեղայ ըս-

տացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ. մեղայ գերունակ գործոց գըրկանաց՝ անբաւս մեղայ. մեղայ անհըւաղ լուսոյդ վայելման՝ նենգօղս մեղայ. մեղայ ճաշակման անճառ կենաց՝ բաղումս մեղայ. մեղայ անհաս պարգեւացդ ձրից՝ հանապազ մեղայ, մեղայ գովեալ մարմնոյդ Աստուծոյ՝ մահուչափ մեղայ. մեղայ պաշտելի արեան Արարչիդ՝ խակապէս մեղայ: Ահա արդարեւ օրհնեալ է հաստուած բանի յուսադրական որոյ այսր մեղայի. սոյն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն. համայնից Թոշակ, անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանութեան կամուրջ, ախորժելի վերնոյն. սիրելի սրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անջրջելի պատճառ, բաղձալի աղերս. փափաքելի սեղան, ողտաբեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց գիրք, վաղընջուց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչութեանն յաղթող, անջրպետ հզօր, խորոց ահաւոր, արուեստ բարձ-



րութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել. եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ծանիցէ: Զայն բարեպատեհ հրաշափառական. որ ոչ յիշատակեցաւ 'ի վերջին դատակնիք գառուն լքելոյ. գուցէ առնմին խղեալ համառօտ գլխժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զսահմանն յաւիտենական քակտեաց: Զարդ փառաց մեծութեան, որով նոյն ինքն աստուածութիւնն պատկեալ բարգաւաճի: Քանզի ով որ գիմեալ կալաւ զեղջերաց այսր սեղանոյ սրբութեան, եւ ոչ առ ժամայն պրծեալ 'ի պատժոց անորատ գտաւ: Իսկ եթէ Աքար զարմեան, եւ Սաւուղ կիսեան, եւ Յուդայ սիմոնեան առելով զայն ոչ արդարացան, եւ ես վկայեմ խրատամբք խոստովանեալ զայս սպասման բանի, զի ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի եւ ոչ բովանդակապէս փրկութիւն: Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատ:

Գ. Մեղայ երախտեացդ մոռացու-
թեան՝ վերստին մեղայ. մեղայ մար-
մնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մե-
ղայ. մեղայ առ կեանսդ դրժողութեան՝
իսկ և իսկ մեղայ, մեղայ բանիդ ա-
պախտ առնելոյ՝ չարաչար մեղայ. մե-
ղայ 'ի յոր սատակման ինձէն առիթեալ՝
վատթարս մեղայ. մեղայ պարտականս
անկենդան մահուն՝ ձաղելիս մեղայ. մե-
ղայ անպատկառաւ քո բարձրութեն՝ տաղտ-
կալիս մեղայ։ Վերջին ինձ կրկին աշ-
խար հոգեւոր՝ զի 'ի կորուստ և 'ի կոր-
ծանումն ինձ երեւեցաւ. զի անդարձ
վարատեցայ, զի որդիս թշնամի գրե-
ցայ, զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ,
զի փուշս վարուց դիզի։ Նա եւս առ-
ավին ողբք աղաղակի, զի անձամբ զան-
ձին անարգեցի, զի բազին կորուսչին
գտայ։ Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի,
զի զիս ունիմ առ որ չեմ, զկորուսքնա-
յարդար բաժակս անմաքուր, զեռեալ
որմս զարշունակ, զսին պարծանօք պա-
ճուճեալս, զկոյս 'ի մեայլ շրջեալ, ըղ-
գերանակիր ակնս՝ թշուառացեալ. ըղ-
ջահս փառաց շիջեալ, զամենայնիւս յա-
մենայնի ամենայն իրօք վնասակարս,



առ անօրինականն տէրունականս, առ
յայտնութիւնն աստուածոյինս, առ
երեւմունն արարչագիրս, առ խոնար-
հութիւնն սարսափելիս, առ այն զոր
տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է
պատասխանատուութիւնս քան առ հա-
մօրէն Աւետարանին. զարմանս, հիաց-
մունս, հոգս հալոզականս, անդաճմու-
նըս անհնարաւորս, թուականութիւնս
մնաց անբարդելիս, եղմունս անկատա-
րըս, իջմունս անհասատս, յուսահա-
տութիւնս յարմարականս, յանդիմա-
նութիւն պատշաճականս, ձաղանս պա-
տեհագոյնս, նզովս խրատացիս, անէծս
արժանահատոյցս։ Այդ՝ այսոքիկ են
մեղաւորիս իմ կշտամբութիւնք. եւ
ինքնահարուած տանջանաւորութիւնք։
Գ. Եւ քանզի կարող ես զայս ամե-
նայն զպարտս թողուլ. և զխայթուա-
ծըս մահու բժշկել. Տէր ողորմութեանց.
Աստուած բոլորից. Քրիստոս Թագա-
ւոր, բարձրեալ Հօր Որդի. ստեղծիչ,
գթած, բարերար. օրհնեալ. սուրբ.
հարուստ. աչաւոր, հզօր, ողորմած, տե-
սուչ. ձեռնկալ. հաստիչ. ապրեցուցիչ.
դարմանիչ. կեցուցիչ. երկայնամիտ, անս-

խաղալ, ապաւէն, բժիշկ գոլեալ երկնաւոր, անձառ լոյս, կեանք, յարութիւն, նորոգութիւն, քաւութիւն։ Եթէ հայեսցես մարդասիրութեամբ, ըստ որում քոյդ են ողորմութիւնք, նայեցեալ ՚ի քեզ կողկողիմ և ես. եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առ իս դառնայցես, գոչեմ։ Այլ եթէ անտես առնիցես կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. այլ եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սասանիմ. իսկ եթէ սաստեսցես, թողում. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. այլ եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանիցես, հերքիմ. եթէ զոգւոյ վհատութիւնս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. այլ եթէ սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես, քարկոծիմ. այլ եթէ ուժգինս ակնարկես, տուգանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես,



խնդամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ։ Զբարեացն պարգևս մատնեալ, զերանութիւնն թողեալ, զշնորհն լքեալ, զուխտն ցրուեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զստեղծիչդ ելից բարկացուցեալ, զանձառութիւն շնորհին ընդոտնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ։ Իսկ եթէ առ այս խեղդմահու հեծութեան ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժամանեցուցես, տէր Յիսուս Քրիստոս, զազդեալն գիր լընանիլ ՚ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ՚ի քեզ, դքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ պընդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին ՚ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փառք յաւիտեանս. ամէն։

## ԲԱՆ ԻԲ.

Վերստին յաւելուած կրկին հետեւութեան նորին հաճոյից առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Եւ արդ՝ զո՞ր յայտնեցից, եւ յաղագս ո՞յց նշանակեցից, եւ վասն ո՞րպիսեաց ճառեցից, եւ զո՞րքան ծածկեալըս մերկացուցից, եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց. զներկայի՞ցս՝ զոր ուգէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի. զապագայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմապատիկ շարժութեանցն՝ յորոց գլորեցայ. զխի՞թըն ինձ համարեալ՝ որ է Աստուծոյ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չյիշատակելի. զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթեւագոյնն՝ որ են ծանունք. զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց. զառ գրաւնս հեշտականա՞ցըն, թէ զծայրակատար վաստակալութեանցն. զանիրաւութի՞ցն, թէ զտեսականացն. զառ ձե՞ռն հպաւորութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեւաւորու-



թիւն. զյղնակա՞ծն գլխոյն խածմունըս, թէ զերկարաւորն նետաձգութիւն, զխորութեա՞նն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ. ըղյքնագլո՞ւխին պառնկութիւն, թէ զառողջութեանն անբժշկութիւն. զպարարուա՞ծն չարին մարմնոյս, թէ զոգի՞ն բարւոյն հոգւոյս, զխնամո՞ղին հանդիսանալ յոչ ախորժելեան Աստուծոյ, թէ զբռնադատութեանն տուամբ ձըգին 'ի նոյն մոլեգնութիւն, զառ 'ի մա՞հն մեղաց, թէ զընդունայնութեանն կործանաց։

Բ. Արդարեւ որպէս կամաւ խելագար զերծեալ 'ի ձորձոյ, զաւականացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն գործեալ իմաստնոյն, որ թէ հանճարեղըն վերարկեալն զամօթս իւրեանց. ստաբացեալս 'ի կրօնից, հեռացեալս 'ի կարգաց, 'ի սրբութեան անսուրբ, 'ի կուսութեան անմաքուր, յարդարութեան ամբարիշտ, 'ի բարեպաշտութեան վընասապարտ. բերանովս մերձ առ լըսացողն և հեռի երկիւղածամբք. չըթամբքըս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս. Եւ եթէ պարտ

է զքստմնելեան ասել տատանօր, չար քան զտանջանսն յանդգնութիւն, իբր զուր ինն պաշտօնատարս Աստուծոյ, 'ի մէտս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանելոյ՝ ջանամ և ոչ ինչ օգտիմ, պնդիմ և ոչ հասանեմ, փութամ և ոչ ժամանեմ, անձկամ և ոչ տեսանեմ, փափաքեմ և ոչ հանդիպիմ, կարօտիմ և ոչ պատահիմ, ունիմ զամենայն երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ամենայն աշխարհի: Այլ թող զբազում զայսոսիկ, բարեբար, և մի ունիցիս. զիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանաւորս աջով նկարել. վասն այնորիկ գըրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես, օրհնեալ, որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի հեծութեան սրտի Եզրի երջանկի, յորժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ, որ զոյն պատմէ. յամենայն կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ գարշութեան մեղաց անդնդականաց ապականութեանց. քանզի չհաւատամ, թէ ըսես խակ ինձ,



ըստ Յովբայ ձայնին: Արդ՝ ես ինձէն ինքնադարով անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ բնութեանս, արգելի փակեցի կնքեցի առ յինէն յամենայն մասանց զկենայն հնար. զի 'ի փրկութիւն մեզօք կապելոյս կրկին մեծացելս գալեալ:

Գ. Եւ քանզի 'ի մարգարէէն բարւոք խրատեալ փորձ գոցուք, մաղթել զինդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով համատանով 'ի քեզ ապաստանեալ, աւէք ընդ ձեզ բանս, ասէ Ովսէէ, և դարձարուք առ տէր Աստուած ձեր, և ասացէք ցնա, կարող ես թողուլ ըղմեղս. զի ընդունիցիք զբարիս, և փոխելցեն 'ի բարութեան անձինք ձեր: Ահա Աստուած խոստացաւ, և ո՞վ է որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւատասցէ: Արդ՝ այսոքիկ վճիռ պաշտելի, նուիրեալ պայման, ուխտման նոյնագոյ. կենաց աւետիս, կէտ տէրունի, դուռն բարութեան, սփոփանաց հրաւէր, Ճշգրիտ պատկեր, անստգիւտ գանձ, անմոռաց յիշատակ: Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ, աստուատ վկայեմ սմին՝ ընդ

մարգարէին, կարող ես յամենայնի թո-
ղուլ զմեղանս բազմապատիկս. և ես
զօրացիս կրկին բարձրացեալ առ ամե-
նակալ կործանեալ հոգիս: Յամե-
նայնի իշխես, ամենայնի բաւես, ա-
մենայն ուրեք հասանես, ամենից բռ-
նութեանց յաղթես, զամենայն կարծ-
րութիւն փշրես. զամենայն ընդդիմա-
կաց վանես, զամենայն խստութիւն
փխրես, զամենայն սրացեալ ընդդա-
նես, զամենայն դառինս անուշես, զա-
մենայն դժուարամերձս քաղցրացուցա-
նես, զամենայն զպարտս շնորհես, զա-
մենայն յանցանս թողուս: Կարող ես
զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենա-
րուեստ, զամենեցուն զմեղս ընկղմել
և չքացուցանել բառնալ 'ի միջոյ, իբր
զճաճանչ փոքու կայծական սահմանեալ
'ի չափ ոչէից՝ անկեալ ընկղուզեալ կո-
րուսեալ 'ի տիեզերատարած ծովու.

Դ. Արդ՝ բանիւ մաղթանաց վերծա-
նողացն այսմ մատենի, ողորմեա վան
խաչի եւ չարչարանաց մահու Որդւոյ
քոյ, Հայր գթութեան: Սկիզբն առա-
քողի ողբերգութեան ձայնի այսմ ար-
տօսրածին նուագի, որ զայս դեղ վըր-



կութեան կենաց մեզ յարմարեցոյց. ե-
ղիցի բժշկեալ յանուն քո հզօր. Որ հե-
ռուս ելից խոստովանութեան մեզ նկա-
տեցոյց այսու պայմանաւ պատշաճակա-
նաւ. լիցի անպատ յիւրոցն պարտեաց.
Որ զհպարտութեանն թևս հարթել
մեզ վարդապետեաց 'ի սոյն կանոնի կե-
նաց պատգամի, եղիցի զերծեալ 'ի չար
կապանաց մահու ափիածից սկզբնակա-
նաց վերջնոց և միջնոց, Կրկնդութեա-
նըդ բարեգործեալ, 'ի նորոգութիւն
լուսաւորութեան. ընդ որում և մեք
գրեցուք երջանիկ գտեալ ընդ սմին:

Ընդդիմամարտ դիւաց այս նուագ ա-
ղօթից, եւ դիւահալածու ջերմնատագ-
նաց ախտաւորութեանց Աստուծոյ
փարատիչ:

Ե. Արդ՝ այսքանեաց անբաւից հրա-
շից հանդերձիչ Հայր ամենաստեղծ, ա-
նունդ ահաւոր, ձայն սարսափելի, կո-
չումն ընտանի, բան համբուրելի, ազ-
դումն սքանչելի, հրաման առակալի, է-
ութիւն անքննելի, գոյութիւն անճա-
ռելի, ինքնութիւն անբաւելի, զօրու-

թիւն անշիջնելի․ կամք ամենաբարի․ տէրութիւն անսահմանելի․ մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի․ որքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի․ պատճառ Որդւոյ հայրութեամբ՝ այլ ոչ նախադրութեամբ․ քեւ է 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սատանեա տապալող և դիւական անդնդին չքմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց․ զի փախիցէ 'ի մարդոյս՝ զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի, որով սըրբեալ միանգամ 'ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք ։

Զ․ Եւ արդ՝ յայոց պատկառելի խոնարհութենէ արարչականս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի գործս չարեաց խորոցն հրէշտակաց․ տանջեսցի և հալածեսցի հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բընակութեան յարտաքին խաւարն ։ Եւ ջնջեալ մաքրեսցի զաղտաստս ոգւոցս 'ի դիմաց մերոց․ և զյառաջուան ձայնիս հեծութեան 'ի սրտից մերոց ։ Եւ յիշատակաւ հայրման հեղուսիւն քստմնա-



փուշ տաժանատեսիլ ոգեպահանջից․ որով սինգեցաւ Միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեսցի չարին ։ Եւ 'ի կողհերձ սայրասուր ալաքէ ուժգին բախմանէ, որով զկէրն մեծ ընկալաւ, 'ի ապառ սատակեսցի սկզբնարար մահուն ։ Եւ զի խոնարհեցոյց զգովեալն զլուխ յաւանդել զոգին 'ի ծոց քո Բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն բելիարայ 'ի կոր կործանեսցի․ ամենայնիւ հերքեալ 'ի կորուստ ։ Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն խսկութիւն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հըպարտութիւն կործեալ գուսղին 'ի յատակս մահու գժոխոց մթին ստուերին յաւեալ դիմեսցէ․ և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ զխմանմարտութիւն թունից վեշագին կենարարն կռիւք ամենազօրին ։ Վասն զի 'ի փառս քո, Հայր ողորմութեան․ իբր 'ի գովեստ Որդւոյ քո Հոգւովդ Սրբով զայս խոստովանիմ, քանզի ոչ պիտակ ինչ սակ զօրութեանն ունի զմիւսմէն առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր ընդ անժամանակդ Հօր փառա-

ւորեմք ։ Եւ քեզ միայնոյ սուրբ Երրորդութեանդ, հաւատապաշտիւ տէրութեանդ, համագոյն անբաժին իշխանութեանդ՝ օրհնաբանութիւն, գոհութիւն, զօրեղութիւն և անձառ վայելչութիւն մեծութեան, բարեվլճակ հարթութեան, ողջակիզիւ հաւասարութեան յաւիտեանս. ամէն ։

---

## ԲԱՆ ԻԹ.

Վերստին յաւելուած յերգն հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի՛ խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ դու միայն ակնըղեն բարեաց, գթութիւն անձառ, Որդի բարձրեալ միոյդ Աստուծոյ, որ զուղղոյն զօրն թողութեան ցուցեր փրկարան, և ոչ կորստեան դատապարտարան, յեղանակեալ ինձ զաւուրն չար առ մեծ աւետիս ակնկալութեան ։ Բժիշկ ախտացելոյ, հովիւ մոլորեալ ոչխարիս, Տէր ապաւինեալ ծառայիս. գինի ա-



նապակ մեծ տրտմեցելոյ, սպեղանեաց դեղ վիրաւորեցելոյ, ազատութիւն մեղօք գրաւելոյ, օրհնութիւն բարեաց մերժելոյ, կնիք շնորհաց խոտելոյ, օծումն կոչման կապտելոյ. կանգնումն վերստին կործանեցելոյ, պատսպարան հզօր գլորեցելոյ. օժանդակ վէհ գայթակղեցելոյ, գաւառն բարձրութեան տարակուսելոյ, սանդուխք երանութեան եղկելոյ, ճանապարհ շաւղաց մոլորելոյ, թագաւոր Ներող պարտելոյ, քաղցր յուսադրութիւն լքելոյ, ձեռնկալ կենաց հերքելոյ, մեծդ միայն և ամենառատ, որ զլնութիւն բարեաց սահմանեալ հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր խնդրեմք եւ խիմանամք, ըստ Պօղոսի գոհաբանութեանն ։ Քանզի իննուց յընկեց եւ թուոց երից և չորեակ տասանց ՚ի վաղորդայնէ տուընջեանն առ մուտս արեւուն, անգուստ առ նմին յաւէտ կարկառմամբ խոկ և խոկ ՚ի սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց ակընկալութիւն մարդկան, բարեգործել միլեանց շնորհատրութիւն, իսկ առ իմս թշուառութեան և անարգութեան

զքոյդ եղեալ փառս, ամենակարող զօ-
րութիւն ահեղ, բոլորից Աստուած,
օրհնեալ տէր Քրիստոս․ որո՞վք սահ-
մանեսցի կշռութեամբ չափոյ հաստա-
զիդ ընդ հող հաւասարութիւն կցոր-
դեալ։ Քանզի մեաս յայսոսիկ անբաւ
և անհետազօտելի, ամենեւին բարի ան-
ման բարկութեան խաւարի, ուստի
յոյժ նուաղ են քում մեծութեան ստ-
տեղացն թիւք, զորս գոյացուցեալ յո-
չէից յորջորջմամբ անուանց կնքեցեր,
և կամ հիւթ երկրի՝ ՚ի յօդս հեղեալ
զոր ՚ի չգոյից հաստեալ տարածումն յա-
տակի կառուցեր՝ քան ինձ նախադը-
րեալ համարդ սակաւութեան, որովք
քեզ նմանիլ վարդապետեցեր։

Բ. Այս ծածկեցաւ և ընկղմեցաւ
՚ի քոյդ լոյս կամաց երկայնմտութեան՝
հանուրց չարութիւն, իբր զոյլն մը-
ռայլ ՚ի տապ արեւու, և որպէս մո-
տուաս իսկ կիրք բնութեանց ըհաստա-
րակաց բարուց ցուցանէ։ Քանզի ով
որ ՚ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջա-
ցաւ, ով որ ղողացաւ, և ոչ ամա-
չեաց. ով որ գարշեցաւ, և ոչ պատ-
կառեաց. ով որ սխալեաց, և ոչ ապա-



շաւեաց. ով որ կործանեցաւ, և ոչ
հեծեծեաց. ով որ գայթակղեցաւ, և
ոչ առողջացաւ. ով որ պարտեցաւ, եւ
ոչ ինքեամբ ընկերանեցաւ. ով որ
պատրեցաւ, և ոչ յոգւոց ելաւ. ով
որ ճաշակեաց լեղի, և ոչ դառնացաւ.
ով որ անկաւ ՚ի բարձրութենէ, և ոչ
ընդոստեաւ. ով որ կորոյս մեծութիւն,
և ոչ աշխարեաց. ով որ զրկեցաւ յե-
րանութենէ, և ոչ ելաց. ով որ կապ-
տեցաւ ՚ի շնորհէ փառաց, եւ ոչ ող-
բաց. ով որ գտաւ ինքեան մնասակար,
և ոչ ստգտաւ. ով որ մերժեցաւ յե-
րեսացն Աստուծոյ, և ոչ հառաչեաց.
ով որ լուաւ զԱստուծոյ սպառնալիսն,
և ոչ սոսկացաւ. ով որ ընդ մի չարեա-
ցըն՝ հազարս չուաղեաց. ով որ մեր-
կացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ ղո-
փացաւ. ով որ անօրինեցաւ, և ոչ
քարամբք զմիամն կոծեաց. ով որ ե-
տես զաւրուկն յիւրում մեծութեան,
և ոչ զկծեցաւ. ով որ կատարեաց չա-
րիս, և ոչ զինքն իսկ նզովեաց. ով
որ ախտացաւ, և ոչ զանձն դարմեաց.
ով որ յամօթալեացն գործեաց, և ոչ
զիւր մարմինն ձաղեաց. ով որ ՚ի պատ-

կուռելին հպեցաւ, եւ ոչ զօրն իւր
անիծեաց. ով որ զգործեցեալսն յիշեաց,
եւ ոչ տարացաւ. ով որ զգաղտնիսն
մտաքերեաց, և ոչ խորովեցաւ. ով որ
զծածուկսն նկատեաց, և ոչ մահ կորըս-
տեան խնդրեաց. ով որ զանհրեւոյթ-
սըն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր
կորացաւ. ով որ ընդ մեղացն հեշտու-
թեան՝ բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց.
ով որ զհնարաւորսն բնութեանն, եւ
ոչ պապակեցաւ. ով որ զկամս ներ-
գործեալսն, և ոչ սատակման ինքեան
աղօթեաց. ով որ՝ զանճառելիսն, եւ
ոչ խռովեցաւ. ով որ զանկրելիսն էու-
թեանն, և ոչ թախծեցաւ. ով որ զմե-
ծամեծսն, և ոչ մաշեցաւ. ով որ զանըն-
ծութեանն ապականարարսն, և ոչ տա-
ջրեցաւ. ով որ զտարապրութեանն
պատճառ յանցմունս, և ոչ տագնապե-
ցաւ. ով որ զերեսացն աղտեղի տե-
սիլ, և ոչ բարկութեան վերնոյն զանձն
պարտ վարկաւ. ով որ զմի 'ի կարեւո-
րացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զի-
նուք մահու խոցեցաւ. ով որ զխայտա-
ռականացն, և ոչ վայս վհատութեան
ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց, ով



որ յոլքայական գահոյիցն սնանկացաւ,
և ոչ կարկամեալ 'ի վայր գլորեցաւ.
ով որ ընդ պասքին պերճութեան հող
'ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչա-
րեալ յոգի մահացաւ. ով որ ընդ պայ-
ծառ պատմուճանին քրձազգած եղեալ,
և ոչ սխրեցաւ. Ո՛վ որ զկեանս իւր
կորոյս, և ոչ արեան արտասուս երկ-
նեաց. ով որ ընդ արկանելեաց լուսոյ
խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. ով
որ 'ի վերայ սգոյ սիրելւոյ ոչ թառա-
մեցաւ. Ահա այս կերպարանք ճշգրը-
տագոյնք պարտաւորիս յանդիմանու-
թեան, տխուր դէմ, քաղեալ ճա-
ճանչ, ցամաքեալ խոնաւութիւն, երի-
թացեալ շուրթն, անշքեալ տիպ.
տրտմեցեալ ոգի. այլայլեալ ձայն, կըրկ-
նեալ պարանոց. Եւ զի թէ որ զխո-
կութիւնն խոկ նշանակեսցէ, ոչ անօ-
րինէ. անամբարտաւան միտ, անհպարտ
սիրտ, անխնդրող պարգեւի թշուառ.
անաղերսելի պաղեալ, ինքնակշտամ-
բելի դեգերեալ, խռամբրժ սմեալ.
արդարալլուկ քաղցեալ. պատշաճա-
գատ հարուածեալ, ինքնամերկայ մահա-
պարտեալ, արժանապէս հանեալ, անձ-

նանէծ եղկելի ։ Եւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փափաքելին կըշռամբեալ , եւ մեղաւորս մաքրագոյն բարեհամբաւեալ ։

Գ. Եւ արդ՝ եթէ զշարժումն հնարաւորութեան բանսարկուին գտողին ըղձեղ գայթակղելոյ , զնւրան 'ի մեզ ներմանիս առ օրն համարեալ , զխորոչ զբարին անկեալս 'ի մեզ հոգւոյ արութիւնս 'ի խնամակալութենէ կամաց կեցուցիչդ մնեւմ զբեղես , Տէր բարեգութ , հզօր և յաղթող , քաւիչ մեղուցելոց , կարող յամենայնի առ ամենայն փրկութիւն ։ Եթէ զանդունդս առ երկինս փոխես , և կամ զխաւարութեան 'ի լոյս հաստատես , եթէ զդառնութիւն ըղձոյ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես , և կամ զկոծ սատկութեան մշտայ 'ի պարս գառաբերկրութեան հարսանեաց կարգես , դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ , և եւս քան զասին բաւես առնողին տիրեալ համայնից ահաւորապէս . և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն ։

---

# ԲԱՆ Լ.

Վերստին յաւելուած հիւրին հեծութեան նորին հոլովք առ նոյն ողջերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ ճշմարտեացի բան քո , ողորմած բոլորից Աստուած ներող , և օրհնեալ 'ի բազմագթելին դարձաւորութիւն առւրն պատկերի զղջման մեղաւորին . թէ և առ յետին խոկ շունչն լցէ ընտրութիւն , և կամ 'ի մէջ չարութեանն փոխադրութիւն ։ Մանաւանդ զի զգծնեալ կցորդս այս անձնիշխանական՝ մինչ մարմին , խաբող շաղաքորթ , յարեալ 'ի սուտթիւն , բառակողին արածող հողմոց , դժուարունելի հաստողին փախչող , գերեալ ոտողին մոլեկան մարմնոյս , ներհակ օրինակից , յոգնապատճառեան ամենախորամ , զոր քո է գիտել զքանեացն յաճախութիւն . Եւ զկնի մեղանացն , ողորմագինս իմն ողբարկութիւնս վհատականս տաժանակրօ բազմաւաղելիս ,

քո առաջի Տէր զթութիւնս դը-րեալս արտասուօք, թուանչս թշուառութեանց կոյրդերոյ անբաւս չափ վտան-գից մեղսատագնայ պատկառեցելոյս։

Բ. Եւ զի մի կրկնաբանութիւնս 'ի շատախօսութիւն կրթեսցի, առաւել քան զայն այսու ողբալի, քանզի ոչ երբեք համարձակի խնդրել իւր զարքա-յութիւն, այլ զատնջանացն թեթե-ւութիւն. ոչ ընդ կենդանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն զգա-յական շնչոցն 'ի խաւար. ոչ ընդ ան-բարձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն։ Ի հանգստեան իբրև վաստակեալ, 'ի խրախութեան ինքեան տառապեցեալ. գինօք ժպտեալ, և մնօք խոցեալ. կերպ 'ի ծաղր, և աչք 'ի յողբումն. երեսք զուարթանս ձևացու-ցանէ, և արտասուքն զգաստութիւն սրտին ճշմարտէ։ Ըմպանակք երկու յերկոսին ձեռսն, մինն արեան և միւսն կաթին. երկու բուրվառացք կայծակնաւորք, մինն խնկով և միւսն ծծմբիւ. սկաւառակք կրկին կերա-կրանք համոյ, մինն քաղցու և միւսն դառնութեանն. բաժակք զոյգ առ եր-



կուս ըմպմունս, մինն արտօսր և միւսն ծծումբ. տաշտք կրկնեալք 'ի ծայրս մատանց, մինն գինի և միւսն լեղի. գլուխք տեսանելեաց ներհակաց, մինն 'ի լոյս և միւսն 'ի վրիպումն. խառնուածք հարցականաց հակառակութեանց, մի-նըն արծարծէ և միւսն շիջուցանէ. հայեցուածք զխոնց երկուց, մինն զո-վըն ողբանօք և միւսն անանխայելի բարկութեամբ, համբարձումն երկակի բազկաց, մին 'ի հայցուածս և մին 'ի մերժումն. դէմք կրկնակի կերպից, մի-նըն տխրեալ և միւսն ցասուցեալ. կրկ-նամբանք ընդ միոյ երկու, մինն տա-ռապս և միւսն ապաւինեալն. ապաւի-նութիւնք կարծողականք, մինն զանէ և միւսն թերեւս. 'ի մի բերան երկա-կի բարբառ, մինն եղկութիւն և միւ-սըն խաղաղութիւն. երկուս ազդմունս 'ի միում սրտի, մինն կեղակարծ յու-սոյ և միւսն ճշգրիտ կորստեան. ամպ ըմթագոյն ահագնատեսիլ կրկին տեղաց-մանց, մինն նետս և միւսն քարինս. որոտումն ահեղ երկոցունց բերմանց, մինն կարկուտ և միւսն հրացան. ցայգ ցուցագին երկուց վտանգից, մինն լոյս

և միւսն մաՀու․ առաւօտ սէջ երկուց բողբոջմանց, մինն սառոյց և միւսն լը–պառնալեաց․ արեգակունք երկու ՚ի յերկուց ծայրից, մինն խաւարի և միւ–սըն կիզման ։

Գ․ Եթէ Հարուածոց ակն կառուցանի, ինքեան վարկանի․ և թէ ձեռն պարգեւաձիր, ոչ իւր ակն ունի ։ Ի պարծանս ուրուք կորանոյ, յամբարձումն գլխոյ ընկճի, ՚ի չարեաց յիշատակ հեծէ, ՚ի ճառս մաքրոց պատկառէ, ՚ի պատմութիւնս Հանդերձելոյն երերի ։ Եթէ օրՀնի յումեքէ յայտնի, ՚ի ծածուկ զանձն անիծանէ․ եթէ գովեստ յումեքէ լսէ, պարտաւանօք զինքն կըշտամբէ, եթէ գործելոյն առաքինալէս, ինքեամբ ինքեան վկայէ, եթէ ձաղէսցի ուժգին, սակաւ Համեցումն առաւել պարտուցն գրեցէ․ եթէ ըղձումըն մաՀու ինքեան լսիցէ, այն ասէ, և դարձեալ կրկնէ, և եթէ որոգայթ մաՀու ճայթեցէ յերկնէ, Հաղև զգեմսըն Համբառնայցէ ։ Զիւրոց կրաւանցն մտեան խփեալ, զպատուախանատւութեանն յոյս լքուցեալ, զՀամարձակութեանն ընթացս փակեալ ։ Եւ եթէ



ոչ էր անվրկանաւոր կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ ինչ դանդաղէր ։ Արդարեւ վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ ՚ի վերայ երկուց ճանապարՀաց, ըստ Հայեցից բանի իմաստնոյն ։

Դ․ Եւ արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս, բարեգութ, այսքանեացս ձայնարկութեանց կոչկոչականս Հեծեծանաց․ որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած ես դու Տէր․ Ահա առ չարութիւն գերւոյս՝ բարութիւն քո, առ մաՀապարտի դառնութիւն՝ քաղցրութիւն քո, առ կորուսելոյս յայտնութիւն՝ ճառագայթ քո, առ յանդգնելոյս մոլութիւն՝ ողորմութիւն քո, առ խակութիւն փխրամակարիս՝ Հեզութիւն քո, առ կործանելոյս այցելութիւն աջ քո, առ ընկղմելոյս վերբերութիւն՝ ձեռն քո, առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս՝ մատն քո, առ պակուցելոյս պաշտպանութիւն՝ ոգի քո, առ ապախտաւորիս իմ վստաՀութիւն երկայնմտութիւն քո, առ օծումն ամենադժնեիս՝ զօրութիւն քո, առ մեղաւորիս քաւութիւն՝ Հրաման քո, առ

փախուցելոյ ապաւինութիւն՝ աջն քո , առ որսացելոյ պատսպարութիւն՝ բազուկ քո , առ վրիպելոյ առաջնորդութիւն՝ լոյս քո , առ տարակուսելոյ հնարաւորութիւն՝ հանճար քո , առ անիծելոյ կրկին ստացումն՝ օրհնութիւն քո . առ վհատելոյ քաջալերութիւն՝ խրախոյս քո , առ վշտացելոյ մխիթարութիւն՝ բաժակ քո , առ նեղելոյ ընդարձակութիւն՝ կամք քո , առ ատեցելոյ կոչումն՝ սէր քո . առ հաստատումն սասանեցելոյ՝ բան քո , առ հոգւոյ վիրաւորելոյ՝ կաթուած արեան քո , առ անկրեւոյթ մթերս ցաւոց՝ ակնարկութիւն քո , առ յուսահատելոյ անդրէն ընտրութիւն՝ իշխանութիւն քո , առ պատուասատուումն կրօբեցելոյ՝ կցորդութիւն քո , առ խաւարաւ մահու ծածկելոյ՝ նշոյլ կենաց քոց , առ խռովեցելոյ իմ հանդարտութիւն՝ խաղաղութիւն քո , առ վերադարձութիւն օտարացելոյ՝ ողջոյն քո , առ մոլորելոյ դարձաւորութիւն՝ ձայն քո . Զի դու տիրես ամենայնի գթութեամբ . և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի . և ոչ է բարութիւն առանց քո ,



և քեզ վայելէ փառք յաւիտեանս . ամէն :

---

## ԲԱՆ ԼԱ .

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի .

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ .

Ա . Եւ արդ՝ քանզի բազմացուցի ողբմամբ բանիս ղաղէտ տագնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչանս անմխիթարելի խնդրոյ վտանգի , զի դու ողորմած սկզբնահայրդ խոստովանութեան անյայտ ծածկութից որդի Աստուծոյ կենդանւոյ տէր Յիսուս Քրիստոս , քաղցրութեամբ նայեսցիս քաւել : Արդարեւ կարող ես , ճշմարտապէս բաւական ես , եթէ կամիս՝ հնարաւոր ես . կամիս առաւելագէս , որպէս և կարես : Հարստանաս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնուլն . բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն քան 'ի ժողովելն . յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն քան 'ի ճշդելն , կուտին քեզ համբարք 'ի տարածանելն

քան 'ի շտեմարանէն ։ Հաւատամ՝ այսմ ամենայնի՝ գտանել քեւ ելք փրկութե․ հաւատամ անարգս ընդ պատուականին․ յուսամ ընդ Աբրահամու և ընդ Աննայի , զի միթէ բանիւ քո հաւատոց , և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց ։ Վասն որոյ և ոմն 'ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ , զաւանցեալն և զամուլըն արգանդ Սառայի՝ անդաստան պըտղածին արդեան օրհնութեան բազում ժողովրդոց մարգարէից որոց և թագաւորաց ընտրելոց հայել յուսոյս ։ Իսկ միւսն զանհանդերձելի երկնի որովայնին սեննկի եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց , որ է թիւ մի անբաւութեան զինուն նշանակելոյ զէութիւն , աստուածութեանն յարակայութէ սահման անհետազօտելի , և աւազանին նորածին որդւոց անհատ յորդութիւն ։ Այս թիւ պանծալի , որում ոչ է կետ կցորդի և ոչ սպառուած վախճանի , այլ կոյս ոմն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ , դժուարաթարգմանելի մերոց իմաստից ։



Բ․ Արդ համարեա յարդարութիւն անյուսալի փրկութեան հոգւոյս զամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան , ընդ նախագրելոցն երջանկաց եդեալ և գանձեալ զայս դաւանութիւն փոքր հաւատոց խնդրոյս խընդրուածոց , զի կեցից և ես առ նոքօք բերկրեալ ընդ նոսին , բուռն հարեալ քան զիմոց գործոց զքոյդ շնորհաց ։ Մանաւանդ զի կրկին բարձունք են և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի գերագոյնք, խնամք խոստովանութեան հաշտարանք և հզօրագոյն քաւարանք , և կարծեաց թերութեան մնոց ոլոցեալք ընդ արեան քո ահաւորի և ըստ մարմնոյ ծնողդ քո խնկելի ․ պարք Առաքելոցն , դասք Մարգարէիցն ․ գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն հետեւակ սպարազէն արիութեամբ մերկամարտիկն մրցութեամբ , գումարք միանձանց ․ բոյլք բանականաց ընտրելոց , ժողովք բարեկրօնից ․ հոյլք հոգեղինաց յերկրէ երկնաւորաց ․ զինուորութիւնք վերնականաց ընդ մեզ կցորդելոց , աւանդք երախայրեաց ․ մատուցմունք զուարակաց , լուցմունք զամբարաց ,

բուրմունք խնկոց իւղոց հանդերձանօք· յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խորանաց աստուածաբնակաց, ձեռք քահանայից շնորհիւ կատարելոց։ Այս շարժումն անձին յիշատակ Աստուծոյ· առ փոփոխումն գարշապարի· առ կարկառումն աջոյ և ամբարձումն բազկի· առ բարիս գոհութիւն, և առ գթել աղաչանք· առ բանըս ընտանիս, առ խօսս հաստատակաց, առ ձայնս բնաւորականս· առ գործոյ յաջողուածս, առ առաքինութեան ջերմութիւնս, որ 'ի տուընջեան և 'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգեւորաց՝ քեւ առաջնորդեալք· 'ի նիրհել և 'ի զարթնուլ, 'ի պատերազմի ազգաց, 'ի մարտս դիւաց, 'ի հակառակութիւնս հերձուածողաց· առ փաքունս, առ մեծամեծս, առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց. և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս, եթէ տաժանելիս· վասն որոց աղօթս՝ մատ- 'ի նախն, և յաղագս որոց՝ զի զերծ արասցես պաշտպանեալս հնարիւք անձառիւք· հաւատացեալ յամենեցունց, թէ



բաւական ես յամենայնի, կաթնաբոյծ հասակաց, տղոց, պատանեաց, մանկաց, վայրենեաց, ստամբակաց գոռոզաց· մինչ զի առ թատերս տեսարանաց· և առ կոյս խառնիճաղանճ բազմութեանց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ։

Գ. Այդ՝ դու ստացար զամենեսեան. և քո են ամենեքեան, և ողորմեցիր ամենեցուն՝ միայն բարեգութ. զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի 'ի քում համարի են. քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց. Որում և ես կցորդիմ թշուառս բանիւ միացեալ սորին յանցաւորապես. յանդգնիմ ասել, թէ որ կարգաց զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթամբք լցէ փառակեալ կրկնապատիկ պատուաւորութեամբ։ առայս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զիա՞րդ ոչ քո իցէ։ Ցորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագուաւուց՝ աղխականիշ երամն աղաւնեաց, 'ի մէջ խըրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջ հանգարտաբարոյ, 'ի թիւ շանց գայլո-

նախանձոյ՝ զաւակնս նուիրելս. հեզութիւն 'ի խստութեան, կատարելութիւն 'ի թերութեան, խոնարհութիւն յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն 'ի ստութեան, միամտութիւն 'ի մանկութեան. անբծութիւն յայլամտութեան, բարօրութիւն 'ի չարութեան, պարկեշտութիւն 'ի լկտութեան, ողորմութիւն յանգթութեան. ապաշաւանք յանյուսութեան, քաղցրութիւն 'ի բարկութեան, հաշտութիւն 'ի թշնամութեան, անոխութիւն 'ի խածանողութեան, քաջալերութիւն 'ի լքութեանց, օրհնութիւն 'ի նեղաձգութեան։ Յոր ոչ բաւականացայ երբեք 'ի գտանել ճշգրտապէս, թէ ով յերկնածնաց ստոր կանխեացէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառապար կշտամբես խրատամբք զարդարութիւն՝ առ ամբարիշտ մաքսաւորն և առ պոռնիկ զղջացեալն. առ ամենեսին բարեգործ՝ միայն Թագաւոր օրհնեալ 'ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն։

---

# ԲԱՆ ԼԲ.

Վերստին յաւելուած չէին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ալէտր մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախադասութեանց արժանաւորաց գրեալ լինելն ընդ պարտաւորսն պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթանաց. ընդ նկուենս եւ անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարագրեալսն և ուքեղ դարձեալս. ընդ յերկուսցեալսն եւ ճշմարտեալս. ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկճեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս. ընդ ատեցեալսն եւ կոչեցեալս. ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զսպեալս. ընդ հեռացեալսն և մերձեցեալս. ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն եւ զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն եւ

խնդամտեալս ։ Այլ ես պատմեմ տա-
նօր դարձեալ՝ ոչ զմեղսն Երուսաղէ-
մի · ըստ մարգարէին հրամանաւու-
թեանն՝ որ առ ժողովուրդն Նախնի ,
և կամ տանն Յակովբու զանօրէնու-
թիւնս նորա , այլ խոյս ժամանեցից
յայտնութեան · քանզի աւաղ ընդ ա-
ղէտս մահու յարելով ըստ մարգարէ-
ին , յանդիմանեցից զիս ինքն ինձէն ի-
մով ձայնիւ ըստ սաղմոսողին · որպէս
զի յանձնառական յայսմ համայնապա-
տում խոստովանութենէ ոչ կարօտա-
ցեալ կրկնակին , միանգամայն 'ի սպառ
ուքեցայց օրհնեալ հրամանաւ Էիդ ։

Բ · Եւ արդ՝ կրկնելով ծունր բա-
րերարիդ քաղցրութեան , տարածեալ
զանձն իմ առաջի · զ'ի մահ գլորմանն
ցուցից կերպարան · որ 'ի հող խոնար-
հեալ մածայ ընդ երկրի , և ընդ անցաւորս
այս կենցաղ կորստեան՝ անասնական գեա-
նաքարշութեան սողնոյ սահեցմամբ՝ կա-
մօք բևեռեցայ · Այլ 'ի քեզ Տէր , յե-
ցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց գա-
ւազան 'ի յարմարոյն Դաւթի ընձիւ-
ղեալ մարմնով անճառ շաղկապմամբ
յանեղ աստուածութիւնդ , կանգնե-



ցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ
'ի քոյդ երախտեաց 'ի վայր կորաց-
եալ գլխօք , աչք 'ի բարձունս յառ-
եալ ողորմագին տեսութեամբ 'ի քեզ
մերձ 'ի հեծութիւն , բնաւին ողոր-
մութիւն , բոլորովին քաղցրութիւն ,
գլիճ լուսոյ արտասուօք լցեալ՝ պա-
ղատանս յուսոյ առաջի մեծիդ մեր-
ընծայեցից ։ Լուր ամենառատ անսը-
ւող երկայնմտութեամբ՝ քո դառնա-
ցուցչիս , միայն դու 'ի յամենայնի սահ-
ման փրկութեան , Աստուած բոլորից ,
անճառ մեծութիւն , անքովանդակելի
բնութիւն , անքննելի խոկութիւն , հը-
զօր զօրութիւն · կարող բարերարու-
թիւն , անպակաս լրութիւն , անճառ
ժառանգութիւն , վայելչական վիճակ ,
տուող պատրաստութիւն , անստուեր
իմաստութիւն , տենչալի տուրք , անձ-
կալի ձիր , բաղձալի բերկրութիւն , ան-
տխուր հանգիստ , անտարակոյս գիւտ ,
անկապուտ կեանք , անծախելի ստաց-
ուած , անփոխանորդելի բարձրութիւն ,
ամենարուեստ բժիշկ , անսասանելի
հաստատութիւն , դարձուցիչ մոլորելոց ,
գտիչ կորուսելոց , յոյս ապաւինելոց ,

լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանդ փախուցելոց, անդորրիչդ խռովեցելոց, փրկութիւնդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց. պատսպարանդ սահեցելոց, վշտակիցդ գայթակղելոց, երկայնմտութիւն տարակուսելոց. լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյց, օրհնութեան անձրեւ, հոգի երեսաց, զօրութիւն դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, ազդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակալդ սրտի, ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշատակ, խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն, Ճշմարտութեան Ճանապարհ, երկնաձեմ սանդուղք: Եւ այլ բազմութիւն բանից գովեստից անհամար կարգաց և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգեղէնք:



Գ. Առ քեզ հայի ամենայն ական տեսողի, Աստուածդ ամենայնի. Նայեսս 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և եթէ յաղախնաց ոք աղաչեսցէ: Եւ ընկալ զձօն ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս ցանկալիդ՝ յանարատ ոտս մարդեղութեան քո, Քրիստոս. Եւ օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ դարձն և զդաւանութիւն, Եւ համբուրիւ շրթանցս առ Ճաշակ փրկութեան կենացդ հաղորդութեան՝ համանչապէս զանքակ միութիւն. և զնոյն գթութիւն նորին ողորմութեանն ընկալեալ 'ի քէն, բարերար, զլուանանեցես զմեծդ պարգեւ ընդ փոքու հաւատոյս. և 'ի ձեռն գթութեան սիրոյ քոյ առ քո անձկալի անուանդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմերունք հողմոյն խռովութեան 'ի յօդ հանդարտութեան, և մրրկին սաստկութիւն 'ի սիկ ախորժութեան, և կարծիք երկիւղին 'ի մեծ վստահութիւն. և պատուհաս պատժոցն յիրանութեան պատահումն. և վտանգք թախծանացն 'ի հոգեւոր խրախՃանութիւն, և ալէկո-

ծութիւն ծփմանցն 'ի խոր խաղաղութիւն, և զեկայն թեւարկմունք յանքոյթ նաւահանգիստն. և բերք բեռանցս մեղաց փոխարկեսցի 'ի թոշակ շնորհաց: Եւ յայսքաննեացս ամենից բիւրուց բարութեանցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ եւ խոստովանեալ, ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հերքեալ և հալածեցեալ, ունայնասցին մարհակք մեղացս, խղեսցին հաղեքն, որոշեսցին որոգայթքն, կապտեսցին կապանքն, վանեսցի վէհն, վերասցին վնասքն, պարսեսցին պատրանքն, ջրեսցին մեղքն, պատռեսցին պարտիքն, խորտակեսցի լուծն, քակտեսցին քեղեքն: Եւ ընդ մեւալ մթութեան չարեացն յանցանաց եւ գիւացն բանակաց պաշարողաց՝ որեւ փառաց քոյ ժամանեսցէ կեցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի գլխոց և 'ի թիկանց. և եղիցի նըշոյլ առաւօտու հոգւոյ գալնայնոյ ընդ ակնկալութեան սպասողացն քումդ երեւման: Զի դու ես բարերար առ ամենեսին, և հնարաւոր են քեզ ամենայնք. եւ ամենեցուն զկեանս կամիս



և զկրկնութիւնն բաղձանս:

Դ. Ո՛վ ամենապարգեւ ձեռն Յիսուսի Քրիստոսի, և առ իս դարձցիս կարկառեալ շնորհի աջոյդ քո որբոյ ընդունելով միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութեան սրտէ սիրոյ ոննեկիս. և անեղծական քո նկարագրիւ՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի մատեան յաւիտեան կտակաւդ կենաց հոգւոյդ աւետեաց երկնից յօրինողիդ: Եւ քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, եւ ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութեանդ և միոյ աստուածութեանդ վայելեն փառք յերկնաւորացն վեհից, 'ի սրբոյն դասուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԲԱՆ ԼԳ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. Արդ զյարմարութիւն պաշտա-

ման բանիս 'ի խայրեաց հօգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցոր- դելով ընդ խնկարգեալցն զուգաձայ- նապէս խառնեսցես 'ի յանուշութիւն կաղմութեան իւղոյն Մարիամու կնոջ բարեպաշտի ։ Ցոր հաւասարեալ նոյնու- թեամբ ընդ երջանիկ պոռնկացն 'ի քեն ընկալելոցն յաւէտահրաշ յարգա- նօք, պարարեսցիս մեծապէս խնկիս բանիւ նուաստիւ, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ, անկշռամբելի 'ի բանքասանաց սաղմո- սին, մի օծցէ զտէրեւ ոտոյ գագա- թան իւղ մեղաւորին ։ Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութեամբ բուր- ման խոստովանութեան այսր մատենի 'ի բաղումս ազգեալ, համասփիւռ ա- մենատարած և աշխարհալիր տանն տե- սակաւ, ըստ օրինակի համեմատու- թեան նոցուն յիշատակի ։ Քանզի դու նոյն Տէր զգաստացուցիչ՝ նախնի չարա- խորհնից կանանց մեղաւորաց, որոց ա- ռաքեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անուանս առ սոսին անձաւ նկարագոր- ծութեամբ 'ի յիս վերաբերեալ զծայ-



րագոյն շնորհին կատարումն ։ Ընդ ա- նասնական գարւոյն կերակրոյ՝ զբաղ- ճահամբար պտուղ ցորենոյդ կենացդ հացի, ընդ ապականացու արծաթոյն՝ զարքունական պատկեր, ընդ յիմա- րաբար թմբրութեան գինւոյն՝ զբա- ժակդ արեան արարչիդ՝ ընդ իւղոյն ա- ռնելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժողովըր- դեանն՝ զօծումն շնորհին առ իս դար- ձելոյ, ընդ զերծման գլխաշուք կառա- ւոյն՝ զանապականութեան վերարկուն, ապարանջանին ոսկնութեամբ՝ զթուիչս բարեմանութեան, օրհնիւն և Աւե- տարանաւն՝ հանդերձ գործնական ա- ռաքինութեամբն, ընդ ունկանն գնդի վայելչականն զարդու՝ զանստուեր յի- շատակ տէրունականդ ձայնի, ընդ քայ- ըլս պերճութեան լանջացն՝ զցօղնա- հաւաք աւանդս ուղղութեան քոյինա- կրօն ընծոյդ քաղցրութեան ։

Բ. Բայց զի՞ է յայսոսիկ ինձ պարծել և ոչ վերստին 'ի սոյն պատկառել ։ Այլ յայլ օրինակ փոխեալ զնմանեան մաղ- թանաց այսր ողջերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հա- տուցից զպատիժ պարտուցս իմոց մե-

զանաց · 'ի մարգարէիցն տառից բեր-
եալ համառօտ՝ 'ի սոյն հարկ մածից
սաստիկ զատախաղ · ընդ որոց նոցին
լծակցեալ , քան թէ ընդ բերկրութիւն նո-
ցա պարել՝ յորս հառաչանս , ձայնս
հեծութեան · բողոքս բարկութեան ·
նախատինս խորտակման · լալումն կա-
րեւոր : Այլ մեծիդ Աստուծոյ գթու-
թիւն ամենաժաման՝ կանուխ ազդե-
ցաւ յիմ յուսադրութիւն , առ որս՝
զղջմունս , խոստովանութիւնս , աւե-
տիս , պարգեւս , լուսոյ երեւմունս՝,
խրախոյս աստուածայինս , փառաց
ժառանգութիւնս , հրաշից յայտնու-
թիւնս , սքանչելեաց տեսութիւնս ·
յորոց ոմանք յայս ընձեռեն , և ոմանք
վհատութիւնս բազումս մատուցանեն ·
յորս ես կամաւ կործանեալ՝ կորուսա-
նելն վիճակեցայ : Զի եթէ զգեստս Աս-
տուծոյ զվարագուրին պատրուակ ասաց
Եզեկիէլ · յորումարար ժողովուրդն կա-
ւըս կարկատունս , որով պաճուճել ածէ
'ի նոսա · իսկ որքան պատիժ անմաք-
րութեանս եղիցի զԱստուած զգեցողիս
ներքոյ և արտաքոյ : Զարմանամ , թէ
զիա՞րդ ոչ կիզում · հիանամ · թէ երբ



ոչ այրիմ · ափշիմ , թէ ո՞րպէս չյափշ-
տակիմ՝ տանջեալ , լքեալ , չարչարեալ ,
ջաղխեալ , մանրեալ · խորտակեալ , կրտ-
րեալ , բաժանեալ 'ի յօրինակէ ժանեաց
կորուսչին · ըստ գրոյն · Այլ այս
միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատա-
կի փրկութեան յուսոյ , զի Քրիստո-
սեան Աւետարանն կեանս է ամենեցուն ,
'ի կերպարանաց պատկերի բանին ծա-
նուցեալ · որով առ մեղանն դարձն ,
առ պարտին շնորհն , առ եղծուածն
նորոգութիւնն , առ անօրէնութիւնն
քաւութիւնն , առ վէրն բժշկութիւ-
նըն · առ վտանգն անդորրութիւնն ·
առ պատիժն ներումնն , առ պատերազ-
մըն հանդարտանալն , առ հուրն անձ-
րեւն , առ պատուհասն պարգեւն , առ
ակնկալութիւն տառապմանն՝ ձիրն , առ
գործարան մահուն՝ կենացն ազատու-
թիւն :

Գ · Եւ զի՞նչ է ինձ զայսքանեացս յիշ-
մանց 'ի թիւ արկանել , և ոչ զանձա-
ւելին ատանօր դասել : Յիշատակա-
հօրն բարձրելոյ՝ յՈրդին կցորդութիւն ,
յանուն Միածնին՝ առ հայրն ընտանու-
թիւն , սոյն ակնարկութեամբ՝ ընդ

Հոգւոյն հաղորդութիւն. խաչին փըր-
կանք, բանին սփոփութիւն, բարւոք
վարձ կամաց առ կշռութիւն գիտո-
ղին, աւազանն կենդանարար՝ հաշտու-
թեանն միջնորդութիւն, և այլքն ա-
մենայնք անթիւք բարիք 'ի բարերարէն
բարդեցեալք, ազատք 'ի հարկէ, արձակք
'ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք:
Այսուքիկ են, որ ինձ 'ի մէջ դաւանութեա-
նըս մահու՝ կեանս անտարակոյս աւե-
տարանեն, քանզի եթէ ոչ զայսոսիկ
ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի
իսկ և իսկ ըստ բանի երգողին: Ոչ
փոքրկութեամբ Որդւոյ զՀայր փառա-
ւորեմ, ոչ նուաստութեամբ Հոգւոյ
զՈրդի նախատեմ. համախոհ ունիմ
զերեսեան՝ և նոյն արարչութեամբ:
Քանզի և 'ի դէմս Հոգւոյն Սրբոյ այս
են աղաչանք, նախընծայ սկզբան պա-
տարագին՝ յորում գունդ երկնաւոր
զենանի, զայս աղօթեցի:

Աղօթք, որ նախ քան զպատարագն
մատուցանի:

Դ. Ամենակալ բարերար մարդասէր



Աստուած բոլորից, յօրինող երևութից
և աներևոյթից, փրկող և հաստատող,
խնամող և խաղաղարար, Հօր հզօր Հոգի,
հայցեմք բաղկատարած մաղթանաց գոչ-
մամբ հեծութեան յանդիման եղեալ
քեզ ահաւորիդ. Մատչիմք մեծաւ դո-
ղութեամբ սաստիկ երկիւղիւ մատու-
ցանել նախ զբանական զայս պատա-
րագ քում անզննին զօրութեանդ. իբր
աթոռակցի փառակցի և արարչակցի
հայրենի անկապուտ պատուոյդ, և
քննողի ծածկութեան խորոց խորհըր-
դոց ամենակատար կամաց Հօրդ իմա-
նալի՝ զքեզ առաքչի, փրկչի և կեն-
դանատուի և արարչի ամենայնի: Ի
ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձ-
նաւորութիւն միասնական աստուա-
ծութեանդ, յորոց մի և դու ճանաչիս
անհաս: Քեւ և 'ի ձեռն քո առաջին-
քըն նահապետական ուխտին շառա-
ւիղք՝ տեսանողք անուանեալք,
զանցեալսն և զգալոցսն, զեղեալսն և
զոչ գոյացեալսն անստուերաբար բար-
բառով բանի վերապատմեցին: Ոգի
Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի,
որ 'ի գնալն քո 'ի վերայ ջրոցն, անպա-

րագլր զօրութիւն , ահեղ շրջարկութեամբ տածողականաւ՝ թեւատարփակ պաշտպանողօրէն գթածրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր ։ Ցոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառուցանել զըսծդ մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր , կարող տիրապետ , զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից յանէից , Քեւ ստեղծանելն 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն՝ յայնմ ժամանակի , որ է օր վերջին այսմ կենցաղի , և օր առաջին երկրին կենդանեաց ։ Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս Հօրն իւրում ազգակիցն քո ․ էակիցն Հօր անդրանիկն Որդի մերոյս կերպիւ , զքեզ աւետարանեաց Ճշմարիտ Աստուած հաւասար և համագոյ Հօր իւր հզօրի , և զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց , և իբր զաստուածամարտիցն ըղքո հեստեղցն չարաբանական բերանս կարկեաց , և զնորին շնորհեաց արդարն և անաչառն գտիչն ամենայնի , որ վասն մեղաց մերոց մատնեցաւ , և յարեաւ



վասն զմեզ արդարացուցանելոյ ։ Նմա փառք 'ի ձեռն քո , և քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի , յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի , մինչեւ զնստանութիւնն չուսոյ հըրաշալիս յայտնեսցի ազգեաց , Աւետարանէչ զքրիստին ըկրկին խաչացութիւն ։

Ն ․ Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զխաւաւորեալ արարչութիւնդ , անեղծ և անստեղծ անժամանակ Հօրդ գըթածի , որ բարեխօսդ ես վասն մեր յանմեղունչ հեծութիւնս առ ողորմածդ Հայր ․ որ զսուրբսն պահես , և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալոյդ Հօր ։ Արդ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց , որ ոչ է հաճոյ քում բնակութեան , և մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք 'ի տեսականացս աչաց խմաստից ․ վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ

'ի ձեռն աղօթից . եւ ընտիր վարուց խնկելոց . Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի , եւ միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ , իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս , եւ յարդարեսցես ըզմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելուչ ճաշակման Երկնաւոր Գառինդ . առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան : Եւ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր , որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման . զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն , որպէս Որդւոյդ Աստուծոյ՝ Հօր քաղցրութիւն . որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն , եւ զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան : Այո՛ , այո՛ , եւ ես մի եմ 'ի նոցանէ . եւ զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի , շնորհօք քո ապրեալ , զարեամբ Քրիստոսի ստացեալս : Զի



յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանուցի քո աստուածութիւնդ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս եւ 'ի մի իշխանութիւն զօրութեան . զի քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն , զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

## ԲԱՆ ԼԴ .

Վ.երստին յաւելուած ձայնի հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Արդ՝ առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս խոյ իղձք , եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք , որ բովանդակես բանիւ զամենայն՝ Աստուած , զոր 'ի նախնին ճառեալ՝ եւ յերկրորդումս ցուցից : Իսկ յանդիմանութիւնս դրաբանականս՝ 'ի կոյտս բազմութեան ազգաց , եւ թարգմանութիւնս ժողովրդոց , զայս արգահատու-

թիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն դա- հաւանութիւնք •

Ի հանդիսարանս խօսից ատենի բանս մաղթանաց, որով Հոգին Աստուծոյ հաշտեաց հասանէ յօգնականութիւն :

Բ. Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր Հօրդ հզօրի, առաքեա զցօղ քաղցրութեան քոյ, եւ բարեգործեա 'ի յանձին եւ յիշխանական ազդման զգայութեան զամենայն շնորհս բազմապարգեւ քո ողորմութեան: Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս յընդունակութիւն արդասեաց հոգեւոր սերմանց: Քում ամենիմաստ նութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս 'ի մեզ ծաղկեալ եւ աճեցեալ. որ ձեռնադրես Առաքելս, լցուցանես մարգարէս. ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համրս, եւ բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո էակիցն Հօր անդրանիկն որդի քոյին գործակցութեամբ ներգործելով



զայս ամենայն, քարոզեաց գքեզ Աստուած հաւասարակից խնկութիւնդ Հօր: Շնորհեա եւ ինձ մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ, հետեւել արագաթռիչ ընթացիւք մտաց ընդ անհունն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց: Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանեսցէ առ իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն եւ զպիտանին եւ զհաճոյն քո 'ի ժամանակի. 'ի փառս եւ 'ի գովեստ աստուածութեանդ քո. եւ 'ի լրութիւն շինութեան կաթողիկէ Եկեղեցւոյ: Եւ կարկառեա 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո, եւ զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո, վարատեա 'ի մտաց իմոց զմէգ մթութեան մառացութեան, ապաքինեալ ընդ նմին ըղխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս: Լուսաւորեա 'ի յիս զերամին զծագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեան քոյ, հզօր. արժանի լինել առնել եւ ուսուցանել յօրինակ բարեաց աստուածատեսք լու-

ղաց ։ Եւ քեզ ամենայն փառք յամե֊ նայնի, ընդ Հօրդ ամենակալի և ընդ Որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս, ամէն։ Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ սուրբ Երրորդութեանն՝ զայս վարդա֊ պետեսցի, զոր շաւիղ կարգիդ վերա֊ նկարէ ։

Երրորդութիւն անայլայլական նորոգ֊ ստեղծաբանութեան աշգեաւ քԱստու֊ ծոյ, զոր ինչ 'ի Նիկիայն սահմանե֊ ցաւ հաւատ ։

Գ. Խոստովանիմք և դաւանիմք, պաշտեմք և երկրպագեմք զգլուգաւիա֊ միութիւն ամենասուրբ Երրորդութեա֊ նըն, աստուածութիւն անձառ, միշտ բարի, նոյնագոյ հաւասարապատիւ, անհաս անիմաստից թեւոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան ըզ֊ նմանութիւն գերաղանց գոլով սահ֊ մանի անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւիտենից ան֊ տարրական էութեանց ստեղծականաց կարգաց, օրհնաբանութեամբ անթարգ֊



մանելւոյ ամենահարուստ մեծութեամբ յաւէտ սպասեալ, հաստիչ ժամանա֊ կաց և որ 'ի ժամանակի են կերպարա֊ նեալք, խնքնապատճառ հանդերձիչ և յարմարապէս յօրինիչ տեսականաց և աներեւութից ։ Ոչ անուամբ չափեալ և ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ ո֊ րակութեամբ նմանեալ և ոչ քանակու֊ թեամբ կշռեցեալ, ոչ օրինակաւ ձե֊ ւացեալ և ոչ որպիսութեամբ ծանու֊ ցեալ, ոչ 'ի թերութենէ տարածեալ և ոչ 'ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբէքի գրաւեալ և ոչ 'ի տեղւոջ վայ֊ րի երեւեալ ։

Դ. Հայր գթութեանց, ունող ամե֊ նայնի, և Աստուած հանուրց որ յերկ֊ նի և որ յերկրի, բաց 'ի բանէն միայ֊ նոյ՝ որով զամենայն ինչ ունի, ստեղ֊ ծիչ և տուիչ շնչոց ամենից, բաց 'ի Հոգւոյն իսկակցէ որով զհամայնն կազ֊ մեաց ։

Ե. Մինն յերջանկափառ համագօր ա֊ հաւորութենէ երիցն անձնաւորու֊ թեանց խոնարհեալ 'ի վերուստ աս֊ տուստ 'ի ստորինս, որ էրն իսկ 'ի բը֊ նէ անբաժ 'ի Ներքնոցս՝ անկապուտ

մնալով փառացն աթոռոյ , և անկարօտ գիմացն ծնողին իւրոյ , մտեալ ՚ի սենեակ կուսին սրբանդի պարզաբար և ելեալ անտի յօդաւորաբար · մարմին էապէս անփոփոխելի , անթերի մարդկութեամբն և անպակաս աստուածութեամբն ։ Մի Որդի Հօրն միայնոյ , և միածին անդրանիկ աստուածամայր տիրածին կուսին , արարիչն յեղականուամ մարդ ելով ճշմարիտ սկզբնածին , ահա ոչ զինի եղելոյ երկրաստեղծիցս նմանութեան , այլ նոր և չքնաղ · Թագաւորաց վեհափառ , որ ոչ ցուցաւ ՚ի դարս , և ոչ գոյացաւ ՚ի ժամանակս , անդրանիկ ըստ սաղմոսողին , քան զամենայն թագաւորս երկրի անապական խոնարհութեամբ կերպացեալ զմերս՝ ՚ի մարմնի , ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ · և ոսկւոյ ընդ հրոյ · և կամ յայտնապէս իսկ արեւ՝ լուսոյ ընդ օդոյ , ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ ։ Նոյն ինքըն եկեալ կամաւորութեամբ ՚ի խաչն մահու , իբր զգառն անարատ ՚ի ըսպանդ վարեցաւ , և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութեամբ զարարածոց իւրոց փրկութիւն · չարչարեալ իսկութեամբ



կենդանեաց՝ եդաւ ՚ի շիրմի անոլոշելի յաստուածութենէն · եռօրեայ թաղմամբն ՚ի դժոխս՝ սանդարամետականացըն վհատեցոյն բանտարգելեացն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս ։ Եւ աւարեալ զանօրինականացն զփրկանաւորն զանտեսութիւն աստուածապէս վերականգնեալ · և կառավարեալ ՚ի թեւս հողմոց՝ ելեալ ՚ի Քրովբէս ամպով անքննութեան ծածկեցաւ · համբարձեալ գեր ՚ի վերոյ ամենայն երկնի , նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ Հօրն հաւասարութեն , յորմէ և ընաւ իսկ ոչ մեկուսացաւ , անկարօտ աւեցելովն եւ անմնուալ սեպհականօքն ։ Որով և եկեսցէ ՚ի դատաստան հատուցման , քննել զծածկեալըն կշռութեամբ չափոյ արդար իրաւանց · որում աղաչեմք և յոր աղօթեմք հաւատացեալքս յամենայնի ամենայնիւ ամենակալ տէրութեան նորա · որ արդարեւ մին է միայն ՚ի միայնոյն՝ ՚ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկըրպագեալ ։

Զ · Բարեբանեմք միշտ եւ օրհնեմք ընդ Որդւոյ և ընդ Հօր և զՀոգի հաւ-

թեան նորին, ամենազօր, ճշմարիտ,
կատարեալ և սուրբ, որ յանէից գոյա-
ցոյց զբոլոր եղեալքս ամենայն, ինք-
նագոյծ համիշխան երկուցն եւս ընդ
նմին անեղծ և անսահման թագաւո-
րութեան. որ ինչ պատճառն առաջին
և բանն անձաւոր նորին ինքնութեան,
նոյն ինքն եւ Հոգին բղխեցեալ:
Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօ-
րըն պարգեւս ՚ի գովեստ անուան փա-
ռաց Միածնին. որ ազդեաց յօրէնսն,
շնչեաց ՚ի մարգարէսն, փչմամբ աղ-
դակցին տպաւորեցաւ յԱռաքեալսն.
կերպիւ աղաւնւոյ ցուցաւ ՚ի Յորդանան
՚ի մեծութիւն փառաց եկեղւոյն, փայ-
լեաց ՚ի գիրս աւանդականաց, արար
հանճարեղս, զօրացոյց իմաստունս, լցոյց
վարդապետս, օծ արքայութիւնս, օ-
ժանդակեաց Թագաւորս, ետ վերակա-
ցուս, հրամանատրեաց փրկութիւնս,
շնորհեաց ձիրս, հանդերձաւորեաց քա-
ւութիւնս, զմկրտեալս ՚ի մահն Քը-
րիստոսի՝ ՚ի բնակութիւն իւր մաքրա-
զարդեաց. զոր Հայր և Որդի, զնոյն և
Հոգին ներգործեաց և ինքն է Աստուած
խնկեալ տիրապէս ամենայն յամենայնի,



Է. Քանզի ոչ նախաթուելովն յԵրրոր-
դութեանն ոք մեծ ինչ քան զմիւսն,
և կամ զկնի անուանիլն նուաստագոյն
առ նմանն, և կամ ՚ի մինն ասելով՝
խառնակութիւն գոլ դիմացն, և կամ
յերկոյն տրոհումն ուրոյնութիւն էր կա-
մայն. քանզի անմեծար Հայր ամենայ-
նիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան
զօրութիւն. որպէս ոչ գոլով ընդ նմա
Հոգւոյն՝ անհաղորդ նմա և անկենդան և
առ ամենայն հրաման նուաղեալ. իսկ
Բանն եթէ ոչ անուամբ Հօրն ծանիցի,
որք նմա և կամ լքեալ և կամ ՚ի մահա-
ցուէ ումեմնէ ոչէի: Որպէս և Հոգին՝
եթէ ոչ ՚ի պատճառէն նշանակեսցի,
ապաշուք նմա թախանձեալ՝ իբր զշունչ
ինչ անդաւեալ. Այլ եթէ ոք հակա-
ճառական բանիւ յաւակնի կապտել ըզ-
Հայր ՚ի յիւրմէ Բանէն. որ թէ էր եր-
բեմն յորժամ և չէր, և անբանութեանն
բամբասանօք պատուել վարկանի ըզ-
վեհին մեծութիւն. և կամ ստրկու-
թիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար
գոլով Հոգեւոր, որով այլ իմն գոյու-
թիւն օտար մուծանել և կամ անխո-
խուին ինչ այլայլական յանդարձ պա-

տիւ միութեան սուրբ Երրորդութեանըն, զայնպիսին քաղամբք պարզից հաւատոց բանից, իբր զգծնդակ դեւս դիմամարտիկս գաղանականս, հերքեալ 'ի միջոյ 'ի բաց հալածեմք, եդեալ 'ի Նըզովս զնոյնս ընդ նովին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականըս գաւթի։ Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով 'ի նոյն տէրութիւն միակցորդ հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութեամբ, հանգունաւորիւ հարթութեամբ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, 'ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ը. Արդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի՝ ամենայնուր ականջաց մեծիդ Աստուծոյ ընծայեցուցի. սովին սպառազինեալ, և ապա մուտ 'ի հանդէան։ Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյ ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչեւ ստեղծեալ էր քո զամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչօքն անմահից և երկրաստեղծըս բանաւորօք, դու քեզէն 'ի քումդ



լութեան փառաւորեալ իսկ էիր, այլ զի զմերժեալս զիս յարգեսցես, անձառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ։ Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանոնիդ առել Ադոնայի Տէր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ պատգամի. ըղգրեալս մատամբդ Աստուծոյ՝ եղծի, որ և խորտակելն է իրաւացի. և ես տխրատեսակ միով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ. Այլ արդ՝ քանզի բազմօք պաղատեցայ գրուածովք խանդաղատանօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լուր, բարեգութ, ըստ ամին բանի այնմ ամենայնի։ Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից յօդեալ ընդ նովին. թերեւս 'ի մաքրոց և 'ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջից իւղով զանգելոց 'ի սեղան փառացդ քոց մատիցէ։

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր Քրիստոս մի՝ Աստուծոյ միոյ, հզօր և ամենակալ, որ յաղթես զթութեամբ խնամոց քաղցրութեան

քո , ոչ հասարակականաց միայն մարդ-
կութեանս իմոյ գոյակցաց , այլ որ
ցանէտ է ամբոխութիւն և բիւրամա-
նեաց հակառակութիւն , այլ և հրեշ-
տակացն անախտականութեան . Նաև
և եւս քան զայս՝ սրբասնելոցն անա-
րատութեան , յորոց մի էր և Եղիաս ,
որոյ ցոյցք խաստութեանն 'ի Քորեբ լե-
րինն նշանակեցաւ յերիս օրինակս , 'ի
շարժումն մեծ , 'ի հողմն ուժգին , 'ի
հուրն կիզանողական . իսկ քոյդ հեզու-
թիւն երկայնմտութեան՝ 'ի հանդար-
տութիւն մեղմութեան օդոյն քաղցրու-
թեան . քանզի կամաց ողորմութեանց՝
դու միայն ես , ըստ գրեցելումն : Վա-
սըն զի թէ և հաճոյք դասուն մերասերքս
առաքինութեամբն յեղանակեալ յայլ
նմանութիւն վերնայնն , սակայն երկ-
րածինք են և նոքա , ընտրեալք 'ի
մարդկանէ , իսկ դու ոչ ունիս շարա-
նալ խակութեամբ բարիդ , յամենայնի
օրհնեալդ , ամենեւին փրկութիւնդ , ա-
մենայնիւ հանգիստդ , համայնից ան-
դորրութիւնդ . համօրէն ախտացելոց
դեղ առողջութեան . աղբիւր ջրոյ
կենդանեաց ըստ Երեմիայ : Դարձ առ



իս և ողորմեա ինձ , որ այնքան ծա-
րաւես պարքիս , անկարօտդ Աստուած ,
իմում փրկութեան , մինչ զի զուարթ-
նոցն երկնից անմահից օրհնաբանողաց
բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկա-
կան քահանայապետս և քաւչապետա-
բար՝ անեղծական յարակայութեամբ
մշտնջենաւոր պաշտամանս օրհնեալդ քո
գթութեան՝ 'ի մերոց գլխոց կենդա-
ղականաց փառն իմ լքելոյս հաշտու-
թեան մաղթել , ողորմեա Երուսաղեմի ,
որ է լուսաւոր խորհուրդ յոյց եղանե-
լոյ մեծիդ յայտնութեան առ հրեշտա-
կականն թափուր տեղի սորանկելոց
'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ
աւետարանեալ առակաւ այսր օրինա-
կանս Երուսաղեմի :

Փ . Արդարեւ լուար բարեգութ ,
անսացեր թագաւոր , ունկնդրեցեր
կեանք և յոյս , 'ի միտ առեր երկնա-
ւոր , յարգեցեր հզօր , նկատեցեր ծած-
կագէտ , տեսեր խնամակալ , կարեկցե-
ցեր անպատում , խոնարհեցար միշտ
բարձրեալդ , նուաստացար ահաւոր , յայտ-
նեցար անձառ , ամփոփեցար անսահ-
ման , քանակեցար անքննելին , մածար

ճառագայթ, մարդասէր անմարմին, շօշափեալ անքանակ, կերպաւորեալ անորակ, լցեր խոկալեօ զաղաչողացս բաղձանս ։ Դու և եղէր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ աղաչողութեանս՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անխախձան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ ։ Ահա սպրդած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես ու մեղուցելոյս զբարեպաշտութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալդ երկայնամիտ․ և քեզ վայելէ փառք յաւիտեանս․ ամէն ։

---

## ԲԱՆ ԼԵ․

Վերստին յաւելուած խրթին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա․ Եւ արդ, Տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, անտարակոյս տեւողութիւն, կամք ամենընդարձակ, առատութիւն անպակաս, ով որ զօրէս-



ցէ տօնել հանդիսիւ պարերգութեամբ ՚ի միոյ կաթուածոյ ցօղոյ քում բարութեան, որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից խնուլ փրկութեան ։ Եւ զոր մեծն է գրեցից պատմել յապաւնիան․ քանզի ոչ անուանեցար հրեշտակաւէր, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր․ այլ (Բ)
և զերկինս զամբարօք նոցին զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա․ այլ առեր ՚ի պատիւ մեծաց գովեստից առաջին գասեալ զմարդասիրութիւնն ։ Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ ՚ի խորհուրդս սակալս․ զերկնային լուսակերպիցն կոչեցեր զնովին սպասաւորս և զլսաւորս յատուկ մատակարարութեանց․ իսկ զստորնային ծնունդս մահկանացուաց տիրական և աստուածական պաշտելի անուամբք պերճացուցեր․ Անցեալ վերստին ըստ սահման կշռութեան չափոյ, լայնեցեր քեզ կտակս զլոյս ճառից անբաւից զանապակ ծորմանն ծայրագոյնին վերնում բարութեանն ։ Եւս և ՚ի մարդանոյդ քո միդ յչութենէն, ամաց վասն ին-

քեանց և կիսոյ վասն այլոց զեղեր ա-
ռատութեամբ զտուրս կենաց, պտուղա-
տըս բազմօրինակս, սքանչելիս աստ-
ուածագործս, նշանս ճշմարտատեսիլս:
Որպէս զի թէ անդամալուծին պակա-
սելոյն 'ի հաւատոյն՝ հոգաբարձացն ա-
ռաջարկութեամբ զցոյցս յուսոյն՝ գը-
թացեալ ողորմեցար, և ո՞րչափ զօրեացէ
առաւել բան քո ամենակալ առ ախ-
տալից մարմնոյս մաքրութիւն աղօթա-
կողիս հառաչման. քանզի աղաղակեն
մեծ են չարիք հրաշից, քան զանմաք-
րեալս Հոգի Սուրբ հասանել. զըստա-
ցեալս պատկեր անտիպելի աղտոյ ներ-
գործել. Նա զի և երկրորդս առաւելու-
թեամբ յուսալանին չնորհ յաճախեալ՝
զփառսն հայրենի բարձրացուցանէ:

Բ. Դու ես Տէր, որ որբես զմեզ, որ-
պէս ընտրելոյն քոյ նախատպաւորեցեր
Մովսէսի, դու ես, որ 'ի մեզս և յա-
նօրէնութիւնս վերակացու եղեր առհ-
մին Յակոբեայ, մինչ յԵգիպտացւոյն
երկրի ընդ խաւարն հեթանոսաց ընտա-
նենոյին: Դու ես, որ օրէնսգէտ առ-
նես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ
բանի երգողին Դաւթայ. դու ես, որ



փոխատրես զքարեղէն սրտից կարծրու-
թիւն 'ի լոյծ կակղութեան մարմնոյ
գթութեան բանի ընդունելութեան:
Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ
և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբո-
վանդակ կենացն սահման. դու ես, որ
տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան
առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ
մարգարէիցն ձայնի:

Գ. Զօրհնեալ քո շըթանցդ զոչխար-
հաստեղծ բերանոյդ զաստուածեղէն
անձրևացդ զկեցուցանողդ կաթուած
մասն լսելեացս զբանից բացարան. որով
զօձին խորամանկութիւն բանսարկու-
թիւնից բարձցես և բժշկեսցես: Ամե-
նակալդ ձեռօք զխօնականացս չարժա-
զական գործի ըմբռնեալ՝ աղբեա զօ-
րութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտ-
րութիւն բանի. զի զաստիարակեալ
զպատշաճականն մի յանդգնաբար խօսե-
լով իբր զնախնին լբայց 'ի յուսոյդ. և
անբանութեան մատնեցայց վանեալ յոր-
սողէն. Լուսաւորեա վերստին զխաւարե-
ցեալ հոգւոյս աչս կենդանարարաչօք աջոյդ
կարկառմամբ, զի մի հանդարձակութեա-
նըն չիջեալ լարտօսր չնչմամբ վիշապին՝

'ի ներքոյ գլուանին ստորածածկեցայց ։ Բարձ զանօրէնութիւնս իմ , Տէր , եւ ընկեա 'ի խորս ծովու . որ է փոքր առակ մեծութեան քում անբաւութեան , ըստ մարգարէին , զնմին ընկղմել չարութիւն ։ Կանգնեա կործանեալս անձին նշան վստահութեան , զի մի յուսահատութեանն կոթող կառուցեալ զծածկեցելոցն բողոքեսցէ ։ Բաց , հզօր և գըթած , զբժշկարանիդ կենաց վարդապետարան , զի զառ 'ի ներքոյն մշակութեան կորուսչին սերմանց՝ մանգաղակամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես ։ Դէմ եդեալ հետեւել առ քեզ բոլորից Աստուած՝ պետրոսեան օրինակութեամբն , 'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզոյ . մատ ժամանեա զաջդ կեցուցիչ յօգնականութիւն ինձ տատանեցելոյս ։ Ընդ Քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս պաղատիմ՝ ամէցելոյս ասպականատար կաղկանձողական անհնարթշուառ վտանգաւորիս . ապրուստ կերակրոյ փշրանաց հացի 'ի բազմազեղդ քո սեղանոյ մանուորեսցես ։ Արա փրկութիւն նիթոյ խորանիս որդւոյս դառնութեան ,



որ եկիր խնդրել և կեցուցանել զիս ըզկորուսեալս ։ Զի քո է մեծութիւն , յաղթութիւն և զօրութիւն , և դու ես քաւութիւն և բժշկութիւն , նորոգութիւն և երանութիւն , եւ քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն ։

---

## ԲԱՆ ԼԶ.

Վերստին յաւելուած նոյին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ և գերազանցութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շընորհաց առ պարտուցս իմոց առաւելութիւն , չարչարանացդ հանդէս եւ յանձնառութիւն ։ Զարիդ ամփոփիչ ամենից հոգւոց գոյից արարիչ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր , զի զձեռնարձակութիւնն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես ։ Զընթացողական ծակցութիւն երկոցունց

տուիցդ կեցուցանողայ՝ յանարգելու-
թեանս պատճառ՝ 'ի պատժարանի փայ-
տին մածուցեր, զի զիխտացեալս վայ-
րագութիւն թշուառացելոյս գրաւա-
կանեսցես գթածարար ։

Բ. Ով գօսանալ ձեռաց կափողայն
հրամայեցեր օրհնեալ գագաթանդ, որ
զթզենուոյն տունկ առ ժամայն չորա-
ցուցեր, զի և զաւխս ներելոյդ օրի-
նակ կանխաւ աւետարանեսցես ։ Ով
զանողայն ապիրատութեան զխստա-
վանեալդ Աստուած ողոռնացար, որ
զարուսեալն մթացուցեր, զի մաչհացե-
լոյս անձին բարութիւն հանգստեամբ
հանդերձ գործեսցես ։ Ով զհայհոյչայն
հնարաւոր չարաբանութիւն կապտե-
ցեր, որ զլուսնին պատկեր երանգաւ-
որեան գունեցեր. զի զանհամարձակ
լեզուս 'ի գովեստ քեզ զօրացուսցես ։
Ով նախատողայն մերկնութեան սաս-
տեցեր, որ զտարերս սասանեցեր, զի
զթշուառացեալս գլուխ գթութեանդ
օծմամբ իւղեսցես։ Ով 'ի մոլորեցուցիչն
կարդալ զքեզ աստուածապանիցն՝ զօ-
դուած ծնօտիցն բաժանեցեր քակտեալ
'ի միմեանց, որ զկարծրութիւն վիմային



հերձեր, զի զանուանակս բարեաց հա-
գիս՝ 'ի բերմանէ ընդունայնութեան
ողորմութեամբ հանգարտեցուսցես։ Ով
զպահապանացն սուտ ընդերաց իւր-
եանց մատուցեր, որ զոգոյն օձին
սահեցման հողոյ մատնեցեր, զի զտա-
ռապեալս մարմնոյ ուխտս իբր 'ի գան-
ձարանի պահեալ, կենաց յարութեան
արժանացուսցես։ Ով 'ի կնքեալ զշիրմին
փականս կենդանակիր քո գերեզմանին՝
անդրէն յորսայսեալս զնոսին յանդուն-
դոյս երկրի սուզեցեր, զի 'ի տապանա-
կի անձինս զնշխար լուսոյդ հանգուս-
ցես։ Ով 'ի համբառնալն զքեզ կորու-
սեալ, և իբր զերկրաւոր մարմին դո-
ղացեալ, համայնաջինջ և ամենատարա-
զսերմն ծննդոցն կրճատեցեր. զի զիս զա-
նարժանս յիշատակի ընտրութեան բա-
րեաց՝ անկորուստ և անխափանելի ընդ
փրկելոցն հաղորդեսցես ։ Ով յարծա-
թոյն կրկնակալէն կաշառաձգութիւն,
որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց
քեզ գրաւ մատնութեան և անարգու-
թեան մասնաւորեցին՝ զուրացողացն
մերձնելոց, ըստ հին հարուածոց հան-
ւոյն Մոլաքու՝ 'ի յարձան քարի յեզա-

նակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի հաստատութեանց եւ ընդ իշխանութեամբ մահու վտարանդեալս՝ արեամբ քո փրկեալ, 'ի հաստատութիւն վիմիդ կառուցես։ Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամենայնի միշտ օրհնաբանեալ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

---

## ԲԱՆ ԼԵ․

Վերջին յաւելուած երկին հեթումեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ․

Ա․ Արդ՝ այդ գումարտակ վերադասեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգեւաց առ իմս երախտիս, ով ամենագութ բարերար գոլեալ եւ ամենազօր, թէ եւ սակաւք շարադրեցան աստանօր եդեալ․ այլ արքայազունք են եւ իշխանականք ինքնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհից, մեծափառք, լուսանորոգք եւ հրաշապատիւք․ յաղթողական վերամբարձութեամբ դ-



րօշիւք հռչակեալք ըստ գլխոց գլխոց պսակապանծոյծ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց․ համբոյրս հեզս երջանիկս եւ խաղաղականս աստուածային հարազատութեանց այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով․ զարթո Տէր զզօրութիւնս քո․ եւ եկ կեցուցանել զմեզ․ որք յոյժ զօրեն հալածել զմեզս, եւ զանյուսութեանն կարկառս հալել եւ փախուցանել․ քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ բարւոյն Աստուծոյ։ Քանզի եւ զնաւն այդքանեացս ձրից որ 'ի Բարձրելոյն ինձ անձրեւեցաւ ակարիս, թշնամւոյս եւ ապախտաւոր ծառայիս, անձառ է ասել․ իսկ եթէ համարձակեսցի ոք զօրէն խօսել․ զաւակաւս 'ի բազմացն քան թէ զխիկութիւն համանգամայնիցն․ առ այսոսիկ զառաջին նիւթն յիշելով յորմէ հաստեցաւն, իբր զակար ոք նկուն 'ի զօրութենէ մեծէ հերքեալ պարտեացի։

Բ․ Այլ թէպէտ եւ այսպէս գրեցի,

և դարձեալ զնոյն վկայեմ առ թերի
խակութիւն հոգւոյ՝ և կատարելութիւն
հաստողից, և առ բարին իմ չարժա-
նութիւն, սակայն ամենայնս աննա-
խանձ և բազմազեղուն գոլեալ արար-
չութեանդ զօրեղութեան վանեալ են
կարծրութիւնք արտաքերութեան սըր-
տի բանաւորութեն. որ քարին առակաւ՝
յուսահատն վհատութեան, սպառամամբ
խոպանման աղբերաց երկուց, որ 'ի
զգայականս Եդեմայ բղխել պատրաս-
տեաց անկողն, զի ոռոգեալ ծաղկեսցի
նոճաւ որ 'ի յիս բարեգործութեան
կենսատունկն դրախտ, ահա մի' ցամա-
քութեամբ արտասուացս՝ աղանդահը-
նար պատրանօք՝ չարաչար խորտա-
կեսցէ վերստին հանել 'ի փափկութե-
նէ նախնում վիճակին: Իսկ յորժամ
կայցէ Աստուած համբարձեալ հրաշիւք
արուեստից 'ի մէջ աստուածոց հաշտա-
րանացն խաղաղութեամբ, բարձեալ
ընդ ինքեան զշնորհացն կտակ. առ որ
ամենայն վնասակարութիւնք խարդա-
խութեանց և կործանմութիւնք սատանե-
ղութեանց իբր ընդ վիմաղէն լերին սըն-
դութեան բախեցեալ ցնդին, չիք օրի-



նակաւ սակաւու հեղեալ, և կամ հո-
ղոյ խորտակմամբ փշրեալ.

Գ. Արդ չեւ իմ կշտամբանքս ըստ
ձայնին Յովբայ 'ի մարդկանէ լսեն, այլ
յամենատես աչաց վերին հրամանիդ,
մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
տուկմամբ սասանեալ յամենայն կար-
ծեաց. ապաւինիմ և արդ անձամբ բե-
կելով 'ի յոյզ հաստատութեան կեն-
դանի անեղծ. զի ողորմութեամբ նայե-
ցեալ 'ի յիս իբր 'ի պարտաւոր կորըս-
տեան պատժոյ, առաջի բարերարու-
թեան երկնայնոյդ յանդիման եղեալ ա-
պաձեռն անթօշակութեամբ, զքոյդ
երախտիս անպատում փառաց բերելով
ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մա-
ռայմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թար-
թափմամբ աչաց ընդ միջեալ զհեծու-
թիւն կրից անտեսես: Վերայս յինէն,
աղաչեմ զքեզ, խաչիւդ լուսոյ զխեղդ-
վտանգիս, հոգարկութեամբ տրտմու-
թեանդ՝ զտարակուսելի տխրութիւնս,
փշանիւթ պսակաւն՝ զբողբոջ մեղա-
ցըս, զարկուածով գանին՝ զհարուած
մահուս, ապտակին յիշմամբ՝ զկարիս
ամօթոյս, թշնամանօք թքոյն՝ զանդո-

նելի գործութիւնս , ըղձային ճաշակ-
մամբ՝ ընդգեցոյս գաղտնութիւն ։ Ահա
քո են այս ամենայն բարութիւնք ան-
բովանդակելիք՝ Աստուծոյ միոյ միածին
Որդի ․ առ որովք ընտրութիւնս իմ յի-
շատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո
կարգամ բարձր աղաղակաւ իմանալեացս
պաղատանօք ։ Տես 'ի խոստովանու-
թիւն զղջման պարտութեան ամաչեցե-
լոյս , և տուր ողորմութիւն որդւոյս
սատակման մահուն անմահի ․ զի 'ի բազ-
մութեան իմոց մեղաց՝ վերստին կըրկ-
նեալ նովին աճեցմամբ առաւելութե՝
քո ողորմութիւնդ աւետարանեցի ,
հաշտեալ հնչմամբ ահաւորութեան
յերկնի և յերկրի ։ Եւ քեզ ընդ Հօր
Հոգւովդ Սրբով փառք յաւիտեանս ․
ամէն ։

---

## ԲԱՆ ԼԸ ․

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին
հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա․ ԲԱՅՑ արդ որպէս երբեմն յայլ



ընթերցուածի որ 'ի սկզբնաւորականա-
ցըն կարգի՝ զմեղանայն գլխաւորոյն
ծնունդս գլխաւորացն օրինացն մարմնա-
կանացն անդամոց գրեցի ․ յորոց տիրե-
ցայ ժառանգս մահու , նոյնպէս եւ
յայսմ տաճման ընտրութեան բանի ըղ-
լուսածնելոցն զազատարարն օրէնս Հո-
գւոյն կենաց որ 'ի տէր Յիսուս՝ յիշա-
տակեցից նուաղս յոքունց , իբր յանբաւ
բազմութեանց ծովու կաթիլ մի ա-
ռեալ ,

Բ․ Քանզի են արդարեւ կայսերա-
կանք ոմանք 'ի բարձրութեանն գահի
բազմեալք , թոշակաւն շնորհաց լը-
ցեալք և հաստատեալք ։ Թագաւորն
և սիրեցեալք իւր , արքայն և պատուա-
ւորք իւր , պսակեալն և իշխանականք
իւր , բարեհաշակեալն և հնչմունք իւր ,
յաղթողականն և փողք իւր , զօրաւո-
րըն և մարտիկք իւր , գովեցեալն և
փառք իւր , փեսայն և պարաւորք իւր ,
գլխայն և օրհնորդք իւր , փեսաւէրն և
հանդերձանք իւր , ազատութիւնն և-
շնորհք իւր , այցելութիւնն և ձեռն
իւր , խոստումն և քաւութիւն իւր ,
պահպանութիւնն և աջ իւր , պարգե-

ւըն և զարդ իւր, նշանն կենաց և ամրութիւն իւր, կնիքն և Նկարագիր իւր, ամպն և հովանի իւր, արուեստն և հրաշք իւր, հոգին և անեղծութիւն իւր, բանն և կատարած իւր. ուխտադրութիւնն և լրումն իւր, զօրութիւնն և հրամանք իւր, լուսաւորումն և սքանչելիք իւր, մանանայն և անապականութիւն իւր, վէմն կենդանի եւ վտակք իւր, սիւնն հրոյ և ճառագայթ իւր, որոտումն և ազդմունք իւր, յոյսըն վերին և փրկութիւն իւր, ծառն օրհնութեան և պտուղք իւր, բարունակն և բարութիւնք իւր: Եւ զի մի զընաւն առելով յամենայնէն վրիպեցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն, 'ի շատն առել լուսոյ և 'ի սակաւն ժամանեցից, բաւականացեալ անհնարինս կարիւ:

Գ. Բայց աւաղ յաւէտ սոսանօր թշուառացելումս եղկելի անձինս, քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետաւորս բողոք դուժիս. վասն զի ընդ այսոսիկ առընթեր սորին գայ արդարութիւնն և կշիռքն, վճիռն եւ հատուցմունքն, քննութիւնն և լոյսն,



յանդիմանութիւնն և զամբարքն, մերկութիւնն և պատկառանքն, յայտնութիւնն և ամօթն, անբիծն և վատակքըն, թիւրեալն և պատիժքն:

Դ. Դարձեալ վերստին աշխար կրկին եղկելոյս, քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ մանգաղն առ հունձն, դատաւորն առ ատեանն, հզօրն առ բեմն, սպառնացեալըն առ կորուստն, բազուկն առ դատաստանն, գաւազան խրատուն առ հարուածն, սպառազինութիւնն առ նախանձն, հովիւն առ ընտրութիւնն: Քանզի բանն զոր խօսեցար ընդ իս, 'նա դատի զդատապարտեալս 'ի վերջնումն աւուր հատուցմանն: Այլ կանխեա, բարեգութ, նախընծայ քաղցրութեամբ առ նուաղ հեծութիւն վարանական երկիւղիս, և զօրութիւն ընձեռեա ձեռամբդ օրհնութեան 'ի յետին տագնապիս առաջինդ քո օգնութեամբ մխիթարել, բժշկել, քաւել և կենագործել. Եւ քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԲԱՆ ԼԹ.

Վերստին յաւելուած յերկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն ողերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ քանզի զկերպարանն առաջին լքի 'ի վիճակարկն թեւակրութենէ խմելս ծուլութեամբ կործանեալ 'ի սպառ, ցուցից այդ այժմուս զնոյն յիս տեսակ, որոշմելի հեծութեամբ թախծեալ 'ի հոգի, անաչառ խայտառակմանօք հրապարակաւ 'ի յեկեղեցիս բազմութեան ազգաց միապատմեցից բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով.

Բ. Մատեանս չնչական բարդեալ 'ի յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս, ըստ տեսմանն տեսլեանըն Եզեկիելի. քաղաքս անպատուար և անմահարձան, յարկս ունայն 'ի գըլնախակաց ամրութեանց, ազս տեսակաւ՝ այլ ոչ համեղութեամբ, ջուրս աղտաղտին անախորժելի ծարաւեաց արբման, գետինս անօգուտ հերկագործութեան, սահմանս լքեալ հեղեղավայրս կնիւնոյ, խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս, աստուածախնամ երկիրս անձնաւոր՝ որ բանսարկուին պատրանաց մշակեալ, իւղընծիւղ վայրս պտղաբերոյս, հատանելի ծառս ունայնաբերոյս, կրկնամեռ խօսուն տունկըս անյոյս, ամենաչէջ ծրագարանս անլոյս ։ Արդ վերստին առ սոյն բերելով զայս նմանութիւն ուսաղականաց, բազմօք կրկնեցից. որ ամօթոյն գաւն պատուհաս պահեալ կայ հիքոյս, կրճումն ատամանց և անկէզ լալումն աչաց եղկելոյս, հայրական ցասումն անսպուժելի՝ յդառնութեան որդւոյս, ապականութիւն անհորդելի՝ մեղուցեալ մարմնոյս, նոր կշտամբութիւն գտողիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս. տարտամ տագնապի տարակուսանաց ելից գերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառացելոյս, 'ի խրձունս որոմանցն մկրտելով վառանդեցելոյս, 'ի ձայն ահարկու զանբժշկութիւնն ազդեալ լքելոյս ։



Գ. Ահա արդարեւ երգս կատակերգութեան ընդարձակ պտունկի. յածեալ

և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ո-
ղորմելիս և զկծեցուցիչս , ըստ առա-
կաւոր բանին Եսայեայ՝ որ 'ի պատգա-
մին Տիւրոսի ։ Զի թէ նա պղծուածն
փոքր մնացից ապաւնեացն 'ի մօտոյ իմն
ապաւորեալ , բոլոքէր զիմակս զիմակս
կերպից կերպից աւաղականաց՝ ըստ կո-
ծողացն կաքաւելոյ , իսկ առ իս ո՞ր-
չափս և ո՞րպիսիս ձայնս մրմնջեցից վե-
հատեցուցիչս . որ զգալստեանն Տեառն
սպասեալ առանց վրիպանաց , մնացի
անպատրաստ և անհանդերձելի ։ Արդ՝
եթէ զդատաստանացն ահաւորութիւն
երկնեցից , բազմացուցից ինձ աշխարհ .
ապա եթէ զփորձն խոկութեամբ ցու-
ցից , յաճախէ ինձ երկիւղ . իսկ եթէ
զկերպարանացն տեսիլ գրեցից , առա-
ւելուն ինձ հառաչմունք , զի կանխաւ
նկատեալ զայնս և ոչ անագան ապա-
շաւեցի ։ Այլ խնայեա յիս , գթած ,
մարդասէր , հզօր , բարերար , ամենա-
պարգեւ Քրիստոս Թագաւոր , օրհնեալ
յաւիտեանս . ամէն ։

---

# ԲԱՆ Խ .

Վերջին յաւելուած յերկին հեծութեան նորին հոլովք առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա . ԱՄԵՆԱԿԱԼ Աստուած բարե-
րար՝ ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչա-
նաց ձայնից վտանգի . և յերկիւղէ
տագնապի ապագայիցն կարծեաց փըր-
կեա կարող զօրութեամբ զերծեալ 'ի
պարտեաց . քանզի բաւական ես յամե-
նայնի առ ամենայն հնարս զօրանալ
անքաւ մեծութեամբ և իմաստու-
թեամբ անսահմանելեաւ ։

Բ . Եւ քանզի ուշիւ մտացս տե-
սեալ 'ի հեռուստ զհանդերձելոցն հան-
դէս ահաւորական , նկատեմ ինձէն
աստանօր կանխաւ զօրն լուսոյ սըր-
բոցն յուսոյ , զօրն խաւարի պատժա-
պարտից պատուհասի . ուստի ոչ զօրէ
ոք յելս առ պատրաստական փախըս-
տեան . ոչ անդունդք խորոց , ոչ վիհք
վհից , ոչ բարձրութիւնք լերանց . ոչ
անձաւք քարանց , ոչ կարծրութիւնք

արձանաց , ոչ ծերպք ծակաց , ոչ փա-
պարք փոսից , ոչ սուրք հեղեղաց , ոչ
բաւիղք խորշից , ոչ շունմարանք յար-
կաց , ոչ ծածկութիւնք սենեկաց , ոչ
եմակք հովտաց , ոչ ծործորք դժուա-
րաց , ոչ վերադրութիւն բլրոց , ոչ ար-
ձակմունք շնչոյ , ոչ անբաւութիւնք
ծովուց , ոչ սահմանք յորձանաց , ոչ հե-
ռաւորութիւնք եզերաց , ոչ ողբմունք
ձայնից , ոչ հեղեղք արտասուաց , ոչ
տատանմունք մտաց , ոչ համբարձ-
մունք ձեռաց , ոչ պաղատանք շրթանց ։

Գ . Այսոցիկ ստուգութեանց մա-
սանց անձնօղոպրեկաց դու ես , տէր
Քրիստոս , հնարք և դադարք դիւրու-
թեան և անդորրութեան փրկութեան
ամենամերս հոգւոյ . արդ հայեա 'ի յան-
ցեալ վտանգիցս շրջադրութիւն միայնդ
քաղցր առ ամենեսեան ։ Խղեա սուսե-
րաւ յաղթական կենացն խաչիդ ըղ-
ցանցս վարմի , որ յամենայն կայից
պաշարեն 'ի մահ զգերիս . և հան 'ի
հանդորր զոտս սասանեալ թիւր ըն-
թացողս ։ Բժշկեա զհրատապ ջերմա-
կան տոչորումն մղձկեալ սրտի , մեր-
ժեա զգիւային չարահնարութեանս շը-



շուկ քո պարտաւորիս , հալածեա ըղ-
ջուսահատ անձկութեան հոգւոյս մը-
թութիւն չարի կենակցիս , ցրուեա
զծխամած թանձրութիւն բռնութեան
մեղացս երեւոյթ մռայլս 'ի յիս , կոյտ
զցաղէր թխատիպ կրիցս ապականու-
թեանս կարիս ։ Նորոգեա զպատկեր
լուսոյ պաշտեցեալ փառաց մեծութեան
անուան հզօրիդ հոգիս , զօրացո զշնոր-
հիդ փայլումն 'ի գեղ դիմացս և 'ի կեր-
պարան տեսութեան մտացս հոգեղէնիս ,
յարմար յերիւրմամբ կացո յարդար-
եալ՝ որ գծոյդ բերէ նկատումն՝ նշու-
լազարդ մաքրութեամբ զտեալ զմաւյլը
մեղաւորիս , աստուածային կենդանի
անեղծ երկնաւոր լուսով քո ծածկեալ
յօրինակս երիս ։ Զի դու միայն ես
օրհնեալ ընդ Հօր . 'ի գովեստ Հոգւոյդ
Սրբոյ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

# ԲԱՆ ԽԱ.

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալ ամենայնիւ, Հօրդ ահաւորի անքննելին ծնունդ, որ տկարանաս առ 'ի քէն և ոչինչ. որ 'ի ծագել անըստուեր նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին դեւք. ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն. եւ թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի ։



Բ. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ, զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին, 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի, ընկիղքն ամենայնի և յամենայնի ամենայն լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս, ամէն ։

---

# ԲԱՆ ԽԲ.

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Տէր Աստուած գթութեան, փրկութեան և ողորմութեան, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանութեան, յարութեան եւ անմահութեան, յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր. հզօր, բարերար և ամենաստեղծ, կեն-

գանի, գովեալ, ամենակատար, մերձ ՚ի հեծութիւն համայն եղելոց. Ընդ խաչեցելոյն ընդ քեզ աղաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո և ոչ կապեցեալ. ոչ կախեալ և ոչ բեւեռեալ, ոչ կըռփեալ յանուն մեծիդ և ոչ անարգեալ, ոչ ըլկեալ և ոչ նշկահեալ, ոչ խարտակեալ և ոչ մահացեալ, և արքայութեն արդարոց մասին անձկաղեաց լուսոյ արժանի ցուցեալ, խրատամբք ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոց, փառաւորեցեր առ յոյս փրկութեան ՚ի սպառ լքելոյս:

Բ. Օրհնեալ, օրհնեալ և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք՝ կանգնեա ՚ի կործանմանէս. բարերար, բժշկեա ՚ի հիւանդութեանցս ախտից, ողորմած. յեղերաց մահուս դարձո զիս ՚ի կեանս, կենդանութիւն. քո եմ և ես. կեցո ընդ նմին, ապաւինութիւն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո, յարութիւն, կեանք, անմահութիւն, անապական բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, աջ ամենազօր,



ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ: Կամեաց Տէր և փրկեցայց, ակնարկեա միայն գթութեամբ՝ և արդարացայց. ասա բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց. մուծյիր զթիւ չորեացն՝ և անդատին համարձակեցայց. ռստաձեռնեա՝ և որդէն ՚ի քեզ իսկ պատուասիրեցայց. փառաւորեալդ յաւենայնի յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ԽԳ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հաջողի առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարաւորութեամբ պատճառ կենաց անախտականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յիսուս Քրիստոս, Աստուած ամենեցուն իմանալեաց և տեսականաց. աՀա դու ՚ի յիս ըստ մարգարէին՝ որ ընդ առելոյն՝ նոր կցորդութեան առ որ բարեզարդ

գաշամբ այսքանի ընդ քեզ միութեան, լուսաւորեսցայց կրկին ողջացեալ հոգւով և մարմնով, ամենայնիւ կարող և անվանելի։

Բ. Որ ոչ կարօտանաս ոյեղանեաց առ պատրաստութիւն դատանաց հոգեկան վերայ, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութեան, ոչ փոփոխմամբ մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ սրագործութեան, ըստ երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վրիպութիւն և ամենասխալ տարակուսութիւն։ Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց՝ ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայնն հնարաւոր է իմաստըն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամեցն կատարեալ է. քո կամքն Աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն շնորհ է։ Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուազութեամբ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ. ոչ չափեալ ես ընդ



սահմանաւ, ոչ վրիպեալ 'ի բարկութենէ, ոչ պղծեալ ինչ 'ի ցասմանէ, ոչ սխալեալ 'ի խստութենէ, ոչ ամբոխեալ 'ի խռովութենէ, ոչ գրգռեալ յանգիտութենէ, ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ ծախեալ 'ի բարձրութենէ, ոչ լքեալ յայցելութենէ, ոչ տկարացեալ 'ի փրկութենէ. Դու սկիզբն և լրումն ամենայնի. և 'ի քեն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

---

## ԲԱՆ ԽԴ.

Վերստին յաւելուած ջերմին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ԱՍՏՈՒԱԾ անսահման, ծնունդ Աստուծոյ հարազատ անթարգմանելի, արարիչ բնութեան եղելոց, Քրիստոս թագաւոր, ըստ 'ի խաւարի սրտից մթացելոց. ընդ մեզ լռմամբ և ընդ աւաքչէդ խոկութեամբ, մերայնովք զգայն-

որդ ծանուցանող հրաշալեօ ։ Հայր քո օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ , ուր փառակիցդ ես արարչութեամբ . սոյնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ , մինչեւ զքեզ իսկ մատնեաց մարդկան ։ Իսկ դու կարող գոլով 'ի վեր քան զմիշտս , զանտեսութեանն աւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումն զմահուն ճաշակել բաժակ անթերի մարդկութեամբ և անպակաս աստուածութեամբ ։ Եւ Հոգին Սուրբ կենդանարար՝ որպէս քո և Հօր քոյ ի-կակից , և համապատիւ էութեամբ ծընողիդ և ծնելոյդ ։ Մի Երրորդութիւն կատարեալ 'ի դիմաց երից անորոշելի հաստուածոց , անսկիզբն և անժամանակ , բնաւին բարերար , համայն կենդանարար , բոլորից խաղաղարար , ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից , անքակտութեամբ և միով բնութեամբ փառաւորեալ ։

Բ. Իսկ եթէ Հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէութենէ՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանքնին ծոցոյն , ոչ անխայեալ յՈրդիդ 'ի համապատւիդ և 'ի սիրելիդ , այլ կամաւ նուիրեալ մահու չարչարողացն զնա , ըստ մարգարէութեանն Զաքարիայ . վասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ հովուին , և հարկանիլ նոյն ինքն հօտապետին և ցրուիլ ոչխարացն հօտին , որպէս օրինակին նուէր նախագրին և ուխտադրութիւն խոյանին և նուիրումն արեան սպանդին և առակ խորհրդոյ Աբրահամեան պատարագին , զփրկութիւն թշուառացելոց 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նըկարագրէր ։ Եւ արդ հիմ սրտմիս անձն իմ կործանեալ՝ ոչ յաստուածուստ հընարաւորութեանց , այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութեանց , կամ ընդէ՞ր զնս խուովես՝ յուսահատութեամբ սատանայականաւ զմիտս հարեալ . յուսա յԱստուած , խոստովան լեր նմա , և նա հոգայ վասն քո , ըստ Դաւթեան սաղմոսին , և այլ մարգարէի կենսախրախոյն բանի ։

Գ. Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստողին 'ի վեր է քան զսահման կշռութեան մտաց Հրեշտակաց և երկրածանաց . և եթէ բիւրս կրկնեսցի , ոչ լի-

նի շահել. քանզի անբովանդակելոյն
և բարերարելն է անճառելի ։ Նա զի
ամն օրհնեալ զամն օրհնաբանեալ յեր-
կրկնակեան համագոյութենէ առաքեաց.
իսկ նա ՚ի հաճութիւն կամաց առաք-
չին մեռաւ. և միւսն ահաւոր՝ ՚ի յեր-
կուցն հաւանութիւն՝ մեծափառն բաղ-
ձանօք մաղթէ ։ Իսկ համաքարուց միա-
կամութեանն ցուցակ՝ առ ՚ի զնոյն բա-
ղձի ներգործել, որպէս հոգին կենդան-
ւոյն և բանն բանականին, պայծառու-
թիւն փառացն և կերպարան էութեա-
նըն ։ Առ նկանն փոյթ, առ ողորմու-
թիւնն սթափ, առ ձեռնկալութիւնն
պատրաստ, առ փրկութիւնն կազմ,
առ առատութիւնն յորդ, առ յաճա-
խութիւնն զեղուն, առ անբաւութիւ-
նըն լի, առ աննուազութիւնն փար-
թամ, առ երկայնմտութիւնն ճոխ,
առ անհատութիւնն բարձրեալ. մի Եր-
րորդութիւն կատարեալ ՚ի յանձանց ե-
րից, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

---

# ԲԱՆ ԽԵ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին
հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ յայս բարեաց անկեալ
՚ի սրտի՝ անձն իմ կործանեալ, և գօ-
տեաւն հաւատոց պնդեալ զերկկամանցդ
երկակի մտոյն՝ զկրկնապատր խոր-
հրդոցդ զցանկականիդ գործարան,
խոստովան լեր բարերարին Աստուծոյ՝
զմտացդ իբրև զգործոց, զխորհրդոցդ
իբրև զլութեանց, զանտեսիցն իբրև
զյայտնեցելոց, զորոնիդ ծածկութից իբ-
րև զբարբառուն ձայնից, զակնար-
կութեանցդ իբրև զարդիւնականաց մե-
ղանաց. զազդեղ շրթանցդ իբրև ՚ի
գլուխ ելելոց չարի, զոտիցդ հետոց իբ-
րև զպատուիրանաւն Աստուծոյ փո-
ղոյց, զձեռացդ ձգումն առ ցասումն
իբրև ՚ի հեղումն արեան գործոյ, ըղ-
ծիծաղելն բնաւին իբրև զկամաւորա-
կան լբումն շնորհի. զերգմնականն՝ որ
թէ ՚ի հանդէսս թէ ՚ի տարադէպս՝ իբր

զգործակցութիւն խաբողին , զամբարտաւանութիւնն իբր զհին կործանիչ նախաստեղծին բարձրութեան . զսրտին նեղութիւն իբրեւ զթերութիւն հաւատոց , զմեղկութիւնն իբրեւ զպարտութիւն զօրաւորին սնդութեան , ըզտրտունջն առ վտանգս կրից՝ իբր զուրացութիւն ախտին որ առ Տէրն , զապարասանութիւնն իբր զթուն իմն անգթութեանն , զամբարհաւաճութիւնն իբր ուժեղք առ մեծին գոռոզութիւն , զհպարտութիւնն իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց . զակամայիցն ընդ կամեցողացն , զուռնացելոցն ընդ հաւանականացն , զեկամտիցն ընդ բնաւորականացն , զանօրէնութիւնն ընդ ապատուածութեանն , զփքունան ընդ սաստկագունիցն , զնուաղունան ընդ յոլովիցն , զանձաւլիցն խմոյ իբր զձաւելեաց գիտողին , զանդրբելոց վնասուցին՝ իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան մագնեսոխս վիմի , զթեթեւագունիցն առ խոկր մնաց՝ իբր զտուեալ ծանրութիւն բեռանց , զխնդիր չափոյ ծածկելոցն՝ իբր զճշգոյն պահանջումն տանելն սակս 'ի բերանոյ կխտերն կո-



րիւնի չորեքգրամեան կշռութեամբն , զանդնդականացն գործոյ՝ իբր 'ի յականջս Աստուծոյ արագ ժամանելոց : Զայսոսիկ յաճախեա կուտեա կրկին յանձնառութեամբ , վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զչէոյն իբր զեղելոց , ընծայեալ Աստուծոյ զպարտութիւն վանեալ անձինդ· զի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօք թողութիւն պարտուց մեղաւորին , զոր Տէրն արդարացոյց և հրաշափառապէս հաշակեաց , ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ զկշմանն քան զպարտաւանս մեղացն .

Բ . Բարգեա և գիղեա անձինդ մեզապարտի բամբասանս յոքունս՝ գ.քոյն խոհերս բազմամասնեայս , անձն իմ կշտամբեալ յոքնախիթանդ բանիւ . ըզչարութիւնն , զանօրէնութիւնն , ըզվրիպութիւնն , զառ 'ի մարմին հանգիւտ փախուստն , զպարտութիւնն· ըզմոլեգնութիւնն , զամբարշտութիւնն , զապշութիւնն , զթմբրութիւնն , ըզքունն արթնական , զառ 'ի յընթացն զնիրհումն , զխորհուրդն օտարոտի , ըզբանիցն նանրութիւն , զշաղութեանն

հաճութիւն, զյամենայն 'ի նմին, ըզփափագելն Աստուծոյ ատելեացն, զաներկիւղութիւնն, զանաստատութիւնն, զանհարթութիւնն, զթերութիւնն, զթիւրութիւնն, զուծութիւնն, ըզճշդութիւնն, զանկայ արձակութիւնն, զծիծաղականսն, զվիճողականսն, ըզկատակերգականսն, զգայթակղականսն, զպատրողականսն, զանդէպ քաջութիւնսն, զանյարմար մարտսն, զաւանց օրինի արխութիւնսն, զխեղդմունսն հագւոյն, զտատանողականսն, զերկչոտութիւնս, զբաղմատեղնեան ճիւղսն զռահետականս, զանպատկառ փառաքմունսն, զգժտութիւնսն, զգժգմութիւնսն, զանդատ ատելութիւնսն, ըզմարմնոյմունսն դիւրըմբռնողականս, զփքունսն զանկշռութիւնս, զխոտամանսն գրժողութիւնս, զուխտիցն մոռացութիւնս, զնմանեացն այլակերպութիւն, զկեղծեացն քողարկութիւն, զփառամոլութեանն մոլութիւն, ըզյոխիցն յաւակնութիւն, զապիրատութիւնսն, զինքնախրութիւնսն, զնախադահիցն անձնչութիւն, զհատուցանելն եղեռնականացն, զնոցին զանշահ



աղճատանսն, զվայրապար բերմունսն. զընթացակցութիւնսն խորամանկութեան բանսարկուին, զբանին սերմնակաթութիւն, զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս, զկապարանն ձգողական, զխեղդ լծոյ երընջոց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւնս, զյարաթաթաւ տղմբնակութիւնս, զլքումն լաւացն, զընթացրութիւնս անկարծիցն, զկնի դարձին՝ առ նոյն դարձ դաժանական. զնորոգմուացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաչման հայպային, զէութիւն չնչոյն, զեւսն քան զսահման կանոնացն գրութեան՝ զիշխանականին զամենափիւռ բացարձակութիւն, և զոր չէ ճառելի և կամ գրելի և կամ պատմելի և կամ յերկաս գիմաց բերելի:

Գ. Եւ արդ՝ զիա՞րդ բժշկեսցիս, անձն իմ եղկելի, 'ի յայսքանեաց ախտից խոցոտեալ, բարձեալ թողեալ որբ մի տարագիր անողջանալի, ըստ մարգարէին. քանզի մի 'ի վերագրելոցդ բաւականացէս զօրէ սատակման, թող

թէ այդքան դառք սպանողաց դժնէից դահճաց շուրջ պաշարողաց ։ Մանաւանդ զի ոչ այսու և եթ նմանագրութեամբ կշռի տարացոյց տարժանեցելոյս, այլ զոր օրինակ անթիւ բազմութի կայտառաց կարճաց խայթողականաց՝ 'ի սաղրին մասունս ծայրից ստնոյն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մաշկեղէն արկեալ ամփոփէ զելեցն շաւիղ կապարանին շրջափակութեամբ ․ ցուցանի արտաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համբայք չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և գործոնեայ.ք տառապման և մշակ.ք մահու ․ Արդ այսոքիկ են ամբարեալ.քն .քոյ անօրէնութեան տաժանեաց թշուառա.քիրտն թոշակ.ք, անձն իմ սպառական կրկին տառապման ․ որ կամաւորաբար ընկալար 'ի .քեզ, զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յազարակի աշխարհիս ․ ով այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ, ընաւին առեցեալ, սիրողդ մտացդ ախորժմամբ զցեալն ամենայն անառակութեամբ, և զոր Սատքեալ ցուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց, աստուստ



սկսեալ մինչեւ 'ի կատար կանոնի այնր պայմանի, եւ որ հասեալ են, առէ ․ յԱստուծոյ խրատանցն վերայ, եթէ ոյք զայսպիսին գործեն և կամ կամակից են, արժանի են մահու ։ Արդ՝ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան տառապման 'ի մահ դատապարտութեան ․ այլ անխայեա յիս ողորմութեամբ՝ բարեգութ, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւիտեանս ․ ամէն ․

---

## ԲԱՆ ԽԶ ․

Վերայ՝ն յաւելուած իւրին հեծութեան նորին
հոգւոյն առ նոյն աւելորս մաղթանաց բանին ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա ․ Արդ վերիկեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ գժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ, արածողս զերամակս զազիրս վա-

րագաւունս խողից արօտականաց գար-
շութեան մեղաց նախատ վարձկանու-
թեանց. հովիւս տածողական զհօրանս
ուլուցն ամայաբնակաց 'ի վրանս հով-
ուացն, ըստ Երգոյն երգոց առ իս ա-
ւակին. որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք
գիտել, թէ յո՞վ և յո՞ր պատկեր, և
վասն ո՞ր գոյացայ:

Բ. Ահա 'ի յոտս տանողականս կը-
րողաց երկուց միակցորդ խորհրդակա-
նաց, ըստ ձեւոյ Հրեշտակի կառուցար,
իբր 'ի Թուիչս Թեւոց կրկնաբարձ բազ-
կաց վերատանողաց յաշխարհն հայրե-
նական հայել. ով յիմար, զիա՞րդ քե-
զէն կորացար յերկիր, զատեալս միշտ
հոգացեալ դիպուածս. ընդ ցիւս ա-
նապատականս համարեցար: Իբր զծը-
րագ բազմաբերանեան 'ի յաշտանակի
մոմինից հաստեալ գլխոյդ բոլորու-
թիւն, զի և այսու 'ի յօրինակէն շնոր-
հէ մի օտարացիս զԱստուած տեսա-
նել, և զիմացականացն իմաստասիրել:
Բանականութեանն յարգանօք կրկին
ճոխացար, զի զյաղթանակ բարեմաս-
նութեանն որ առ քեզ եղեն՝ անարգել
լեզուով խօսեսցիս: Ձեռինդ հաստ-



մամբ յարմարատեան մատանցդ շառա-
ւեղօք՝ զգործնականացն անօրինել ըզ-
տնտեսութիւն, իբր կցորդ համացե-
ղութեամբ ամենաբաշխ աջոյն Աստու-
ծոյ՝ Աստուած կոչեցար: Երից հարիւ-
րոց և տասանց վեցից յօդիւք շաղկա-
պեցար. յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի
նոյն և պատշաճական մասունս չափոց
ազդողականաց հինգ զգայութեանց, զի
մի եւ երեւելիդ նիւթականութիւն
քումդ տեսութեան՝ մնասցդ գիտման
անզատ եղիցի. զի ոմանք ստուարք են
և զօրաւորք, և այլք փոքունք են եւ
պիտանիք. կէսք կարծրակերպք և ող-
ղորկականք, են և գողտրականք և պա-
տուականագոյնք. զարձեալ կարեւորք
եւ պատկառելիք: Իսկ Թարգմանու-
թիւնք ոսկին տեսութեան 'ի քեզ են
նկարեալ իբր յարձանի անջնջականի,
անձն իմ եղկելի. որպէս զի և տարր
ժամանակաց եւ շարունակ հետեւման
աւուրցն առ պսակ ամին, իբր կանո-
նաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ ան-
սխալ և անայլայլելի պահեսցի:

Գ. Դարձեալ այլ օրինակ հոգեւո-
րական, որ զմիրոյն յօդուած շաղկապէ

'ի մի առ նկեղեցի , քեւ խորհրդածի . երբ զի առանց բնաւից զուգամամնութեան կապակցեալ ըստ հաւանակուղեհն ընդ փոքուն , վիճակեալ է հատուածոյն անպատուութիւն յանուն Քրիստոսի ժողովելոց . որպէս 'ի հատուածն և 'ի նուազութիւն միոյ յանդամոց անարգացս պատուասիրացս 'ի մարմնի , կրճատեալ ինն է յօրինուած կազմութեան մարմնոյ քում սեննկի զգայականի , և շրջեալ է ընտանութիւն պատկերին յանարգ փոփոխութիւն : Եւ արդ այսպիսեօք , և եւս բազմօք անզուգական հրաշակերտութեամբ եղական պատկեր Աստուծոյ՝ կշտամբեալ 'ի սպառ ոգի իմ 'ի գերի . և թէպէտ յառաջին նմանութենէն կողոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութեամբ 'ի դրախտին կենաց , այլ ապազանին լուսազարդ շնորհին զհոգւոյն փչումն առեալ , եւ նմանութիւն եւ կերպարանին . և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս , երբ նախաստեղծըն երբեմն զկճակն երկրաւոր յԱդին դարաստանի . ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին , և զկերելոյն դուռն աղ-



խեցեր . ընդէ՞ր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան զախտ արտասուացդ ապժանութեան . ընդէ՞ր զլուացեալ ձորձ վերարկուին զարշելի գործովք զաղացուցեր . հի՞մ զեղեալ հանդերձին մեղաց պատմուճան անապականութեան վալուք քեզ արկեր . ընդէ՞ր զանողորդոտից որբութիւն ճանապարհաւն ժանդից աղտեղեցեր . ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին զուխտադրութիւն հին պատուիրանին . ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց , իբր զԱդամ 'ի ծառոյն կենաց . ընդէ՞ր նենգեցեր քեզէն քո կամաւ զանստուեր յուսոյն յարակայութիւն . ընդէ՞ր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպատեցեր . ընդէ՞ր զինեցար ընդդէմ քո ներհակ , ով ընդունարան խելագարութեան . ընդէ՞ր որսացար 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն վստահութեան . ընդէ՞ր կարթիւ պատրանաց ածար՝ հաղորդդ մարմնոյ կենդանարարին : Այլ վերստին յուսացեալ 'ի նա կարդա նմա , ապաւինելոյս քաւիչ , նորոգիչ , փրկիչ , կեցուցիչ և կենդանարար , ողորմած , խնամող . մարդասէր և ան-

խակալ բազմագութ, օրհնեալ յաւի-տեանս, ամէն ։

---

## ԲԱՆ ԽԷ.

Վերոյին յաւելուած իբրև հետևութեան նորին հանդէպ առ նոյն ողերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ զի՞նչ գոյ առել ամա-չեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութե-նէ, բայց եթէ համրանալ և հող 'ի բե-րան եղեալ լռել 'ի սրտի. ըստ մարգա-րէութեանն խրատու, ահա 'ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս ։ Իսկ եթէ զփակա-նըս շարժողութեան շրթանցս բացից բանադատեցից խօսել կամեցեալ, դար-ձեալ զնոյն ձայն կրկնակական եղերե-գութեան լալեաց բազմութեան խէթ մտացս յառաջադրէ.

Բ. Եւ արդ ողբակից մեծ մեղաւո-րին անօրինելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ



նմին. մեղայ Տէր մեղայ, և անօրէնու-թեանց իմոց ինձէն վկայեմ ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիններորդի սաղմոսին. անթիւս գրեմ զպարտուցս սակ անձի-նըս մեղանաց՝ քան զհիւղ երկրի հող-մահոս փոշւոյ ընդ օդս ամենայն տա-րածեցելոյ ։

Գ. Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն ա-ղերսանաց արտօսրածին ողբոյք կոչման 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ. հայր գթութեանց, Աս-տուած բոլորից, չեմ արժանի կոչել և ոչ բնաւին առ այս անուանիլ՝ ոչ մի-այն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան ։ Ընկալ զողբեալս տարագրա-կան, պարտական մինառուց. և զցաւ-քաղցոյս ըկանոց նեղելոյս նուաղեցե-լոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես. Լեր ընդ առաջ քո ողորմութեամբդ 'ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո. գթած և անոխակալ, անօրինեալս մե-ղապարտի զնախակարգեալ հանդերձին ծածկոյթ. անանդակորոյս ձեռացս աղ-

տեղեալ մեզք՝ զինի մատանւոյն համարձակութեան ամենատեսն կամօք մատուցես . զգարշապարաց թշուառութիւն մերկութեան տոյցս՝ պատսպարութեամբ աւետարանական ամրակէրարկու օգնիցս կօշկաց ՚ի յօձին թիւնից միշտ ամրացուցես : Զգլուապակդ սպարապակի եղինդ երկրայնոյ , որ է միածին Որդիդ քո օրհնեալ խնկալէս մարդասիրութեամբ , կարօտեալս բարեաց նուիրեա . որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ ՚ի լրութեան յարակայ զենեալ ՚ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ , բոլոր յամենեսին և բնաւ յամենայնում , էութեամբ յերկինս և խոնարհութեամբ ՚ի ստորինս , աննուազ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ . փշրեալ և բաշխի ՚ի մասունս անհատս , զի զհամայնն հաւաքեսցէ առ ՚ի նոյն մարմին իւրումն գըլխոյ . քեզ փառք ընդ նմին , հօր ողորմութեան , յաւիտեանս . ամէն :

---

# ԲԱՆ ԽԸ.

Վերստին յաւելուած յիշին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ազերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. ԲԱՐՁՐԵԱԼ , հզօր , անսկիզբն , անեղ , անբովանդակելի , անմերձելի աննիւթ նկատող , ծնող անքննին փառաց միածնիդ . իրաւացուցես զիս ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս : Տօնեա զկեայս կորուսելոյս վերնականացն սպարերգութեամբ . աւետարանեա բանիւք օրհնութեան զկենդանութիւն իմ մահացելոյս . զբարեբաստութիւն կամացդ յայտնեա , գովեալ բոլորից գոյից եղելոց . տայիր անուն քեզ անճառ և ինձ թշուառիս նորոգ փրկութիւն . կորուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստանութեան . զկնիքս հոգւոյս մահու ջնջեսցես կայլակօք արեան Որդւոյդ սիրելոյ . վստահութիւն փրկութեան բարեաց արեամբ Քրիստոսի քո նկարեսցես , ցոյց զօրանշելոյ քո բարե-

գթութեանդ 'ի ճաշ հարսանեաց քում հարազատի ։ Մի՛ փակեսցես զիմելըս առ քեզ զառագաստ որահի կենացդ յարկի. մի՛ արտաքսեսցես 'ի բաղմականացըդ, և 'ի բարեացդ քո զրկեսցես. մի՛ պահեսցես 'ի գանձարանի դ զնիւթեալ իմ պարտուցս անօրէնութիւն. մի՛ կընքեսցես 'ի քսակ բարեացդ՝ զզազրութեանց իմոց զարշութիւն. մի՛ երկարս ինձ զվէր մեղացս 'ի յախտալից մարմնիս ծածկեսցես. մի՛ զփտութիւն նեխութեան ցաւոցս ինձ անկակից մահու մընասցուսցես. այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան զժանտութիւնն ապականարար. որպէս զի զատեալ 'ի հիւծմանց ախտից՝ առողջութեանն պատրաստեցայց. հնարաւորեա, գթութեանդ Հայր, մեծ խոցուածոյս զօրեղ ապեղանիս, կարեւոր կործանմանըս՝ բարի այցելութիւնս ։ Զի քո եմ, Տէր ողբակէր, թէ և առ մի նուազ բիւրըս մեղիցեմ, բայց ոչ զրկեցայց համայն մեղուցեալ, տուիչ կենաց իմոց բարերար. 'ի շնորհ պարգեւաց կենաց քոց ապաւինեալ. զի ճանաչելդ զքեզ բովանդակ արդարութիւն է, և գիտել



զզօրութիւնդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ խոկ գրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո, ասէ, ամենեցուն, խնայել տայ քեզ յամենայն. և դարձեալ, մօտ է քեզ յորժամ և կամիս՝ կարող ես գտանել ։

Բ. Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ոք բաղմամեղ որ քան զնա ինձ զուգաշաւիղ. երբեմն որդի, ապա ատելի. երբեմն միջնորդ խաղաղութեան Աստուծոյ ժողովրդեանն, և յետոյ խըռովոց որոշման բաղում խռովութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և զօտարին անուն ծանուցեալ ։ Անպատճառ օգտող, անկարօտ զօրող, անուղէլի գող, գրգեալ սրտմտող, փափկացեալ փախստական, սեղանանենգ սարտուցեալ, անպատասխանի վիճապարտ, քաղցրաբոյց հայհոյիչ, զաւակ հայրատեաց, կռապաշտոյն մանիչ, Մովսէսի չարախօս, մոռացող երախտեացն, իմաստուն սխալական, ամենագէտ յանցաւոր, ամօթապարտ զղջացեալ. տա֊

բակուսեալ աշխատող , աղաչաւոր կը-ռապաշտեալ · յանկայն դարձաւոր , կողակարծ ընկղմեալ , կասկածաւոր հաշտութիւն · յաղագս յիշատակ , յերկբայս փրկութիւն , չաւատալն գիտ , 'ի մանկէ մնացուած , խարդաւանեալ գերի , կխակառք պրծեալ , կամաւոր անձնամամն , տմարդի յղփացեալ , բաղմաղեց հանճարեղ ։ Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ամենայն ուրեք բանս որկեալ ողբոց և ձայնից , մեծ ապառաւ և փոքր գամենա՝ ևրր 'ի վերայ ինքնագրաւ կոչատականի , երգիծանութիւն խառնեալ ընդ աշխար · բան նորա թելադիր բարգաւաճութեան ամենայն հասակի · և խառրուամն նորին 'ի շըթունս բնաւից թառանչ թախծութեան ողորմելիս իմն աղդեալ ։

Գ . Զարմանամ՝ վճարիմ տարակուսեալ տաղչութեամբ , զի թէ նա այնքան գթեալ , ինձ զի՞նչ պատահեսցէ · զի՞րդ անկաւ ամբարձեալն , զի՞րդ սասանեցաւ հաստատեալն , զի՞րդ կործանեցաւ կառուցեալն , ի՞բր օտարացաւ ծանուցեալն , զի՞րդ ղակատեցաւ ղաւակն ընտրութեան , զի՞րդ ոտացաւ



մերձաւորն , զի՞րդ աղօտացաւ փայլեցեալն , զի՞րդ պատանդեցաւ ազատեալն , զի՞րդ անօրինեցաւ ուսուցիչն , զի՞րդ նուաղեցաւ հաշակեալն , զի՞րդ անարգեցաւ փառաւորն , զի՞րդ փոքրկացաւ մեծատունն , զի՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն , զի՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրողն , զի՞րդ ունայնացաւ պատուաւորն , զի՞րդ կորեաց զուխտըն որ ընդ Բարձրելոյն ։ Պատկառեմ ասել , թէ և ընդ սանդարամետականին կապեցաւ · զի՞ կայր նորա և կռոց , ուստի՞ սէրն ընդ պատկերաց , վասն էր կամքն ընդ խորանաց · զի՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն Սամուէլի առ Սաւուղ եղեալ · հմայք , ասէ , մեղք են , և ցաւս և աշխատութիւն ածէ թերափ 'ի վերայ · զի՞րդ ոչ հայրենի յանդիմանութիւնն , կուռք , ասէ , հեթանոսաց՝ դեւք և անշունչք են , և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա ։ Տէր միայն ածէր զնոսա , Մովսէս նախագրեալ յառաջնածայն ձայնիւք սաստիկս իմն ամբաստանէ · ոչ էր ընդ նոսա , ասէ , աստուածս օտարոտիս զոր ոչ ճանաչէին հարք նոցա ։ Ո՞ւր է մահա-

մտաց ապաղնեայ արձանն փառաւորեալ . ո՞ւր տեղին և անպանծալին սփոփանացւոց իգական ամենանիզով ձուլածոյն . ո՞ւր կանացի կերպին անգրելին խայտառակութի ղալեր տեսակին , որով անօթոյ մարգարէքըն զանանօրէն գիմեցուածն անխտրաբար յանուն չարութեան անժուժկալ գիւին անաստուածաբար ձօնեալ մոլէին : Տարաւ զէութիւն բարեբաստութեանն՝ որ զնախինին որսաց 'ի կորուստ , յաղթեաց մեծութիւնն իմաստիցն սուաւելութեան , գերեաց դաւողութիւնն , յիմարեցոյց փափկութիւնն , վանեաց արծաթն ծառայեցուցիչ , յոգի դատեցաւ զայրն տօնելի հին զէնն կործանողին , 'ի գրկացն Աստուծոյ հանեալ՝ 'ի յոտս սատանայական պղծեցոյց , մեռոյց մեղկութիւնն , թմբրեցոյց ծուլութիւնն , արբեցոյց շուայտութիւնն . Ո՛վ դիւրապատիր մարմին երկրածին , որո՜վք ձայնարկութեամբք զքեզ աւաղեցից . քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւնս , այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց . վասն զի նովաւ է իմանալի , թէ անիրաւ է ապրել յիմաստս մարմնոյ , եթէ ոչ Աստուծով



դատեալ ընտրեսցի . որ զի թէ առ այս պայմանի յիմար ոք լիցէ , և 'ի հատուցին կամս յուսասցի , ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ :

Դ . Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի Սողոմոն զդարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կշտամբութեամբ , իբր մեռեալ խոկալէս համայն աշխարհիս անձնասիրութեան . զոր եթէ զինքն ոք նկատեսցէ , ունայնութեամբքն է իմանալի . այլ և 'ի մատեանս քահանայիցն և 'ի գիրս Աքիլայ սիլոնացւոյ , յորում զփոյթն իւրում ընթացիցն արտասուելիս իմն յեղանակէ . 'ղուր ջան , անօգուտ վաստակ , անմիտ հետեւումն , անշահ արշաւանք , անկայուն երկք , ստարին իմաստք , ոչընչից հոլովք , բամբասելի բերք , անյարմար վարկածք , անտի սերմանիք , աւաղափուլ շինուածք , ապականացու ստացուածք , քամահանաց տաժանմունք , ինքնամարտ կռիւ , ընդ ոգւոյ իւրում դատ , ընդունայնաթօղ քիրտն , մնասակար փափաք , կորստական շաւիղ , վրիպակ ճանապարհ , կործանական կրթութիւնք , մոլորապատիր

վարժութիւնք , համապաղատախոլ տե-
սութիւն , անձնայայրատ պչրութիւն ,
պոռնկակերպ կերպարան , ախտաբոր-
բոք նիւթ , գժնատեսիլ գոյն , յոգնա-
ծխուր գեղ , յոլովամեղծ ծուխ , շոգի
ծնդելի , վաճառ մերձ 'ի յառ , տա-
ղաւար քակտելի , ընդվայր աղաղակ ,
անպատճառաւոր ծաղր , արհամարհելի
ասպարէզ , անծանօթաճառ կերի , սա-
տանչական երգ , անաստուած մտած-
մունք , սատայօդ ճառ , զայրացուցանող
զրոյցք , եղերանաց խծբծք , խելագա-
րութեան խնդիր , ամօթանաց ցոյց ,
խայտառակաց յայտնութիւնք , ա-
ռակ ապառնեալն , ապաշաւանաց
գործ , ընդդահկանաց պատմու-
թիւն , հեղգացելոց օրինակ , խոր-
խորատ ծածուկ , որս խաւարային ,
մահագուշակ վէհ , անյատակելի ան-
դունդք , ուղեկցութիւն ապանողաց ,
յիմարութեան բարբաջմունք , դարա-
նակալաց վայր , խարխուլ յարկ , չէ-
նուած սատանեալ , կամուրջ խախտե-
ցեալ , երեւոյթ փախչելի , խաբող շո-
ղշորդ , անատոյց մատնիչ , ընդդէմ
բարձրելոյն հակառակութիւն : Զայս



ամենայն մասունս բանից խոստովանա-
կան կանոնադրութիւն 'ի սիրտ ըն-
ւից նախասերմանեաց ծաղկողս կանո-
նադիր դարձելոց ողջման , որպէս զի մի
սպրծեալ որք 'ի մարդկանէ բամբա-
սաւորք զինուորեալ նետիւք՝ զանձն
և զընկերն խոցոտելով , քանզի կա-
պարիչ է քաղալ ծածկեալն , որ ըղ-
կերպարանին միայն ունի , և զոչ ա-
խորժելիս ստեղծչին կատարէ :

Ե . Իւ արդ՝ նա որ ոչ այնքան մե-
ղաւ որքան զղջացաւ , մի 'ի սպառ պա-
խարակեսցի . այլ յիշեսցի այն այն 'ի
բարի , իբրեւ զհիմն յուսադրութեան
'ի տէրունի սման գիմելոց , յորժամ
հոգւոյն էջ յայցելութիւն աստուա-
ծութեամբն անբաժանելեաւ՝ կենդա-
նագործել զանդ խոստովանեալն . զոր
մեռեալքն ահա կենդանեացս անտա-
րակոյս բերին աւետիս : Ընդ որում
մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստու-
թեանն ոչ ժամանելոյ . 'ի մեղանացն
մասն կարգեալ , բարեբանեալ մեծիդ
պաղատիմ . լից զնուազդ իմ բանաւո-
րութիւն 'ի յերջանկին հանճարեղու-
թիւն . նիւթեցին ներկայիս հայցմունք

՚ի պարգուածին յարգաւորութիւն ՚ի գերաշխարան արքային աղերս . այցելութիւն խնդրոցս դիցի քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն , զոր Միածնիդ օրինակեցեր ։ Ցարեանն կցորդութենէ ըղձ քո փառակցիդ ճաշակեցաք , տուր փրկութիւն քոյդ ծառային , ամենահնար , զօրեղ , աճաւոր , ՚ի ստեղծողիդ փառս ածեցուցեալ զանքաւելի մեղացն ջնջումն ։ Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմելոյն նորոգեսցես . որ ամենահամ ախորժաճաշակ բաղձապանծոյծ առաքապրութեամբ զաստուածութիւնդ քո քարոզեալ ՚ի մասեան լուսազարդ կտակի , եկեղեցւոյ ընծայեաց հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ , Հայր . Քանզի ոչ հնարի յաղթանութենէ առ այսցոյց բանի է խմանալի , թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ ՚ի յեւանդն սրտին ըղձից , որ զձեռն զողջմանն փոքր ինչ կասեաց ։

Զ . Արդ ՚ի յուշ բերեալ զոր ՚ի քեզ անձառելի բարեմանութիւնք , զգըթութիւն քո ողջունեսցես . որով ըղձակոչկոճեալն ՚ի բազում գարուց՝ բամ-



բասանից քարաձգութեամբ , երանութեան վերարժանացս . որ յոքնահոսան արտասուաց ելեւք զմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սաստկակսկիծն ապաշաւանօք , հօրն կրկին գերագանցեաց ողորմելի ոգւոյն հեծութեամբ , զոր ՚ի յաշաց բանից քո արտօր՝ առ որ մերոյն ՚ի յիւրն ախտակրեաց . երկայնամիտ ներողութեամբ միացուցեալ խառնեսցես , գթած . և զանյարմարն առ նա կարծեցեալ զաղմուկին բարեբանութիւն . ՚ի փառս էակցի որդւոյդ կնքելով՝ նովաւ կեցուսցես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց ։ Զայս Պուետիկոս սմն բարեշնորհ արդահատէր ընդ Սողոմոնի , ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ լեր կենդանեօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ , զոր յաւելուած կարգիդ տնաւուէ ։ Քանզի եւ Օատացւոյն ՚ի նմանէ ստեղծեալն բազմահրաշաւորն մարգարէաճառն պատմագրութիւն աստուածութեանն արդարացուցիչ՝ զՍողոմոն ողորմեալ կարգէ . որ զի անպարտ է

աղօթելն , քան չարաբանելն վասն նորին ։

Է . Զոր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել գոչումն . զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գործոց , ոչ պակասին փառք քո , զի խրատամբք քո ճանաչիս . իսկ եթէ գտցես , այնքան բարձրանաս , որքան մեծութեանդ քում վայել է . քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկբորդաւս ողորմածութեամբ , քան նախահրաման սաստկութեամբն ։ Դարձիր Տէր , դարձիր քաղցրութեամբ 'ի խնամըս գթութեան ձրի եւ ամենատուատ պարգեւօք սիրոյ մխիթարել յաւէտ ըզտրտմեալքս համաշաւիղ տագնապատապոյ տաշորման անբժշկականի ։ Զեան եղեալ փրկութեան նորոգեսցես վերըստին , քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսակործանս խորտակմանէ ։ Եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ . ընդ ըսկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանց՝ սուրբ Երրորդութեանդ և միում աստուածութեանդ փառք և իշխանութիւն , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

# ԲԱՆ ԽԹ.

Վերստին յաւելուած յոյժ հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա . Եւ արդ՝ մի ափրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում . Աստուած բոլորից լուսոյ , մի կապտեսցէ գաւազն աղտոտամբ գըլոյ փշմանց Հընորհի 'ի քո ստեղծեալս կերպէ . մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մահճոյս մահացուի առ 'ի գըրաւել զիս 'ի նոյն ։ Զի՞ք իմ թագաւոր առ իշխել ըզնշոյս բաց 'ի քէն . Քրիստոս , որ անբըռնադատ հնազանդեցուցես ըզայն քաղցրութեան , որ բառնաս զկարիս մեղաց ամենակարդ բանիւ , որ արեամբըդ քո ստացար և մարմնովդ կերակրեցեր . որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի . որ յոգի քո կընքեալ կցորդ քեզ գրեալ՝ Հօր քում մատուցեր ժառանգակցակս . որ յա-

նուն զենման մինչ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, առեղծիչ ամենից և կեանք։ Դու ես Աստուած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց քան զամենայն գործս քո հըրաշս. ոչ զերկինս իւրովքն զարդուք եւ հրեշտակային պայծառութեամբք, ոչ զերկիր և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւնք, ոչ զսահման լայնութեան ծովու և որ 'ի նմա են եղելութիւնք, ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ՝ և որ 'ի նմա են անբաւութիւնք, ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք մեծիւք՝ որչափ առ խմն կարեկցութիւն, յանեղն քո սուրբ մարգարէին՝ քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ո՞վ է Աստուած իբրեւ զես կարող թողուլ մինչ զմեղս և ջընջել զանօրէնութիւնս։ Ահա արդ խընկեալ են բանք քո, ողորմած, և խոստովանեալ բարերարութիւնք, փառաւորեալ խորք խորհրդոց, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ.

Բ. Արդարեւ ոչ 'ոք բաւէ յելս թարգմանել խօսիւք նիւթական լեզ-



ուի 'ի մասանց այսր քումդ գթութեանց զոր առ իս ցուցար, յօրինիչ. քանզի և մեծ իսկ է զօրութիւն՝ ըղհնացելոյն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանգոյից առեղծագործել։ Եւ զի ոչ է քո տըկարութիւն, որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ գլուխ գործոյն կատարէ. ահա յօրիցես փառաւոր լինել. բարեգործ. 'ի ստացուածս այս կրկին անյուսալ փրկութեանս. զի իրաւամբք ուխտի բարձրացի՝ հաստատուն եղեալ մեծապէս օրհնաբան աւանդեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութեան բուռնդ ուղերձեալ. քան 'ի ճանապարհ առեղծանելոյն։ Զի առ մինն արարիչ միայն ճանաչիս, իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն եւ բարերար, ընդ հաստելոյն և ողորմած. ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ յօրինելոյն եւ հեղ, ընդ նկարելոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տածելոյն՝ հովիւ, ընդ դարմանե-

ըոյն՝ խնամիչ , ընդ ողջ պահելոյն՝ բը-
ժիշկ , ընդ ձեռնկալութեանն՝ զօրա-
ւոր , ընդ անպարտութեանն՝ թագա-
ւոր , ընդ արարչութեանն՝ քաղցր , ընդ
ամենատուր պարգեւացն՝ առատ , ընդ
միշտ անսալոյն՝ ներող · ընդ ոչ բար-
կանալոյն՝ անոխակալ , ընդ կարեաց
վշտակցելոյն՝ ծածկագէտ , ընդ յան-
ձանձելոյ գթոյն՝ ապաւէն , ընդ գե-
րունակ գործոյն՝ Աստուած , ընդ ա-
նըսպառ բարութեանն՝ օրհնեալ յա-
ւիտենիցն :

Գ․ Արդ՝ որպէս ստեղծեր մինչ ոչն
իսկ էի , և ծանուցար ինձ գոյացուցիչ ,
և այժմ ըղձոցի մաղթողիս մարմնոյս տա-
ղաւարաւ յարդարեա անդրէն վերստին
յանապատութիւն մաքուր սրբութեան
նախնի լինելութեանն · զի բազմացի
առաւել աճեցուն եղեալ յաճախ տու-
չութիւն անսահմանելի քոյդ սքանչելե-
եաց նորոգ ներկայիս՝ քան զանցելոց նը-
նոյն ստուերականաց : Եւ ընդ ճառե-
լոյս զթիւս մեղացս՝ որքան մնացս թե-
ւըս ընթանայ զանբերբեկուն յիշատակել ,
արդարացայց յանուն քո հզօր · և 'ի
պատմելս ինձէն զանձին իմոյ բնիծ , և



դու թողցես զամբարշտութիւն բա-
զում մեղանաց խոստովանելոյս , հզօր ,
ծածկատես , ամենափրկիչ · զի մի ծա-
րագոյն լութեամբ աւետեացս , զար-
ձեալ նախնումն կորստեայց՝ երանելով
սաղմոսին զշնորհօք փրկեալսն մկրտու-
թեամբն · և փշովք մեղաց յոգի խոցո-
տեալ , ձեռն քո մխեսցի յիս առաւե-
լագէս այժմէն վերստին , ծանրս սա-
նելով զեռուն պարտեացս քան զբաղց-
րութիւն պարգեւացդ , այլ աղատեա
զիս օրհնաբանեալ հոգւովդ Սրբով ,
աղաչեմ զքեզ՝ Տէր ամենայնի , յօրինաց
մեղոյն և մահու : Քաւ լիցի թէ անկ-
ցի ընդ ակարութեամբ սահմանաւ ծըշ-
մարտութեանդ ծագումն իբրեւ զգրոյն
օրինակ , քանզի սուր քաւութիւն է թա-
գաւորեալ՝ վառեալ են մեզք , և 'ի
խորախոյս՝ կենդանի բանիդ ոչ է յու-
սահատութիւն , և ամբարձեալ քոյդ
շնորհաց՝ հալածեալ են պարտիքն , եւ
մերձ գոլով ձեռինդ Աստուծոյ՝ ոչ գոյ
անհնարութիւն , այլ ամենեւին լուսա-
ւորութիւն , բովանդակապէս զօրու-
թիւն , անպարտելի կարողութիւն : Քո
է փրկութիւն , կենդանութիւն , նո-

բողութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, արքայութիւն, անեղծութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ Ծ.

Վերստին յաւելուած նշին հետեւորեան նորին հոգւոյն առ նոյն աղէրս մնացեալոց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Այլ արդ՝ քանզի որպէս ոչ է առանց Քրիստոսի Աստուծոյ ոգւոց փրկութիւն, և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն. և կամ առանց արուսեկին նշոյլից արեւու երբէք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութից և ստգտանաց անձին քաւութիւն: Զի զի՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զի՞նչ վնասեսցէ զքեզ պարտիքդ, եթէ ընդ մաքսաւորին գովեսցիս. և կամ ո՞ւր առի պարտաւեալ մարգարէն Յովէլ՝ երկիցս



կրկնելով զանձինն եղկութիւն. և կամ զի՞ գուցէ որքոյն դատաստան առ 'ի յիշատակ աւուրն մեծի. և կամ ի՞բր արգեօք անմաքուր խնայի շրթամբք Նաայի հեռւին 'ի գործոց տանն Իսրայէլի. և զի՞արդ Աստուած պարտաւոր պաշտի ադամեան մարմնովն՝ խնդս կարեկցեալ յանցաւորացս առ Հայր աղօթել. և կամ յորս Թարգմանի առած առակին. թէ սիրտ իմաստնոյն 'ի տան սգոյ, և սիրտ անմտին 'ի տան ուրախութեան: Զի որ զխաղէրն Ադամայ անձին իւրում ոչ գրեսցէ, և զմեղս ամենից նոքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զնոյն, կորոյս զկերն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ ըննութեանս. և ոչ բերկրի սիրտ առ զուարթութիւն երեսաց աւետեօք յուսոյն, ըստ ասացելոյն՝ եթէ ոչ յաւաքելոյն Քրիստոսի ունել՝ ամենայնիւ ահա ըստ Աստուծոյ տրտմեալ:

Բ. Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աւանոր իրաւն հին՝ նորոգ ընկալեալ հոգեւոր հանճարեղին. զոր Տէրն իսկ երկրորդեաց. երթալ նմա ոչ առաջին բարձին հողալից ընդ ամբարշտայն

նախախորհուրդ ժողովելոց, ուստի
Դաւիթ և Երեմիա ուխտի կանոնի
սահման հաստատեալ հրաժարեցուցին.
այլ ընդ զղջացեալն որպէս պատկա-
նելոյն մեղք՝ և 'ի դատաստանաց մե-
ծին պակուցեալ ահիւ հատուցմանն,
յեանոյն հաստատեալ ասէն 'ի յերկ-
րի կամաւ խոնարհութեան, ուստի
բարձրեալն Աստուած պարարեալ բերկ-
րի. որով ընդ նախադասեալն 'ի բազ-
մականն երանութեան համարձակե-
ցաք, թէ ես և թէ նա հետեւեալ
ամենք: Ա՛ռ որ զերծեալ 'ի բամբա-
սանաց բանի մարդարէին, որ 'ի վէս
սմանս ակնարկի. մի յիս, ասէ, մեր-
ձենար. մաքուր եմ, և մի զիս տեսա-
նիցէ: Այլ զանկշիռն խոնարհութիւն
երջանկին Դաւթի ինձ նպաստ առեալ
ասել ընդ նմին, ես իբրեւ զանասուն
համարեցայ հերքեալ 'ի զգայութենէ.
և հային չարիք ինձ շուրջանակի. և նե-
խեցան և փտեցան վէրք իմ 'ի յանդ-
դամս անբժշկութիւն. և զայլոց ս-
մանց ընտրելոց 'ի յԱստուածանէ՝ զկա-
մաւորն կշտամբութիւն մեղապարտու-
թեան անձանցն անարատից. ընդ որս



և զնզովի մեծի քահանայի զաւելն՝ ես
ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ 'ի
վեր առ քեզ Աստուած:

Գ. Արդ ես ճշգրիտ պատկեր ամե-
նայն երկրի՝ զիմս խառնեալ ընդ նո-
ցին պարտիս, և 'ի նոցայոյն զաւ-
խս դառնութիւն կրկին առաւելեալ
նոքօք հեծեծեցից. թէպէտ և չէ ինչ
ախտոյ գործութեան զաւնոյ՝ գործեալ
ողեղութիւն: Ահա արդ մեղայ, զի
անմտութեամբ գործեցի զոչ հաճոյն
քո բազմօք սխալեալ յանցաւորու-
թեամբք. նայեա յիս, կթած, որպէս
երբեմն յուրացութեանն ընկռնեալ
Պետրոս, զի յայժ ունայնացայ: Նո-
րոգեա ինձ զողորմութեամբդ քո ճա-
ռագայթ, ամենեւին բարերարութիւն.
զի ընկալեալ զշնորհութիւն քո, Տէր,
արդարացայց կեցից և մաքուր եղէց յա-
նըստեղծիցն քո խնոց ըկողոյ: Զունիմ
համարձակութիւն զմեղաւորս ձեռինս
հատուած առ քեզ տարածանել, մին-
չեւ մատուսցես զշնորհսդ քո զոչ 'ի
նորոգութիւն զատապարտեալս: Արդ
յաղթեա վէրտին խնուն յանձուս-

թեան քոյին հեղութեամբդ առ ի ժամանել մարդասիրապէս. և զամենայն յամենայնի ամենայնիւ քո կարողութեամբդ զառաջին չարին միջնորդն և վերջնականօքն թող ինձ, հնարաւոր անհաւից Քրիստոս Թագաւոր լուսոյն արդարոց։

Դ. Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վնասակար եմ բարեգործիդ մահու հարուածոց առ կնիքն, առ շնորհն, առ փչումն, առ պարգևսն, առ աւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրութիւնն. առ պատիւն արքայական, առ պատկերն, առ դրոշմն, առ օծումն, առ ճոխութիւնն, առ համարձակութիւնն, առ ընտրութիւնն, առ կեանսն, առ լոյսն, առ երանութիւնն, առ յոյսն, առ փառսըն, առ անխոնարհելի բարձրութիւնն, առ պսակն անկապտելի, առ խոստմունսն ծածկեցելոյն, որ քեւ առեր Քրիստոս. բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս իժիս և քարբիս՝ ունկնախից և լսելափակ անլսեր ականջացս, որ միշտ յաւաւելութեան քումդ բարութեան յողնապատիկ յաւէտ քան



զոյն չարիքն իմ յաճախեալ 'ի սպառկործանեցին, մերժեալ 'ի կենաց ընդմահ կայեցին. ծառայ կարգեալ ապականութեան։ Եւ արդ՝ դու միայն կրաւակշիռ ես Ճշմարտադատ, բարերար, օրհնեալդ 'ի գթութեան. մեղայ քեզ, անօրինեցայ անիրաւեցայ. վասն որոյ և եղծայ զեղծայ յանցեայ ամբարշտեցայ. և ոչ լուայ խոստովանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ, որ դու իսկ երեւեցար անճառելեաւ քո շնորհդ. զոր գրեցի իսկ մեծ է և նշանակեցի սարսափելի ։ Քեզ արդարութիւն և փառս եւ մշտնջենաւոր գոլութիւն. եւ ինձ պատկառեցելոյս 'ի քէն, խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժըշկութիւն, օգնութիւն և պահպանութիւն սրտի եւ ոգւոյ. բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն ։

---

# ԲԱՆ ԾԱ.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ առ երկրածին որք
ապաստանեցայց այսր մահացու ամենապա-
տիր, եթէ ընդունայն է աղաղակելն.
առ մահկանացուն բանական, եթէ սուտ
իցէ փրկութիւնն առ յուսոյն վստա-
հութիւն. առ մարդ որք եղծական, ե-
թէ ընդ սխալութեան բանին և նանիր
է զօրութիւնն. առ իշխանս երկրաւոր
գահից, եթէ անցաւոր է ընդ իւրեանս
և իւրեանցն բարութիւն. առ եղբա՞յր
որք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն
առ անձինն անգործութիւն. առ հա՞յրն
իմ երկրաւոր, եթէ պակասեալ են
խնամականքն ընդ աւուրց նուազու-
թեանն. առ մա՞յրն իմ որ երկնեաց, եթէ
կասեցան գթութիւնքն ընդ նախանձել
կենդանութեանն. առ թագաւորու-
թիւնս աշխարհի արդեօք. որք զմահա-
ցուցանելն միշտ արուեստաւորեն քան



զկենդագործելն. այլ առ քեզ բարերար
Աստուած օրհնեալ 'ի բարձունս, որ
կենդանի ես և զկենդանութիւն տաս
ամենայնի, որ և յետ վախճանին զօ-
րես անեղծապէս նորոգել։

Բ. Որ եթէ փախնումք 'ի քէն,
դու զկնի ընթանաս. եթէ տկարանամք,
զօրացուցանես. եթէ վրիպիմք, շաւիղ
դիւրութեան ուղղես. եթէ պատկա-
ռիմք, քաջալերես. եթէ ախտանամք
յանձն և 'ի մարմին, բժշկես. եթէ
գարշանամք մեղօք, մաքրես. եթէ սը-
տեմք, քո ճշմարտութեամբդ արդա-
րացուցանես. եթէ յանդունդս ներքինս
տաղեալ գլորիցիմք, յերկինս ցուցա-
նես. եթէ 'ի կամաց մերոց ոչ դառ-
նամք, դու դարձուցանես. եթէ մե-
ղանչեմք, ողբաս. եթէ արդարանամք,
ժպտիս. եթէ օտարանամք, սգաս.
եթէ մերձենամք, տօնես. եթէ տամք,
ընդունիս. եթէ յամրանամք, երկայ-
նամտես. եթէ մեք ժխտեմք, դու ա-
ռատապէս շնորհեալ ընձեռես. եթէ
լքանիմք, սրտմիս. եթէ արիանամք,
խնդաս։

Գ. Որպէս հարիւրորդ երկրորդ սաղ-

ման օրհնաբան հրաշաւորական զվհա-
տեալս զոգիս սփոփէ , եւ մեծ յոյս
կենաց Աւետարանէ տա փրկութեանն
հանդէս · որ յաղթական է դիւաց և
տարակոյս բանադրութին · որ երբ ըղ-
խաչին տէրունի նշան բարերաղդ պան-
ծալի սքանչելափառ , անխոնարհելի
բարձրութեամբ լուսոյ և անպարտելի
վերնոյն զօրութեամբ կանգնեալ է ա-
խոյեան անվանական և անշարժական
ամենայնիւ յաւիտենական ընդդէմ ան-
բարի բարուց բռնութեանն Բելիարայ ·
որ ունի յինքեան զանձս հոգեւոր օգ-
տից դիտողաց մտաց ընծայեալս զպար-
տուամն մահու և զլուծումն մեղաց , և
յոյս կրկին յերկուս յաւիտեանս , և
զնորոգումն խոստման անեղծութեան
արդարոյն · կանոնս բարեհրաւէրս եւ
կենդանատուրս գրեալս հոգւովն Աս-
տուծոյ · որպէս ամենայն խոկ երգ սաղ-
մոսացն մաքուր սրտից է տեսանելի ·
կատակ կենաց մարդկան նկարեալ ։

Դ · Ջի թէ 'ի նախնումն տկար կեր-
պարանն զայս աւետիս եւ վստահու-
թիւնն ընդգրկեալ ունէր՝ կործանման
մահու նախաժամն մեծ աւետարկիր



եւ կեանս երկնաւորս վերնակենցաղս
միշտ անճառելիս , եւ այն՝ ընձեռական
գիրն և յեղանակաւոր օրինակն , եւ
պաշտօնն դատաստանաւորիչ վհատութեան
յանցաւորացն , և խափանելի կռակն
երկրայինն , և տկար հաշտարարութիւն
միջնորդացն , եւ թերութիւն բանից
մաղթողացն ։ Որ զի թէ Մանասէի
փրկութիւնն խոստովանելի է անտուստ
վկայեալ յետ այնքանեաց մեղանաց ան-
բժշկականաց · որ արեամբն արդարոց
ելից զնուիրեալն մեծի թագաւորին
հրաշանուն քաղաք հայրենի՝ լուս մար-
գարէագիր անսուտ պատմութեանն ·
որ և զմեծն խոկ տեսանողաց բազմե-
րախոսիս ձեռնկալութեան խնամողութե-
նըն պաշտպանութեան նախնակերտ
յարկին տեսչութեան , մանկավարժ ին-
քեան եւ նախնի , մեքենայիւ մահու-
ացեալ 'ի յերկուս մասունս խզեալ՝
դժնդակ սանձանօք մաշեաց · իբր խոր-
հրդով ապստամբութեան զյուսոյն
փրկանակ կորեալ ։ Առ որով զչար յա-
ւելուածն մոլեգնական՝ գքրէական վեր-
նամարտութիւնն 'ի բարձրեալն յան-
դգնութիւն · քան զի ոչ պատկառեաց

երբէք զատեղծողին պատիւ և զանուն յիւրաքնակ խորանէն մերժել․ Հալածեալ զԱստուծոյ հոգին, Բելիարայ զանձն դաւանեաց․ Քանզի զնոյն տաճար տիրական խնկարկութեան հաստողին սահման՝ հաշակաւորն երկրի տեսարան՝ զապաւինելին ազանց սրբարան, ուր տեսիլք հրեշտակականք և աստուածային հրամանք յաղթողականք լուսաւորապէս յայտնութեամբ աղդեալ երեւէին, զայն վայր երկնանըման ահաւոր սքանչելատես՝ Քեւանայ ուժեմն քառադիմակի Նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի պաշտօնատեղ գործելի և գիւանձնեձեր զոհարան պատրաստեալ կազմեաց․ Զրկեալ զարքայն երկնաւոր 'ի յարքայական կայից, զամենահարուստն՝ ունայն 'ի տացուածոց իւրոց․ զտանուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ, ընհեղզրկբուզայն ձեռուն նկարեալ, և զանունն ահեղ վտարանդի արարեալ․ գերի տարեալ զաւանդ գոլելոյն, ողբալի զողորմածին ման նուազեցուցեալ․ աղուեսուն փոքու ապարանք զորահն լուաց կարգեալ, եւ բնաւից ունողին



և ոչ գլխոյն տաղաւար յիւրայոցն եդեալ․ Հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից զսեղանն մեծախորհրդարեանն սրսկման երեւեցուցեալ․ Լայնեալ հետս բազում ընթացելոց 'ի դայթակղութիւն, հովիւ կորստեան հօտին սատակման, մոլորութեան բուռըն վարդապետ, և այն՝ գիտութեամբ կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն Եզէկիա զնմանակիցն Դաւթի․

Ե․ Այնքան տոացեալ գտմունս չարեաց, որ և զԱստուծոյ պատիւն որ զարքայութեան փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թշնամանեալ, և զաղօթկերացն բազմութիւն սուսերաւ մահու խողխողեալ․ Ընտանի դաւաճան, մերձաւոր մատնիչ, հարազատ սատակիչ, կցորդակից սպանող․ Այլ Աստուած ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր ըզնա․ զԱբրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ․ Իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր 'ի նմանէ․ Իսրայէլիւ ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի․ զԴաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին․ 'ի քա-

ւարանն ոչ էր մերձենալ, զի այծեալ էր զնա. 'ի տապանակն աստուածագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ գարշութեան ձուլածոյին էր փոխանակեալ. առ Մովսէս ոչ էր կարդալ, զի անբաւելի էր պարտիքն որ առ նա. առ Ահարոն ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի ապանող էր նոցա: Եւ նորա քաւութիւն մեղաց, և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգեւեալ տուաւ. զի քեզ, բարերար, բազմացուցես կարգեցես զամենաանճառս և անլուելիս 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց, և զդուռն յուսոյն մեզ անփակելի պահեսցես 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոց, անմահութեանց պարգեւաց տուիչ Քրիստոս, զօրեալ յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ՀԲ.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն ողերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ՕՐՀՆԵԱԼ տիրաբար' 'ի քաղցրութեան, անսահմանելի և անփոփոխադրելի խնկաւէտ բարի. պաշտօն խնկելի և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի. երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն. գթած, ողորմած, որ ոչ պահես ոխս բարկութեան ամոց մեղանաց քթթել մի ական, որ հրաշաւորս և զարմանալիս գեր քան զամենայն ազինս նախնեացն անսահման առատաձեռնութեամբ կրկին ընդ մեզ հաճեցար հեղուլ զողորմութեան վերնահաս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեանս նորոգ. Եւ զանտուստ զմուտս լուսարանի պատուհանին անձկութեան նշուլիցն աղօթականաց, շաւիղ գիտութեանցն ըստ Սողոմոնի. և իւր իսկ նմին և ինձ ընդ նոյին բացեր ընդարձակեցեր թշուա-

ուցելումն զառագաստն անճրագետարան ելիցն ողորմութեան ձրի պարգեւացն աստուածականաց . զոր ընդ մէջ իմն մանաւորօք աւետաւոր յիշատակաց և 'ի հնումն զայս տպաւորութիւն օրինակաւ նկարագրէր , գգարձարուքն առ խս և ես գտանամ առ ձեզ . և յորժամ դարձցիս եւ հառաչեսցես , յայնժամ կեցցես ։ Նա զի և զաղջամղջին սեւութիւն գունոյն փոխարկել 'ի ձեան պայծառութիւն , և զարանցն արեամբ ներկելոցն յեղանակել 'ի պատահումն գեղման , ըստ Եսայեայ և Զաքարիայ , եւ 'ի մէջ բարկութեանն դարձեալ զդդ զողորմութիւն . քանզի անապատանալ քաղաքացն Իսրայելի և դարձեալ բնակել , և Ճանապարհացն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան և անդրէն հետեւիլ , և լքանիլ 'ի ամլեոյն ոգւով և դարձեալ զօրանալ ձեռամբ , և գնալ Աստուծոյ 'ի տեղի իւր զայրացմամբ և գտանել ողորմութեամբ , ըստ ներողութեան զեկալն և 'ի մէջ սաստիցն պատուհասելեաց կրկին պաշտպանութիւն , և 'ի սրտին խռովութեան յուղղումն խնամոց գթութեան ։



Բ . Այս մարգարէիցն ձայն խնկելի , որ զօրհնեալդ քո գալստեան զաղատաբարդ հրաման կանխաւ ազդէին , եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի 'ի թիւ արկանել վասն անբաւութեան , փոքունք են և նուազունք օրինակք եւ նմանութիւնք , հին և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկագործութիւն ։ Որ յամենայն վայրի կառուցեր զնորանն վկայութեան արեան քո ուխտի , որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան ըղգատակնէք մահուն Հաբելի զաղթանակ բարեաց քումդ հանդիսի , կեանս կրկինս և անմահականս , շնորհաց , մըկրտութեան , յարութեան , նորոգութեան , առ քեզ ընտանութեան , ընդ Հոգւոյդ Սրբոյ միութեան , քաւութեան , ազատութեան , լուսաւորութեան , մշտնջենաւոր մաքրութեան , խոկալէս երանութեան , ընդ վերնայնոցն կցորդութեան անկապուտ փառաց , 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք ։ Եւ զոր ահաւորն է ասել , կարգեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց ,

Աստուած խոկ լինել ընտրութեամբ շը-
նորհին, և ըստ հաստողին միանալ տէ-
րունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ
լուսոյդ կենաց խառնութեամբ, զոր
կատարումն երջանիկ խոստման. ըստ
Պօղոսի բանին՝ ոչ ունելի օրէնն։ Այլ
դու. փրկութիւն, եկեալ հայրենիդ քո
հարստութեամբ. արարեր և կատարե-
ցեր զլուսոյն յերկրպագութիւն, որ
առ քեզ պաշտեալ անհամառօտելի. քա-
ւիչ ամենայնի։ Եւ քեզ փառք ընդ Հօր
քում՝ 'ի գովեստ բարեբանութեան հո-
գւոյդ քո Սրբոյ. յաւիտենից. ամէն։

---

## ԲԱՆ ԾԴ.

Վերստին յաւելուած ի նոյն հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. ՏԷՐ. Տէր զօրութեանց. բոլորից-
գոյից թագաւոր. օրհնաբանեալ ողոր-
մութիւն. Աստուած ամենեցուն, որ
յաղթես սահմանի լայնատարած ըն-



դարձակութեան, ամենայն անբաւու-
թեանց դու ես ողջմտութիւն. մինչ
զի կարծրն քեզ հաստատ է, և լոյծն
քեզ ամրակայուն. և չէք քո իր անհնարա-
ւորական. յաղթող զօրութիւն ահեղ-
հուրն ցօղ լինի է զովական, և անձրև-
ւըն բոց կիզանողական։ Զքարն բուես
ցուցանել կերպարան աղբման, և ըղ-
բանականն գնես անխօս և անշունչ ար-
ձան։ Զպարտաւորն ողջնեալ՝ պատուա-
կան առնես, և զկործեցեալն մաքուր՝
խրատմամբ քննեալ գտանես։ Զմատնե-
ցեալն 'ի մահ՝ բերկրութեամբ բար-
եաց արձակես, և զամաչեցեալն՝ ըզ-
ւարթ տեսութեամբ օծեալ գործեցա-
նես։ Կանգնես զմատնեալն՝ հաղբից
գլորման և զապաներալն՝ 'ի վստահու-
թիւն վեմիդ հաստատես։ Զախտա-
ցեալն բաղմահնարաւ՝ երջանիկ կարգես.
և զյառաջատեալն գործեալ անդրէն 'ի
յետս նահանջես։ Նա յորժամ արարեր
առ 'ի մէնջ բարիքն, զառաւել զարմա-
նալին յայնժամ ներգործես. քան-
զի վասն քո գիտես թողուլ զմեզ ես-
շնչել զանօրէնութիւնս, և քաւիչ լի-
նել անիրաւութեանց, և զմեզ մեր

ոչ յիշատակել լոտ Նոյեայ և Երեմիայ։

Բ. Այլ առ շնորհ նորոգ փրկութեանս բազմօք գոհաբանութեամբ հեռանեալ, 'ի յանձնառութիւն անբաւելին լինել առ սմին խոկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ զուարթ անապառ բարիոք, որ 'ի քեն առ իմ յամառս թշուառութիւն. քոյին ազերսիւ առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս զառաւ ողջերգութեան այսր մատենի, լցից թախծութեամբք և հեծեծանօք։ Այլ առեալ խառնեցից 'ի տըւողիդ հաճութիւն ընդ ցաւոյն զդեղն, ընդ վհատութեանն զխրախոյսն, ընդ յուսահատութեանն զյիշատակդ անուան հաստողիդ, ընդ տխրութեանս զախորժանսդ, ընդ խռովս դառնութեան զքաղցրութիւն կենարարիդ, ընդ պատիժ օրինին զշնորհն, ընդ պարտս անիծիցն զաղատարար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահուն զամենայնիւ նորոգութիւնդ։

Գ. Հաւատամ հզօրիդ բանի, ասողի վկայեմ. լուր լաւութեան որտիս. տէր Յիսուս, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար գոչելոյ։ Որ մարմնական և պատկերական մեր եղեալ, և քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զլուծ. ընդ զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ Մարմնոյդ նուիրմամբ անմահապէս միշտ մատուցանիս, և աննուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն՝ այլ և որոց հատեալ է ակնկալութիւն առ եւս կենաց։ Զի որքան զօրէ մարմնոց անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ Աստուածըդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն։ Զի ոչ եթէ մաքրութեանդ աղբիւր պատուական դոյ մահու յօր ըստ օրէ կատարին, այլ կամովք քոյք՝ հոգւոյդ գործակցութեամբ 'ի հաճութիւն հօր և 'ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանիս։ Իսկ եթէ ամենիցդ Աստուած անքննին՝ խնդրեալ վասն իմ առ իմ փրկութիւն, 'ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան եւ իմոյ մարմնով պատուանդանիդ կցորդ միացեալ, և դու, բարերար, յաղագս

իմ 'ի յիմն կերպի փոխանակեալ ընդ ի-
մում պարտեաց , և մահ ընկալեալ ան-
պարտ զմեղապարտս վնասուց պա-
տուհաս , և 'ի յիմ անուն յանցաւորա-
պէս . որպէս թէ կամաւ ընդ քեզ ես
կրեցեմ , բաղում մեռեալ և մնաս կեն-
դանի , ոչ ուրացողացն ձեռօք , այլ դա-
ւանողացն հաւատովք աստուածայես
նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշ-
խեալ :

Գ . Ասէր ոմն ողբաւոր` չուատա-
լեացն պաշտօնատար . մեծ ինձ և ան-
կշռելի առ ամին դատէր անյարմարա-
գիր անձին յուսադիր : Հաւատամ` ըղ-
ձեռս և զերջանկութիւն , քան թէ
մարտիրոսութեամբ խիկ` թող թէ ուղ-
ղութեամբ խմն թշուառութեան յան-
ցաւոր մարմնոյ փախձան ընդունել :
Իսկ զանձառութիւն խորհրդոյս այսու
զխոեցի , դաւանէր խիկոյն , որ զի և
մերոցն անձինք առանց նուիրման այ-
սոր յիշատակի չեւ են խաղաղէս կա-
տարեալք 'ի սպառ . եթէ ոչ ընդ այս
հրաշակերտութիւն մեծութեան հոգ-
ւով խառնեսցին . Ապա եթէ մեղա-
ւորս մասին կրկին մատուցար բաժին



ասելով` յուսայր , իբրեւ այն թէ ես
ինքն եղէր ճշմարտիւ , զրաւեալ զիմն
զաժանութիւն ընդ քում համեղու-
թեան , պատարագեալ քոյինանիւթ
զանգուածոյ նշխարաւք կենաց լուսոյ .
Այսու ամենայնիւ 'ի Վերնատանն նա-
խանուէր բարեխորհութեան` անհնա-
րաւոր ախոյն ճարակ` զՄարմին և
զԱրիւն իւր բաշխեաց 'ի քաւութիւն ,
'ի վեր կարծեցուցանէր քան զնահատա-
կն վկայեցելոյ արեամբ կատարմամբ .
յուսոյս օրինակ յարգաւորութիւմբ
զրեալ զիս 'ի փառս , այսմ փրկանօք հա-
ւատալ երեւեցուցանէր` քան թէ քա-
ւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ , որչափ
աստուածականին առ մարդ զօրու-
թիւն , և սիրական աստուածախառն
Մարմնոյն կամաւորական նուիրումն առ
անասնական ազանգին մատուցումն , և
անմահն առ մահկանացուսցն ահաւոր
առ ստուերայինս , յաւիտենականն քան
զանցաւորս , Բարձրեալն քան զերկրա-
ւորս , անստեղծն քան զեղանակս , բա-
րին խակութեամբ քան զթիւրեալս ըն-
նութեամբ , մանաւանդ զի իւր է կա-
մելն , և իւր կենագործելն , օրհնութեա-

նըն աւիթ քան զանիծից պատճառ։

Ե. Արդ՝ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի, աղաչեմ գթած, դառն 'ի յերկնուստ ընծայեալ դեղդ կենաց. մատիր քաղցրութեամբ առ ախտացեալս մեղօք. քաւեա 'ի պարտեաց, ամենակատար բաւականութիւն։ Իսկ առ 'ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի. որ զի հաստիչդ ամենից 'ի սուրբս բնակես. և ըստ տարազու սերմանն՝ և հնձելն է հրաւացի, ըստ ճշմարիտ բանին Պօղոսի. եւ աչացուն 'ի տաղ արեւու ոչ է զօրութիւն։ Այլ դու, բարերար, հաստիչ յոչէից, յարգես յաւէտ խոկալես համայն եւ զդաւանեալն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն, և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն ես պայման աւետեաց համօրէն յանցաւորաց տարակուսելոց։ Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ Սրբով փառք եւ իշխանութիւն յաւիտեանս. ամէն։

---

# ԲԱՆ ԾԴ.

Վերստին յաւելուած ձեռին հեթումեան նորին հանողի առ նոյն ալերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ յամենայնի առ ամենայն անկարողութիւն քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից Յիսուս, քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն։ Դարձ առ իս գթութեամբ, և հանդերձեսցես դառնալ ինձ առ քեզ կըրկին բերկրութեամբ. զի առանց քոյ կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և եթէ ոչ կառավարդ յորդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խոյս յաջմէ և յահեկէ։

Բ. Ահա ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս, ոչ պանծամ դարուեալս, ոչ խրոխտանամ լքեալս, ոչ մեծաբանեմ պապանձեալս, ոչ ըմբոստանամ

ձաղեալս , ոչ երջանկանամ եղկելիս , ոչ արդարանամ ամբարիշտս ։ Զի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի , եւ ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի , և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի , և ոչ երկուորեակք լծոյն 'ի ճահ ճեմեսցին առանց եղանի , ոչ ամպ վերաշուէ առանց հողմոյ • ոչ աստեղք ցընդին և կամ գումարին առանց ժամանակի • ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի առանց տարրական օդոյ , և ոչ ես նոքօք հանդերձ առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութեան ։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց եւ խնամիչ կարգաց հոլովման արարածոց , և 'ի քէն է իմ փրկութիւն ըստ սաղմոսողին , և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հընչման յականջս լսելութեան ամենայն հասակի ։ Եկայք 'ի հանգիստ իմ բե-ռնաւորքն աշխատեալք , և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց ։ Իսկ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն , եթէ կրկնակի զաղտացայց • եւ կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն , եթէ գեհենին մատնեցայց ։



Եւ կամ զի՞նչ յԱբրահամ պարծեցայց խորթացեալս 'ի գործոց նորին • որպէս զարշութեան հօր Ամովրհացւոյ • և մօր Քետացւոյ կամ Քանանացւոյ՝ ըստ մարգարէին որ առ իս յանկուոր ձայնի , ժառանգս մերժելի Եթովպացի և ոչ ընտրելին Սառայի ըստ տեսանողին առ իս առածի • եղբայրս Շամինի և կամ Գոմորայ • համբակս անլուայ և անաղէլ՝ խակակութ օրրայն խակութեան Ոողայ եւ Ոողիբայ • ըստ Եզեկիելի կրկնանախատան կշտամբութեան ։

Գ • Եւ քանզի 'ի ծուփս բազմախըտանգս ալէտանջ հողմոց սաստկապէս զզուեալ ուժգին ըկանօք 'ի սղատագնապմանէ 'ի ծովն , փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողից • առ որ զմատուցս ձեռացս այսր անդր տարաբերեալ , իբր 'ի հասանաց բնութեանց զարնանաղչիր գետոց • արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման , ջրակուլ ագեսպառ պղտորբարբութեամբ , դաժանահատ սկախաւն մամռապատ խառնախուլի մահաբեր երկամբք վանեալ , ըստ որոց յուզեալցն հեղեղացին հեղձուցեալ ։ Ս. յաւ առա-

կաւ և ես եղկելիս՝ խօսիմ և ոչ իմա-
նամ, գոչեմ և ոչ ինչ լսեմ, բարբա-
ռիմ և ոչ զարթնանամ, հնչեմ և ոչ
փոխադրիմ, փողեմ և ոչ գումարիմ,
վիրաւորիմ եւ ոչ եւս զգամ, կռոցն
գարշութե՟ն նմանեալ՝ թափուր յազդ-
մանէ բարեաց իմաստից ։ Արդարեւ
չար առաւել յաւէտ իմպէս քան
զօրինակդ՝ Ճշմարտութիւնս, ստել և
մեղադրել և ատենին Քրիստոսի ար-
ժանապէս մատնել ։

Դ. Եւ քանզի անդառնալի ուղղոյն
յիշատակ ատենացս պարտեաց զայս
կտակ թողի որոց ընթեռնուն, խնդիր
բանիւ առ Աստուած կարդալ հանա-
պազորդութեամբ, այս կացցէ սահման
յանձնառական խոստովանութեան մեղ-
ընչենաւոր ձայնարկու առաջի քո, ա-
մենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս և
բանդ ընդ հոգւոյս զանահմանելով
միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական
մաղթողէ ընկալեալ աղերս ՚ի յիմոյս
ձայնէ. բարեգութ, մարդասէր, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն ։

---

# ԲԱՆ ԾԵ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին
հոլովի առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ վասն զի սպասեալ օգտոյ
թեւօք ՚ի թիւս անբաւից ծննդոց մարդ-
կան՝ եղի ՚ի կշիռս իմանալեացս մտաց.
ոչ զոհ համեմատ զոր ինձ պարտաւոր.
և առ այս զգուշութեան ամղմոփին զքան
՚ի յերգ ինձ առի զառն կշտամբու-
թեան զաւազանաւոր գործավար. ո՞վ
յարեցէ ընդ իս ՚ի չարիս հաւասարել
յանօրէնութիւնս ։ Եւ քանզի այս բառ
ամին մասին կնքեցաւ և Ճշմարտեցաւ
առ այրս մահու, և ես վկայեմ կրկին
հաստատեալ. առ այսր իրաւունս զը-
րեմ՝ ինձ միայնոյ զեղծանել ՚ի սպառ,
քան խնդիր բանիւ բազմաց տարագրել.
թերեւս ամխմք առ այսու արդեօք և
ինձ շնորհեսցես, շնորհողէս զպարտիս
իմոյն ։

Բ. Եւ արդ զի՞նչ քեզ աղերս հա-
ճոյական ՚ի յայսմ և ՚ի սոյն, և ծուխ

անուշից ընդունելի խնկոց մատուցից, գովեալ Թագաւոր երկնաւոր Քրիստոս, եթէ ոչ զառ 'ի յինէն անիծեալն օրհնել մաղթեմ, զկապեալն արձակել, ազատել զդատապարտեալն, բարեգործել զնզովեալն. սրբել զթշնամանեալն, սփոփել զտրտմեցեալն, գտանել զկորստականն, խնամել զտարտուցեալն, պատսպարել զնենգեալն, զերկրաւորեալն 'ի մարմին՝ յոգի բժըշկել: Եթէ օրհնութեան բանիւ առ որ մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի հայեցիս ընդունել, գթած: Ես տառապեալս ամենաթշուառ 'ի վերջին ապաստաւորութեան մաղթանաց այսր մատենի 'ի բովանդակ մտաց շնորհեցի իմոյն՝ փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. եւ դժնէից նենգողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտութեան արգահատեցի. վասն որոց և ծուներ պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց եկեալ առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան, գովեալ խնամակալ. կեանքըդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս, ամենակարդ՝ վախճանելոյս, իմաստութեա-



նըդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս. Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրեւ զողողակ մթային ոչ ընթեռլական 'ի հաղբս մահու անզգայապէս. չխնացայ զկորուստն. չգիտացի զորոգայթն. չըտեսի զմռմռնող պտոյն ծածուկ մեքենայս. չկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր վարմին. չնկատեցի ըզգայթակղութիւնն շուրջանակի. չզօշափեցի զպատանդիչ զօձեայ կարթին. ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին:

Գ. Քանզի և որպէս իմաստակի ուսեմն արտաքնոյ բարուք թուեցայ. չար անել զմեզ առ ձեռնարկն պատճառի. և ես վկայեմ իմովս բանիւ. քանզի իբր զանզգայ պահարս անասնոց մեռանիմք և ոչ զարհուրիմք, կորնչիմք և ոչ հեանամք, թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք. եղծանիմք և ոչ զղջանամք, մաշիմք և ոչ մտաւեմք, պակասիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք. գերիմք և ոչ եւս զգամք: Իսկ հանգիստ առել երջանկին Յովբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զոյն ընդ

որքոյն, եթէ ոչ ունէի զքեւն աշխատութեան մահացու գործոց ըստանձնել ։ Մանաւանդ զի որովայթն գաղտնի և հնարագէտն աներեւակի, տայր ժամանակս յանէից, անցեալն անյայտ և ապառնին կործողական, ես անհամբեր և բնութիւն թերահաւատ, ուր անհաստատք և միտք ցնդեալք. կիրք հարկաւորք և բարք անժուժկալք. մարմին մեղսամակարդ և յօժարութիւն երկրաւէր, դիմամարտութիւն անկանկից և խառնութիւն ներհակական, բնակութիւն կաւեղէն և անձրեւք ուժգնակք, կարիք անթուելիք և պատահարք ամենազրաւք, միտք չարախնամք և տենչմունք բարխառնայք, կեանք աւօրեայք եւ զմբաղք սակաւաւորք, խաբմունք յիմարութեան և խաղալիկք տղայական, աշխատութիւնք ընդունայնք և փոյելմունք երազականք, համբարք ոչընչից և պահեստք հողմոց, նըմանութիւնք ստուերաց և կերպարանք ծիծաղելիք ։ Քանզի իբրեւ եկն եհաս պատուիրանն, ըստ Պօղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս իմքեան, մեղքըն կենդանացան յանդիմաննեալ յար-



դարութեանցն, և ես մահացայ կենացըն, և կենդանացայ կորստեանն ։

Դ. Գողգոթան օտալք, չարին դաւմարք զստացուածս սրտիս իմաստից, ըստ դրոյն կանխաբանութեան. որով եկն եհաս խոկոյն աստանօր իմաստութեան ինձ նուաղման, ըստ առակողին, եւ առաւելուլ ոչ բարւոյ ցանկութիւն ։ Ոչ յաւեցի զակն ոգւոյս ՚ի գլուխն իմ կենաց Քրիստոս, որով ընդ ուղիղն հետեւեցայց ։ Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սատակաղես, յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի, ՚ի մեծագոյնն ամբառնալ՝ ստուստ գլորեցայ, յերկնայինն ուղւոյն՝ անդնդոց մատնեցայ. ՚ի զգուշանալն առաւել՝ յաւէտ մլատեցայ. յանպատմ պահել՝ մանր խորտակեցայ, կարծելով ընդ ահեակն մերձիլ՝ յաջն գթեցի, ՚ի զերկրորդն խուզել՝ զնախինին կորուսի, ՚ի խնդիր ամփաւոռն ՚ի կարեւորացն զրկեցայ, ՚ի յուխտին պահել՝ դաշինն գրժեցի, առ ամօթութեանն կորիլ՝ կորուսիչս գտի, ՚ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ. զոր ես ինքն ինձէն սաեղծեալ՝ չարաչար գատախազ անձին կարգեցի ։ Յո-

քոյ փրկել զմատնեալ գերիս զոր միայն զօրեցեր, կենաց մատուցեալ զընծայեալս մահու հոգիս, զի դու միայն, տէր Յիսուս, ճանաչիս բարերար անսահման փառօք՝ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

## ԲԱՆ ԾԶ·

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Իսկ զաւխթանս մահու գրգռուածս գժոխորմաց ծառոյս զանմաթեան պտուղս, ընտանիս թշնամիս, հարազատս հակառակս, և որդիս գաւաճանողս, ստորագրեցից մատեանքըդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ՝ որ են այսքիկ։

Բ. Սիրտս նենգախորհուրդ, բերանըս չարախօս, աչքս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռինս մահաձիգ,



երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, շունչք ծխախառն, գընացք խաւարային, կայութիւն լեղի վնասական, խորհուրդ ծուրեալ, կամք անկայուն, չար անփոփոխ. բարեմտանութիւն սատանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ։ Գաղտն վիրաւոր, թռչուն նետահար, փախստական քարավէժ, ընտանեցեալ վտանգաւոր, աւաղակ ծովակուր։ Զինուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, ազատազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ. Ազօթական անխորախոյս, քեմական ընտրնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր։ Դպիր կշտամբեալ, խմաստակ խելագար, ճարտասան անճոռնի։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, երեսք լրբեալ, գոյն անհամբոյր, տիպ ամարդի, գեղ ծանակեալ։ Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, ոգի գաղձնուոր, ըմթոցնահար, պարտէզ փշաբեր, հաւկ ուտածահալ, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատապար անկեալ, Սնապարծ յուսահատ, անհամաշքելի նշոյլ, անհեշտա-

կան բաժանեալ , ունայնական շաղակ-
րատ , պաճարամիտ գոռոզ , անամօ-
րէն ապիրատ , դժոխային ապահ , ա-
նիրաւան յանդուգն : Մոլեգնութիւն
անատառուած , ձեռնամպութիւն ապա-
նող , տատանական երկրագործ , եր-
ջանկութիւն եղկելի , մեծութիւն
վատթարեալ , վայելչութիւն անշքեալ ,
կորովութիւն տկարացեալ , բարձրու-
թիւն խոնարհեալ , փառաւորութիւն
ընդոտնեալ , պատուիրանազանցութիւն
յարակայ , սխալանք ինքնակամ : Մա-
տակարար կամակոր , խորհրդակից նեն-
գաւոր , բարեկամ հատուածեալ , հա-
ղորդեալ պղծամիտ , մերձաւոր կծծի ,
բաշխող ժլատ , վերատեսուչ կարկամ ,
ոգի անախտակիր , իղձք անսէր , բանք
առեցող , աղէք անզթականք , գնացք
անխոհեմ , աներևոյթք վնասեալք ,
ծածուկք անխծեալք , դիպուածք թըշ-
նամանեալք : Վաճառական վատնիչ ,
շահաւոր շուայտեալ , պաշտօնեայ ար-
բեցող , գանձուց ստրկան երկմիտ ,
պատգամաւոր բանսարկու , դռնապան
քնէած , աղքատ հպարտ , մեծատուն
ժխտող : Դիւանապետ անօրէն , պա-



հապան մատնիչ , բնակակից չարախօս ,
սուրհանդակ անժամանակ , թղթաբեր
սպրդաւոր , առաքեալ խռովարար ,
միջնորդ անիմաստ : Արքայ արտալած ,
թագաւոր թարմատար , կայսր ապէ-
կործան , իշխան տկարացու , զօրավար
զրկող , դատաւոր ակնառու , ռամիկ
ինքնագործ : Նախատողի ծաղր , սի-
րելոյ աշխար , բանագրի գարշ , յան-
դիմանչի դատախազութիւն : Քանզի
և 'ի վեհագունից կոչմանց էր ուրեք
արդեօք ոչ էի , իսկ 'ի վատթարակա-
նացդ մասանց եկն երբեմն եհաս ոչ
եղէ : Արդ այսքան վնասակարութիւնք
խարդախութեանց յաճախագունից , յո-
րոց յոմանց խաբեցայ իբրև զտխմար ,
և յոմանց տիրեցայ իբրև զտկար , կա-
մաւ մատնեալ զիս ինքն մահու :

Գ . Արդ՝ զո՞ր 'ի վերագրելոցդ մա-
սանց՝ քեզ ատելեաց և իմ կորուսչաց՝
'ի տապս պաշտաման քեզ ընծայեցից .
զո՞րդ խիստ ապականութեամբ պարտ-
րեալս՝ ամենատուրդ քո մեծութեան
հանդէպ կացուցից . և կամ ո՞րքանեօք
երկայնմտութեամբք համբերեսցես այ-
քանեաց պարտուց . ո՞րքան ներես , ո՞ր-

պէս լուեցես, զիա՞րդ խուլ անսայցես, իբր ոչ մատնեցես հարուածոց գանից զարժանիս սաստկման մահու։ Այլ այսոցիկ աննշոյլ մթութեանց հոգւոյ խաւարի աղջամութեան լուսոյ քո պատահեցես բժշկել քաւել և կենագործել, զօրեղութիւն անվթարելի. եւ քեզ փառք յամենայնի. ամէն ։

---

# ԲԱՆ ԾԷ.

Վերստին յաւելուած ձեռին Հեթումեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ՔՐԻՍՏՈՍ Աստուած անուն ահաւոր, մեծութեան տեսակ, անքննելի բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութեան վերնում հանգստեանն, ճանապարհ հանգստութեան, ապաւինութիւն նորոգ և անտխրական երա-



նութեան, ամենակալ իշխանութիւն բոլոր էականութեան, օրհնութեան կոչումն, աւետեաց ձայն, բերկրութեան բարբառ, անմահութեան գեղ, որդի անճառ Աստուծոյ միոյ. որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհասն է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քում երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քում անճառութեան չափեալ է. որ ինձ յուսահատութեանն է, քեզ ախափանաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ ինձ եղծեալն է, քում զօրեղութեան գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է,

քեզ դիւրահնարքելի է, որ ինձ մահա-
բերն է, քումդ էականութեան զօրու-
թեան ընդ ոչ գոյն համարեալ է:

Բ. Այլ դու, ողորմած Աստուած բո-
լորից տէր Յիսուս Քրիստոս, և այսմ
զօրէնս առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս.
վասն անուան փառաց մեծութեան Հօր
քո օրհնելոյ, վասն կամաց գթութեան
Որդւոյդ քո Սրբոյ, տես 'ի տարժանա-
ւորս կրից յանդիմանական յայտնու-
թիւն, և 'ի խորոց սրտի ինքնամատոյց
դատախազութիւն. նայեա 'ի բնութեա-
նըս ամենապատող խակութիւն, և պար-
գեւեա բժշկութիւն վիրացս և հնարա-
ւորութիւն կորստեանս, զերծումն բաղ-
ձամանեաց մահուս և շաւիղ կենաց ա-
պականելոյս, նորոգութիւն եղծմանս
և մուտք յուսոյ ամբարշտելոյս: Եթէ
ես զանմանն ինձ կամս ցուցի, որչափ
առաւել դու զբնաւորականդ քո զըն-
տանի բարերարութիւնդ. եթէ 'ի
փշոյ պտուղ ընծայեցաւ քաղցրու-
թեան, որչափ առաւել 'ի ծառոյդ
կենաց ճաշակ անմահութեան. եթէ
ես խնց ատելեաց ողորմութիւն մաղ-
թեցի, դու քոյս զխորդ ոչ կրկին



մատուսցես, հզօր, յանձնուադ առա-
տութենէ:

Գ. Արդ՝ տես 'ի քոյդ մեծութիւն,
բարձրեալ, նայեցեալ 'ի յիմս փոքրկու-
թիւն, ընկալ զսակաւ խոստովանութիւ-
նըս անհամար մեղացս որ զբնաւն հա-
մայն տեսանես. և որպէս զկիմին զը-
թել ոչ գրեցեր, եւ զաւազս փոքու
սասանել մի համարեցիս. և իբրեւ
զնաւթին՝ ընդ մեղայն առել՝ խնկոյն
անցուցեր զպատիժ պարտուցն, և առ-
իմ ձայնիս հեծութիւն զնոյն գործեա-
ցես, երկայնմտութիւն. որ տաս ամե-
նեցուն առատապէս անաշառութեամբ
որպէս յաղթող բարի բազմիմաստ, և
ոչ նախատես զյեանեալ սորուկս ո-
պէս ողորմած և ամենաստեղծ. սաստ-
ցիր վէրատին, և մի կորուսաներ զլու-
ժեալս արեամբ քո. և զլուծեալս ա-
րեամբ քո, գթած: Զի քո է փրկու-
թիւն, և 'ի քեն է քաւութիւն, եւ
քեզ վայելէ փառք յամենայնի յաւի-
տեանս, ամէն:

# ԲԱՆ ԾԲ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս ճաշակմանց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Օրհնեալ Տէր Յիսուս ընդ Հօր, 'ի կամս հաճութեան Հոգւոյդ քո Սրբոյ, և օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն Որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցող ինչոս բաց 'ի քէն, Քրիստոս: Այս է օրհնութիւնն Ցախավլեայ, ասէ Եսայի, յորժամ բարձից զձեռս Նորա:

Բ. Արդ՝ ողորմեաց ինձ, Տէր բարեգութ, ըստ նախնիդ քո ամոքութեան, և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին Դաւթի և ըստ Մովսէսի. զի բանիւդ քո փրկութեան ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն: Աստուածապէս ինձ հրաշագործեա, ողորմած արքայ երկնաւոր, որպէս անկելոյն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոյն 'ի սրահին Բեթհեզդայ: Յորոց մի էր



և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխնայեցեր ըղբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր զխաելով զանբույժ չարութիւնն՝ որ նիւթեայն քեզ յաւուր մատնութեան զաւն գիշերին տիրամատնութեան՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ: Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեսցին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբերելի դատողայն զքեզ 'ի խաչին: Եւ դու այնպիսւոյ անյարիր ջանուկ մահու ծնողեցեալ չարաչուք առն ողորմեցար, անճառ բարութիւն. ակրալի մարդասիրութիւն, սարսափելի ներողութիւն, սոսկալի երկայնմտութիւն, անբաւելի քաղցրութիւն, փառաւորելի հեզութիւն: Որ միշտ յաղթես 'ի գթութենէ և ոչ թշնամանես, պարտես յողորմութենէ և ոչ պարտաւես, բանադատես 'ի մարդասիրութենէ և ոչ անգոսնես, հարկես 'ի բարութենէ և ոչ հայհոյես, առնիցես 'ի սիրոյ և ոչ բամբասես: Պաղատես զարձին իմ

առ քեզ և ոչ ձանձրանաս , որպէս զկնի ապերասանիս և ոչ լքանիս , ձայնես չլսողիս և ոչ սրտմտիս , փութաս մեղկելոյս և ոչ խափանիս : Առ չարս ես բարի , առ ամենապարտս ես ներող , առ մեղաւորս ես քաւիչ , առ խաւարեալս ես լոյս , առ մահացեալս ես կեանք :

Գ. Այս են գիրք՝ ամենայն հոգեշունչ օգտակարութեան , որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս անճառս և զարմանալիս : Աստ և ինձ թշուառացելումս , օրհնեալ ամենապարգեւ , արի առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ , և հետեւեալ ժամանեա յանդորր հանգիստ անաշխատ կենաց : Խոցեցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի զերիզամոյնդեալ մահազդեցոյս պարփակութիւն դժոխագնեայ կապանացս , և լոյծ ինձ ըղհանգոյցս խեղդողական ոգեպահանջ սատակութեանս , առաքելով զարժանաւորս մահու յազատութիւնն վերին անանց բերկրութեանն , կենսաբեր և ա- տուածային քո բանիւդ : Մի տակաւ պակաւ ազդեցես , եւ մի օր 'ի յօր



յերկարաձգեսցես , զի մի ատուար ծանրութիւն բեռանցս մեղաց տիրեսցէ թիկանցս ազդերաց , և կործանեալ զիս կորացուսցէ հայել 'ի դժոխս , և ուժգնակի զսպող բռնութեամբ անպարտաւ հոգեւորական զինուն արարեալ՝ մահու ծառայեցուսցէ : Այլ օգնեա ինձ , բարի վշտակից հեծութեան կարեացս մահու երկանց , առեալ յինէն զխայթ սատակմանն , որպէս երբեմն յուսոյ պահակին , որով կառուցես զվայելչականին յաղթանակի արի զօրութեանն , մնդապէս հաւատով յուսոյն կարծրութեան ընդ քեզ բեւեռել անսայթաքելի : Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս . ամէն :

# ԲԱՆ ԾԹ.

Վ․էրտին յաւէլուած յինէն հեծութեան նորէն հոգւոյն առ նոյն արել մոլեռանդ բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ՀԱՒԱՏԱՄ և վկայեմ մտաց գի- տութեամբ՝ ՚ի քէն աղբերցեալ ուղղոյ իմաստիւ ուշիւս տեսման, զի ըղձալի են քեզ, բարերար, աղաչանք մեղաւո- րաց քան զխնդրուածս արդարոց: Զի մինն զպարտութիւն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զխնութեանս չափ, և մեծ կշտամբիչ սաստէն համբարձեալ ինքնագոր մարտա- կից նմին իսկ ինքեան և դառն գոր- ծիչ և ծածկամիտ դատախազ: Իսկ միւսն յարգիւնս բարեացն իւրոց նայե- լով, յանձին հարեալ ձեռն վստահու- թեան, մոռանայ զսահման բնութեա- նըն, և պարգևաց քան ողորմութեան գիտեալ անն ունի. Վասն որոյ առ մի- նըն անթիւ են ստեղծուածք ձաւից, որ զողորմութեանցդ քո փոխել բարբա- ռոյ աղգէ. իսկ առ միւսն լռեալ են



քոյդ, անքննին աշաւոր և ամենախըղ- նամ, ամաչեմ առել՝ թէ և երկրաւո- րիս գործոց պատմութիւն գքոյդ յա- ռաջեալ: Արդ արի, Տէր, և մի զօ- րացի քան զքոյդ առ հոգեզինի. մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ չափոց մարդկան:

Բ. Եւ արդ. առաջքն անդամոք ան- կարօտք են բժշկութեան, և տեսանա- զմեկանքն աչօք շուննին պէտս առաջնոր- դի, և փարթամքն ընչիւք ոչ դեգերին առ դրունս ըլոցն, և ամենայնիւ յղփա- ցեալքն ոչ աղաւեն փշրանաց սեղանոց հացի, և սուրբքն վարուք ապէնկաղ են ողորմութեան: Եւ արդ՝ ինձ զը- թացիս ողորմել. Բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատեսութ վաղանեցելոյս: Գտանիցի թէ էի իբրև զՑովէլ, առէի զան- ձըն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ էի իբրև զՄովսէս, առէի վստա- հութեամբ զնորայն, ծանիցէ Տէր զայ- նոսիկ որ իւրն են. թէ էի իբրև ըզ- Դաւիթ, առէի՝ արարի զիրաւունս եւ զարդարութիւն. եւ դարձեալ զմեծն քան զընութիւն մարմնոյ, զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի իմում. մի լուիցէ

ինձ Տէր ։ Թէ էի իբրեւ զԵղիա, առէի զանձն իմ՝ առ Աստուծոյ. Թէ էի իբրեւ զԵրեմիա, գտոյց ճշմարտութիւն յանձն օրինակէի. Թէ էի իբրեւ զԵզեկիա, պարծէի զաւուրքն և զիրաւացին, գնացի առաջի քո արդարութեամբ. Թէ էի իբրեւ զՊօղոս, առէի զիս բնակարան ազդարան և ընդունարան Աստուծոյ բանին ։ Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտութեան օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարգանօք բանից իբրեւ զնոսա, եւ զընաւին չարս որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշատակել, այլ և ոչ զամենուստ գոյից զբարեհաճակաց անունդ հզօր ամենաշնորհաց լեզուով գովել։ Իսկ դու առ ամենայն հնարս զօրութ՝ մատո ինձ ոգի փրկութեան, աջ պաշտպանութեան, ձեռն այցելութեան, հրաման բարութեան, լոյս ողորմութեան, բան նորոգութեան, պատճառ քաւութեան, գաւազան կենաց օգնութեան։ Զի դու ես յոյս ապաւինութեան, տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ ընդ Հօր Հոգւովդ Սրբով յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## ԲԱՆ Կ․

Վերստին յաւելուած նշխին հեծութեան նորին Հանդէպ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա․ Ես արդ՝ որպէս զի ոչ վայելէ օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի 'ի ճշմարիտն առակէ կանխաւ խօսք ուսոյ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկաւ, որ հանապազ ընդունիմ անէծս 'ի սաղմոսի բարեբանութեան։ Զի իբր երգեցից ինձ վտանգս և արձանացուցից նախատինս, և 'ի մերկութեանս զրկի փուշս ընդ շուշանաց ծաղկեցից. զիա՞րդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեցես. զիա՞րդ դարձեալ, թէ մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց. զիա՞րդ, թէ դատ արա ինձ Տէր ըստ արդարութեան քո, ըստ ամբծութեան իմոյ որ յիս. զիա՞րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց. զիա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մե-

զաւգտի և չարի. և զայն որ զինի. զի-ա՞րդ, թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւո-րաց որոգայթ հուր և ծծումբ. զիա՞րդ, թէ սատակէ Տէր զշրթունս նենգաւո-րըս և զլեզուս մեծաբանս. զիա՞րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութիւն. զիա՞րդ զյաջորդն ո-մին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս. զիա՞րդ զեւան, թէ ես արդա-րութեամբ երեւեցայց երեսաց քոց. զի-ա՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նը-մա. զիա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ Տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց. զիա՞րդ անձամբ ինձէն զստութիւն իմ ծա-նակեցից՝ ասել ընդ որում, թէ լուա-ցայց սրբութեամբ զձեռս իմ. զիա՞րդ 'ի մէջ նանրութեան զամբարշտացն ա-թոռս բամբասեցից. զիա՞րդ զերջանիկն պարծանս թշուառացելոյս կերպարա-նեցից. թէ դատ արա ինձ Տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի. զիա՞րդ օտարս 'ի բարեաց՝ զխոտորեալ գաղա-նեաց պարգահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարշտաց զանձն իմ. զիա՞րդ ես ինքն գոլով չար անիծեցից, թէ աւր



նոցա Տէր զգործս նոցա, և 'ի կարգ բանիցն համարձակեցայց։

Բ. Քանզի թէ զյետինս բանիցն ա-ռաջնովքն ստանօր եդից, կրկին ծան-րանան ինձ ցաւք և յաճախեսցեն դառ-նութիւնք։ Բայց 'ի չնչնջեցելոյն ար-տասուաց գոյգն մի չափեալ, բաւակա-նացայց հանապազորդեան յանդիմանու-թեամբ սաղմոսարանին ընտանի ձայնի-ւըն, որ զպարտաւորեալս միշտ կշտամ-բէ, առ որս և սպառուած քառասնե-րորդի իններորդին հատուածի բանի յանդիմանողն զիս գործեցուցեալ, հա-նապազ խայտառակէ. խցեալ զերեսս 'ի փառաբանութենէ՝ եղկելի զանձն իմ ցուցանէ, աստուածային ձայնիւն դա-տախազեալ՝ յանկիալութենէ կենաց ըն-քանէ, միանգամայն և վիրգս մահու ինձ իբր 'ի պատնչէ առաքէ։ Քանզի թէ չար է անէծս առնուլ յօտարէ, որչափ անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախա-տինս 'ի մերձաւորաց օրէնք են, ապա 'ի անտողէն հայել զայսոսիկ, կրից ա-րեան տաժանմունք, վիշտք աղէտից և խէթք մեղաց։ Բայց թէ առ խոնարհու-

թեան անձին իւրում մատնեսցի․ ջը-
նեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ
իւրմէ, 'ի խոստովանեալ և յամենիշ-
խան շրթանց բերանոյ վերնոյն օրհնեա-
ցի․ զի Ճշգրտեալ թարգմանեաց ըզ-
դարձն իւր առ նա՝ զհետս կենացն ոչ
լքանելով․ սահմանաւն սիրոյ զպար-
տեացն արժանս կրճատեաց, ոչ տիրեալ
'ի խարդաւանաց չարաբանողաց․ ոչխար
հօտին Քրիստոսի գտաւ բժշկեալ՝ դիմե-
լով 'ի յաղն բուժիչ աղեացն արկածից։
Բայց ես անբանական բարոյից է՝ ա-
սուն կենդանեաց 'ի մէջ գոլալոց ծաղ-
կածին վայրից կենաձիր բանից թըմբ-
րութեամբ մնաց 'ի յարօտս մահու Ճա-
րակել։

Գ․ Եւ արդ՝ քանզի իմ է սուտս
վերջին կշտամբողական, և առ իս ակ-
նարկէ զդիպուածոյն չար պատահմու-
նըս, որ ինձէն անձին նիւթեցի միշտ
զեղմունս կիզանողականս հրոյ տոչոր-
ման, հասեալ 'ի յերկնուստ գգոյխ-
գագաթանս խառնարանի բազմակիս։
Քանզի զիա՞րդ 'ի յարդիւնս ինձ օգտից
տաղիման եկեսցէ, յորժամ անպտուղ
'ի բազմերգութենէն լինիցիմ, ոչ



նուազել հոգւով, ըստ թելադրելոյն
Պօղոսի․ զիա՞րդ ընդ մարգարէին ես
զտէրունին խառնեցից մեծս մեղաւո-
րաց՝ նկունս ախտանեաց, ասել ընդ
որբոյն, թէ 'ի բաց կացէք յինէն ա-
մենեքեան որ գործէք զանօրէնութիւն․
զիա՞րդ ոչ ունելով 'ի բազմացն պատ-
ուիրանաց կատարեալ՝ շնորհին և օրհ-
նին՝ բարբառեցայց զերջանիկն, որ նախ
ինքն ասաց զոր մեզ կանխեաց, թէ
քանզի ծառայս քո պահեցի զայս, ես
որ զհետն գան տացեալքն․ զիա՞րդ
թափուրս 'ի լռութենէ իմաստից կե-
նաց ընդ երկիւղածս Տեառն օրհնեցից․
զիա՞րդ ընդ մեծին մողթանաց զիմ
յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի Տեառ-
նէ՝ զտեսիլ վայելչութեան նորա և
զհրամանատրութիւն տաճարի նորա․
զիա՞րդ 'ի հրաժարիլն ինձ ձեռնամխե-
ցից, յորժամ ըսեմ, թէ ուղղոց վայելէ
օրհնութիւն․ զիա՞րդ շրթամբք իմովք
զանձն իմ անիծից՝ ասելով զնի յոլ-
վից ասեալն, թէ երեսք Տեառն 'ի
վերայ չարագործաց՝ սատակել զյիշա-
տակս նոցա յերկրէ․ զիա՞րդ զմիւսն
դարձեալ, թէ չարք վաղվաղակի սա-

տակեցին․ զիա՞րդ զկերպարանացն իմ
նմանութիւն, թէ բաղուկք ամբա-
րշտաց խորտակեցին․ զիա՞րդ սատակ-
ման ինձ պաղատեցայց, թէ անհա մե-
ղաւորք կորիցեն․ զիա՞րդ զբաղմայա-
ծեան լեզուս 'ի յօրհնեալն բան մխե-
ցից, թէ ասացի պահել զճանապարհս
իմ, զի մի մեղայց լեզուաւ իմով․ զի-
ա՞րդ փշովք մեղաց հեղձեալս զանպա-
տին պարծեցայց, թէ այլ զիս յամբը-
ծութեան իմում ընկալար․ զիա՞րդ ես
մեղաւոր և կրկին պատժաւոր զհան-
գունակիցան գարշելեցից ասպել 'ի Նո-
ցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նեն-
գաւորէ փրկեա զիս Աստուած ։

Դ․ Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ
անպատկառապէս պերճացայց ունայն
պանծանօք ասել ընդ Դաւթի, մի թէ
մոռացեալ իցէ մեր զանուն Աստուծոյ,
կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար
աստուածոց․ քանզի որ 'ի մեղս զար-
շութեան խոնարհեցի, առաջի կոյ նո-
րին կառուցեալ առեալ 'ի պաշտօն
յաւնականացն ախտարծարծին դուռն-
կապատիկ պատկերացն կերպարան՝ Աս-
տարտոյ և Քամոսայ և Մեղքոմայ ար-



ուարձանի և Թարահատայ թարմատա-
րի, ընդ զազրատեացն կանացեաց՝ ի-
շանդամկին պատկառանք անմերարկու-
ծանակութիւնք։ Ի՞բր ոչ պատկառեցից
սակիմբ ասել ընդ Նահատակին, որ զայս
զիմաստութիւն առ բարին ունէր
միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհա-
նապազ, եւ որ 'ի կարգին է սորին
սաղմոս ։ Ի՞բր յիմարս յարս և վատ-
թարս ասել ժողհիմ, թէ բերան իմ
պատմեսցէ զիմաստութիւն եւ սիրտ
զհանճար․ Իբր մարդելոյզ կերպարա-
նաւոր՝ զմարդահանձոյիցն ասկերս ցը-
ուել մաղթեցից․ Ի՞բր զկրկին երկրոր-
դեալսն մեծանուն բարութիւնս․ թէ
հաճոյ եղիցի առաջի Տեառն յերկրին
կենդանեաց ։ Զիա՞րդ ունողս անբաւից
մեղաց զարդարոյն առեալ կարդացից,
թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք․ ա-
ռանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ․
զիա՞րդ զիս ինքն մաքեցից կորստեան
յասելն զայս բան, թէ մի ողորմիր
գործողացն զանօրէնութիւն․ զիա՞րդ,
թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ,
այնպէս և մեղաւորք յերեսաց Աստու-
ծոյ․ զիա՞րդ զրգեալս ապականացու

փափկութեամբ՝ սահմանեցից զաննմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և զողջակէզս նորին ընդ-նոյն, թէ ես 'ի նեղել նոցա քուրձ ըզ-գենուլ, և իբրեւ զսգաւոր և զտըր-տմել խոնարհ առնէի ։ Որպէս հան-դարտեցից զնմանեացն իմ պատիժ մինչ յիշատակել, թէ սակայն միւր բար-կութեանն Աստուծոյ ոչ սպառեցի, եւ արքեն 'ի նմանէ ամենայն մեղա-ւորք երկրի․ իբրեւ զեւան առ ոմն, թէ զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեցից ։ Զի՞րդ զապերախտու-թիւնն Յակոբեայ 'ի ձեռն առեալ հեգ-նեցից, որ ընդ սուտերին զճշմարտու-թիւնն ընկալեալ․ մոռացայ ընդ նոսին նոցին թերութեամբ զերախտիսն Քը-րիստոսի աստուածայնովք արուեստիւք Խաչին փրկանօք․ քան նոքա զզօրա-ւորութիւնն Մովսէսի ցոյն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսութեան ։ Զի՞րդ զյարուցելոյն 'ի վերայ գիւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զտարացեղից խուժադուժ ազ-գացն ասելով, թէ արկին զգիտակունս բարեացն որ 'ի մեզ՝ կուր մնատակարա-



ցըն թռչնոցն, այս է՝ այտոցն օդայնոց․ որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճա-նապարհին, և զփարանեալ զկամս ընդ-չարին՝ սուրբ անուանեցից․ իբրև զնմա-նակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին պատե-րազմի՝ գուպար զաղտնամարտ մասցս օդտելոց, զոր ես զօրացուցի գործակ-ցեալ հնարից բանսարկուին ։ Եւ ոչ ու-նիմ աղերսել, թէ մի լռեր և մի դա-դարեր, Աստուած․ եւ խորհեցան 'ի վերայ սրբոց քոց և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսս է աղօթել ։ Քանզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութեան մոլեկան դիւաց մինչ ճակատելոյ առ ներկայս խռո-վութիւն, և ընդ նոսին նոցին մշակաց ։

Ե․ Յորոց դու, տէր Քրիստոս Որդի բարձրեալ մեծին Աստուծոյ, պահես-ցես և ամրացուսցես երկնային զօրութ-շրջափակութեամբ՝ յամենայն ընթացից խաբողին հողմոց խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ․ որ զի թէ և զայլն յիս անօրէնութիւնք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիւնք ։ Որ ոչ հան-գեաւ 'ի կորուստ նմանեացն իմոց ամ-բարշտելոց, այլ ամենագորով թա-

խանձմամբ ընդ եղծման չորոյն զաղ-
բագործոց կրկին վշտացայ, տաղտկա-
լի զմահու նոցա զխոցուածն. քեզ զը-
րեցեր, ասելով զողորմանալեան լորոց
բան, ածեալ զմտաւ ոչ եւս յուսելոյ
անխծանել զերկիր վասն գործոց մարդ-
կան: Եւ մխիթարիս մեծ իմն ողորմա-
բեալ ընդ կեանս անմաքրից եւ պար-
տաւորաց տառապման, որ երբեմն ա-
ռաքուէ գգմենոյն զանխայեն 'ի կոր-
ծանելեան ցուցեր, ողորման, եւ առ
այլ ումեմն նեղեալ սասանիկ վտան-
գեալ ընդ յամրանալ անձրեւին առ
ուրացողայն դարման: Անձաւելեա
ցուցեր բարութեան տեսակս յիշա-
տակաց տանելեա՝ 'ի վերջին աւուրս,
քեւ 'ի ձեռն Առաքելոյն քոյ՝ ողջոյն
հաստատկաց անհամբերութեան հեռաւո-
րաց քաղցրաձայնակս հրամայեցեր: Ա-
հա եւ յիս ցօղեա կենդանի զհայրենի
գթութեանցդ զոեր, զի եւ ես փրկե-
ցայց քաւեալ ամենառատ քո այցե-
լութեամբդ. Եւ քեզ ընդ Հօր Հոգ-
ւոյդ Սրբով փառք յաւիտեանս, ամէն:

---

# ԲԱՆ ԿԱ.

Վերստին յաւելուած խրխին հեծութեան նորին
հոգւոյն աւանդոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Եւ ընդէր է ինձ բնաւն որ 'ի
տաղմույն այնպիսեաց բանիցն 'ի կըր-
արկանել, որ 'ի նախատինս միանգա-
մայն եւ 'ի նզովս ինձ յարակայեն. հա-
նապազ երգել իմովս տաւղօք: Քան-
զի զխորդ արդեօք զշուք երջանկին ինձ
զատապարտելյս նմանեցուցից՝ աս-
ելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ
իս թիւրեալն սիրտ: Զխորդ ըղ-
կարգադրութիւնս նոյն 'ի յայսմ-
նէ զկնի թաւելոյն զորհուրեցուցչաց
ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝
զինուորին եւ թագաւորին եւ մարմնա-
կան հրամանատուին, որք եւ երկնայ-
նոյն են համբերելիք ասելով. ոչ յու-
ռահատ եղէց 'ի կենաց պատմոյս աւե-
տեացս եւ նորոյս աշակերտ անխնամ յա-
մենաւոր բարեկարգութեանց: Զխորդ
լաւ խրատախորհ արդարոյն, ընդ դէմ

մեղաւորացն մահու զլինելոյ առակաւ
առաւօտին 'ի սկիզբն արթնութեանն
միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ
զանդամս մարմնոյս զանեալ խրատեցի.
զի՞րդ մասնակցեալ մեծին սրբութեան՝
սատակեցից 'ի քաղաքի Տեառն զանօ-
րինեալսն, որ և ոչ զլուծեալ բիծս
հոգւոյս իմոյ մեռուցի: Զի՞րդ սան-
ցից զբողն չեւ յայտնեցելոյն, թէ ըղ-
ձախի որպէս հաց կերայ. զի՞րդ, որ ոչ
միացուցի յիմոց կրից կաթիլ մի պղտոր
ընդ յստակ արտօսր աղբերց երգողին՝ ա-
սեմ ընդ նմին, թէ զմոխիրս իմ ար-
տասուօք խառնեցի, և արտասուօք ի-
մովք զանկողինս իմ թացի: Զի՞րս ինձ
գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սի-
րողն Աստուծոյ 'ի բոլոր սրտէ զյանց-
մունս նախնեացն իւր փոփկանիցի, թէ
մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք
և յանցեաք, և որ 'ի վախճանն յանդի-
մանս իւրաւանք առ իս՝ քան առ
Իսրայէլ: Որո՞վք յարգեցայց դաւիլ
ընդ բարիսն, յորժամ մարգարէին հնա-
րից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս
դատաւ, 'ի դարշութենէ կերակրոց 'ի
մահ ոսկեցեալք և յաճախութենէ ձը-



զանց 'ի հոգւոց նուաղելովք. ըստ
խոտորութեան ինքնորէն կրօնից հրէից և
հեթանոսաց: Զի՞րդ արդարութիւն իմ
միայ յաւիտեանս, զոր ոչ բնաւ իսկ
կատարեցի:

Բ. Եւ զի մի՛ տաղտկացայց յաւելուլ
'ի բանիս, 'ի համառօտել զայն փու-
թացայց: Զի՞նչ ունիմ առնել 'ի տեղի
բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն
նուագեաց օրհներգօղն Դաւիթ, թէ
բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ.
զի՞րդ ընդ սմին զմեծն քան զայս,
թէ յամենայն ճանապարհէ չարեաց ար-
գելի զոտս իմ. Իսկ ընդ եղեալս եւ
զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում
թաքուցի զբանս քո, որպէս զի մի՛ մե-
ղայց քեզ: Որպէս զունայնութեանցս
իւր զլութեանց ձաւեցից ընդ պարս
մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց ի-
մացեալ, ատեցի զամենայն ճանապարհս
չարաց: Զի՞րդ զհետ զայն ճշմարտութիւ-
նըն իմում սուտութեանս մշտնջենական
երգմնահարութիւն կարգեցից՝ ուխտեալ
ընդ հաւատարմին, երդուայ զոր հաս-
տատեցի պահել զդատաստանս արդա-
րութեան քոյ: Զի՞րդ ինձ հրեշտակ

մահագոյժ անհրաժեշտ վճռի՝ զանին պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն ։ Զիա՞րդ չարս խնկացես՝ զբարեացն գրեցից՝ որք 'ի Տեառնէ առնուն զնոյն հատուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ Տէր ուղղոց սրտից ։ Զիա՞րդ զհամառօտըն փոխադրութիւն անաչառութեան՝ վրիպեցելոյս ինձ սահմանեցից, թէ ըզթիւրեալսն յանիշատակութեամբ տանի ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն ։ Զիա՞րդ զաստուածազգեստին պանծանս ամաչեցելոյս ինձ պատուաւեցից՝ առել զնորայն, թէ Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին ասացեալքն ։ Զիա՞րդ զանճառն քան զմրմին բան՝ 'ի ցոյց առից քաջալերութեան վհատեցելոյս, եւ զանձ գեհենին առել ընդ օծեալն Աստուծոյ հոգւոյն, թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ 'նենգութիւն 'ի լեզուի իմում, 'ի սկըզբաւորն նախաձայնեալ սաղմոսս մինչեւ 'ի լրումն աւարտման բանիս ։ Զիա՞րդ զատակցութեան գժնէից մարդոց համաքան այրս մահու և որդիս սատակ_



ման բարբառիմ զբարեշնորհին, ո՞չ ահա զատեալս քո Տէր ատեցի, և զմնացուածն սորին կարգի ։ Զիա՞րդ մեծաւորն վստահութեամբ տանելի վեհին, անձն իմ և դու աշխար աշխարհի ։ զանդատ քո ոգի յաւուր ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պատկերսն, թէ փորձեա զիս Տէր և տես. թէ իցե՞ն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ. և գայթեղուածն որ զհետ սորին ։ Զիա՞րդ ես գոլով և յոյլոց աղօթեմ տայրել յուսոյերոցն յԱստուած ձայնակցեալ, պահեա զիս Տէր 'ի ձեռաց մեղաւորի և 'ի մարդոյ չարէ ։ Զիա՞րդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել Աստուծոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց ։ Զիա՞րդ իբր համդիսացեալ ընդ ճգնաւորին՝ զվիցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով զաւաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից, թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչեւ հատուսցես ինձ ։

Գ. Յարեցանեալ է և այս իմաստ հոգեւոր և տէրունի գործոյն 'նմանի, որ զխորհիչն պատկառեցոյց, յորժամ զամենայն արհամարհիցէ և զսկըզբնա_

պատճառն եղելոց միայն ընտրեցէ ասե-լով, թէ երանի ժողովրդեան, որոյ տէր Աստուած է Նորա: Մեծ է և այս բարձրութիւն շնորհի և զգուշական հա-մարձակութիւն լսեալ երանութեանն, թէ սուրբք քո օրհնեսցեն զքեզ: Ըղ-ձալի է և այս ընտանութիւն մերձաւո-րական հայեցող հայրդութեանն՝ յԱս-տուած յուսալ և 'ի նոյն արձանանալ բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկա-մս երկիւղածաց իւրոց առնէ Տէր. և զկարգ բանին կատարէ, մինչեւ զողա-լին և զլուարձալին ազդեցէ, թէ պա-հէ Տէր զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ Տէր. 'ի գլուխ լման կրոց նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ ե-ցոյց վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց. Զուգակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս. զի թէ ընդունի զհեզս Տէր և խոնարհ առնէ զամբար-տաւանս մինչեւ յերկիր, ապա ինձ ո՞-քան եղկութիւնք կան առաջի. իսկ ե-թէ հաճի Տէր ընդ ժողովուրդ սուրբ, և բարձր առնէ զհեզս 'ի փրկութեան, ապա հերքեալս 'ի բարեմանութեանց



ես ո՞ր հաստատեցայց. իսկ եթէ օրհ-նելի է Աստուած 'ի սուրբս Նորա տի-րապէս, ապա օտարս ես 'ի մաքրու-թեանց ընդ ո՞ւս դասեցայց. իսկ եթէ 'ի կանխերգին մերձ այր եդին յիշա-տակարան ինձ կշտամբութեան, թէ սիրեցէք զՏէր սուրբք Նորա. զի ստու-գութիւն խնդրէ Տէր, և կրկին հա-տուցանէ ամբարտաւանիցն, ապա յո-րո՞ւմ գնդի ես զտայց գերեալս 'ի զաղտ-նեաց զտողին չարեաց: Քանզի զոր օ-րինակ տատանին տագնապաւ տերեւք անկից եղեւին ծառոց շարժեալք 'ի հողմոց ուժգին բախելոց հոսեալք 'ի խոնարհ, այնպէս ջանացաւ ջարդեալ զընթացից իմոց վերարձակութեան քա-ջաբեր ուղէշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշակին: Զոր հաստատեսցես ար-մատացուցեալ վերստին զարձեալ Նոր պտղաբերութեամբ անապականաւ, յան-դաստան կենաց խնամոց քոց կամօքդ ամենազօրզեւ Թագաւոր Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

# ԲԱՆ ԿԲ.

Վերստին յաւելուած ձայնին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ ՚ի վերադրեցելումն սաղմոս նախաձայնական եւ այլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից ։ Քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցուովք ուտիցեմ. եւ կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ՚ի միտ առնուցում ։ Քանզի նզովեմ զիս ինքն ՚ի նոսին եւ ոչ իմանամ, լուացեալ լինիմ եւ ոչ պայծառանամ, արեւու ծագեալ եւ ոչ լուսաւորիմ, մեղր ճաշակեմ եւ ոչ քաղցրանամ, դեղանիւ լնանիմ եւ ոչ բժշկիմ, միշտ կանխեմ ՚ի նոյն եւ դատարկ երեւիմ, հանապազ ձաղիմ եւ ոչ երբէք խրատիմ, զղջիմ դարձեալ եւ ոչ զգաստանամ ։

Բ. Արդարեւ մեղք եւ անօրէնութիւնք իմ յիս, եւ ես մաշիմ ՚ի նոսին, ըստ մարգարէին որ ՚ի դիմաց պարտաւորացն բանի եւ տէրունական առակին հին տկոյն եւ նոր գինւոյն ։ Վասն զի թէ սատակին անօրէնք եւ մեղաւորք ՚ի միասին, ըստ Եսայեայ ձայնին, ապա եւ ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի ։ Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. եւ կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր Տեառն ՚ի վերայ հպարտից եւ ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ, եւ որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի. եւ ամբարիշտն բարձցի յերկրէ, եւ անիրաւք մերժեսցին ՚ի նմանէ ։ Ողբք ինձ կարդացէք առ ձայնն. թէ զոր օրինակ վառի եղէգն ՚ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք ՚ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես ՚ի վերայ նոցա կայծակունս հրոյ, աշխարս պատմեցէք ՚ի բանս աստուածեան վճռին մարգարէին ազդեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ. սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա.

ալն սրտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յարմարեցէք . յորժամ Բարձրեալն ընդ Իսրայէլ և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին . Թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում . աւաղ կարդացէք թշուառացեալքս . յորժամ այլ մարգարէ զնոյն գիցէ . վայ նոցա զի վաղեցին զինէն : Բարբառ փողեցէք 'ի սիրտ մձկեալ նոր աղաղակի . յորժամ տեսանողն Աստուծոյ ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ ընդ ապարառան տանն Յակոբայ . տեսէք արհամարհոտք . զարմացարուք և եղծարուք :

Գ . Այլ գործուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց 'ի սպառուցելոյս յերկնաց մեծիդ . և խնամովք աջոյդ բարեբաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս : Եւ քեզ փառք յերկինս 'ի բարձունս , և 'ի մահկացուաց յերկիր 'ի խոնարհ , 'ի սահմանս բոլոր ազանց և յամենայն յաւիտեանս. ամէն :

---

# ԲԱՆ ԿԳ.

Վերստին յաւելուած հծծին հեծութեան նորին հայցողի առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . ԲԱՐԵՐԱՐ և բազմագութ . մարդասէր և երկայնամիտ . միայն թագաւոր , ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ Տէր ամենայնի , Որդի Աստուծոյ կենդանւոյ . անպատճառագ միշտ իմում կորստեան , որ ամենեւին անխորձ ես 'ի չարեաց , որ ոչ կամիս զմահ մեղաւորի , որ փրկութիւն են 'ի քոց կամաց ընծայեցեալ . որ դարձուցանես զմրրիկ մեղաց 'ի յօդ քաւութեան , որ զհուր բարկութեան յանձրեւ փոխարկես : Որ զյետնեալ զկեանս 'ի բարեաց՝ կրկնակի դոյիւ նահանջեր երկեակ բնութիւն 'ի նոյն արձանի , ոչ խառնես ընդ անապարատն , և ոչ համայն ընդ պատժաւորին : Որ զլուծութիւն ծովուն սահմանաց իբր զկարկառս քարանց կառուցեալ յեղանակեցեր . որ զկարծրանիւթ վէմն անապատին 'ի վէ-

ժամս վտակաց հոսեալ բղխեցեր ։ Որ զՅորդանանու ջրոյն որաշարժ վայրեկութիւն՝ հրաշաւոր անդրադարձութեամբ 'ի յետնորդս հեթանոսաց լըւացումն աւազանին 'ի թխութեանս առաքեցեր ։ Որ զպատուաստեալ պարիսպն Երիքովի , յօրինակ կործանման բանութեանն սատանայի՝ իբր զթեթեւութիւն յարդի ցնդեցեր ․ որ զմնասակար ջուր նորին 'ի յաւակ աղալութեան առ 'ի բարին փոխարկութեան՝ Քանանացւոյն փրկութեան խորհրդական աղւէն համեմեալ անուշեցեր ։ Որ զՄեռային դառնութիւն իբր զմնոց անհաւանութիւն , կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ պիտանի արարեր ։ Որ զառեալն 'ի գետոյն 'ի գծայրութիւն անտահմանդ քո հրամանի անորակիդ գունակութեան՝ 'ի նոր երանգ բաւարոյին մածեր արիւն 'ի ցամաքի ․ Որ զանկենդան ցուպ գաւազանին 'ի կերպառութիւն առ 'ի դքոյդ մերոյս նըկարագրիլ , այլ և յօտարանիցն ընտրութիւն , 'ի տխայն ապաթոյն կերպիւ վիշապի նմանեալ ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսէսի , 'ի ցոյց տեսու-



թեան ապագայիցն հրաշից մարդեղութեանդ քո , Բարձրեալ , եւ քեւ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխադրութեամբ՝ կրկին գուշակեցեր ․ Որ յայսքանեացս շրջագրութիւն բարեխնամապէս տուեալս սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորըստականաց նշանակեցեր , օրհնեալ ամենագութ ։

Բ ․ Որ բուսուցանես յերկրէ գոլորի զմեռեալն յանշնչականէն , որ զանշարժըն իբր զընթացող կուտակարես , որ յանարգ արգանդէ կուշէս քեզ պատկերակիցս , որ տաս պատանեկաց ազօրիս ըմբռշխնելիս , որ յայսս մաքուրս հերս ընծայես , որ զաղալթ սեւութեն փոխից 'ի ձեան կերպարան զարմանագործես , ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հեռաւորական յաղթող ես հզօր , որ փոփոխես զշրթունս բնաւորականս , ըստ բանին Յովբայ , 'ի կամս հաւատարիմս , Որ սասանես զերկիր և զսիւնս նորին 'ի հիմանց , նշանակեալ հաստատածին գոյիւ՝ թէ դու միայն մնաս անկորնչելի ․ որ հոլովես սարերս իբրեւ զանցաւորս , և դարձեալ 'ի նոյնն կայես իբրեւ ըզ-

յարակայս ․ յայտ արարեալ՝ թէ և առ-
մեղաց բազմութիւն դիւրապէս ունել
կամ թողուլ գոյնպէս զօրաւոր իցես ։
Որ զպատուականին անպարտ էութիւն իբր
երաստանաւ իմն զատոխապակես ․ երեւե-
ցուցեալ այժմ իւր կերպիւ ․ թէ զընդու-
թեանս չար դիմեցումն յորժամ և կա-
միս հանդարտ առնիցես ։ Որ զանբար-
բառ բոլորակ լուսնին կարգես ունոյնս
և պատոպրանս ․ լուսաւորեալ զպատ-
ճառն առ աւետիս տեսողաց՝ թէ 'ի
նուազութենէ բարեաց զպարսաւորս
մարմին դու ածես 'ի լրութիւն առաջ-
նաստեղծ հարստութեանն ։ Որ զպատ-
կերս անխօս ատեղաց իբր զգաստս
գոյղն հօտից տրոհես և ժողովես ․ յայս
իմն կենաց առ այս խորհրդաբերեալ ․
քաղցրահայեաց տեսութիւն ․ թէ և ա-
նաղաչաւորաց լեզուաց կարողապէս բա-
ւես ողորմել ։ Որ 'ի մէջ մահու և կե-
նաց շաւիղ վստահութեան ուղղես 'ի
ծովու ․ վկայութիւն եդեալ հաւատոյ ․
թէ և յանկարծահասին վայրի քեւ
պաշտպանիւք անդայթակղելի ․ որ իբր
զջուր կաթսայից 'ի հրոյ եռացեալ ․ որ-
պէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ



կամաց քոց խափուցանես ։ Որ հայիս
յերկիր և տատանես զնա , զի անբա-
նիւն զմտաւորս զգաստացուցանես ․ որ
իբր զակատ մի անձուկ նաւի 'ի վերայ
շարժութեան ալեաց՝ զանբաւ թանձ-
րութիւն գետնոյս գրգռես , որով ծա-
նուցեալ լինիս ամենից հաստուածոց՝
թէ իցես աներկբայելի ․ որ 'ի բան քո
զօրեղ հիմնացեալ ունիս զամենայն ։ Որ
սերմանես զարտաշնչացեալ մարմինս յեր-
կրի , և զնոյն անկորուստ պահեալ կեր-
կին կենդանածնես ․ որ աղականացուս
աւանդեալ՝ աներծս ստանաս ․ որ ընդ-
մահացու նիւթոյս զնշխարդ կենաց խառ-
նես ․ որ հրամանաւ ախտարկութեան 'ի
խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ
կացուցեր զանզարդութիւն ամենից ե-
ղանակաց ։ Քո է զօրութիւն և կարո-
ղութիւն , որ շրջանակես զժամանակս
ամաց հոլովման աւուրց յայլ նմանու-
թիւն բարեպատեհ տեսողութեան ․ որ
կարգաս զանմռունչսն իբրև զկենդա-
նիս ․ որ աղգես միայն , և նոքա ըն-
թանան ․ որ միայն հեռուս անկանես
անճառ արուեստիւ հնարագիտութեան
մէջ և առաւօտ ։ Որ յետ նախակարգ

յօրինուածոյն սաստկաստեղծ լինելու-
թեանն , սպառէր զփառաւորեալն մե-
ծամեծս հրաշակերտից հանդիսից , ըստ
գրոյն երջանկութե կանխահիացն զար-
մացման , այլ իմն գոյացութիւն տանելի
տեսակի անեղծ աշխարհագործութեան
եւս քան զոյն 'ի մարդանալդ քո , ո-
րոյ ոչ գոյ թիւ :

Գ . Որ ահա զխնամն մեր քեզ գրե-
ցեր , որ զարդարութիւնն քո մեզ շը-
նորհեցեր , որ ընդ քեզ կոչեցեր զհաշ-
տութեանն մերում փրկանաւ , որ ոչ
երբէք լքանիս յողորմութենէ , զարձս
զամբարշտեալս 'ի պաշտօն բարի երկիւ-
ղի , զթմբրեալս 'ի զգաստութիւն արթ-
նութեան սրտի , զանմաքուրս 'ի սըր-
բութիւն պայծառութեան կերպարա-
նի , զաղտամաքիծս յանբծութիւն հան-
դարտական սուրբ պատկերի , զընկեա-
լս յողջութիւն , որ 'ի գլորմանց ոչ
խոտորակի , զլացեալս 'ի խնդութիւն զը-
ւարթութեան անտխրելի , զյուսահա-
տեալս 'ի սէր միաւորիչ անքակտելի .
զամաչեցեալս 'ի վստահութիւն հաստա-
տութեան անշարժելի , զխաւարեալս 'ի
լոյս երանութեան անմեկնելի , զմահու



զմեռեալս 'ի կեանս որ ընդ եղծմամբ
ոչ անկանի : Զի փառաւորեսցի անուն
քո , Յիսուս , խոստովանեալ յամենայ-
նի ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ 'ի
բարձունս երկնի և 'ի ստորեւս երկրի
և 'ի բնակիչս նոցա , յաւիտեանս յա-
ւիտենից . ամէն :

---

## ԲԱՆ ԿԳ .

Վերստին յաւելուած ձիրին հեծութեան նորին
հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանին :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . ԵՒ արդ՝ ամենայն բան յամե-
նայնի ուղիղ ես , Աստուած , խրատամբք
գթով , արդարութեամբ կշռես , ճըշ-
մարտութեամբ չափես , օրհնութեամբ
հետեւիս , բարւոք ընթանաս , ստու-
գութիւն սիրես , յստակութիւն կա-
միս , լուսաւորութիւն հաճեսցես ,
փորձիւ յանդիմանես , երկայնմտու-
թեամբ քննես . ոչ ունիս նենգութիւն
և ոչ գոռոզութիւն , այլ ամենեւին

հեզութիւն, համբերութիւն և ո-
ղորմութիւն:

Բ. Արդարացար վերին իմաստու-
թիւն անայլայլական հօրդ հանճարոյ՝
կրկին վկայեալ անդէպ գովեստիւ յոր-
դեգրեցելոյն շնորհօք, ըստ բանին սըր-
բութեան՝ որ Աւետարանաւն կենաց 'ի
քէն ընկալաք. որ ոչ 'ի կոծէն ողբա-
ցի, և ոչ 'ի փողէն կաքաւեցի: Ա-
սացեր անօրինիս՝ թէ մի անօրինիր, և
ես 'ի նոյն չարիս մնդեցայ. մեղաւո-
րիս՝ թէ մի ամբառնար եղջիւր 'ի
բարձունս, և ես ընդդէմն քեզ գոռ-
ծեցի, և ոչ զգացի երբէք զառածեա-
լըս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքա-
յութեան հպարտից ամբարձելոց, խո-
նարհեցուցանել եւ բարձրացուցանել,
ըստ Ամբակումայ, Դաւթի և Զաքա-
րիայ: Օրհնութիւն ինձ կամեցար, ո-
ղորմած, եւ ես անիծեալս՝ մեծ տա-
րագրութեամբ խոտորեցայ յարժանին
ինձ մասն, սիրեցի բարկութիւն և ոչ
բարութիւն, շօշափեցի ըստ կուրն
զխաւար և ոչ զլոյս, կենդանի ձայնիդ
քո. գթած, ապաւանեմ դատաստա-
նեցի: Զորդն անմահ ասացեր բանիւ



նայեայ, և զհուրն անշէջ և զկշտամ-
բութիւնն անխափան և զտեղին յա-
ւիտենից և զօրինակ նմին սոսկալի, և
ես ոչ իմացայ ըստ սաղմոսողին և ոչ
մտաւածեցի, այլ 'ի մեայլ մտաւորական
կուրութեան գնացի: Ցուցեր մարգա-
րէիւն, թէ զօրհնութիւն ատեցի որ
զօրէնս գնէ, և ես համառօտել զնոյն
մութացայ: Արձան հոգեւոր վիմի
գրեալ մատամբ քո, տէր Յիսուս Քրիս-
տոս, զԴաւիթ իւրովքն բանիւք կանգ-
նեցեր, առելովն ինքեան ընտրութեամբն
առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յա-
մենայն ժամ յաւիտեան. անդրադար-
ձութեամբ բանին միջնորդեալ զկրկին
հաստատութիւնն, թէ և յաւիտեանս
յաւիտենից. ընդ որս և զտովին նմանիս
մասին՝ պարծանաց առ իմ խրախոյս,
և ոչ զկծեցայ. ճեպեցայ 'ի տօնս Բա-
հաղու և ոչ Աստուծոյ. 'ի յերկոսս
հետս երկմտութեան կրկին կաղացի
կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն
հեղինե: Ընկիմ զՄովսէս իւրովքն օ-
րինակօք եկեալ 'ի մեռելոց, և զտասն
մարգարէիցն գրեալ 'ի յոգի, և զմի-
տեանս Առաքելոյն ընդ մտացս մասն

յեռեալ․ և զՏէրդ հաստատեալ կտակաւն աւետեաց յարուցեալ 'ի Թաղմանէ անթիւ Ննջեցելովք, և անհաւատացոյն քան զՆնգեոսին եղբայրակցութիւնս այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական․ նմանեալ զգայականացն մասանց անողորմելոյն յղփացելոյ․ մնացի իբրև զօալ դարբնոց անսատ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է Բելիարայ, և ոչ ապաշխարեցի․

Գ․ Այլ աղբեր վերստին առ այն կերպարան լինել կրկին ողորմութիւն բարի․ աչաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անխախտ թագաւոր, զօրութեամբ պանծալի Խաչիդ խորհրդոյ, 'ի կործանեալս մեղօք անբեր անդաստան երիկամանցս յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան․ զի առեալ նպաստ օժանդակութեան 'ի գթութենէ կամաց Ամենակալիդ․ որոտայցէ բղխեսցէ հոգիս․ ընծայեալ աչաց վշտացնեցելոյս փոխս արտասուաց արքունանողաց իմն 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն, և քեզ 'ի հաճութիւն ըն-



դունելութեան, ամենապարգեւ Տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից․ ամէն։

---

## ԲԱՆ ԿԵ․

Վերստին յաւելուած նոյին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ․

Ա․ Ես արդ՝ ես նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, դեւս անհնազանդից, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, ատոյնկեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարերարութեան, աչա զանձառելին իմոյ ճառեցի, զգաղտնականսն խայտառակեցի, զգաղտնիսն հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, զթաքուցեալսն ցուցի, զամփոփեալսն տարածեցի, զգաղտնութեանս մաղձ ժայթքեցի, զգործակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վիրիս քամեցի, զխորս սպառեալ իմոյ ծանուցի․

զպատրուակն կեղծեաց առ ի , զքող ազնուութեանն մերացուցի , զամօթալեացն զգեստ մերկացուցի , զզարշելին յանդիմանեցի , զմտուրն մաքուր փոխեցի , զպալարս հոգւոյս խածուածոց քաջանայապետին Քրիստոսի բացի : Ցանձինս վտանգ ոչ անխայեցի , մարմնոյս սիրոյ ոչ աշառեցի , զարմատն հնութեան տեսիլ արարի , բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ , զմխաքանութեանն կապ խզեցի , զդղեակ սրտիս քանդեցի , ընդ կամաց սրտիս իբր ընդ դարանակալի մաքառ կռուեցայ , զպահեստ անյայտից արտաքս հանի , զմթերիցն զանձ՝ մեծին գուշակեցի , զգաղափարն դատաւորին հանդէպ կացուցի , զապառնեացն զխորձ այժմէն խոկգոր , զգաղտնի կործանողին կորեցի , զուխտն խաբողին ցրուեցի , զկատարած մարտին յաղթութեան 'ի քեզ տէր Յիսուս ապաստանեցի , զպատերազմին խումբ գրգռեցի , զդիմադրութիւն դիմեցմանն՝ բանիւ Աստուծոյ յուսացայ , զնաւարաւորացն փաղանգ լուսեղինացն զինուց սպրեցի :

Բ . Եւ արդ՝ ստեղծիչդ ամենայն ե-



զելոյ Քրիստոս որդի բարձրելոյդ Աստուծոյ , զասաէն գովելոյ յայտնիսեաց բանից և զհարուածելոյ յայտքանեաց գանից մի՛ կշտամբեցես կրկնակի դատել 'ի մեծի աւուրն : Ահա , հզօր անքնին անճառ բարերար , թագաւոր անման , տու այս կերպ պատկառանաց ինքնապարսաւս խոնարհութեան , որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յայլ դատեցի , լից նուագօք այր մտենի անարգանօք ամօթոյ ըղդէմն սատանայի , և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո : Մխացի կնիքդ լուսոյ 'ի գեղ տեսակիս , ամրութեանդ նշան հաստատեցի 'ի տիպ գիտակիս , երեւակ կենացդ փայտի ձեւացի 'ի պատկեր պատկս , արուեստդ հրաշից 'ի ճակատիս շուք նշանակեցի : Մի՛ պղծղեցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ , մի՛ բարձցի 'ի տեսանելեացս բբաց ճաճանչդ օրհնութեան , մի՛ մերժեցի 'ի գլխոյս առհաւատչեայդ վստահութեան , մի՛ սասանեցի 'ի բերանոյս ամրութեան սեմոց՝ փառք տեառնագրութեանդ : Պահպանակդ երկրպագելի 'ի զգայարան

ոտից միայնի , շողից նիւթոց խնկոց
գոյութեան քառաթեւիդ նշոյլ աղ-
դեացն , ձեռնին կարկառման փրկչիդ
իշխանութիւն օժանդակեացն , մատուց-
ման հաստատեծոյ մատինս խորհրդա-
րանդ համարձակութեան բարեգործեա-
ցն ։ Ի մեկնելս խնամ մի հեռացի
որբութիւնդ , մի լքցի պատիւս 'ի պատ-
տիլն պարտաւորիս , մի մերժեսցի 'ի
յոգւոյս անդասաձանելիդ փրկութիւն,
մի ընկճեսցին գիծք կենդանատուիդ 'ի քո
դրեցեալս շնչոյ , մի եղծցի նկարումն
արեան զօրութեան 'ի տիրատիպ խորա-
նէս , ընդ իս բնակեցէ յիմում գերեզ-
մանին . 'ի ծորել մարմնոյս թշուառի՝
ծնումն շնորհիդ առ իս պահեսցի , 'ի
նորոգութեանն աւուր սովառ հանդի-
պեցայց փառաց փեսայիդ , 'ի քոյդ ա-
տի ծանուցայց , քոյովդ վստահօք պըճ-
նեցայց , երախտեօք մեծիդ յարգեցայց ,
աւաղանին զգեստիւ պերճացայց՝ քա-
ւեալ ողորմութեամբ ։ Մատո , բարե-
գութ , զկերպարկուդ անապականու-
թեան տաժանեցեալս մեղօք մարմնոյս .
մի յարիցէ ընդ քոյս՝ բանսարկուին ,
հնացուցիչ հոգւոյս վասնեայ . խաւա-



բարենակացն պատիւք մի ընդ իս վերե-
րեւեսցին ։ Օրհնեսցի անուամբ քո , զը-
թած , վիհն իմ հաստատեան . ողորմու-
թեամբ քո լցցի գուբն իմ գերութեան .
ընդարձակեսցի քեւ ինձ տեղին թը-
շուառութեան , անդորր եղիցի , խնա-
մող , ինձ բանտն բարկութեան , ո-
նուսցէ զիս առ յաձումն արգանդին մը-
թութեան , յուսով քո շտեմարանեսցէ
զիս յորին այն անձկութեան , ձեռամբ
քո պահեսցայց 'ի խշտին տարաժա-
թեան , թեւօք քո ընկալայց 'ի տունն
տագնապի , դու , գոլեալ , ընդ իս 'ի
մենեակին վտանգի ։ Աւաղս ինձ տառա-
նօք 'ի թիւս հաղարաց , զի երբեմն էի
վերնային և այժմ անդնդային , երբեմն
տօնելի և այժմ աշխարհելի ։

Գ . Այլ և արդ՝ կրկին դու օրհնեալ
'ի բոլորից գոյից յերկնայնոց և 'ի սոր-
նայնոց և 'ի սանդարամետականաց մե-
ռելոց , անպարտական այս տարագ-
րութեան ։ Ես փախեցայ , ես օտարա-
ցայ , ես յիմարեցայ , պղտորեցայ և խա-
ւան գտայ . ես լքայ , կամեցայ և կոր-
ծանեցայ . ես մոլորեցայ , ես մաշե-
ցայ , ես մերժեցայ , ես խորթացայ ,

գերեցայ և գայթակղեցայ . ես նզովեցայ , ես թշուառացայ , սրբեցայ և վատթարացայ . ես ընկլուզայ , ես խաւարեցայ . ես անօրինեցայ , ես ապականեցայ , մահացայ և 'ի սպառ եղծայ . չէք քո առ այս ինչ մասն չարի , որ ես միայն անփոփոխ բարի : Արդ կամք քո յիս , և խաւարն ինձ ճառագայթ , ճրագ յուսոյ քո անդ . և գիշերն վաղորդայն . մարմնոյ քո հաղորդել , և յամօթոյն կարծեաց ապրեալ : Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կենդանի վասն անփոփոխելի վախճանին , դարձեալ զի ոչ վարկանիմ կորուսեալ վասն աներկեւան նորոգմանն : Որ և փակեալ համարիմ ինձ զելս կենացդ վասն անքաւելեացն պարտեաց , դարձեալ՝ բացեալ ինձ ընդդրախան՝ վասն փրկութեանն աւետեաց . քանզի ոչ այնքան վհատութեանն գայժտագնապէ , որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ : Արդ տուր , Տէր , տուր ողորմութիւն , առ ամենայն ձայն գոհաբանել , օրհնել յաւիտեանս . ամէն :

---

# ԲԱՆ ԿԶ .

Վերստին յաւելուած իւրին հետեւութեան նորին հանգոյն առ նոյն ազերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա . Արդ որ ոք և առցէ զայս գեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտական պաղատել սովաւ , եթէ 'ի մեղաւորաց իցէ մատուցեալն , եղէց և ես իմովս բանիւ կցորդեալ նմա . իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն , գոյց և ես ասլինք ընդ նմին ողորմեալ նովաւ : Ապա թէ երջանկացի այնպիսին նոքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւնն , և ես ինձէն վկայեմ այսմիկ : Բայց յիշեսցէ նա զՍողոմն եւ զքանս նորին հեգեշունչս , թէ ո՞վ ոք վստահասցի սիրտ սուրբ ունել . և կամ ո՞վ պարծեսցի մաքուր լինել 'ի մեղաց . և զի ոչ յարեաւ մարդ երկրածին ազատեալ 'ի պատասխանեաց . և ոչ ընտիր ինքնարչաւ վաղիւքն , և ոչ թէեւ 'ի թափիչս ամբարձման թեւոց բերկցի . առ որ գգոյշ լինիցին կրկին երկուցեալ 'ի

վիմին իսկ հաստատութեան ասեալ 'ի Պօղոսէ, գուցէ անկեալ 'ի յերկիր սահմանողի այսմ կանոնի խրատագասի կըշռեալ նմանեացի: Այլ առցէ զայս կըշտամբութիւն մարդոյն՝ նիւթ պտակաց, առ 'ի չիջանել անկնդրողաբար յանձնահաւան բարձրութենէ. և պատժապարտն՝ առիթ ազատութեան, որով ամբարձեալ 'ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեսցի յաւետ: Իսկ ինձ եղիցի պատգամ այս բանի արձան փորագրեալ ամենեւին անեղծանելի, որ փոխանակ խոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակէ, լցի և ոսկերացս քակտեցելոց 'ի հողապատեան չիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խօսափանել, հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ բարբառով ի-մին անագդելեաւ ծածկառեւք զայն պաղատել:

Բ. Տէր գթութեանց, աղբիւր ողորմութեանց, պարգեւք բարութեանց, Որդի Բարձրելոյ տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա, խնայեա, մարդասիրեա, նայեա 'ի վտանգս, ականջեա 'ի բեկու-



թիւնս, խոնարհեաց 'ի թշուառութիւնս, տես 'ի տարակոյս անձեռնհաս տագնապիս, հասիր հաղորդել կորըստականս կարեաց: Շօշափեա բժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւնս. ունկն մատուսցես քաղցրութեամբ ողորմագին հեծութեանս. լուր 'ի խորոյն անդնդոց մահուն գերեզմանի անմռնչելի հառաչմանս. մինչ յականջս ամենալսիր լսելեացդ ձայն պաղատանաց վտանգեալ անգամիցս: Եւ վասն զի գրաւական կենդանութեանս անապական է, անփոփոխ լցի և ոկրոյդ քո գթութիւն, կցորդ լեր հեզութեամբ տաժանելոյս ախտութեան: Մեռեալ պատկերիս մի՛ ոխս պահեսցես, ընդ անշունչ կերպարանիս մի՛ 'ի դատ քըննութեան մտցես, մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես, ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս մի՛ ուժգնութեամբ մարտիցես, վճռու կոշկոճելոյս մի՛ բարկութիւն կրկնեսցես, կործանեալ շինուածոյս մի՛ պատուհաս մատուսցես, շանս ապանելոյ մի՛ քարինս արձակեսցես, լուսոյ ջախջախելոյ մի՛ սաստիկ որոտասցես, հողոյս անպատուելոյ մի՛ երբ

ամբարհաւաճի ուժգին մռնչեցես ։ Զմոխիրս մերժելի մի 'ի դատ ընտրութեան կոչեցես, զփոշիս ցնդելի մի իբր զ.քո զհմամարդ գոյցես, զտիղմ տաղտկալի մի իբր զոսկի փարկանիցիս, զպարշութիւնս անգոսնելի մի իբր ըղբանամարտիկ վանեցես, զնէթս 'ի բաց ընկենլի մի նիւթ գեհեննին պահեցես, զայրքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս մի վերստին յանդիմանեցես ։

Գ. Այս ամենայնթշուառ և խուարոդէլ չիմին են ահա սրտաբեկ եւ յոգնաթախիծ արգահատութիւք. հաստատեսցէ օրհնեալդ.քո բան անփոփոխական լինել, ըստ որոյ արգահատելոյս, քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ. որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս ։ Արդ՝ աղաչեմ զքեզ, տէր Յիսուս Քրիստոս, հայեաց յիս ողորմութեամբ, և մի թողացուցես լինել մնակից ինձ Բելիարայ. և զմահաղեկոյց տապանին այգուցն անկենդանաւորն թնդման թշուառն թաղման՝ աղաղակ



ձայնի հառաչման լսելոց քեզ հաշտեցուցչաց՝ յարդեսցես լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր, մարդասէր, և հոգւոց քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին. Մնասցէն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ զանձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցէն, օձաւք անկանելի զենուց ինձ պատկանեցին, ընդ իս յարակայեալ քարինք պարոյց հոգեւոր հընարից՝ զչարին հալածել զգունդ. Մարմին որ առ իս՝ քեւ, Տէր, վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի վերայ իմ պատերազմել, տեսեալ զ.քաղաքն ունայն 'ի զօրաց և զպղտղականացն գործի ապաձայն, զքեզ Տէր ունիմ մշտնջենաւոր և աններհելի պահապան ։

Դ. Զի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, և անշաւիղ արգելան ինձ պատրաստեսցէ, առաքեմ զաղօթսն տէրունական նմին զան մահու. եթէ 'ի փայր զիս հնարի կործանել, զծնրադրութիւն արարչին. եթէ 'ի մոխիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեսացն Աստուծոյ

'ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ. եթէ վաստակս ինձ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն զանգեալ փրկչին աշխարհի զնա խուեսցէ. եթէ յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենաստեղծին զնա արձակեսցէ. եթէ յուրացութիւն պարգեւաց լուսոյն բանադատեսցէ, հայհոյութեանն համբերութիւն յաստուածամարտին՝ զնոսին ընդ նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից դաղմնաձիգ զինուց ինձ արձակեսցէ, կարթն հնարից աղեղան փառաց հօրն կապարճից նմին պատահեսցէ. Եթէ քաղել լուսոյ խաւարականի մտանել ընդ աչս անամօթեսցի, կափուղն գլխոյն ձորձով պատեցեալ լմանն ամենից զնա տանջեսցէ. եթէ մոլեսցի զխստահութիւն ձեռնիս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ գայացուցչին զնա շարշարեալ ըմբերանեսցէ. եթէ ձաղանօք այպանման զիս կատակեսցէ, տանելն ծաղու ամենազօրին զնա հեգնեսցէ. Եթէ բժժանօք ինչ յուռթից կախարդել խորամանկեսցէ, ապտակն դիմաց հզօրին Աստուծոյ զնա սաստկապէս ամաչեցուսցէ.



եթէ 'ի մասոս գիշերային մթութեան խաւարաւ խորհութեան լինել մարտիցէ, 'ի ճառագայթից լուսոյ երեսան քո. Տէր, խայտառակեսցի. եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեանցն արեգակնակէզ վասնիչ խորշակին զնա 'ի յարմատոց խախտել կործիցէ, 'ի զօրութենէ նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի: Եթէ 'ի փչմանն չորհէ ունայն զնա առնել հնարաւորեսցի, թուքն զոր ընկալաւ Տէրն Քրովբէից, ընդ մեղաւորիս զնա պատկառեցուսցէ. Եթէ ժանիկ խածողք ինձ ցուցանիցէ, լռութիւն երկնաւորին բերանոյ զնա պապանձեցուսցէ. եթէ խածմունս ազուականս հոգւոյս աղդեսցէ. բեւեռւացն հարմունք հաստոլին բնաւից ըզնա կսկծեցուսցէ: Եթէ յընթացս անիրաւութեանց խորհրդոց զիս մոլորեցուսցէ, սեւեռք ոտից անհասանելույն զնա կապեսցէ. եթէ հրապոյրս ինձ գժնեայս արբուսցէ, քացախն ընդ լեղւոյն խառնեալ 'ի յարբումն բարերարին՝ զնա դառնացուսցէ. Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս գոցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ 'ի

սպառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել
ընդդէմ հնազանդութեան Տեառն հը-
րամանի զանձն իմ ուսուսցէ, բերումն
պարանոցի անսահմանելոյն զնա կոր-
ծանեսցէ. եթէ 'ի մահ սատակման զիս
վաճառել վիրաւորեսցէ, ստուար անգ-
գինու մխելոյն 'ի կող ստեղծչին Ադա-
մայ զնա հերձեսցէ. եթէ երկամիք
վշտաց գժոխականաց զիս պարպակես-
ցէ, պատանացն կտաւ էից ունողին
զնա ըմբռնեսցէ. եթէ յատակս մահու
հայել զիս խարդախեսցէ. բնակել կեն-
դանւոյն 'ի վէմն մահու զնա մեռուսցէ.
եթէ խնդասցէ ընդ մարդկօրէնս իմ
գայթակղութիւն. կրկին կորասցի կար-
կամեալ կամաւ, յորժամ անմահն Աս-
տուած յարուցեալ փառօք ընդ իւր
նորոգեաց զբնաւ մահացեալս. Եթէ
ընդ լուծանել փոքր կապանացն հաղա-
րամէից բերկրեսցի, գողասցի կրկնեալ
վերստին խոկոյն ընդ վերջին շղթայս
անզերծ տագնապին ըմբռնման սաստ-
կագունի յանվախճան տանջանարանին:
Եթէ ընդ առաջին հարուածն դժուա-
րասցի, կոյժ կորստեան յետնում սա-
տակմանն անշէջ գեհեննին, որ պատ-



րաստեալն է նորա և նորին հրեշտա-
կաց, նմա պատմեսցի, որ յաւուրն
մեծի մեծին ատենի:

Ե. Իսկ ինձ ապաւինելոյս 'ի քեզ
Տէր Յիսուս, միայն Թագաւոր ինքնա-
կալ զօրեղ, արարիչ երկնի և երկրի և
ամենայն զարդուն որ 'ի նմա, որ գա-
լստեանդ քոյ ակն ունիմ և ողորմու-
թեան փրկչիդ սպասեալ յուսամ, 'ի
յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ
հետս համբուրեմ, զպարտութիւնս խոս-
տովանիմ և զմեղանս հրապարակեմ,
կշտամբանաց քարամբք կոծիմ և հառա-
չանօք սրտիս տապանամ, 'ի խէթ խղճ-
ձիս խոցոտիմ և բոցով շնչոյս ձենձե-
րիմ, աղի ցօղով արտասուացս այրիմ և
երիկամանցս ազդմամբ կիզանիմ, յուսա-
կտուր օդով ցամաքիմ և դառնաշունչ
հողմով շիջանիմ, Թախանձանաց բա-
նիւս երերիմ և կոծկոծագին հեծու-
թեամբ դողամ, տաժանելի կրիւք տը-
ւայտիմ և տագնապաւ հոգւոյս տառա-
նիմ, 'ի կոծ մրրկաց ծփիմ և 'ի փախ-
մանէ ալեաց սասանիմ, 'ի լռութենէ
համբաւոյն սարսեմ և յիշատակաւ ա-
հին կորնչիմ, կերպարանօք ատենին հա-

լիմ՚ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ։ Լուր բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ, քաղցրութիւն անճառ, որ բարի և տիւ տենչալի։ Քանզի կարող ես յամենայնի և տուր ես շնորհս իմոյ փրկութեան մեծի. և քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փառք յաւիտեանս. ամէն։

---

# ԲԱՆ ԿԷ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. **Բ**ԱՅՑ քանզի յոյժ արդար է բան իրաւանցն Քրիստոսի Աստուծոյ առ ի՛ քան զնախահայրն չարեաց սատանայ. զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ. զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի ընկեցեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանս բոլոր էութիւն կերպին խոկութեան մեծին Աստուծոյ



միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ. Նորա ոչ են շնորհեալ ՚ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատութեամբ. վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ՝ հանապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ ՚ի փրկութեանն. նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն. նա հերքեալ ՚ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոստացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն կըրրեաց զառհաւատչեայն, և զիմն առանց խղեղս յաւաւելեաց. զնա յերամակս խողիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կործանց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա ստուերոց նմանեցոյց, և զիս իւրոյն անուամբ կնքեաց.

Բ. Իսկ ես զերախտիս Աստուծոյ լքի զայսքաննեաց բարեաց պարտողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց. ահա անարժանս բարեաց, անձիրս երախտեաց, անընդունակս օխոյ, ատաւամբք մեղաց ձգեալս, յերկիկամուտս խորոց լուցեալս.

քանցեալ ծառս արմատենեաց, գինիս յեղաշրջեալ, ցորեանս հեղձեղեալ, մուրհակս ջնջեալ, վճիռս պատառեալ, կնիքըս այլակերպեալ, նմանութիւնս փոխեալ, արկանելիքս կիզեալ, ընդունակըս կործանեալ, նաւս ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուականս սուզեալ, տունկս գոսացեալ, նկարս խորտակեալ, փայտս ամենեւին փըտեալ, մանրագործս աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խախտեալ, բոյսըս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ 'ի գուեհս աղբեւաց, կաթնս հասեալ 'ի կոյտս մոխրոյ, այրս մահու 'ի յարեանց գնդից։ Քանզի միշտ խրատեալ ընդ Երուսաղեմի առակաւ Բաբելոնի 'ի մարգարէիցն ձայնից անձն իմ՝ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ, որ աստէն անգոսնեալ եմ և անդէն խայտառակեալ, աստ գովեալ և անդ կշտամբեալ, աստ ձաղեալ և անդ նախատեալ, աստ թըշնամանեալ և անդ յանդիմանեալ, աստուստ ապշեալ և անդանօր լքեալ, աստ հեծութիւն և անդ հառաչանք, աստ կարծիս և անդ կատարած, աստ խէթ և անդ հատուցումն, աստ արկածք և



անդ համդէպք դատաստանի, ուր ոչ է բան խրատուց և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ ելք ժամանակաց, ոչ ուղիք յուսոյ և ոչ գիւտք ողորմութեանց, ոչ աջ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան։

Գ. Այլ դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն, դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութիւն, քեւ բժշկութիւն. քո ողորմութիւն, միայն հզօր, կենդանի, անճառ, Տէր Յիսուս Քրիստոս, բարերար Աստուած. օրհնեալ, օրհնեալ և դարձեալ օրհնեալ՝ ընդ Հօրդ քո Սրբոյ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի խնկութեան մեծիդ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

## ԲԱՆ ԿԶ.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ՝ 'ի յիշատակ ահարկութեան վերագրեցելոյդ՝ որք յաստուա-

Ծուլ են ոտաւնալք իմ ժամանեցեալք , զիա՞րդ դադարեցայց 'ի նորոգ ողբերգութեանց՝ , և կամ ո՞րպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս : Զի եթէ զչորեքվտակեան առաջին գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ՝ որ զըդեմ և զերկիր առհասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ամենայնի , և զզեխումն ելից իւրեանց առ աչս իմ եդեալ , զանձինս մեղաց տառապութեան զլոց զովացուցանել ոչ բաւականացին : Եւ կամ մարգարէին որբոյ ըղձականութիւն կրկին ինձ լցի գլուխս ջուրց բազմութիւն , և ծրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք , զբեկման ոսկոցս չափել զկնանց ոչ ձեռնարկեցին . և ոչ եղերական ջայլից համօրէն բանաւորից կանանց լալականաց 'ի սիրտ և յոգի վիշաւորելոց՝ զաղէտ վտանգիս 'ի յերդ արկանել և կամ 'ի նուագս ձայնից քերել :

Բ . Իմ է օրն լինելութեան նզովեալ , և ոչ Յոբայ կամ Երեմիայ . քանզի տօնելի է օրն նոցա , զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ , և ոչ տարագրելի .



ապա ուրեմն զիս նկատեալ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ մխոյ մանաւոր բարւոյ , զհանգիստումն աւուրըն անխծին՝ յորում ես գտայ կորուտեան որդիս և մահու դրացիս , մշակս մեղաց և որբանեակս անօրէնութեանց . Որ ոչ կոչի յուխտին կենաց՝ զոր դու ասհմանեցեր , Աստուած բարերար . ոչ գնայի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ . ոչ վստահեցի 'ի հունձս արմտեայն , որով 'ի մուտս ձեռանըն աւուրցն խաւարութեան կերակրել պատրաստեցայց . ոչ կառուցի ամրութիւն ումեք և ոչ ձեղուն յարկաց ձգեցի , որով 'ի շնչմանէ մրկաց օդոց պահեցայց . ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական , որով ըղտագնապ աւուրն իմ բժշկեցից . ոչ հանդերձաւորեցի քեզ ազերս աղօթից , որով առաջի քո կալ համարձակեցայց . ոչ կազմեցի թռչակ փրկութեան վարուց մաքրութեան , որ զնորոգութիւն ինձ երաշխաւորէ . ոչ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մանչին , զի 'ի դատաւորին ձեռանէ առաջն իսկ փրծայց . ոչ լրութեամբ

ձեռին օրհնութեան մատենայ յան-
գիման , որով օրէնսդրին մանաւկից
գտայց որբեցեալ ։ Ոչ գիմաց եռու-
զգուշութիւն եւ ոչ թիկանց պատըս-
պարութիւն , ոչ աջոյս իմ զինուո-
րութիւն եւ ոչ ահեկիս պարածածկու-
թիւն , որով 'ի պատերազմիս փառանդէ
զերծայց · զերիվարս ոչ զգեցուցի զրա-
հիւք , եւ ոչ զմարտիկս սպառազինու-
թեամբ , որով զճակատն յարդարեցից ։
Զկամնուխն ոչ կապուեցի պտուղ , եւ ան-
տզանելին ոչ ժամանեցի , եւ ահա տա-
րակուսիմ ունայն 'ի բարեաց · մաք-
րութեան ծաղիկ ոչ ունիմ եւ ոչ իւղ
ողորմութեան , եւ գիշերոյն մռայլ՝ ան-
նշմլ · 'ի նիրհումն մահու ննջեալ եմ ,
եւ տագնապ կոչողին փողոյ ստիպէ ·
զզարդ հարսանեացն կրկին մերկացայ ,
եւ զձէթ վարուցն վերստին լքի , եւ
դուռն մտին հարսանեացն առաւել փակի ։

Գ · Եւ արդ՝ զի՞նչ առից մխիթա-
րութիւն այսքաննեաց վնասուց , եւ կամ
ընդ ո՞րքաննեաց տարակուսանաց խաւա-
րի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառ-
նեցից , եւ կամ ո՞ւր արդեօք զգարշապարս
ոտին կառուցից , եւ կամ յո՞ր վստահու-



թիւն , զաչս իմ յառեցից , եւ զի՞նչ անդոր-
րութիւն ծփանաց նկատեցից , եւ կամ
յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն համ-
բարձից · Զի եթէ 'ի ձեղուն բարձրու-
թեան երկնի , անտի անձրեւեաց հու-
րըն Սոդոմայ , որպէս ասացեալ է · իսկ
եթէ յատակ խորութեան երկրի · սա
եբաց զկոկորդն ըմբռնողական եւ եկուլ
զԴադան բանակօքն Աբիրոնի ։ Եթէ
յանդգնեցայց փախչել յունողէն , դու-
ցէ կայցի զիս վիշապն ահագին ։ Եթէ
ընդ գաղտնս ինչ թափառեցայց , արա-
գունք են խնդրել զվրէժ ատացողին ա-
ռաւել առ իս՝ քան երբեմն զնզլսէին
առ մատաղ մանկունս բեթեղացիս քըր-
մոդիս ։ Եթէ յամենատարած օդոյս
պարզութիւն , այն եղեւ եգիպտաց-
ւոցն խաւար շօշափելի ։ Եթէ 'ի թըռ-
չունս բարձանց , նոքա են կոչեցեալք
'ի սպանդն զոհին Բոսորայ գիական-
ցըն · Եթէ 'ի տկարն խիղախեցից ,
վասնիմ 'ի պիծականացն , եւ զի՞ պի-
տոյ են ինձ առիւծունք ։ Եթէ յարջոցն
պատառողաց ապրեցայց , մժխիքն ա-
րեան ծարաւիք ինձ պատահեսցեն ։ Ե-
թէ յանհոգս ուրեք նստիցիմ , մժղուկ-

քըն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման զինեւ մաղեցին ։ Եթէ յեղջերէ միեղջերուոյ փախնուցում զերծեալ. նկուն ճիրանք աղխաղխող մանցն մարմքողաց զիս կեղեքեցեն ։ Եթէ 'ի սեններ շունմարմնոց խոռշից զօղեալ ամփոփեցիմ , տաղտկատեսակ գարշուեթիւն գորտոցն՝ մեղաց օրինակքն զիս զազրացուցեն ։ Եթէ 'ի փայրս ինչ անգասոտանաց կացեալ զետեղեցայց , շարք շանաճանճացն տարմից զինեւ պատեւցեն ։ Թողում ասել զխառնիճն եւ ըղջրեակն զզօրն զօրաւոր ընդ թունաւորն թրթուր եւ ընդ անկենդանական երեւելն , հանդերձ ջրակործ կարկուըն եւ ապականագործ եղեմամբն , որ առ աչաց տեսիլ արարչեք եւ 'նուաստագոյնք , բայց 'ի յանմարկելն Աստուծոյ յաւէտ զաւօղաբար ուժգնութեամբ հարին հանին վանեցին զհըպարտ ամբարհաւաճութիւն փարաւոնի բռնութեանն բուռն զաղանին՝ յաղթող վիճակաւ . որ են կերպարանք թաքուցելոյն կրից ընկողաց անձնականացն աներեւութից եգեպտացւոյն անօրէնութեանց՝ յորի եւ 'ի մահ տան-



ջողաց՝ գաղտնի մնատողաց ։

Դ. Ա.ԼԴու . ամենազօր արարիչ բնաւից Տէրդ բոլորից , 'ի յառեյան հանդիսացիր հերքել զնոսա . եւ ինձ ողորմեա կրկին գթութեամբ ձեռն մատուցեալ փրկութեան տարախուսեցեալ կոչկոճեալ վարանեալ 'ի մահ պարտելոյս ։ Զի դու միայն ճանաչիս Աստուած փառաւորեալ միշտ ընդ Հօր Հոգւովդ Սրբով յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

## ԲԱՆ ԿԹ.

Վ. Երաժին յաւուրեալ հրեին հրեշտակութեան Նորին հանդերձ առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԵՒ արդ՝ վասն զի 'ի ձեռն մեծիդ եւ ամենաշնոր արուեստաւորիխմ երանութեան Ցեառն եւ Աստուծոյ՝ իբր 'ի քրայս ընտրութեան փաւթոյ քոյ սիրոյ հանապազ եռամ եւ

ոչ երբէք պարզիմ, միշտ խառնիմ զու-
գիղ և ոչ եւս միանամ, ահա զուր
արծաթագործդ երկնաւոր իմ ճարտա-
րապետ, 'ի նմանիս վաստակեալ առ-
խս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի
առակի, և չարութիւնս իմ ոչ հալե-
ցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր
զխելագար գիւաքախ իմն ողորմելի
յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմ
զպարտիս անձեցուցանել, քան հաշտու-
թեան հնարս ինձ այսու կազմել։ Եւ
զի մի՛ անընդել գիպուած և անկիրթ
պատահումն և անհաւասար հանդի-
պումն՝ պատրաստութիւնք հանդերձե-
լոց տանջանարանացն ինձ երեւեսցին.
ամենեւին անմոռաց պահեայց սաստին
'ի յիմում մարմնի նշխար մնացուածոց
նախնումն անիծիցն, զոր 'ի փոքուէ
տարրէ անարգէ զմեծն է ուսանել։

Բ. Քանզի խաղաղն ինքնաբերական
գիւտք ոլովայնի՝ բոտոսք ճապուկք
շարժողականք եւ ազգի ազգիք. որ-
գունք աղեաց գաղտնակուլք, խաղա-
ւարտք հրակայծակք և ըիծք բոցա-
կիծք և անիծք անկերպաւորք և երա-
մակք ամանք քրտնածինք ղողրաթոր-



մէք կսկծեցուցիչք և մարմաջողականք։
Ասպատակք այլոց վայրենեաց, ըստ
նմանութեան գիւաց գիշերամարտից և
մեկնաղէն բոցքարոս գնդից խաւարա-
սիրաց, և գաղանութեամբ քանասար
գայլոց Արաբացւոց, կորակոր գնացիւ-
քըն՝ աղջնաթոյր գունովն, կրկնապա-
րոյր կուածագ կոչաւն, որ զօրէն ունի
խայթոցաց կարձի, իբր գժնիկ փշովք
խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խո-
նաւութիւն, եւ յանկողինս մահճաց
հանգստեանն վաստակս կրից ցուցանեն։
Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատու-
ցանել զհատուցումն նոցա նոցին, վաղ-
վաղակի զգան զինաս փոխանցին՝ զոր
ազդեն մարդոյն. և անդէն իսկոյն ըեր-
կամարմին փոքր հատակաւն՝ իբր թեւօք
իմն թռիչս արձակեն. և ըստ մարախի
ձեւոյ սոստոսեալ այսր անդր տարա-
բերին. և ըստ բազմապատիկ նենգու-
թեան բարոյից գաւող աղուեսուց՝ խո-
րամանկեալ խուսափեն 'ի պատուածս
բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապ-
րեսցին։ Եւ այնքան չքոտի և անքատ
անձամբքն ոչ միայն զռամիկսն և ըղ-
խանիձագանձս, այլ և զթագաւորս

հզօրս և անհագինս փախուցանեն, հանեն , տարագրեն 'ի գաւառաց յարկի ապարանիցն բարձրութեան , և կամ 'ի բացի բնակեցուցանեն . քաջք արանց արեաց , որք իշխեցին ամբոխից եւ արեցին ժողովրդոց և առին զքաղաքս ազգաց , զպարտութիւն իւրեանց զօրաւոր ձեռին ինքեանք վկայեն , թէ քանզի ոչ կարացաք 'ի գլուխ հարկանել վեհիցն բանութեան , վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի :

Գ. Եւ զի՞նչ է ինձ գիրքունց եւ զանկածից ծաղրականաց սմանց գոյութեանց 'ի կեր արկանել , որք զօրեղ և անհերքելի ջատագովք են աստուածութեանն՝ յիշատակել ինձ զհանդերձեալոյն , որք 'ի մարմնոյս անօրինելոյ ընծային պտուղք գաւառութեան : Ընդ որս և եկամուտ սատանայականայն սխալից գիտաք , և կերպեալ կոյտք անորքեալք . յորոց չէ զերծանել , քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապագայիցըն տքօք խմատարկել , և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ Նոսա . այլ առանց կամաց քումդ ակնարկութեան և մարդ-



կային կարք և հնարք վերացեալ : Իսկ դու , բարերար , զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել , նորոգել , քաւել , ընծայել և կենդագործել . և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից . ամէն .

---

## ԲԱՆ Հ.

Վ, Երրորդին յաւելուած ինչին հետեւութեան նորին , հաջողի առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. Եւ քանզի համբարձեալ զմտթայս բանիս 'ի փոքունց սատի երկրայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ 'ի մեծագունիցն տեսակս , առաջից զոմնելի հանդէս իրաւանց անհաւորին անաչառութեան : Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն Աստուծոյ իբրեւ զնախածանօթ հայրապետութիւնն , և կամ մաքրագոյնք որպէս մարգարէն , կամ անբծագոյնք իբրև զառաքեալսն , կամ

ընտրելագոյնք որպէս մարտիրոսն, եթէ ոչ դու մարդասիրեցեր ամենուաղ բարիդ և անփոփոխ խնամակալութիւնդ և անպատկառ ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ:

Բ. Զի եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմածին առաւել ընչելին ինձ վարդապետէ, 'ի տապոյ անտի պապակեալ՝ կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան: Իսկ եթէ առ Մովսէս, և նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ ըղձհայթայթանաց կրկուան 'ի պահպանութեանն աւուր ժողովէր. Իսկ եթէ առ Ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. Իսկ եթէ առ Դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութեան ընտրգտեալ է և նա. Իսկ եթէ առ Նոյ և Յոբ և Դանիէլ՝ զորս Եզեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա. և զայն ընդ նոսին իբր 'ի գինաց Աստուծոյ ալշեալ. կենդանի եմ ես ասէ տէր. թէ ոչ ապրեցուցեն զուստերս և զդստերս իւրեանց 'ի



բարկութենէն որ հասանիցէ. բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին. Իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց խառն մի խիթացեալ՝ և նա ընդ կրկին դրաւեցաւ: Թողում ասել զաղմայն գումարութիւն խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն. ընդ որս և Յովհաննու ոմին մարգարէի 'ի մէջ աստուածառաքն ազատաւորութեան մարդկօրէնն գայթակղութիւն միոյ յոլովից անթարգմանելի, թէ և 'ի դէմս իմն մեկնութեան ձևակերպեսցի:

Գ. Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, շնորհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ կենդանագործեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետև գիտացեալ զայլն որքանութեանց հաղածին բնութեանս, որք մխիթարեն օրինակաւն նմանաբար հարազատապէս վստահութեան յուսահատելոց, ահա առ-

քեզ դիմեցից, որդի Աստուծոյ կենդանւոյ՝ Քրիստոս օրհնեալ յաւիտեանս։ Մանաւանդ զառաջին ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զներագրելոցդ բան վերստին արդարացուցանէ. բարի է, ըստ խնամոյն ումեմն երջանկի, անկանել 'ի ձեռս տեառն, և մի 'ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին։ Եւ այս բան թէև զԴաւթին իմն գծագրէր, որ զերկբայմանեան հարուածն աստուածեան առաջիկեցեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զպատուհասն մահու սատակման՝ իբր զկենդանի Քրիստոսի հաւատոյն յաղթութեամբ, քան զերկուսն եւս այլ փորձութիւնս՝ որք տանջեն և ոչ ողորմին. սակայն և իմս օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսելոյ անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ, զի ոչ եթէ զփրկեալսն նաւաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութեան, առանց որոյ ոչ է մարթել առ Տէր, այլ զփրկողին անուն պսակեմ, և զշնորհ նորին առ ամենեսին բարեհաշտեմ, եւ զբնաւին բարձունսն 'ի թախիծ վարուց



խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութեանն քոյ։

Դ. Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն. արա ինձ անդորր 'ի մեղաց աշխատութեանց, զի և քեզ լեցի հանգիստ 'ի մշտադատ հեծութեանց՝ ձանձրացուցիչ թախանձանաց. որ ոչ այլ ինչ, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

## ԲԱՆ ՀԱ.

Վերստին յաւելուած կրկին հետեւութեան նորին հոգւոյն առ նոյն ազերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ քանզի երջանիկքն և փառաւորեալք սրբոցն պարք, յորոց ոմանք դայն ինչ գթեցին և յաղթագոյնս հաստատեցան. փոքունս սատանեցան և մեծագոյն վարմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան.

յորոց մինն զղանգուածոյն յայտնէ ըղ-
հաստատակատեղծն ակարութիւն , իսկ
միւսն զգերազանցն քան զբնութեանն
օրէնս , փառս և առաքինութիւնս հը-
րեշտակականս : Եւ արդ նոքա որ օրհ-
նեալքն են յամենիշխան բերանոյ աս-
տուածութեան հօրն Քրիստոսի , ընտ-
րեալքն և օծնեալքն , խնկեալքն եւ
բարեբանեալքն , իբրեւ զանդամս Քը-
րիստոսի պաշտեցեալք , և իբրեւ զօ-
թեւանս Հոգւոյն Սրբոյ յորդարեալք ,
յորս չէք ինչ նշմարանք և կամ գիւտք
խաւարի , այլ ամենեւին անկեղծութիւն
և լուսաւոր արդարութիւն . և որքան
մարթ է՝ զմարդն Աստուծոյ՝ Աստու-
ծոյ նմանեցուցանել : Երեսք պարզք և
անպատկառելիք , կրօնք բարձունք եւ
անխոնարհելիք , կեանք զգաստք և ա-
նըստգտանելիք , պաշտօն առ Աստուած
կարծր և անփոխարկելի , ընթացք ա-
րիականք և անկասելիք , ճշմարտութիւն
միատարր և անյեղելի , դիմագրաւու-
թիւն զօրեղ և անհերքելի , տեսաւո-
րութիւն պայծառ և անապշելի , իմաս-
տասիրութիւն վերնական և անկոխե-
լի , պատկեր մաքուր և անաղարտելի ,



Զորոց կերպարանս և զյիշատակս ա-
նուանցն աղաչել՝ Աստուած իմ վար-
դապետեաց , և նոքօք հաճութիւն 'ի
մէջ խռովութեան արարչիդ բան լու-
սաւորեաց :

Բանք դաւանծաչիք հաստատեցուցիչք
Աստուծոյ :

Բ . Այլ ես անպիտանս յամենայնի ,
և որքան բան զօրէ՝ պարտաւեալս , որ
մինչդեռ արթունս եմ՝ ննջեմ , մինչ-
դեռ զգաստ երեւիմ՝ թմբրիմ , 'ի
բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ ,
մինչդեռ աղօթեմ՝ եւ վրիպիմ , 'ի
յընթանալս իմում՝ և կասիմ , յարդա-
րանալս իմ՝ և մեղանչեմ , 'ի խաղաղա-
նալս իմում՝ ամբոխիմ , մինչդեռ ար-
շաւեմ՝ առ 'ի յետոյսն հակամիտիմ ,
'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառ-
նամ : Ընդ լուսոյն մասին՝ եւ խաւար
յարեմ , ընդ քաղցրութեանն ճաշակ՝
օշինդր խառնեմ , ընդ կուղս բարեացն՝
չարիս հիւսեմ . ընդ կանգնելն՝ և կրկին
գլորիմ : Ծաղկիմ եւ ոչ պտղաբերիմ ,
առեմ և ոչ առնեմ , խոստանամ եւ

ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վճարեմ,
կարկառեմ և անդրէն ամփոփեմ, ցու-
ցանեմ և ոչ ընծայեմ. մերձեցուցանեմ
և ոչ մատուցանեմ։ Ի ճարակել խոց-
ուածոյս՝ անդրէն վիրաւորիմ, 'ի հաշ-
տեցուցանելն՝ վերստին խռովիմ, զուր
հանդիսանամ և իրաւամբք պարտաւո-
րիմ, գրիմ և իսկոյն եղծանիմ, նա-
ւեմ և 'ի գիծն թուլանամ, սկսանիմ
և 'ի հանգիստն ոչ ժամանեմ։ Կարգիմ
և դարձեալ սասանիմ, ընտանիմ և կըր-
կին հեղում, շարունակիմ աստ՝ և անդ
'ի տարբեր հատիմ, բարդիմ եւ անդ-
րէն տաշորիմ։ Հիմն արկանեմ եւ ոչ
գլխաւորեմ, տակաւ վաստակիմ և բիւ-
րըս վատնեմ, զոյգն գանձեմ եւ ան-
թիւս սպառեմ, զայս խրատեմ և ես
ինքն անփորձ եմ, միշտ ուսանիմ եւ
երբէք 'ի ճշմարտութիւն գիտութեան
ոչ հասանեմ։ Զշիջեալ չարիսն նոյնչափ
արծարծեմ, ուր ինչ քաջալերիմ եւ
առաւելագէս լքանիմ, լարիմ եւ իսկ
և իսկ առ նմին մեղկիմ, զայս կար-
կատեմ և զայն պատառեմ, խլեմ զե-
ղիճն և տատասկ անկեմ. Ընդ ամ-
բառնալն՝ և անդրէն բերիմ, մտեմ 'ի



բոյնն աղաւնի՝ եւ անտուստ ագռաւ-
ելանեմ, գամ տակաւ մի սպիտակ՝ եւ
որանամ դառնամ ընտանին սեւացեալ,
տանեմ զիս քեզ զաւանել՝ և ապանողին
նուիրիմ, ընդ յանդիման լինելն՝ և թի-
կունս դարձուցանեմ։ Մաքրիմ և այլ
միճոտիմ, լուանիմ՝ եւ նովին զաղրա-
նամ, կերպարանիմ զԴաւթին և գործք
զՍաւուղայն կատարեմ, շրթամբք ճըշ-
մարտեմ և ստեմ երիկամամբք, աջով
մատակարարեմ և ահեակ կողմամբս ա-
ւերեմ։ Ընդ երկրագործութեան ցորե-
նոյն՝ որոմն սերմանեմ, 'ի բարձրագոյն
իմաստիցն 'ի վայր իջեալ, ես ինքն դը-
տանիմ։ Հրեշտականամ յերեսս եւ 'ի
խորհուրդս դիւանամ, 'ի յոստ՝ հաս-
տատիմ և 'ի միտս տատանիմ, սուտ
ձեւանամ և իրօք խոտորիմ. կեղծա-
ւորիմ արդար և արդեամբք ամբարըշ-
տեմ։ Դատիմ 'ի ջուրս հեղոյ և ընդ
այս կաքաւեմ, 'ի մարդկանէ գովիմ
և 'ի տեառնէդ պարսաւիմ, 'ի հողածը-
նելոյս երանիմ և յորդւոյն լուսոյ ա-
ւաղիմ, համբուանամ յետին ռամկին և
թագաւորին մեծի յաչաց ելանեմ։
Զատեան դատաւորին թողեալ, խառ-

նախրօնկյն աղէրսեմ․ հեղձեալ 'ի վե-
հիցն, սատականացն սղրդիմ․ մարմնովս
արտաքուստ պղծնիմ, և անձամբս եր-
կնիւ ճայրն ճանաչիմ․ հոգւովս դաշն
հաստատել, և ուխտակորոյս արտաքս
մերժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր եւ
վաղիւ մեղս խելագար․ զանգրունս պա-
տուէրն լքեալ, թեւադրութեան օծն
հեռանիմ․ արհամարհ զօրութեաւ, և վա-
թարագոյնս ընկրկիմ․ զծանրութիւն
աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն
ունայն ելանեմ․ 'ի բացուստ ձայնէ
խօսիմ, և 'ի պատասխանատուութեանն
պահու պատրանօք կարկիմ․ 'ի յետ
արեւուն հարուստ երեւիմ, և ընդ ե-
րեկս ունայն գտանիմ։ Ի յաճախս
ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ․
ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհու-
րեալ զարթնում։ Ջանդատանս կա-
մաց չարաչարս հերկեմ, փոյթ ինամով
'ի չարիս, միշտ անաւակ որդիս, ան-
դարձ տարագրեալս, անզղջական զա-
ւածեալս, անմխիթար տրտմեալս, ինք-
նադրաւ գերեալս, մահու և ապակա-
նութեան ծառայեալս, անողոքելի տան-
ջեալս, անփրկելի կամանեցեալս, ան-



պատուաստելի հաստատելոյ, անսպա-
ծանելի շիջուցելոյ, անկարգուրելի
խորտակելոյ, անհանդերձելի կործա-
նելոյ։ Եւ եթէ պարտ է զաստինն
ստամբոր ասել անօրինելոյ անձին նա-
խատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ ան-
խայեմ զխուփս նուաստեալ գեհենին։
Սոսկուցուածս նախանձու նորոյս Ադամայ
երկնայնոյ, որպէս և Կայենն առաջին
հնոյն և հողեղինին․ որ ունիմ զանուն
ստուոտ 'ի յանձին ընչանկ ամբաս-
տանութեանս, ոչ զնչոյս տուրեւանուա-
թիւն, այլ զանիցս կշտամբութիւն։

Գ. Եւ արդ՝ ուր լինի փրկութիւնք,
ուր սկզբնահայրն հաւատոյ 'ի յուսա-
հատութեանն վայրի զանգթութեանն
իմ չարիս կրկնէ, մեծն մարգարէից
քարանջք բանից կոչկոծէ, արին բա-
րեփառ աշտէին նիզակաւ 'ի մահ սա-
տակէ, պատկեր ճշմարտին ընդ Աքա-
րու հաւանելուն ջնջէ․ ստուածարեալն
վեհից՝ յարագողացն վրիժուց մատնէ,
մարգարէածին տեսանողն՝ ընդ Ամաղէ-
կացւոյն առաջի Տեառն սպանանէ․ նա-
խանձաւորն Աստուծոյ երկնատեղաց
բոցովն վառնէ, ստուերին լուծն ե-

նորոյս սկիզբն՝ հնծանոյին ընտրու-
թեամբ հօրն , որեամն Առաքելոց ընդ
Սափիրայի 'ի կենաց զրաւէ · զարմանա-
լին քննութեամբ հոգւոյն՝ բուրուն-
ինձ մահու ընդ կենաց քարոզ խառնէ ։
Արդ՝ անաչառք և ինձ կաշառք երջան-
կայն , և ուժգնութեան հրամանի վեր-
նոյն որի սպառաղէնք · ընդ Հրեշտա-
կայն և մարդիկ · ընդ տիեզերաց երկրի
և տարերք · ընդ անզգայիցն և շարժա-
զականք , որովք զատեալ միշտ լինիմ՝
տուժիւք ըկանաց յօրինակ եւ յիշա-
տակ ատակալեացն ապագայից · իբր հող-
մոլ փոխթորկի ալեաց յաւէտ մրրկեալ
կենացս վտանգութիւն · մեայ անկայուն
'ի հաստատութեանց ։ Զոր եթէ ոք ի-
մաստութեամբ 'ի քննին առեալ խու-
զեսցէ զլուզակոցն բազմատեսիլ զանա-
զանութիւն , զմանունս փոքունս ընդ
մեծամեծացն գտանեալ · որ առանց թը-
ւոյ և քանակութեան համարոյ թինգա
առեալ անբաւ երամից եռան , զեռան ,
զլանան 'ի մարմնի ծովու , վկայեսցէ և
հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացե-
լոցս բանագրութիւն ։

Գ · Արդ դու ինքն օրհնաբանեալ



անմահ թագաւոր բարի երկնաւոր մար-
դասէր Քրիստոս , Աստուծոյ կենդան-
ւոյ միածին որդի , հզօր բարձրեալ ան-
քննին անճառ քաւիչ ահաւոր , սաս-
տեա 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց ող-
ւոյս ծփանաց , արձանացս զծաւալս մե-
ղեգին շարժման որտիս խռովութեան ,
ընդոտնեա 'ի սանձս կարօտ երասանաց
ըմբռնման զծնգեալ մտացս վայրագու-
թիւն ։ Եղիցի խաղաղութիւն հրամա-
նաւ մեծիդ ամենակալարան ըղձս սաստ-
ման · սաստկեա խափանեա զբազմա-
գլխեան անդամս ուրուականս գազա-
նեաց ամեթոյս երկրակենցաղս հինից ։
Գրեսցես աղօթս մշտամատոյցս զայս
նորընծայ սաս ողորմողելս թախծա-
գին ձայնի ողբերգականութեան սրտ-
մատենի · հան 'ի խորոց մահուս ան-
դընդոց չքնաղ ապրեցեալ ընդ մարգա-
րէին փրկելոյ · ընկալ զխոստովանու-
թիւն անճնազատ բանիս 'ի հաստ անու-
շից · շնորհեա մխիթար զանունութեան
վշտաց ուժգին հեծութեան յուսահա-
տելոյս ։ Եւ քեզ ընդ Հօր Հոգւոյդ Սըր-
բով փառք , պատիւ և իշխանութիւն
յաւիտեանս · ամէն ։

# ԲԱՆ ՀԹ.

Վերստին յաւելուած իւրեին հեծութեան նորին ճռչողի առ նոյն զերոյ մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Այլ ահա ձեզ ասեմ, ով եկե-
ղեցիք միանձանց եւ աշակերտութիւնք
կրօնաւորանաց. որք մերկամարմին մա-
տանցդ ձեռօք առ ամենակալութիւն յու-
սոյն պարգեւաց բարեացն անբաւից
տեառն զինուորեալք, որոց զայս սե-
ղան հանդերձանաց խորտկաց բանից ըն-
ծայեցուցի, ընկալարուք զայս աւան-
դութիւն խոստովանութեան ՚ի շինուած
մխիթութեան հոգւոց ։ Ծաներուք ա-
ղեմն զմարմնոյս պարտութիւն, յիշե-
ցէք զմարգարէականն ընդ առաքելա-
կանին ասել մեզ ՚ի խրատ, զի մի
պարծեսցի ամենայն մարմին առաջի Աս-
տուծոյ, եւ զոչ ոք է արդարն եւ ոչ մի ։
Զտէրունականն մի մոռանայք, ՚ի կա-
տարածն իսկ պատուիրանին գոգջէք ըղ-
ձեզ ծառայս անպիտանս. մի եղիցի
լինել ձեզ ոսք խոտքողին. զգուշացա-



րուք եւ գրոյն, թէ կերակուրք նորա
ընտիրքն ։ Քանզի եւ ես իսկ, որ զայս
նուաղութիւն մասնաւոր պտղոյ ձեզ
ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւո-
րական ստգտանք բիւր բամբասանաց
անբժշկական մեղանաց, ՚ի սկզբնահայ-
րըն սկսեալ մինչեւ ՚ի սպառումն ծը-
նընդոց նորա՝ կամայականն յանձնառու-
թեամբ հասուցի եդի զիս ամենայնիւ
պարտական չարեաց ։

Բ. Լուայ յումմանէ ոչ պարտաւորէ.
եւ ոչ հաճեցայ, ՚ի յաւելն նորա ան-
յարմարապէս առ այն՝ որոյ առաջի
ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի,
թէ ոչ երբեք չնացայ, ոչ պոռնկեցայ,
եւ ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճա-
շակս մահու ։ Այլ ոչ ընդհատ ինչ յա-
նօրէնութենէ. Թողցէ նմա տէր Աս-
տուած զայսոսիկ, թէ եւ ճշմարիտ
իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ
գթեաց՝ ՚ի յաւել զանյարմարան ՚ի դի-
մաց ժողովրդեանն Իսրայէլի բանիւ Զա-
քարիայ, օրհնեալ տէր եւ մեծացաք,
որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան ։
Բայց ես քանզի գիտողն Աստուծոյ
մատնեալ եմ դատաստանի, որ զկնա

աներեւութիցն մնաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս Նորօք ամենիրաւ հատուցմամբք , ոչ կերպարանեցայց տեսողին , ոչ կեղծաւորեցայց քննողին , ոչ սատեցից զոչ գործեցեալսն Նկատողին , ոչ խաբէութեամբ ընդ միտ ինչ մտից մեծին , ոչ 'ի տեսիլ բարւոյ ցոփութեան զչարս քողարկեցից , ոչ 'ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարդարեցից , ոչ խնկեշացայց 'ի զարդ օտարոտի , ոչ պճնեցայց այլով պայծառութեամբ , ոչ պաճուճանս յարմարեցից տգեղութեանս գեղոյ : Ոչ որք մեղաւոր իբրեւ զիս , ոչ որք անօրէն , ոչ որք ամբարիշտ , ոչ որք անիրաւ , ոչ որք չարագործ , ոչ որք վրիպեալ , ոչ որք սխալեալ , ոչ որք մոլեգնեալ , ոչ որք խարդախեալ , ոչ որք շաղախեալ , ոչ որք ամաչեցեալ , ոչ որք դատապարտեալ , եւ միայն եմ և այլ ոչ որք , եւ ամենայնն եւ յիս ամենեցուն : Ոչ հեթանոսք , զի ոչ գիտէին , ոչ հրէայք , քանզի կուրացան , ոչ տգէտք և խառնիճաղանջք , քանզի յիմարք էին իմաստից : Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախաղ . ռաբբի ռաբբի անուանեցայ , և զգո-



վճառն առ Աստուած եղծի . բարի առաջայ առ եղկութեանն ժառանգութիւն . սուրբ վկայեցայ 'ի մարդկանէ , որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ . արդար դաւանեցայ ամենայն իօք ամբարիշտըս . հեշտացայ 'ի գովեստ մարդկան , զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի , յաւաղանէ կոչեցայ որթուն . և ես 'ի քուն մահու ննջեցի . 'ի փրկութեանն աւուր հոկող յորջորջեցայ , բայց զգաստութեանն ոչ կամեցի : Ահա դատաստան , ահա յանդիմանութիւն , ահա Նոր կշտամբանք և հին դատապարտութիւն , ահա ամօթ դիմաց և տագնապ հոգւոյս , ահա խնդիրք փոքունց և կըշիռք մեծամեծաց :

Գ . Այլ դու միայն , տէր Աստուած մարդասէր , անոխակալ և երկայնամիտ , համարեաց մեղապարտս անձին՝ ընդ վերջին պարտաւորութեան աւուրն ահաւորի՝ զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս . Մի՛ լուայց 'ի քէն զայսոսիկ , գթած , փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի . Այլ բարձցես և վերացուցես զզահ պարտաւորութեանըն կանխիս ընդ քեզ կայելոյս աւե-

չանօք հոգւոյս ։ Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս , ծածկեա աղօտ կորուսելութեան զտգեղ անառակ մարմնոյս մերկութեան , մատո հանգըստեան զթափեալս ուժգին մեղացս բեռամբք , կարգեա ինձ սահման հետոյ բարութեան առ իս կենացդ , պահեա յիշատակ ինձ ողորմութեան և զկնի մահու կեանք ամենեցուն , օրհնեալ յերկինս և գովեալ յերկրի , բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանըս յաւիտենից . ամէն ։

---

## ԲԱՆ ՀԳ.

Վերստին յաւելուած բանին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԹԱԳԱՒՈՐ բարձրեալ հզօր ահաւոր , օրհնեալդ միայն տէր Յիսուս Քրիստոս , քո է փոփոխել յանակընկալս կենաց յուսահատութեան զատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս , զպարսաւանս վհատութեան առ զուարթացուցիչ գովութիւն . ընդ ամօթոյն՝ համարձակութիւն , ընդ պատկառանացն՝ պատիւ , ընդ տարագրութեանըն՝ յոյս բարութեան , ընդ բաժանմանն՝ անխզելութիւն միութեան , ընդ սպառնականացն բանից՝ ողոքական ընփոփանս , ընդ միանգամ դատապարտութեանն կրկին ազատութիւն ։



Բ . Ողորմեա , Տէր , մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութեան , մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի բարձունս կողկողելի , զբազմարկածեան ուղւոյն զանգերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաշըս բերելով մտացս տեսլեամբ ամենայնիւ վտանգեալ . և 'ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելիցն շաւիղ , թշուառացեալ կիսամեռութեամբ , դիմօք տղայութեան , տատանմամբ մատանցս , կարկամ հառաչմամբ , նուազ հեծութեամբ , նըրբական ձայնիւ , յոգի թախծութեան յոքնամանեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից դդրդեցելոյս ողբալով հառաչեմ ։ Կարող ես , բարեգութ , և անդ հրաշա-

գործել յաւէտ զօրեղութեամբ սան-
լով, թէ ողջ եղիջիր յոգւոյդ խոր-
տակմանէ, և կամ՝ թողեալ լքին քեզ
մեղանք քո, և կամ թէ՝ երթ 'ի խա-
ղաղութիւն որբեալ 'ի մեղաց։ Եւ զոր
յայնմ ժամու ոչ ժամանեցից պատմել,
այսօր ընկալցիս մարդասիրապէս, և
երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցիդ։
Յորժամ, որ այժմ բանտապահեալ խլոխ-
տաձայն սիգացող բարձրապարանոց,
անկեալ գնիմ գի 'ննկենդան, կարկեալ
'ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ
անդամօք, խփեալ շրթամբք, կախու-
ցեալ աչօք, տախտակ անշարժուն,
կոճղ կխայլեաց, արձան անդգայ,
պատկեր անբարբառ, գոյութիւն ան-
շունչ, ողորմելի տեսիլ, աշխարելի
կերպարան, ողբալի օրինակ, եղկելի
դէմք, արտասուելի նմանութիւն, լռ-
ուեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօ-
թափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, շիջեալ
ղամբար, դատարկ կոկորդ, խոտանա-
ցեալ սիրտ, ալխեալ ապարան, տապա-
ռեալ աղբիւր, թալկացեալ մարմին,
ժողխեալ որովայն, քակտեալ տաղա-
ւար, կոտորեալ սարք, բաժանեալ



յօդք, հատեալ ծառ, սղոցեալ ար-
մատ, թողեալ տուն, հնձեալ արտ,
ստորախուզեալ բոյս, օտարացեալ բա-
րեկամ, մոռացեալ պահեստ, թափեալ
գարշութիւն, մերժեալ աւելի, բար-
ձեալ խէթ, անարգեալ կմախք, և իբր
զանպիտան առ ոտն կոխեալ։ Կարօ-
տեալ այլոց մաղթանաց, որք զհաւա-
տոյ թշուառիս ձայնիւ նուագեալ ա-
ղերս հառաչման, ցօղով արտասուաց
բարերարիդ զթութեան 'ի բարձունս
տարածանեն։ Զառ քեզ դարձն յեղա-
նակեն արգահատելով, զոր օրհնեմ։
զնշան խաչիդ փրկութեան, զոր երկըր-
պագեմ։ զյարութեանն ճշմարտութիւն,
որում հաւատամ։ զփառացդ քո յայտ-
նութիւն, զոր փառաւորեմ։ զգաստա-
տանիդ ահաւորութիւն՝ զոր խոստո-
վանիմ։ զուանիցդ յանդիմանութիւն՝
յորմէ զարհուրիմ։ զՀոգւոյդ Սրբոյ
ինձ ուղեկցութիւն՝ զոր պաշտեմ. զօծ-
մանդ տեսանագրութիւն, զոր և համ-
բուրեմ։ զթագաւորեն ընդ քեզ, տէր
Յիսուս, յուսամ պաղատիմ։ Արդ լը-
քաւ, մերժեցաւ, բարձաւ, տրոհեցաւ,
փախեաւ, որոյցաւ, տեղի եւս կցուրդու-

թիւն զուգաւթեան կենցաղոյս կենդա-
նութեան, և յաւուրս, որ 'ի քէն՝ պար-
գեւ մնացական և անշնջական յիշատա-
կարան պահեցաւ:

Դ. Տես ողորմութեանն 'ի տարա-
կուսանս վտանգելոյս, միայն բարե-
գութ փառաւորեալ Որդի Աստուծոյ,
քաւել, բժշկել, կենդանագործել,
պաշտպանել, նորոգել, նկարել, կանգ-
նել, հաստատել, վերստին ստեղծա-
գործել յերջանիկն անարատութիւն.
քո է կարողութիւն, քո է փրկութիւն,
քո է ողորմութիւն. չիք քո անկարու-
թիւն, այլ ամենայն զօրութիւն,
բարձրութիւն, իշխանութիւն, ան-
վախճան թագաւորութիւն, իսկութի,
ինքնութիւն, ամենատեղի բացարձա-
կութիւն, բարերարութիւն, լուսա-
ւորութիւն, փառաւորեալ տիրապես,
անպակաս և անյաւելուած, ինկեալ
խորհրդով անթարգմանելեաւ յԵրրոր-
դութեանդ որբում, գոհաբանեալ յա-
ւէտ և եւս առ ամին 'ի նոյն պաշտօն
հաւատարութեան միապատիւ զուգա-
կանութեան, երեկ և այսօր և յաւի-
տենից յաւիտեանս, ամէն:

# ԲԱՆ ՀԴ.

Վերստին յաւելուած յիշելին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի.

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Ա. ԱՐՔԱՅ երկնաւոր, տէր բա-
րերեցուն, առ ամենայն բան յամենայ-
նի միշտ երկայնամիտ, Աստուծոյ կեն-
դանւոյ անքնին Որդի: Ահա անդ է
ողորմելն իսկապէս, յորում հաստատ ա-
կընկալութիւն վստահոյն. անդ է բա-
րեգործելն, յորում տեսութիւն խնա-
մոցն խափանեցաւ. յայնմ ժամու է
մարդասիրելն, յորում տկարութեանն
վտանգ պաշարեալ տիրեաց ներքոյ և
արտաքոյ. անդանօր է բժշկութիւն
աստուածային քո ձեռինդ, յորժամ
բնաւ անդամոցն տեղի ետ կենդանու-
թիւնն. այն վայր է այցելութեան, յո-
րում ելք հնարիցն խափանեցաւ. Այն
է քո մեծութիւն, յորժամ զյուսա-
հատութեան վէրն ողջացուցանես. այն է
հարազատ քումդ ազգակցութեան, ե-
թէ յանակնկալն ժամու արուեստա-

րեայես միութիւն . այն է հանդիսարան քում յաղթանակի , եթէ զխակեալն մասս կենաց 'ի սպասումն ընչյս բացցես . այն են քո շնորհք վայելչականք , եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես : Ցայժմ ես անոխակալ , եթէ ապախտաւորիս ընդ երախտաւորացն խնամոյկեցես . 'ի սոսին ծանեալ զխոտացիս՝ եթէ նայեցար 'ի Նուէր բանիս Նախնի գթութեամբդ , եթէ զամփոփութիւն չարեացս բարձցես :

Բ . Ցաղագս այսորիկ հիւսին բանք և եղանակին Նուագերգութիւնք , յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի զբարեգործացն պարգեւեացէ . որ մինչ իրաւամբք մնացէ բանտի , նա յարքայական ապարանս զնա հանգուցէ . մինչ հրաւիրեալ է 'ի գուբ աղմկ , նա 'ի բազմականս ամենապատիւս գահուց գրգեցուցանիցէ . մինչ բռնելոյ ղաշին զիտեացէ , նա 'ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ . մինչ ծառայութեան մատանցն սպասէ , նա մատանի համարձակութեան մատուցանիցէ . մինչ հայի հարուածոց գանից , նա գթոց գիր-



կըս արկանիցէ . մինչ պատրաստեալ յուսոյ կորստեան , նա երեւելի տեառանց բազմաց առնիցէ . մինչ ակն ունի սատակման մահու , նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ . մինչ հատման գլխոյն նայեցի , նա զնոյն պսակապայծառացուցանիցէ : Այս պտուղք օրհնութեան , գթած , զքանչելարման քում շաւաւիղաց . այս արդարք կենաց արարչականդ քո հրամանաց . այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո տենչանաց , այս Նշոյլք լուսոյ ամենափիւռ Ճառագայթից . այս ախորժութիւն Ճաշակաց բարեբանեալդ քո քաղցրութեան :

Գ . Քո միայնոյ են այսքիկ , Տէր . 'ի քէն աղբեյաւ գրէլ ինձ զսոսին . ահա դ.քոյոդ յատուկ աղերսեմ , օրհնեալ , 'ի քոյոց այտի պարգեւեալ շնորհեա . բաց , Տէր , զգանձս քո բարիս , ըստ աղերսանաց առակին : Մի խառնեսցես 'ի համբարս բարեացդ քոց՝ 'ի չարեացն իմոց . մի շտեմարանեսցես զատելին քո , որ են ստութիւնք և ցասմունք , ընդ սիրելին քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք . մի պահես-

ցես 'ի ստացուածս քո պաշտելիս զա-նախտրժելեան քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք ։ և զիմ փափկելեան՝ որ են մեղք և թշուառութիւնք ։ Մի՛ գրեսցես այժմիկ օրհնութեան 'ի մատե-նիդ կենաց զմարդկան պարտուցս իմոց անիծից ։ այլ զանհնարաւորն ինձ հա-մարեալս՝ մեծացուցես կրկին առաւել զանուն քո ։ Տէր ։ 'ի Նորին ։ ցուցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտականագոյնս ։ Շատ են իմ պարտիքս և անդր քան զԹիւ ։ այլ ոչ այնքան հրաշալիք իբրև դքո զողորմութիւնդ ։ բազում են մե-ղանքս ։ այլ յաւէտ են նուաղեալ ա-ռաջի քոյդ ներողութեան ։ յաճախ են չարութիւնքս ։ այլ յաղթական են հա-մայնից ։ հզօր ամենակալ ։ քոյդ մար-դասիրութիւն ։ ինձ են անհամար ի-մոյս անձին բիծք ։ այլ քեզ յոյժ դը-րաւեալ են ընդ սահմանաւ ։ Ոչ են այն-քան զօրաւորք առ կենդանութիւն զէնք մեղանաց պատկառեցելոյս պտղաբերու-թեան ։ որքան յիշատակ մահու կեն-դանւոյդ առ վանումն կործանողին բըռ-նութեան ։ Զի՞նչ ազդեսցէ փոքր խա-ւար՝ աւուրդ Աստուծոյ ։ զիա՞րդ բա-



ւեսցէ գոյն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայթից ։ զիա՞րդ համբարձցի կըշ-ռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան ։ Զի՞նչ երևեսցի յաշս ամենակալիդ քո առատութեան կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց ։ ահա կոշտ մի հողոյ դիւրա-փլանելի 'ի կարծրութենէ բախման վա-նեցեալ ։ իբր զողողջակ անձրևոյ բազ-մազեղ հոսմամբ քո կամացդ չքացեալ պայթեալ անդստին ։ Զի՞նչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ կա-րողութեան ժամանակաց առաւելու-թիւն առ յանցուածոց իմոց քաւու-թիւն ։ ոչ քթթել մի ական ։ ոչ խուն մի տեսութիւն ածանցական ։ ոչ սակաւ մի նայեցուած փայլական ։ ոչ կիսամա-նեայ ։ յամրութիւն ։ ոչ փութացելոց ոտից յեղյեղումն ։ ոչ յելից բարձրու-թենէ միոյ կանգնոյ կաթի անկելոյ ։ ոչ գիծ մի չափոյ մատաց հեռաւորեցելոյ ։ ոչ նշուլից արագութիւն ։ ոչ շնչոյ տու-րևաւութիւն ։ ոչ ինչ յայսմ յանգոյ և յանտպաւորական նմանութենէ ան-ձեւ օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան աւժամայնք կամ հարևանցիկք ։ որքան

եղծմունք, յնդմունք և հալմունք մե-
ղաց սառնամանեաց պահեսցի՝ քումդ
ողորմութեամբ, Աստուած ամենայնի, Տէր
Յիսուս Քրիստոս, որդի անքննին կեն-
դանւոյդ Աստուծոյ։ Որ տաս պարգե-
ւես սրբոց քաղցրութեան՝ չափոյ ընդ-
բարխ, և անձրևեւես երկրաբանչիւրոցն
անաչառապէս. կշռես սահմանես խրա-
ւամբք և զվտանգս կրկին հաւասարա-
բար, որոց մեծ է հանդիման առ ակըն-
կալութիւն պարգեւին, փոքր խթա-
նաւ փորձութեան զսակաւութիւն պար-
տուցն առատէն վճարես. իսկ որ զերկիր
ընտրեցին, ներես ողորմութեամբ, տա-
լով և տայս պարգեւն ընդ նոցա՝ միշտ
առ քեզ դարձին սպասես։ Եւ քեզ
փառք ամենազօրիդ առ ամենայն հրա-
շագործութիւն բարեխնամող երկայն-
մտութեան, օրհնեալ յաւիտեանս. ա-
մէն։

---

# ԲԱՆ ՀԵ.

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ ընկղմեալ զմոլեալ և
'ի սպառ ծածկեալ 'ի յանճառութենէ
առաւելութեան բազմամանեաց յաճա-
խութեան մեծիդ երախտեաց, որ ա-
մենաւատ լռմամբ աննուաղելեաւ յաջ-
մէ և յահեկէ՝ 'ի դիմաց և 'ի թիկանց
համբարեալ կան անդրաւութիւնք։

Դարձեալ առ նմին կրկնապատիկ երկ-
բորդութիւն աստուածային հոգւոյն
ազդեցեալ, զոր ինչ յառաջբեցոցն սահ-
մանեցաւ աւանդութիւն՝ առ ամենայն
ջուասաւորութիւն եկեղեցւոյ դաւանու-
թեան՝ մեկնողեա եդեալ աստանօր։
Եւ որ առ անշնչականս նիւթեցեն ցու-
ցանի նրանաւոր կերպագրութիւն ան-
ճառելի։

Բ. Մատուցանեմ՝ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ գովեստի դաւանման Ճշմարտականի: Զի որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ ամենապատիր խաբէութեամբ նենգողին կարթիւն հատուածեալ 'ի բաց հեղքեցայ՝ ելեալ 'ի դրախտէն. արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ 'ի յաւանդ խնկայէս շնորհի անզըէն միւսանգամ համբարձեալ ամփոփիմ 'ի թախծս թեւոց լուսոյ, ահա յերկինս ժամանեցից հեռացեալ.

Գ. Այլ քանզի յարգանդէն, յարում յղացայ հոգեւոր երկամբք ծնիցեալ, զմեծն եւ զերջանիկ Դշխոյ անարատ ամենից կուսից նախուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յարում մատենի, զի ծանիցի, ցուցցի եւ այլոց եւս ազգայնոց ազգաց, պատմեսցի որքանութիւն փառաց խնկելւոյն, արժանապէս պաշտմամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ գլխոյ մարդեղութեան բանին Աստուծոյ, 'ի յիշատակ Ճառիս հաւատոյ Նորոգութեան դաւանութեան: Եւ արդ՝ 'ի յայս օ-



րինակ հոգենկար պատկերի բանի որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկալ զիս, գթած, օրհնեալ, քաւեցեալ եւ ուղղեալ 'ի սմին: Հան սմա 'ի հոգւոյս զնախատինս մեղացս, անմեղս եւ անբիծս ընդ հոլանեաւ սորին բաղմեցո, յաւել զտեղիս 'ի տունն Դաւթի, եւ անզուսպ փոխեալ 'ի տունըդ Աստուծոյ, ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ Յիսուս ակնարկէ: Մի սուղ զմոլիցն, եւ մի՛ անօգուտ զելիցն հեռեւութիւն արասցես. մի՛ զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս, եւ մի՛ զհամբոյր ողջունիս անկարդ ինչ վարկանիցիս. մի՛ զպաշտօնն աղաչնորհ գրեսցես, եւ մի՛ զերկրպագութիւնն անխորհուրդ լքցես. մի՛ անպտուղ լիցի տեսականութիւն պատկերին, եւ մի՛ աննշոյլ կերպարանին պաճուճելութիւն. մի՛ անհուր ողջակիզին սպանդ մնասցի, եւ մի՛ պատարագ ուխտի այս Ճառի՝ արտաքոյ ցրեսցի. մի՛ Ճաշակդ լուսոյ ինձ մահու լիցի, եւ մի՛ բաժակ քո կողիցդ արեան 'ի դատապարտութիւն եղիցի:

Դ. Աղաչեմ զքեզ, տէր Յիսուս,

մեզ յէութենէդ , որով զգիտութիւն Հօր քո և Հոգւոյդ Սրբոյ ճաշակեալ ծանեաք . քանզի 'ի քէն իսկ վարդապետեալ զամենապայծառ կարգս եկեղեցւոյ , և 'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութեան բարեաց , տարածեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիդ 'ի սմա տիրողիդ բնաւից երեք սրբենիդ մատուցեալ յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեհնորհութեան :

Յառ որ 'ի Նիկիայն սահմանեցաւքան , այլ խնն խորհրդածութիւն աստուածային աւանդութեան :

Ե . Փառաւորեմք զերանձայնեալ նըւագօք օրհնութեան երգոց 'ի հաւատ պաշտաման բանի զբարեհրաման պատճառն եղելոց զներգործութիւնն անըսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ , անհասական խորհրդոց և անըմբռնելի իմաստից , անզննելի զգայութեանց և անքերելի եղելոց , քանակութիւն վերնականն երկնի և անսահման ներքնային խորոց , լըութիւն սպառմանց և նա-



խաղաղութիւն սկզբանց , մի յերից անշփոթ կերպից , և երիս 'ի միոյ անհատուածելի խոկութեանց , 'ի վեր քան զմտաց անպարագրելութիւն յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ : Անփոփոխ բարի , անտեսանելի ուղղութիւն , անխառն կերպարան սիրոյ , մեծութիւն անյաղթող , բարձրութիւն անխոնարհելի , անմատնելի տեսականութիւն , բարերարութիւն աննուազելի , կամք կայուն , հրաման կենդանի , ակնարկութիւն փրկչական , երանութիւն ճշմարիտ , ակնկալութիւն հաւատի , խոստումն անստելի , աւանդ արգասաւոր , ստոյգ աւետիս , վերամբարձութիւն անձեռնարկելի :

Զ . Մի Հայր միայնոյ Որդւոյ՝ միական Հոգւովն պատուեալ , ամենահարուստ բարութեամբ ամենեքին ունայն 'ի չարէ , օրհնաձայն գոհաբանութեամբ անքննելին ներբողիւ գովեալ :

Է . Մին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեանց , անպատումն ազգականութեանց , եռալուսեանն զուգակցութեանց , անյաւելուածին լրականութեանց , ինքնիշխան կա-

մտաւորութեամբ պատուասիրեալ առ Հայրն համգունատիւ՝ գործակցութեամբ Հոգւոյն Սրբութեան խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուաղ գոլով ըմնամանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի Աստուածածին կուսին մաքրութեան. յորում աճեցոյց զբոյսն օրհնութեան 'ի լուսասահման անդաստանին անարատութեան. ընդ ամենախատարն էութեան համանանեալ յանանջէրպետ միականութիւն, թափանցական խառնութեամբ յաստուածութեանն ոգի բաղկացոյց զգոյութիւն չնչոյս հըրաշապէս: Որով անստամբակելի երատանաւ տանձոց կրթութեան զաստահակութիւնս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղկին պտղոյն կենաց 'ի ծայրս լրութեան անմահականին տնկոյ. 'ի մահ վիրաւորեցաւ՝ աստուածութեանն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կենացոյց զգործին պարտեաց, արարչութեանն խակութեան 'ի նմին յաւէտ անբաժանորէն ընդ նիւթական մարմնոյն միացեալ: Իջեալ 'ի վայրս խաւարին դըժոխոց, եհան զկապուտն իւրաստեղծ



'ի կապանաց ոսոխին. և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ. յինքն նահանջեալ զզինեցուածս մահու, կանգնեցաւ. կենդանացաւ աստուածապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց. Համատարիմ՝ եղեւ յաշխարհի, երեւեցեալ նոյնութեամբ ամենեւին աննուաղելի. որպէս էին համայն. և համբարձաւ բովանդակ· բազմեցաւ, նստաւ 'ի գերունակն գահոյս նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ: Զոր խոստովանիմք Աստուած բարերար և Տէր բոլորից, որ դատի զամենայն երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն և ինքն կատարած, նոյն առաջին և նոյն առյապար, անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ 'ի լոյս անմատոյց:

Ը. Օրհնաբանեմք ընդ Հօր և Որդւոյ և զանբաժանելի բղխումն՝ նոցին փառակից Հոգւոյն տէրութեան. որ ըստեղծ զբնաւս և կենդանածնէ զամենայն, որ անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մթութեան աշխարհական միգի շրջէր, նկարէր և կերպարանէր ամե-

Նունակ ջուրքն անբաւութեան երկ-
րատարածն ծովու՝ 'ի կատարումն ալ-
դեան խորհրդոյս՝ զսուրբ աւազանն լու-
սոյ ։ Նախ արար և այժմ գործէ , գո-
յացոյց և միշտ կատարէ արուեստ , ըս-
քանչելիս , նախատեսութիւնս սրբա-
նելոյ , ազդմունս աստուածօրէնս , զօ-
րութիւնս զարմանաւորս , մաքրարէս ,
աւաքեալս , փրկարարս , փարթամս
կրթութեան հանճարոյ ։ Զորբայանն
մատուցման արեանն Քրիստոսի յարդա-
րեաց քաւութիւնս անձանց , առողջու-
թիւնս մարմնոց . ըստ նմանութեան
Քրիստոսի ողորմութեամբ հրամայեաց ։
Մկրտեաց և գեր քան զջուր ինքեան
միայն բաւականութեամբ , նորոգեաց ,
լուսաւորեաց . համապատ նոյն բարե-
գործութեամբ զօրանայ ։ Վկայեաց մի-
ածնին աստուածութեանն 'ի համանան
Յորդանանու , օրինակաւ տեսութեան
ամպոյ ցուցաւ ձայնիւ Հօր 'ի լերինն
Թաբորական ։ Ի նոյն տիպ նմանու-
թեան հովանի եղեւ Յակոբեան տոհ-
մին 'ի յելսն Եգիպտոսի . յաղէպնա-
ցութիւն զօրավարութեանն Մովսէսի՝
հովանաւոր սատակութեան զփարաւոն ըն-



կղզմեաց ։ Բաշխանայս կատարագործէ ,
խնամատունս կազմէ , թագաւորս զօրա-
ցուցանէ , քաւութիւնս ընձեռէ , կեա-
նըս շնորհէ մահացելոց 'ի նորոգութիւն
յարութեանն ։ Նոյն ինքն է օծումն
մարդացելոյն Աստուծոյ . մշտնջենաւոր
հաւասարութեամբ ընդ Հօր երկրպա-
գեալ՝ 'ի պատիւ մեծութեան Որդւոյ .
անսահման փառաւորութեամբ օրհնեալ
յաւիտեանս . ամէն ։

Նորին ասացեալ 'ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ ոյծ աղանդաւորացն Թոնդրակացւոց , նոր մանիքեցւոց ։

Թ . Դաւանեմք 'ի հաւատս ուղիղ և
անխոտորնակ ամբծութեան՝ համբու-
րիւ շրթանց ողջունեալ զկաւուցեալս
խորան յանշնչական արձանաց՝ աստուա-
ծային բնակութեան եկեղեցւոյս շի-
նուածոյ , որ զերազանց զտաւ և երկնի
ամենազարդ բարձրութեամբ . որ 'ի նո-
ցին խոկ յառաքելականացն զատուց հի-
մնեցաւ , յաշակերտաց վիմնոյն ինկե-
ցաւ , 'ի սպասաւորաց բանին պաշտե-

ցաւ ։ Սկիզբն առեալ կենացս այս գան-ձու 'ի վերնայարկն որանէ՝ խորհրդա-կատարին վայրէ , զոր հոգին Աստուծոյ լցոյց , փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն յաւուրն մեծի պենտակոստէին ։ Նախ զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութե կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կան-խամեծար առաւելութեան , յորում ա-պա և 'ի նմին բնակչացն տուեալ լուսա-նորոգ բարեփառութիւն ։ Ուստի արիւն հզօրին Աստուծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զՀաբելին մահու զուժար-կու , մեծաւ բարբառով ձայնի բերկ-րութեան կենդանութիւն անմահու-թեան 'ի սմա ազդելով ։ Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնա-յանցիման արեգական 'ի սպասաւորու-թիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել , եթէ ոչ ընդ թեւօք սորին պահեսցի ։ Նա զի ոչ երկնիւք բաւա-կանանայ այս Նուէր տէրունի մարմնոյ , եթէ ոչ զայս ձեռուն օրհնութեան ծած-կոյթ ունիցի ։ Վասն զի մահու անխ-ծիւք հերքի այր ըստ օրինին՝ որ ար-տաքոյ խորանի այս վկայութեան զաս-տուածային պատարագն մատուցանէ ։



մանաւանդ զի պարտաւոր արեան կո-չեսցի , որ ոչ զանձինն օրինակ արիւն յայս Նուիրան ընծայեցուսցէ ։ Մի 'ի սմա լուացումն 'ի մահն Քրիստոսի , զի մի յանգէտս անարգեալ աստուածու-թիւնն՝ 'ի ծանուցելումն զնախնին կը-րեսցէ ։ Մի ձեռնադրութիւն 'ի պատիւ օծութեան լուսոյն , զի մի յանդգնու-թիւնն խաբէութիւն խառնեսցի ։ Մի և շնորհօք քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն , զի մի ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի ։ Մի յընա-րութիւնն ապառնի՝ հաւատ , զի մի ապառնալիք հատուցմանն զոյգս ինչ օտար համբաւոյ գրեսցի ։ Մի երկաքան-չիւրոց գոյութեանց մերոց կրաւամբք կշտամբութիւն , զի մի կխամանեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չա-րի և կամ բարւոյ փոխատրութիւնն կարծիցի յանմահ զօրութիւն արքայա-կան որդեգրութեանն , զի ընդելու-թեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնա-պէս ճշմարտեսցի ։ Մի յոյս կենդանու-թեան առ աներկծութիւնն որբոց , զի աներկբայութիւն խոստացելոյն՝ 'ի

ժիտս ունկնդրացն ծանուցեալ հաւա-
տացի ։

Ժ․ Այս դշխոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ կենաց եւ մահու իշխէ , ըստ օրինակի ադամեան պտղոյն յարմարագէտ ճաշակելի ․ գերագոյն քան ըղձանականս յանշնչութեանն հրաշագործէ ․ մինչ զի կատարումն ընծեռէ եւ նորոգ հաստատէ , վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ ։ Գըրեալ եւս է տեսակ մեծութեան վերնում կամարին սկզբնաւոր յառաջակաւոյց քան զբնակիչս հողեղինացն 'ի նըմա զօրութեանց ։ Ոչ իմն ընծայէ թըւիչս մարմնոց ընդ թեթեւութիւնս հոգւոց , պատուականին հաստատութեամբ զանարգն յարդարեալ ։ Ոչ ինքնակիր մեղք զաղանաց , եթէ ոչ 'ի մարդոց շարաց և կամ յանհաւատից կոխեցի ։ Տեղ իմն է զարմանալեաց յաղթող խմաստից ժերս տեսութեանց . անբանն 'ի բանաւորէն կառուցեալ ․ նմին օժանդակեալ իբր վեհագոյն յաւէտ նըւաստի ։ Մեծ է քան զմարդ , որքան ընտրելոյն Մովսէսի ցուպն յաղթողական , առաւել քան զգանաւոր , որքան



զԱհարոնի գաւազանն խորհրդական ծաղկեցեալ ․ գերագոյն քան զմնաւոր ․ որչափ զնշխար եւ զնշխարս յետահերձ մաշկեակն ազանչելահրաշ փայլեալ արուեստիւ ։ Օգնութիւն տարդեւէ կըրկին ամենակատար որքանեալ ձեռաց մաքրաբար , քան թէ զինադէն ․ մարմին նիւթական քարի եւ հողոյ , գոյակից հարազատ զգայականաց եւ ոգւոց ։ Իբր զմին անմահ կենդանի 'ի կործանումն է եւ 'ի կանգնումն ․ որպէս զգատաւորն ամենից հոգւոց հանդիսանայ հրաշալիս ազդմամբ յանէծս եւ յօրհնութիւնս ․ իբրեւ անսող աներեւութից զմն հրապարակէ եւ զմն տածէ ․ առ ինքն կոչէ գրեալ յանուանէ իբր զոխրող հրամանատար էիցս ։ Իբր ըղձեռն յաւիտենական անհարուածելի է 'ի գիմամարտից ․ ըմբռնէ զհոգեւորս իբր զհնարագրութիւն մեծին արուեստի ․ անմեղս եւ անվրիպութիւնս ըստ Քրիստոսի հետոյն ընթանայ ․ բարձր ճախութեամբ անպատկառաբար համարձակապէս զօրէն գոլելոյ գլուխ ամբաւնայ ։

ԺԱ․ Այնքան մեծ ունի որբու-

թիւն , մինչ զի զորս ըստ պատկերի Աստուծոյ եղեն , կամմնաւ խորէ : Ցետ յոգունց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ որ սխալեալ 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի , այլ ընդ անդատրաստասիցն թերութեանց գը-ժուարի , ոչ Նզովի , այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ , ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրոյն գտեալ , այլ 'ի մերոց գործոց խրթնանայ . ոչ թողացուցանէ երկկիցս մատչել յըմբռ-նումն ստոյն կենդանատուաց , ըստ տի-րական անճառ խորհրդոյն . ոչ կրկին յաւուր զնոյն ցուցանէ , զի մի անընտ-րաբար նուիրանն խոյտառակեսցի : Վշտակցէ կարեաց զօրպէս իբր ան-խտակիր ապականութեանց , որ 'ի մեղ չարժմանց . առանց բարբառոյ տիրա-պէս հրամանաւ գատի :

ՃԲ . Նա զի և տապան իմն է մաք-րական , կրկին երջանկական , 'ի հեղձ-մանէ կենցաղոյս ալեաց պահապան . ոչ բազմօք անբանիւք գազանաց գասուք և սակաւ մարդկան , այլ ընդ երկրայ-նոցս և զվերինան յինքն հաւաքէ . ոչ յալիս խռովութեան բերի , այլ 'ի



բարձրութիւնն երկնի համբառնայ : Ի-բրև զաշակերտ հրահանգեալ Հոգւոյն Աստուծոյ փախչի 'ի նենգութենէ . ոչ 'ի բողոք մահու մարմնոյ հարուածոց , այլ 'ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ . ոչ Նոյիւ ձեռնարկեալ գործի . այլ հաս-տողին հրամանաւ շինի . ոչ Մովսէս ընդ Բեսելիէլ , այլ միածինն Աստուծոյ Հո-գւովն Սրբով զսա հանդերձէ . ոչ յա-րաշարժ հանապազափոխ , այլ մշտակա-ւոր հիմամբ անսասանելեաւ զսա հաս-տատէ : Դարձեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն ծածեալ տախտակօք առանց զգայութեան տեսողականաց մեղ առաջնորդէ , որպէս կերպարան անքանակ էին յառաջ հետեւեալ 'ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատ-րաստէ : Ընդ Ոզիէլի անտուստ սատա-կէ , եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի . սպանանէ վատնեալ վաղվաղակի առ-ժամայն , եթէ անասնայինն ըծակցու-թեամբ երկրաւորապար գետնաքոխ սայ-լիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնաղինին բար-ձեալ տանիցի . Ոչ լեզուաւ մարմնոյ , այլ բանիւ Հրեշտակաց խօսի . ոչ ու-կան գոյականութիւն , և արագապէս

մատուցեալ լսէ․ ոչ ձայն կերպարանական բարբառոյ․ եւ զպատգամս գործոյն Յիսուսի համօրէն ազանց պատմեալ հռչակէ․ ոչ խաղալեաց շարժականութիւն, եւ աստուածայնով իմն կենդանութեան հագագաւ ազդէ։ Ոչ ոսկերաց եւ ջլաց յօդուած, եւ երկուք հազարօք կանգնովք լայնութեամբ՝ իբր զգունդն անհամար բարձրեալն Աստուծոյ՝ զկենդանական զօրուն գումարտակ հերբայական փառեալ ամբոխին, եւ այժմ ընդ նոսին իբր զանմարմինս 'ի սրբութենէ զանձինս ախտիւ մեղանաց ջեռեալս՝ հատուածեալ յինքենէ հեռի ուղեկցէ ապրեցելոյն 'ի տաժանաւոր աղէտարկութեանցն։ Նոյն իսկ էութիւնն Աստուծոյ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ․ պատուամբ կողին զենուո արբուցեալ։ Ոչ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շաւաւիղք թափանցանց միութեամբ զոյն կենդանացուցեալ նորոգ ապաշապանէ․ ոչ Սաղամին կամ Զօրաբաբել մահկանացուաց ստիխանութիւն, այլ ամենից ունողին իմաստ զաս գծագրէ․ ոչ աննուիրական հաստ-



բակաճաշակ իւղով առ 'ի Յակոբեայ պարարի․ այլ ահաւորին արեամբ եւ փառօք մեծին օծանի․ Ոչ տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ Աստուծոյ զորին որդիս կերեալ ձեռնագրէ․ ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ․ զ'ի ծոց իւր գրկելոյն գոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ։ Փեսայ հարսնութեան սորա Որդին Աստուծոյ կենդանւոյ, զխորդք խնձոյից սորին հայրապետացն փառօք։ Այն ինքն մտուցումն տանէ այսակիր բարձանցն կատարութեան, զի զերկնայնոյն Աստուծոյ ունի զծանօթութիւն․ սատարութիւն է ամենայնիւ գլխոյն գործելոյ, զի 'ի համօրէն քարինս սորա Քրիստոս երկրպագի․ քահանայն է յոյանակէս ուրուական բղխիցն անսառայ, զի 'ի ընաւից մայրից աշխարհի նմանութեամբ կենացն փայտի 'ի սմա Տէրն նուիրի․ խորտակումն է համայն դիւապատիր յուսթիցն արձանաց, զի քարն գումեալ կարկեհան ակամբք եւ վիմօք կենդանեօք այսրէն հաստատի։

ՓԳ․ Այս յարկ չքնաղ եւ տաճա-

ծընկալ ազատ է միանգամայն 'ի յամե-
նայն ծառայութենէ. ոչ օրինակ վեր-
նոյն Սիօնի, քան թէ ճշմարտութիւն
ճանաչի. ոչ կռապաշտութեանն կա-
պաւ բագին և կամ ընծայ օրինին տեղի
սպասաւորութեան, այլ տէրունի բա-
րերարութեանն պարգևարար 'ի մէնջ
համբուրի: Ոչ սասանի երբէք յայլ իմն
կերպարան ձևոյ փոփոխեալ, այլ 'ի
նոյն շուք փառաց միշտ մեծապէս ընդարձա-
կի. սոյն ինքն և երկին երկնի' 'ի յերկ-
րի լուսապայծառ կերպիւ հռչակի:
Որպէս չէ առանց հօրն Քրիստոսի, և
ոչ առանց այսր մօր արգանդի յղի կա-
տարիլ: Անտուն շրջի անբովանդակե-
լին, եթէ ոչ 'ի սմին տան տաղաւա-
րեսցի. ոչ ունի տեղի գլխոյն հանգըս-
տեան տէրն բոլորից, եթէ ոչ 'ի յայս
կայարան կենաց մնեալ ագանիցի: Քան
'ի կամար վերնային երկնի' 'ի յայս հիւ-
թաւոր բնակութիւն առաւել պարծի
անբաւութիւն աստուածեան լուսոյն.
որպէս զդէմս մարգարէին' և զօրինակ
սորին ծածկեցին. որպէս փախեան 'ի
փառաց երեսաց նորին, և նմանութեան
սորուն, որ 'ի տաճարին' ոչ հանդարտե-



ցին. 'ի տօն հանդիսի մեծի գալստի
և 'ի բանականացս դասուց խմբեալ
նուագի. առ օրհնի կրկին բաղձանօք'
քան 'ի դրախտն վայելչական:

ԺԴ. Այս մայր հոգեւոր, երկնաւոր,
լուսաւոր, քան թէ երկրաւոր, շնչաւոր,
մարմնաւոր, զիս գգուեաց որդի. կա-
թըն սնեանց սորա արիւնն Քրիստոսի:
Եթէ Աստուածածնին իսկ պատկեր ըղ-
ձոյն ոք գրեսցէ, ոչ անօրինի: Իբր ըղ-
ձման խաշին փրկութեան զօրութիւնս
զարմանալիս և արուեստս բազմօրի-
նակս կատարեալ հրաշագործէ. բեմ
ահաւորին ատենի' 'ի սմա հաստատեալ
տեսանի. սովաւ խորհրդաբարոյն հեր-
ձուածողաց մոլեգնածու բերանք կար-
կին: Ունի և քարինս իմն իմանալիս և
բանաւորականս, որով զգազանամիտ
անմաքուրս բացուստ 'ի բաց տրոհեալ
տարագրէ: Ունի և Աստուածս սմա-
նըս եղականս' պատկերս մաքուրս միոյն
Աստուծոյ Քրիստոսի: Ունի և զգիրն
իւր ընդ արեւելս' 'ի տեղի խոստման
բնակութեանն մերոյ առաջնոյ. ձեւամբ
իմն ցուցանէ յայտնապէս զպարտեանն
Աստուծոյ շաւիղ. զփայլականն առակ

տիրական ՚ի դէմս բերեալ մեզ վարդա-
պետէ · զփրկութիւնն ՚ի յելից անմի
ծագման արուեստին քրիստոսեան երեւ-
մանն ՚ի վերջնում աւուրն արարածոց
երկրի Թարգմանէ · Ցաւս հալածէ · ախ-
տաժէտս բժշկէ · դիւաց բռնութեանց
զօրէ : Արգանդ որովայնի տոյին աւա-
զանն կենդանարար · ՚ի սոր հարա-
նեաց սոսա զաւք Առաքելոցն : Այն-
քան ճոխացաւ բարգաւաճեալ երանու-
թեամբ · մինչ զի նոյն ինքն փրկչին ա-
նուամբ վայելչապէս յորջորջեցաւ · տի-
րամօրն լուսոյ կոչմամբ ՚ի մերձաւորաց
միածնին ձայնեալ կնքեցաւ · Ծփելոց
մեղաւորաց նաւահանգիստ հանդար-
տութեան · խրախճանարան վերնոյն
գաւուց · բժշկարան անախտելի տարա-
կուսեալ պարտաւորաց : Երրորդու-
թիւնն անպատում ՚ի սմա փառաւո-
րի օրհնեալ յամենայնի :

ԺԵ · Իսկ եթէ ոք ձեռն չարութեան
՚ի վերինն արքայութիւն յանդգնաբար
համբառնայցէ , և գիւտ ինչ մարմնաւոր
և կամ հնարք մարդկային և կամ ար-
ուեստ երկրակենցաղ զահմանեալ ա-
ւանդութիւնս առ ձեռակերտս եկեղե-



ցի վարկանիցի , և ոչ պարգեւս առա-
ւել կենաց և ակնկալութիւն աստուա-
ծային և Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լու-
սանորոգ նախագրութիւն եւ. երախ-
տեաց Բարձրելոյն ամենատուր լիակա-
նութիւն , և կամաց արարողին խնկա-
ւորեալ խորհրդարան , եւ Առաքելոց
ձեռքինն աջս բարեհամբար հիմնարկու-
թիւն , եւ միանգամայն սանդ՝ դուռն
երկնից և քաղաք Աստուծոյ կենդանւոյ
և մայր կենդանեաց · այլա ՚ի պարտեաց
և ճշգրիտ տեսակ կերպի երեւակիս
բանականի · իմանալին՝ խորհուրդ հո-
գւոյս · և շօշափելին՝ պատկեր մարմնոյս ·
եւ որբութեանցն անդամանձաւէից գերա-
զանցեալ նոր սրբութիւն և քրիստոսեա-
նըն նշանաւ պայծառապարծ պսակե-
ցեալ · զայնպիսի ոչ խոստովանողն
մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ
՚ի ձեռն բանին իւրոյ էակցի · բարձ-
րեալ ՚ի նմանէ և զաւանդ շնորհի Հո-
գւոյն փառակցի · փակեսցէ զդուռն
կենացս այս աւագաստի յանդիման նո-
րին : Իսկ մեք զորս գրեցաք՝ ամէն և
վկայեմք , հաւատացեալ որում կար-
գեցաք , յանուն և ՚ի փառս ամենա-

կալ Երրորդութեանն և միում աստուածութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Այն իմ հաւատ ձերրորդութիւնն, եւ այս 'ի մայրն իմ ջուսափառ խոստովանութիւն :

---

## ԹԱՆ ՀԶ.

Վերստին յաւելուած յրյէն հեծութեան նորէն հոյոյէ ու նոյն այնէրս ծաղկանաց բանէ :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. ԱՍՏՈՒԱԾ ողորմած, բազմագութ, հզօր, ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ, որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի, որ և մնաց է անհնարաւոր, քո է հատուցանել պտուղ քաղցրութեան ընդ փշոց խստութեան, սկըզբնահայրդ այսմ նորոգ և զարմանալի կանոնաց կենաց. քանզի բարի առնել



տանելոյն և աղօթս 'ի վերայ հալածչին, և փրկութիւն հայցել խաչողին, և սպանողին ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից, որոյ քաղցրութիւնն անճառ է քան զօրհնել, և բարերանել կամաց քոց ախորժելիք, և զովեալ շնորհաց քոց ճաշակելիք. հագի երկասց և զօրութիւն գեղջ մերոյ, տէր Քրիստոս, օրհնեալ 'ի բարձունս : Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք՝ և բարեմասնոյց ձեռաց չարիս դարձուցին. իսկ դու լոյս և ողորմիչ լուսոյ, ոչ լսես անէծս, ոչ ախորժես չար, ոչ կամիս կորուստ, ոչ ընդունիս մահ, ոչ յուղիս 'ի խաւարութենէ, ոչ տկրիս 'ի ցասմանէ, ոչ հալածիս 'ի բարկութենէ, ոչ մթանաս 'ի սիրոյ, ոչ այլայլիս 'ի գթութենէ, ոչ փոփոխիս 'ի բարութենէ, ոչ թիկանց շրջումն և ոչ երևասց անդրադարձութիւն, այլ ամենեւին լուսաւորութիւն և նկատումն փրկութեան :

Բ. Եթէ քաւեսցես, կարող ես. եթէ բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես, եթէ ողջացուցանես,

հնարաւոր ես. եթէ սորվեսես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, Աստուած ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեաց ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լցանես նեղութեանս, անգորիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զստամբեալս հաստատես, վէմ ես. եթէ պապակեալս արբուցանիցես, աղբիւր ես. եթէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. եթէ զօգտակարն իմ ծանուցանես, բարի ես. եթէ զբիծն անտես առնիցես, երկայնամիտ ես. եթէ ընդ փոքու 'ի դատ ոչ մտանիցես, քաղցրեալ ես. եթէ ծառայիս ձեռն մատուցես, առա-



ջող ես. եթէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. թէ վհատելոյս գարման մատուսցես, կերակրիչ ես. եթէ զանզգետս պարարեսցես, վարդապետ ես. եթէ զգիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես.

Գ. Եւ արդ՝ քո են այսոքիկ, տէր ողորմութեան, ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ, նախնի նահատակդ համբերութեան մնայից, որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրացեալ յասպարիսի ճակատուն, զի կակղեսցես զկարծր բռնութիւն մարմնոյս գուսողութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանդարտակլոյդ մարմին չափեալ զգնութեանս մերում զտաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ, որ առ մեզ, արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն.

# ԲԱՆ ՀԷ.

Վերստին յաւելուած հրէին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Ես քանզի օր է օրհնաբանեալ և լուսանորոգ կչռութեան երկուց ընտրութեանց տարածոյս սահմանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոյն խոնարհութեան և կործանելոյս վերբերութեան, սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան՝ զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ առել առտանօր 'ի քոյդ այտի՝ զոր ընդ իմ կըրեցեր. Աստուած բոլորէց։

Բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն խնամս կերպիւ, ոչ խօսեցար տըւիչդ բանի. ոչ բարբառեցար հաստիչդ լեզուի. ոչ ձայն արձակեցեր սասանիչդ երկրի. ոչ մռնչեցեր ամենազդեցիկ փողդ մեծութեան, ոչ երախտեօքն քո



յանդիմանեցեր և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր, ոչ մատնեցեր ամօթոյ՝ ըզմատնիչսն զքեզ տանջանաց մահու, ոչ 'ի կապեալն զքեզ զիմադարձեցեր և ոչ յապտակելն զժուարացար, ոչ 'ի թըքնուլն թշնամանեցեր և ոչ ընդ կռփելն երբեք խռովեցար, ոչ ընդ կատակելն սրտմտեցար և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր։ Մերկացուցին զզգեստ պատմուճանին իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր արբեալ կըրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեանն. ճաշակեաց վշտութեամբ և արգել անդէն տարակուսանօք. առին մոլեգնաբար և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Գանիւ հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ խառնիճաղանջին ամբոխի դատապարտեցին, ծունր կրկնեցին նախատանաց և պսակ եդին արհամարհութեան։

Գ. Ոչ ետուն հանգիստ կենարարիդ, եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրև զհեզ, բարձեր որպէս

համբերող ․ ըստանձնեալ իբր զպարտա-
կան զխայտն փշոց ․ որպէս զծաղիկ
շուշանաց հովտաց՝ ուստի բերեալ զգէ-
նըն կենաց ․ զի յարհաւրաց գիշերայնոց
զներակերտս պահաւորակս մարմնեղէն
գոյութեանս պահպանեսցէ ՚ի դատա-
պարտութեանն վայրի իբր ՚ի խրախ-
ճան խնճոյից ․ Հանին արտաքս իբր զող-
ջակէզ ․ կախեցին իբր զխոյն Սաբեկայ
ձգեալ զեղջերացն ․ տարածեցին ՚ի սե-
ղան խաչին իբր զպատարագ ․ բեւե-
ռեցին որպէս չարագործ ․ պնդեցին իբր
զապստամբ ․ զխաղաղութիւնդ երկնա-
ւոր իբր զաւազակ ․ զանկապուտ մե-
ծութիւնդ իբր զտառապեալ ․ զառ ՚ի
քրովբէից պաշտեցեալդ իբր զքամա-
հեալ ․ զահմանդ կենաց իբր զարժա-
նաւոր սատակման մահու ․ զաւետարա-
նիս ՚նկարիչ իբր զհայհոյիչ օրինին ․ զը-
Տէր և զկատարումն մարգարէից իբր
զհամառօտիչ գրեցելոյն ․ զճառագայ-
թըդ փառաց և զկնիք անքննին խորհըր-
դոցդ հօր իբր զներհակ ծնողիդ կամաց ․
զօրհնեալդ խնկապէս իբր զտարագրեալ ․
զկատարիչ օրինին լուծիչդ իբր զայր ՚ի նը-
զովս դրեալ ․ զհուրդ ծախիչ իբր զհեր-



քեալ խմն կալանաւոր ․ զահաւորդ երկ-
նի և երկրի իբր զհաւատոյ պատժա-
ւոր ․ զ՚ի լոյս անմատոյց ծածկեալդ իբր
զհողածին ըմբռնեալ ։

Դ ․ Ո՜վ քաղցրութիւնդ և երկայ-
նամիտ բարերարութիւնդ ողորմածիդ-
գթութեան ․ որ վասն ապախտաւոր և
անօրինեալ ծառայիս Տէրդ բոլորից զայս
ամենայն կամաւորապէս և հաւանողա-
կան հաճութեամբ տարեալ՝ մարմնոյդ
միութեամբ ՚ի քեզ ընկալար ․ և մին-
չեւ ՚ի քնարան շիրմին տապանի ան-
պական ՚ի լռութենէ ամբողջ նոյնու-
թեան Աստուած անքննին՝ զնոյն կը-
րեալ նախատինս անճառ համբերու-
թեան ․ յարեար կենդանի ինքնիշխան
բարձրութեամբ լուսոյ ․ աննուաղ մար-
մնով և անթերի աստուածութեամբ ․
Օրհնեալ փառօք ․ գովեալ գթու-
թեամբ ․ բարեբանեալ միշտ ողորմու-
թեամբ ․ յաւիտեանս յաւիտենից ․
ամէն ։

## ԲԱՆ ՀԲ.

Վերջին յաւելուած հինին հեծութեան Նորին հոգւոյ առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ՝ անկեալ յերեսս հաւանութ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ. զբարեգործիդ ողորմութեան զկենդանարար սոսս համբուրեմ, զայս օրհնեալ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ ։

Բ. Աղաչեմ զքեզ, միայն խնամակալ, մարդասէր, գթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի ունայնացի վաստակն աշխատութեան փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ Աստուծոյ. մի սոսկ եղիցի քրտանցն կաթուած խառնեցեալ արեամբ 'ի մատնութեանն աւուր գիշերին. մի լիցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի եւ առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգեւեցեր. մի ջընջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից



քոց կայլակք նորոգեսցին. մի անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեանս իմում մատուցեր. մի պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել. ահա յաղթեսցես կամօք քո՝ ըղձից չարին. վիրաւորին ապշեսցի միանգամ զարհուրեալն, կրկին պարտեսցի 'ի սպառ դատեցեալն. մի խնայեր զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ ։ Զանձառն արարեր բարերարութիւն յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորում բնաւ իսկ կորեալ եւ օտարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն. մեռար անմահդ եւ զմահացեալս նորոգեցեր, եթէ զկանոն համաձեւութեան օրինին փոխեցեր, արդ զդիւրինն եւ զհեշտականն եւ զեւս հնարաւորն մի արգելցես, սկզբնաձիր ողորմութեան բարեգութ օրհնեալ եւ երկայնամիտ թագաւոր. Ազդեա բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր 'ի նախնում աւուրն, և վաղվաղակի փոփոխեալ զտայդ 'ի լաւ անդր, և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հեռա-

ւել լուսոյդ . դու եղիցես ինձ յայս՝ ճառագայթ ծագման հայրենի կերպիդ . և կոչեցայց առաջի քո ծառայս վճառապարտ՝ ողորմել շնորհել առ 'ի քէն . ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի զպարտն հատուցանել . աղա շնորհեա ինձ տառապելոյս զերեսքո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատելոց ։ Արգել և կնքեա զընթացմունս եղկին , որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ՝ տեսանէ . պահեա ինձ ըղշնորհս ամենապայծառ զանձուցդ մնացականաց , որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց . պաշտպանեալ 'ի քէն անսահման բարի .

Գ. Ահա ողորմեա ինձ , գթած , աղաչեմ զքեզ ողորմեա ինձ , հզօր , կըրկին ողորմեա . Մի փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց իմոց , բարիդ ամենեցուն . մի բառնար 'ի վտանգելոյս զառ 'ի քէն պարգևեալդ շնորհ , մի կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ , մի լուծաներ զկնքեալ կնիքդ արքունական պատկերիդ . Մի յայտնեսցին փուշք մեղանացս 'ի սրբութիւնս մըտացս , մի խզեր զկապ միութեան զընդ



քեզ սիրոյն սնդութեան , մի մերժեսցես զարուեստ զօրութեան լեզուիս յարմարութեան , մի պակասեցուցաներ զյաջողուած աջոյս առ 'ի զլուսոյդ մատունս բաշխել . Մի գրեր 'ի դպրութե կենաց մատենիդ զմահուն պարտիս . մի պահեր , մի ինձ համարիր , մի յիշեցուցաներ , մի ամաչեցուցաներ , մի նախատեր , մի ոտն հարկաներ , մի արձանացուցաներ զմեղկութեանցն , մի ամբարեր զկորստեանցն , մի իբր ըստգըտեալ իմն ամբաստաներ . Մի յարուցես ընդ իս զծառն անիծից , մի արձակեր 'ի յիս զսաղարթ վնասուցն . մի ընձիւղեր զծաղիկ մեղացս . մի բերցես ընդ առաջ զհամակ պտղոցս , մի տարածեր զչութիւն պտղոյն . Մի թուեսցես 'ի ձիւղս երկրատեղծ մատանցդ զգիտոս գործոց . մի մատուցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւնս իմ յիշատակել . մի մատնեսցես իմոյս կամաց զաւանդս հոգւոյս վարել 'ի գերութեան . մի ատեն զիս փառաւորեր՝ զի անսանօր զատապարտեսցես . մի նուաղութեամբ այսր անցաւորի զյաւիտենական բարիսն առ-

ժեր. մի՛ 'ի սակաւուս այսմ ժամանակի զանվախճանելի զփառսն շահեր. մի՛ ընդ հոլովս վշտաց հեծութեան զանախատական զկեանսդ զրաւեր. մի՛ ընդ տուեալս այսր մթութեան զանձաւելոդ լոյս փոխանակեր. մի՛ զերասանակ մտացս լքցես՝ ըստ արտուղի հետս հետեւել. մի՛ զկամուրջ կենցաղոյս զրկեցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պահեր 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել. Եթէ անէարես զաւանց համարոյ գործոցս իմ չարիս. մեռայց կենդանւոյն. եթէ շտեմարանես 'ի սըրտի, աստատին կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ խայտահալեցայց. եթէ տնկակից ինձ թողցես զմեղսն. 'ի նոյն վառեալ մաշեցայց.

Դ. Ակնարկեա, միշտ զօրեղ ամենակարող, փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ, հրամայեա, գթած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մար-



մնեղէն յարկի անդամոյս, յորում հանգուցեալ անլքանելի բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղացս մերժեալ 'ի սպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես. ամենակեցոյց թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

## ԲԱՆ ՀԹ.

Վերստին յաւելուած ձայնի հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ՅԻՍՈՒՍ Տէր, Տէր գթութեանց, սիրողդ խրատանց, Աստուած ճշմարիտ. Դայեա վերստին 'ի բնութեանս կերպարան միշտ սխալական, զննեա ինձ դարձեալ զամէնընթաց տարածմունս ելից արեանս շարժողութեան. բժշկապէս մասին տեսանել, զի մարդ եմ հաստատեալ մոգք խակութեան թերի խար-

հրոգոց. յայն ինչ, զոր դու իսկ վկայե-
ցեր տեառնդ ոչէից, միայն դու անմա-
ոյն ստութեան խաւարի ։ Այս իրա-
ւունս է գրել ինձ ընդ մեղուցելոյն
մարդկօրէն վրիպանաց ոխակալնամ ազա-
տեալ կրկին իբր զերկրածին մանկացո-
մարմին, քան բանիւ քում սուտ երե-
ւել. քանզի արդարեւ գիտակ իսկ ես,
թէ չար է արարն և ընդաբոյս չարու-
թիւնն մեր. և ոչ փոխխին խորհուրդք
մեր յաւիտեան, ըստ հոգեհանճար ի-
մաստնոյն կանխաղէկոյց առակի.

Ծ. Թեթեւացո զսաստկութիւն տան-
ջանացն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝
արկանել զորդիս գեհենին զարդ մա-
հուն յաւիտենականի. բարձ զանձթոյն
պարտիս, որ պահեալ է յայտնել թըշ-
ուառականիս յետին աւուրն յանդի-
մանութեան ։ Խրատ խաղաղութեան
յառաջապարգեւ ողորմութեամբ քո
ընծայեցո, զի մի անտանելիքն ահաւո-
րութեան 'ի ցոյց ինձ եկեալ կերպա-
րանեսցին, անյոյս ապշութիւն ընդ կե-
նաց զղջման առաջի կարգեալ. գատաս-
տանն ահաւոր, անկաշառ և անխաբելի
դատաւորին, անծթն սոսկալի, կշտամ-



բանքն սարսափելի, յանդիմանութիւնն
անփախչելի, տագնապն անձողոպրելի,
պակուցումն անխրախուսելի, դողումն
անվճարելի, լալումն անսփոփելի, կըր-
ճումն ատամանցն անբժշկելի, ապակա-
նութիւնն անողջանալի, անէծքն սար-
սափելի աստուածային քո բանիւդ, փա-
կումն գթոյն եւ արգելումն ողորմու-
թեանն ։ Որ ընդ գալարելն երկնի և ընդ
երկրի դղրդելն ընդ կարծրութիւն յա-
տակին, ըստ կուտակելոյ կոհակաց իրը-
ռովութեան ծովու իբր փախստեան
կերպ ցուցանելով. մի զկնի հետս խա-
փանեն կապեալ յերկոցունց. և տառա-
նեալ սասանեալ լայնատարած գետնոյս
թանձրութեան 'ի հիմանց անտի, ընդ
ուժգնակի բախման թնդելոյ ներքնային
խորոց հարթէ զերկինս, և հալեալ հըր-
դեհին բնութիւնք վիմաց և ամենայն
տարերաց գոյից. այլայլին երկինք յա-
նեղծ փոփոխութիւն, եւ յեղանակին
արարածք տարերօք իւրովք 'ի նորոգ-
նմանութիւն ։ Ծածկութիւնք գործոցս
հրապարակին, և աներեւոյթք կոյց մեր
յայտնին. վարք կրօնից ներգործեցելոց
'ի մարմինս մեր նկարին. թագաւորն

երկնից յատենի նստի, և վճիռ հա-տուցմանն 'ի ձեռին իւրում: Ահա վա՜յ ինձ եօթնից անգամ կրկին եղկու-թեամբ, ըստ չափոյ կշռութեան այսր համարոյ, որ զանբաւութիւնս թուոց պարագրէ: Զի՞նչ գործեցից ողբալս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յա-ռաջեալ քան զհանդիպումնն. զոր Ամն մարգարէ զօրինակին նմանութիւն 'ի դէմս բերելով, զձեւ տագնապի ան-ձերծ փախստեանն նշանակէ ասելովն. զոր օրինակ՝ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ, եւ փախնուցու յերեսաց արջոյն և մտանիցէ 'ի տուն և յեցուսցէ զձեռն իւր յորմ, եւ խածանիցէ զնա օձ: Եւ դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսիլն քըստ-մնելի. ո՞չ ապաքէն, ասէ, խաւար է օր Տեառն, օր խաւարոյ և մթոյ, օր ամ-պոյ և մառախղոյ:

Գ. Յորժամ հրեշտակն պահպանո-ղական կենակից հօր սոսկման իրա-ւամբք ամբաստանեսցէ, և հատուցա-նողն ահաւոր արդարութեամբ յանդի-



մանեսցէ. սպասաւորք թագաւորին ա-ռանց խնայելոյ խուճապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն և զոմանս յամօթն դա-տապարտեն. կիսոց դէմս լցեալս ծաղրու-ցուցանեն, և ինձ ահարկուս և քըստ-մնելիս երեւեցուցանեն. ոմանց պսակս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց կորուստ մահու բոցոցն. արդարոցն ձայն աւետեաց, և ինձ դուժ անվախ-ճան վշտաց: Յորժամ առ բարիսն՝ մա-հու յաղթութիւն 'ի սպառ մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դրանն փակել ոչ ինչ ազդիցէ. վը-ճար եղեալ գթութեանն առ իս: Յոր-ժամ դպրութիւնք հրաշիցն զարմանա-լեաց, որ են ծածկեալքն յաժմուս հասարակաց վարուցն տեսակք մարդ-կային բնութեանս գործոց. յայսպէս ս-րոյ եղեն դպութիւնք ամենայն էից, յիւրաքանչիւր մարմինս անպակաս զը-րութեամբ իւրոյն երեւելին. և խորու-թիւնք անճառելի կերպեցելոց յիմաստից սատեացն առաջի աչաց մերոց կերպա-րանին: Ուր այժմ շահավաճառութիւնք ողբոց և արտասուաց զերկինս դրաւեն, և անդ իբր զայսաժաման ընդունելու-

թիւնք արհամարհեալք ւքանին․ հաւաշմունք հեծութեան ոչ կանխաւ առի առաքեալ, չէ երբէք գտանել անդէն․ ողորմութիւնք ճշգով սերմանեալ, ոչ պայծառ վաւմամբ գնան առաջի։ Ուր տապանն նախայանցից և կտակարանն տիրանարգից և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս դատախազեն, յորում սոսկալի վայրի ամն զուխան կցորդութեան հայրենի, և ամն զխորանն վկայութեան անտեսիցըն, և ամն զարիւն մեծին Աստուծոյ ամբաստան լինի իրաւացի առաջի իմ տարածանեն։ Զաննջանարանն բաղմապատիկս անձամբ անձին ատէն իսկ պատրաստեցի, զինչ մխիթարեցայց համարձակեալս յուսոյ․ զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն, որ փառաւորեալքն են երանութեամբ, տարսեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակորոյս ստացման որդիս ո՞ւր երթեցայց․ որ ոչ միայն չեմ պակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի և կորուստն անապաւելի։

Դ․ Այլ անարգեա, ամենապարգեւ



զօրութիւն անձառ, ձեռն փրկութեան ՚ի կորուստ գերելոյս․ զի օգնեալ ՚ի քէն՝ դարձայց միւսանգամ ՚ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվրանգելի պրծեալ ՚ի պատժոց․ աստանօր տեսեալ մտաց խմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ ՚ի լուր երկիւղին ՚ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց․ և մի մատնեցայց կորեանցն աւիծուց․ որք խնդրեն ՚ի քէն զիս ՚ի կերակուր՝ ծախել աստամամբքն գաղանութեան, զի զորովայն մահուն լցուցեալ՝ զատուստ պարարեալս անդ ձգեալ հալեն, ուր անսպառ պահի մնացուած մթերիցըն ՚ի ծախուամն յաւիտենից։ Զի դու միայն բաւես կորզել ՚ի ժանեաց սատակման ՚ի կեանս և յերանութիւն, ընաւից ապաւէն թագաւոր լուսոյ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանըս․ ամէն։

# ԲԱՆ Զ.

Վերոյին յաւելուած իւրին հետևութեան նորին
Գովութիւն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և անհարկու որտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց, աստուածային բարկութեանց, տագնապեալ ոգւով թախծութեան 'ի սպառ, աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին. հրեշտակ 'ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանց քան զընակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, եդեմ շնչական, ծառ կենացն անմահից բոցեղէն սրովն պարունակեալ. 'ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն յարդա-



րեալ և տաղաւարեալ. միածնին Հօր և քեզ անդրանկին, Որդի քո ծննդեամբ և Տէր արարչութեամբ. ընդ անաղտ մաքրութեանդ և անբիծ բարի, ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս. Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս. և մատո ընծայեա ընդ սմին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի 'ի քոյդ պաղատանս. հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քում երջանիկ և խնկաւորեալ հայցուածոյ, տունկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քեն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քո և Տեառն ։

Բ. Օժանդակեա թևոցդ աղօթիւք՝ խոստովանեալ մարդ կենդանեաց, և ելիցն իմ յերկրէս հոլովէ՝ առանց ըկանաց հետևել 'ի կեանս օթևանացդ պատրաստութեան, զի թեթևացի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ. Արդ այսպէս տուր ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի, ողջացուցիչ երկանցն Եւայի, բարեխօսեա,

խնդրեա, աղաչեա, զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն: Արտասուօք օգնեա վտանգեցելոյս, գոլեալդ 'ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնողդ Աստուծոյ. ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս, տաճար երկնային, փառաւորեա զՈրդիդ քո 'ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղախին Աստուծոյ և մայր. բարձրասցի պատիւ քո ինեւ և ցուցցի փրկութիւնն իմ քեւ:

Գ. Եթէ զիս գտցես՝ տխրամիտ. եթէ ինձ ողորմեսցիս՝ որբուհի, եթէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, եթէ ըղ-հարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, եթէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեխնամ, եթէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ սուրբ կոյս. եթէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ յԱստուծոյ, եթէ յիս ցուցցես ըղ-գթածութիւն՝ լուծիչդ՝ անիծից. եթէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ, եթէ 'ի խուովութեանցս յուզմանց փո-



խեսցես զիս՝ խաղաղարար, եթէ զերկպե-լս ինձ հնարաւորեսցես՝ գոլեալ, եթէ վասն իմ մտցես 'ի հանդէս՝ մահու նահանջիչ, եթէ զդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն, եթէ զբաժանումն իմ խորոց քակտեսցես՝ հաշտութիւն, եթէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ, եթէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս, եթէ զալեացս ձայն հատցես՝ բերկրութիւն, եթէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց, եթէ 'ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից. եթէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կըտակ նուիրեալ: Օրհնեալդ միայն 'ի շըրթունս անբիծս լեզուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի, զոր անճառասպէս ծնար բովանդակ մարմնովն և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ Հօր և Հոգւոյն Սրբոյ էութեամբ և անքննութեամբ միոյին բնութեամբս միացելովլ, ամենայն և յամենայնում, մի յեր-

բոլորութենէն . նմա փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն ։

---

## ԲԱՆ ՁԱ.

Վերստին յաւելուած ներքին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն ողբոց մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Ընդ Աստուածայնին մաղթանաց՝ ահա և զվերնոյն անմահ հրեշտակային լուսաւորելոց զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ. որք են բարիք բարեգործեալք 'ի բարեբարէդ. անկիրթք չարեաց, հաստատեալք յամենիշխան հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք անպարտելութեան բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մտաց արագունք ։

Բ. Որք և պաղատելոյս տնկոյ թը-



զենոյն նուամեանն զատարկութեամբ, որ զընաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնոյն. յամայր յամիութեամբն յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ. սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զոկեալ 'ի պտղոյ, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս. աքա բարեխօսք, հանդերձիչք, այլ և խնամակալք, որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրից կարեկցելով, բարեմանութեան մեր ապաւէն, եւ յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ ։ Քանզի արդարեւ մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ Աստուծոյ վասըն մեր կարգեալ առ նոսա, զի նոքա բանիւ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ ։ Որք և գալոց են ընդ միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին աւուրն յայտնիչք կրաւածք ըղձմտակարարութիւնն որ առ մեզ. որ և անտանօր կարեկցեն աղգեալ հառաչ-

մամբ զմշտանուէրն նուագ ձայնի, ողորմեա՛ դու ստեղծեր, մի՛ կորուսաներ:

Գ. Արդ՝ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից՝ և 'ի մեր հեծութիւնս հաստատեսցես, բնաւից արարիչ, որ յաղթես գթութեամբդ քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին: Արդ վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոցն, բոցանիւթիցն, հոգեղինացն և անվանելեացն, յամենաձեցուն առաւելութեամբ 'ի բարձրն ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութեամբ՝ անցուրս ջերմութեամբ ջեռուցանողք ինքնաբուն տապովն աստուածսիրութեան ըստ ինքեանց զմերս սառնասեր որոյցս անբորբոք չիջուցն, այրել անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և զանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յԱստուած միացեալք անբա-



ժանելի. Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, և զինուորութիւնք անբիծք, ահաւորք, երկնաւորիդ Աստուծոյ աղատաղնեայ պաշտօնեայք, 'ի յամփոփ լուսոյ ցօղք նշուլից:

Դ. Որովք և ինձ մեղաւորիս հողեղէնի մարդասիրեսցես ողորմել Յիսուս, աղաչանօք խմբին հրեշտակի, դարձուցանելով զիս, Տէր, 'ի բարիդ քո հետոյս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ ատեացս՝ ուրախութեամբ որպէս յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ քեզ, արքայ բարձրութեան փառաց անհասից, 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուցէ զանկեալ ողորմած: Եւ քեզ ամենին ընդ Հօր անհասի՝ թագակցութեամբ Հոգւոյդ անճառի վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԲԱՆ ՁԲ.

Վերստին յաւելուած նորին հեծութեան նորին հոգւոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Տէր Աստուած բարերար, բաղձալուրդ Թագաւոր, կենաց պատրաստարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան, որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար, գործեցեր զանպատումն եւ հանդերձեցեր զհրաշալին, մինչեւ կատարեցեր զաւետեալն ընդ ամենալիր աստուածութեանդ ։

Բ. Արդ վասն առաքելոյն որոց յերկնատեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց եւ Հոգւովդ Սրբով օծելոց, զորոց զգօվեստն արժանաւորութեան ըստ խնամ՝ կարի՝ առ 'ի փառս քո, Տէր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, եւ ինձ ողորմեսցիս յիշատակաւ սրբոց նոցին ընտրութեան ։ Շաւիղ ինձ ելից նոքօք հանդերձեսցես յերանութիւնն փափաքելի. ձայն բարի հովուութեան նոցին 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի ։ Մասն



կալայց 'ի յանեղծութիւն փրկութեան տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց. գերացն բանականաց, աւետարանչացն բարձանց. իշխանացն պանծալեաց, լուսապայծառթագիւ պճնելոցն, 'ի զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղոյն զուարթութեան անբաժան յուսոյն կատարելոց ։

Գ. Ընդ աշակերտաց մեծին հրամանի բարձրեալդ Աստուծոյ Քրիստոսի՝ եւ մարտիրոսացն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու եւ վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր եւ ամենակիրն անդամօք, երկրաւորական եւ հողեղանգուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան եւ կենդանացան հոգեպէս. արիաբար ելեալք 'ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու, իմանալեացն անտեսիցն եւ ծածկելոց աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք. աշակերտք առաքելոցն եւ չարչարակիցք նոցին, որ հաւատարեալ

գործովք ընդ Նոսին, կատարման ըղձանք անպակասելեաւ՝ պարեն 'ի խըղճմտանս անկեան երանութեան. որոց հաճոյական և ընդունական մաղթանօք արիւնընծայ վաստակաւորք քրիստոսի խնդրուք աղերսիւն յարգմանք՝ ընկալցիս Նորա ըստ նոցին մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արժանացեալ:

Դ. Ընդ խաղացեալն հուրբք և սուսերբ՝ արեամբ Ներկելոցն, և ճգնաւորացն որոց հարցն միանձանց և քեղհեաւելոյն. Որդի Աստուծոյ, անպարտելի քաջութեամբ և անպատիր ըղգաստութեամբ, ընդ դժնեայ զուողե մարմնոյս բռնութեան արխայէս մարտուցեալ. սովիմք վանեցին զանմարմինն Բելիար. և մշտամարտ հանդիսիւ յաղթարիսի կենցաղոյս առանց գլուանաց ծանրաբեռնութեան 'ի լայնածաւալ ծըփանաց աշխարհիս ծովէս տառապանակաւ մարմնոյս թանձրութեան զթեթեւութիւն հոգւոյն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր ոսրողք վերնում վիճակին առանց յետնոցն մնածութեան. զթագն յաղթութեան համարձակապէս՝ պայծառ ճո-



խութեամբ սրճնեալ խոկայէս 'ի գըղլուխ կայեցին. վասն Նոցին արժանաւոր մաղթանաց և Նուիրական հայցուածոց և զիս զմեղաւորս 'ի պատժականաց ընկալ ընդ Նոսին:

Ե. Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ Նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսարկութիւն, որ վարըն իմ դոչէն քեզ 'ի հաճութիւն, և ես ընդ Նոսին իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութեան, ապեղութիւն ընդ վայելչութեան, և կամ տիղմ ընդ գեղեցկութե մարգարտի. և կամ հող ընդ յստակութեան ոսկւոյ, և կամ քարինս անարգըս ընդ պայծառութեան արծաթոյ, ունայնութիւն ընդ ճշմարտութեան. և կամ աւազ ինչ առաւնաւոս ընդ կըշղութեան զանգուածոյ հողի. որդ լուր, հզօր, Հնարաւոր, գովելի. զնոցայն վասն իմ և զիմս ընդ Նոսին 'ի Նոցին գովեստ, 'ի փրկութիւն իմ և 'ի փառս քո, ամենազօր, բարերար, օրհնեալ երկրպագելիս, կարող, անքնին, անճառ, անեղծ և անատեղծ: Քո են պարգևք, քո են շնորհք. դու սկիզբն և պատ-

ճառ բարեաց ամենայնի ։ Ոչ ես դատա-
պարտիչ, այլ ազատիչ ։ ոչ ես կորու-
սիչ, այլ փրկիչ ։ ոչ ես մահացուցիչ,
այլ կեցուցիչ ։ ոչ ես տարագրիչ, այլ
ժողովիչ ։ ոչ ես մատնիչ, այլ ապրե-
ցուցիչ ։ ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ ։
ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ ։ ոչ ես ա-
նծիչ, այլ օրհնիչ ։ ոչ ես վրիժառու,
այլ շնորհիչ ։ ոչ ես թշուառացուցիչ,
այլ մխիթարիչ ։ Ոչ եղծանես, այլ գը-
րես ։ ոչ սասանես, այլ հաստատես ։
ոչ ոտն հարկանես, այլ սփոփես ։ ոչ
պատճառս յօգնես մահու, այլ հնարս
խնդրես կենաց ։ ոչ ես 'ի կամս չար-
ժեալ սատակման, այլ 'ի փրկութիւն
ողորմութեան ։ Ոչ մոռանաս զայցելու-
թիւն, ոչ լքանես զարի, ոչ արգե-
լուս զգթութիւն, ոչ բերես վճիռ կո-
րստեան, այլ կոչակ ազատութեան ։
Ոչ թշնամանիս յանցաւորութեանց, ոչ
բամբասիս 'ի շնորհաց ։ ոչ հայհոյիս 'ի
պարգեւաց, ոչ նախատիս 'ի ձրի ձրից,
ոչ անգոսնիս յերկայնմտութեանց ։ ոչ
եպերիս 'ի ներութեանց ։ ոչ բանսար-
կիս 'ի բարութեանց ։ ոչ անպատուիս
'ի քաղցրութեանց, ոչ քամահիս 'ի հե-



ղութեանց, ոչ առաքին այսոքիկ տը-
րտնջմունք, այլ անլուելի գոհաբանու-
թիւնք ։ Բարձ զմեղս իմ, հզօր ։ լուծ
զանէծս իմ, օրհնեալ ։ քակեա զպար-
տիս իմ, ողորմած ։ ջնջեա զյանցանս
իմ, գթած ։ մատո մատն այցելութեան,
և անդստին իսկ կատարեցայց ։ զի՞նչ
քեզ, Տէր, քան զսոսին դիւրագոյն,
և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարե-
ւորագոյն ։ Այլ կենդանագրեա, բարե-
խնամ, քոյինաստեղծ պատկերիս փը-
շուռն կրկին 'ի շունչ նորոգման լուսա-
ւորութեան մաքրական շնորհի զամենա-
մեղս ոգի պաշտպանեալ ։

Զ. Մի՛ ածեր, ողորմած, ինձ օր
տարաժամ 'ի համառօտս երբէ՝ անթօ-
շակ ապաշխարութեամբ ընդ անկատար
ուղին հետեւել ։ մի՛ մատուցաներ բա-
ժակ դառնութեան 'ի ժամ ծարաւու ։
մի՛ փակեր, գթած, իմ հանդէպ զյա-
ջողուած հոգեւոր օգտիս, և մի՛ իբր
յանկարծադէպ հինից ասպատակ գի-
շեր մահուն ինձ պատահեսցէ ։ մի՛ տայ
տօթոյն յանպատրաստ պահուն զարմա-
տոյս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛
լուսնական գիջուածք հատեալ զաղո-

նեսք վնասեսցեն , մի՛ պահեսցի ինձ սուռն մեղացս , և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն ։ Մի՛ հանգիստն մահ բերիցէ , և մի՛ ննջումն 'ի սատակումն յառաջեսցէ . մի՛ քունն ինձ կորուստ լիցի , և մի՛ նիրհումն ապականութիւն գործեսցէ . մի՛ վախճանն անյարմար 'ի վերայ իմ սրշաւեսցէ , և մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ 'ի խոնարհ ԼԵԹԻ ։

Է . Դու ես տէր , դու գթած , դու բարերար , դու երկայնամիտ , դու ամենակարող , առ ամենայն բան անհասութեան անճառ զօրաւոր . քաւել , փրկել , կենագործել , լուսաւորել , վերստին հաստատել . 'ի ժանեաց կերչաց գազանաց և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել , 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել , 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք բազմեցուցանել . Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով ըսպասէ , կարօտեալ քումդ շնորհաց , եթէ երկնայինք և եթէ երկրաւորք , եթէ անկածն մեղօք և եթէ ամբարձեալն արդարութեամբ , եթէ տէր և եթէ



ծառայ , եթէ տիկին և եթէ աղախին . և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն ։ Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

## ԲԱՆ ՂԳ .

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հաջողէ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա . ՅԱՐՁՐԵԱԼ անքննին , զօրութիւն ահեղ , տէր արարածոց , թագաւոր երկնի , սանձիչ հրեշտակաց , գոյական մտաց , հաստիչ հրեղինաց , պետ բարի հոգւոց , աջ աստուածութեան , անդորրութիւն հանգստեան , տեսարան լուսաւորութեան , պայծառութիւն բերկրութեան , ճանապարհ երանութեան , պատճառ կենդանութեան , աւիթ բանաւորութեան , փրկութիւն աւանց չարութեան , առաջնորդ խա-

զղջութեան, պարխոյ ամրութեան, պատուար պահպանութեան, ցանկ բուրաստանի՝ ցոյ մեծի օրհնութեան, սահման անախտակալութեան, յիշեա յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան և զոր ՚ի մարդկային ազգէ թշնամիս մեր՝ ՚ի բարի, և արա կատարեա նոյին քաւութիւն և ողորմութիւն: Մի բարկանցիս նոցա վասն իմ, Տէր, իբրև զուրբս բամբասողաց՝ առ յանձնս սիրոյդ, որ ՚ի յիս, այլ ողջէս զչարս կշտամբողաց և քրտամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա: Նաև արդ՝ մատուցեալ երկրպագանչէւրոցս առաջի քո, աղաղակատա, ամենք առ մեզ վնասակարագոյնս սակաւուք թերևս և յիրաւի բարձանելոցս, և ես առ քեզ, ամենապարգևէ, անթիւս և անհշուելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս:

Բ. Արդ յիշեա զքո մեծութիւնդ, Տէր, նայեցեալ ՚ի յիմս անարգութիւնս. և ընդ խնդրելս իմ ՚ի քէն բարի իմոյն ատելեաց, ես դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անճառելիս հրաշագործեսցես: Մի սատակեսցես զիմն



խածանողն, այլ փոփոխեսցես. խըլեալ զխոտան զբարս երկրաւորս՝ զնարեան արմատացուսցես և յիս և ՚ի նոսին. Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խաւար եւ յիմար. դու խոհեմութեամբ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր ստորեցս և երկնից, և ես անիշխան շնչոյս և հոգւոյս. դու բարձրեալ ՚ի կարեաց զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու ՚ի վեր քան զկիրս երկրիս, և ես կաանարգութեան գարշութեան. դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կորնչիմ ըստ նորին բանին. ՚ի քեզ ոչ է մըթութիւն կամ նենգութիւն, և ես բովանդակն բոլ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի: Հան զիս ՚ի բանտէս, արձակեա ՚ի կապանացս, զերծո ՚ի շղթայիցս, փրկեա ՚ի խեղդմանէս, ազատեա ՚ի տագնապէս, քակտեա ՚ի յերկաթիցս, լոյծ ՚ի պաշարմանցս. արտաքսեա յերկմտութեանցս, սփոփեա ՚ի տխրութեանցս, հանգո ՚ի նեղութեանցս, փարատեա ՚ի վշտացս, հանդարտեա ՚ի խռովութեանցս, ապաքի-

նեա 'ի լոյս, մերժեա 'ի հեծութեան-ցս, հեռացո 'ի յոգւոցս, կազդուրեա 'ի կականմանցս ։ Աստուած ողորմութեան և պարգևատու քաղցրութեան. մի՛ զկրաւեալս արեամբ հզօրիդ անտես արարեալ ընդ վայր կորուսանել. կանգնեա զհասեալս յափն մահու 'ի բազմավտանգ հիւանդութենէս ։

Դ. Ահա բարդեցան կուտեցան չարչանակք ամաց ընդունայնութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ յոչ ոչէսս երեւեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ ունելի փուշս դժնիկս մեղաց չառաւիղն. մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուդայի եւ կամ զաւակին Եփրեմի ։ Եւ քանզի զուսուցեալ անկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խառն խայթաղակաս իժնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ դրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն, զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ դարչելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ ։ Ոչ սերմանեցի արդարութիւն ըստ բանին Ովսեայ, եւ զիա՞րդ հնձեցից եւ ժողովեցից զկենաց պտուղն ։ Անկաւ ստինք



կուսութեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի, որ առ Իսրայէլ. կարող ես, Տէր, 'ի նոյն հաստատել։ Կայնեցի ընդարձակեցի ըստ մոլեկան բարուցն Յուդայի զանկողին կամացս՝ դիւացն հանմանեաց. 'ի ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զզաստութիւն ։ Եթէ մարմնաւորեան կցորդութիւն ընդ տեսանողին անարատ գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութիւն, հոգեղէն միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ արեգակնն այս անկենդան առեղծեալ առ 'ի քէն երկրիս մատակարար, և զկարակուամն մօրից ցամաքէ և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացողդ ամենից, Հոգիդ Աստուծոյ, ո՞րքան զօրացես զտիղմ չարեաց աղտոյ և զթարախ պղծութեան մեղաց մթերից խոցոյն ըսպառել. Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի առելեացն իմոց 'ի կարգ այս բանի, զի զհերքեալ վճռականս պարտուց մահու յամենախնամ աչաց հզօրիդ մի մերժեսցես, օրհնեալ գթութիւն. այլ կենագործեա զիս զամենամեղս անդամօք մարմնոյս ընդ բնութեան հոգւոյս խառ-

հեղ միշտ դքոյդ ։ Իսկ բարեգործայն խնդրել բարիս , ընութեան են օրէնք՝ անբաւնադատ կրիցն յարակցայես առ այն բերումն ։ Քանզի արդարև առ միայդ պատուէր ամենայն հասարակ զօրանայ , իսկ միւսայդ երկրորդի առաջնորդ խնամով հանդիպել՝ աստուածականիդ է նմանութիւն . յաղագս այսր եւ նախնի դասիցի զթշնամեացն խնդ աղերսանս քան զերախտաւորացն բարիս։

Դ . Եւ արդ յիշեա զնոսա կրկին ընդմիջ , որ 'ի քո անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան , և տուր նոցա , Տէր ամենառատ բարերար և անոխակալ , վարձս արդարոյ և մարգարէի , թէպէտ և յաւէտ թափուր կցեմ յարժանեաց , ըստ հաւատոց նոցա և առ յայս նոցին ակնկալութեան , որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակնարկեն , որպէս թէ 'ի մասանցդ քոց կեցուցչաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկութիւն լիով ունիցիմ։ Եւ զպատժաւորս անամփոփելի 'ի քոց տեսութեանց և յանխաբելի 'ի յուղիղ կշռութեանց՝ քաղցր գթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս մեղքուր ա-



րացես . անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութեանն ։ Եւ որպէս շուք ինձ վայելչական գնել ախորժեն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո , նայեցեալ 'ի կնիռ զգեստուս բարեկերպութեան , չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս , և դու հնարաւոր ամենապարգևս օրհնեալ մարդասէր , առ բնաւս ողորմած , վասն ամենաթշուառիս հեծութեան հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոյ նոցա . ընծայեալ նոցին՝ մասն պարգևեա զանեղծ մեծութիւնդ և զանթառամելի զպսակդ յահաւոր աւուրն յետնում՝ հատուցմանն ամենափորձ ընտրութեանն ։

Ե . Զի դու ես գրաւ փրկութեան մեծութեան անվախճանելի եւ անծախ պանծանաց տրկիս և առլեցելոյս 'ի վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ , որ 'ի քէն՝ յարդեալ ճոխանամբ ։ Կաւս ինձ սահման ջրոյ հանգստեան . արձանայն , անփոփոխ , պատրաստական վստահութիւն . կարգեալ , օրհնաբանեալ , անկեղակարծ յուսոյ ամրութիւն . տուր , ամենախնամ դու , ա-

նաւաստ պաշտպանութիւն , սասանե-
ցելոյս՝ բարեաց անդորրութիւն , տա-
րակուսելոյս լուսոյ առաքինութիւն ,
աշխարելոյս մեծ երջանկութիւն , վհա-
տելոյս կենաց օգնութիւն , լքելոյս ան-
գայթագղելի օժանդակութիւն , նահան-
ջելոյս անսայթաք վերընթացութիւն :
Զի քո է բնաւդ և 'ի քէն է ամենայ-
նըդ , և 'ի ձեռն քո բաշխին հատուա-
տութիւնք պիտանացուաց համայնից կե-
նաց . և քեզ վայելէ փառք յաւիտենա-
յաւիտենից . ամէն :

---

## ԲԱՆ ՁԴ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. ԱՐՔԱՅ երկնաւոր , թագաւոր բարձրեալ , Տէր բոլորից , ամենից ակըն-կալութիւն , ստեղծող տեսակաց , հաստիչ իմանալեաց , պատճառ եղանակութեանց , կազմիչ հանդերձելոց , տուիչ



լուսոյ , սուրբ առաւօտու , պատրաս-
տիչ վաղորդայնի , երեւեցուցիչ երեկո-
րի , տուիչ խաւարի , արուեստաւոր
բարեհնար , իմաստութեան գործո-
նեայ , քաւարան օրհնեալ , հալիչ մեղա-
նաց , հալածիչ ցաւոց , քակիչ դառ-
նութեանց , պահպանարան հանգստեան ,
հնարք նիրհման , յարմարիչ քնոյ , պար-
գեւիչ ննջման , ընչյ յարակարգութիւն ,
զգայութեան տեւողութիւն ցրիչ ցնո-
րից , յեղանակիչ ամրջոց , փոխարկու-
թիւն զարհուրմանց , ազատութիւն
տխրութեանց , խափանիչ խիթմանց ,
ընդարձակիչ կարծեաց , համարութիւն
ծփմանց , ահագնութիւն խարդախ-
մանց , հարուածիչ դիւաց , փախուցիչ
ախտից , ընկլմիչ գայթակղութեանց :

Բ. Պաշտպանեա երկնաւորդ ձե-
ռամբդ , զօրացո բարձրացեալ քո աջովդ ,
ամփոփեա ամենակալդ թեւօք , ծած-
կեա աստուածեան իմամօքդ , ամրացո
վերակացութեամբ վերնայնոյդ , շուր-
ջանակի պարածեա գումարտակօքդ ան-
մահից , 'ի յամենասուրբ պարփակեա կը-
ցորդութեամբ հրեշտակացդ , վանեա
զընդդիմամարտն իմ զինուորութեամբ

զուարթնոցդ, պատսպարեա զաստանեա-
լըս՝ Աստուածածնիդ մաղթանօք, զըւա-
նակս անդրանկացդ բարեկարգեա ինձ
պահապան ։ Բաց ընդ աչացս զխնոց
եւ զմտացս իմ տեսանելիս. զգաստ
արա ընդ ոգւոյս եւ զծանրաբեռն
կրիցս զանդադրութիւն, վերացս, Տէր,
'ի զգայութեանցս զմածեալ յիմա-
րութիւն. բարձ միայն, բարեգործ,
զպատրուակիս թանձրութիւն ։ Ընդ
սկզբան բերմանս լուսոյ՝ զզուարթութիւն
քո ծագեա. ընդ ելից արեւուն՝ ար-
դարութեան արեգական 'ի յանձկու-
թիւն սրտիս մոյծ. Ճառագայթ քո
փառացդ 'ի յիմաստից խորհրդանոց
ջահեացի. խաչիդ տեառնագրութիւն
ընդ շուրջս եւ ընդ մարմինս համասփիւ-
տարածեսցի ։ Ցանձն առնեմ քեզ յա-
ւուրս զքո յարմարեալ տաղաւարս
պահպանեա ոգւոյս՝ որ 'ի սմին ։ Զի
դու ես Աստուած անքննելի, առ ամե-
նեսին բաւական եւ յամենայնում բո-
վանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

---

## ԲԱՆ ԻԹ.

Վերստին յաւելուած յիշէն հեծութեան նորին
հոգւոյ առ նոյն ողբոց մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. Իսկ արդ՝ վասն զի արդնականն
մեր զուարթութիւն քեզ ննջումն իմն է
համարեալ, իսկ 'ի խոր թմբրութիւն
լռելըն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝
անթարթափ բացութիւն աչաց, ուղ-
ղեա հոգւոյդ քո խնամութեամբ ըղ-
յաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծու-
թեան ձայնիս մաղթանաց ։ Զօրացո Տէր,
'ի հանդէս բարի ճգնաւորական արի վաս-
տակոյ, կցորդ լեր կարեացս տկարու-
թեան, թեւթեւս կացո զաշխատու-
թեանս այս սկիզբն. արագեա, միշտ
կարող, զյառաջագրեալ ձեռակերտս,
գիւրաւորս ընթացս 'ի յաւարտումն լըր-
ման. Ի փոխման իրին բերկրութեամբ
զիս հասո, ժամն կացուցեալ 'ի հան-
գիպումն յուսոյն, կցորդ լեր ուղւոյն
ճանապարհիս ընթացից. 'ի թուիչս ամ-
բարձման փութացուցեալ յօգնականս,

ընդ աջմէ իմ՛ լցիս 'ի վտանգի ծանրութեան, զձայն քո լուր 'ի յանձկութեանն սրտիս, ձեռամբ քո կեցո 'ի կորստեանն ժամու, մատամբ քո աղդեա 'ի սահմանին անձկութեան, հալածեա զխարդ ամենաչար խափանմանն հոգեղէնին առաջմամբ, ըստ Ամբակումայ, ինձ հնարեա, բան ինձ շնորհեա 'ի յառնելն բաղմութեան, իմաստութիւն յիս տնկեա 'ի հանդիպման քննութեան։ Ամպով կամաց քոց հովանացիր հրաշափէս, հանդարտեցո փայտիւդ կենաց զծովուս միրիկ, սանձեա զաստեաց կենդաղոյս պատկեր քոյին հրամանաւդ, քանզի թէ սոտ ողորմութիւն քո, Տէր, կամեսցի, այս լուծութիւն կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի մնտես առնիցես, երբ զանկայունն՝ պնդութիւն յատակս 'ի ներքոյ ոտի հոսեալ ստամանի։

Բ. Արդ ընկալ, Յիսուս, զպաղատանաց ձեռնարկութիւն քեզ 'ի հաճութիւն, և արա ինձ զամենակործան զայթակղութիւն մեծ վստահութիւն։ Որպէս 'ի ջրահեղձոյց ամենակործանն դարու, որք 'ի հարթ տապանման դեա-



նի սուանց երկիւղի յանհոգս կեին, յաղորմութենէդ անդի հանգեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստիւն յոգնատատան հիմանն հայթայթանօք յանուն զթածիդ յեցեալ պահեցան. ընդ որս և զաղաչողս միշտստատան 'ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս ուղղեալ առաջեցո. վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգեւոր շահից, սուրբագրս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանիւդ առակաւ։ 'Ի քեզ Տէր անկայց միացեալ 'ի սրտէ անքածանելի, օրհնեալ յամենայնի։ Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարմնաւորաց, որք ջրով և հրով փորձեցան, և յեկեղ զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, սոսայն ընդ մեզ համարձակապէս զուգամտութեամբ՝ եղիցի եղիցի։

# ԲԱՆ ԶԶ.

Վերստին յաւելուած հրէին հեծութեան ուրէն հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. Ընդ այր հառաչանաց թախծութեան ողբոց 'ի բազմաց կերպից շարակարգելոց, եւ ամենից հոգւոց ողորմեա, զովեալ և երկայնամիտ թագաւոր: Նա և այնոցիկ առաւել, որոց հասեալ է անկարութիւն փրկութեան կենաց, որք նոքեցին անպատրաստաբար շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան: Ահա յիշեա, Տէր իմ գթութեան, և 'ի յայս եւս պատճառ իրաւունս իմ գրեա: Քանզի թէ և 'ի վառս ահաւորութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր ըղկաղման մարդոյս, զոմն ծանր և զոմն թեթեւ, զմին զով և զմիւսն հրային, զի զխնդրութիւնն 'ի հակառակայն հարթ պահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւասարիմ հաւասարութեամբն. եւ 'ի յայսմ դատման առաքինութեան



վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զխոնարհութիւնն առ կաւն զխամման անձուաց պահեալ՝ պսակ ընկալցուք ճըգնաւորական: Այլ քանզի յայսմ կանանէ ուխտի վրիպեցաք, եւ անասնաբար աւհեցմամբ ըստ հողոյն զիջման ընդ երկիր մածաք, այլ ամն ախտիւ և այլ ամն անգթութեամբ, միւս մասն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց իբրը գաղան մշտաբոյծ յարակից կապեալ ընդ բնութեանս: Իսկ 'ի քաւիցս ամն անըմբռնելի և անողոքելի ոլոցմամբ 'ի բաց սատուցեալ՝ վայրենաղէս ամբարտաւանէ. եթէ չեւնումք տապալ սիրոյն, որ 'ի քեզ՝ նշխարութոյն, որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին զնոյն կասեցուցեալ բարւոյն ընդմիջէ. եւ եթէ օգականաւն հրեշտակայնոյն յաւելցիմք 'ի քեզ, ծանրութիւն թանձրութեան անդրանիկ նիւթոյս այս հողս 'ի սորեւ քարշեալ խափանէ:

Բ. Եւ արդ յամենայնա պարտեալ և 'ի սպառ լքեալ՝ իբր զայլիկոր հաշմեալ հերքեցայ, կորեայ, վանեցայ. վտանեալ 'ի բազմաց 'ի մահ զրաւեցայ.

փառն որոյ 'ի պարգեւականէն զրկեցեալ՝ յաղօթութեանն կողմ նոյին, և պատկառեալ դիմօք համայնից ունողդ զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց, քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է, նա՝ զի և ընդ անտեղի կարելոյդ և կամելդ է ախորժելի :

Գ. Արդ այսոց երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց առ միմեանս եկեալ՝ կարելին ընդ կամելին, բարձեալ եղիցի և յուսահատութեանն վհատութիւն ազգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեաց լոյս հոգւոց բժշկութեան քումդ հրամանի, Տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն :

---

# ԲԱՆ ՁԷ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

Ա. Եւ արդ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ ողբաւումանեաց կտակի այսր աղերսագրութեան, արա, Տէր փոխանակ դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց ինքնանախատաս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք : Որ քեզէն կարգեցեր սահմանս աւետեաց անխափանութեան դատապարտելոյս՝ ասելով. ոչ են կամք առաջի Հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս. և դարձեալ. այս են կամք Հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալն ոչ կորուսից :

Բ. Ահա օրհնեալ ես 'ի գթութեան, բարերարեալ միշտ 'ի քաղցրութեան, խոստովանեալ յերկայնամտութեան, ծանուցեալ 'ի յայտնութեան, քարոզեալ Տէր 'ի փրկութեան, ներբողեալ դու յառատութեան. պատուեցեալ 'ի պաշտպա-

նութեան , փառաւորեալ ես 'ի փըր-
կութեան , երկրպագեալ յանիրաւ բար-
ձրութեան , պաշտեցեալ 'ի յանկըննու-
թեան , գովեցեալ միայն 'ի յաղթու-
թեան , վերաձայնեալ 'ի մեծ զօրու-
թեան . խնկաւորեալ յողորմածութեան,
համբուրեցեալ յանձառ հեզութեան ,
ճաշակեցեալ 'ի խոնարհութեան ։ Ընդ
քեզ և ծնողդ քո երկնաւոր Աստուա-
ծըդ բղխից մխիթարութեան , ըստ օ-
րում Հոգիդ քո Սուրբ բարութեան , որ
զանկեալ զգրաստ թշնամւոյն և զգայ-
թագղեալ մարդն անբանութեամբ՝ կա-
նոնեցեր ոչ անտես առնել ։ Որոյ ե-
րախտիս հզօրիդ 'ի յիս , և առաքինու-
թիւն մեծիդ 'ի բարձունս տօնեալ ան-
դադար յանխախճան փառաբանողաց .
որովք զայս ձայն աղերսական յարգեալ
ընկալցիս մաքրափառայն պաղատանօք 'ի
հոտ հաճութեան բուրման անուշից ։
Եւ այսու փրկանօք հաշտարար բանի՝
զնախնեացն պարտս և զանձրեւոյթ վէ-
րըս միջնովքն և վերջնովքն մահացու-
ցանողօքն զանձն և զմարմին բժշկեա ,
ամենակարող , զներքինս և զարտաքի-
նըս , զախտքն և զգիծքն և զխարանս



հարուածոյն . բարձեալ և մաքրեալ զե-
ղովք ողորմութեանդ զկնեալ խածուա-
ծըս բազմագունիս , որք զարշելիս ընդ
ախտաժելեայն քեզ ցուցանեն զէութիւն
բնութեանս ։

Գ . Եւ եթէ հասից յամս ծերու-
թեան քեւ առաջնորդեալ արժանիս մա-
հու , մի՛ թողցես զտկարութիւնս , մի՛
անարգեր զալեաց , մի՛ կորացուսցես ըզ-
կործանեալն . մի՛ զնջուսցես զկքեալն ,
մի՛ վայրաբերեր զխոնարհեալն , մի՛ շըն-
չման հողմոյ մատներ զաւկայծեալն , մի՛
ընդպահեսցես զդեդեւեալն . մի՛ անվե-
րակու առներ զառաջեալն , մի՛ ան-
գարման լքի տարնուալեալն , մի՛ առանց
տածելոյ յարկն խախտաքեալ , մի՛ ան-
պատիւ պատկերն հնացեալ . մի՛ պա-
րարտութիւնն անհամեալ . մի՛ շուք շը-
նորհին անօրինեալ . մի՛ հնութիւնն քա-
մահեալ . մի՛ նաւ հաւսոյս ալէկոծեալ ,
մի՛ երկարութիւն յուսոյն կորեցեալ ,
մի՛ լոյ շաւղին խղեալ , մի՛ ուշ խմաս-
տին բարձեալ . մի՛ գոյին կազմած զեղ-
ծեալ , մի՛ ամբարձմանն թեւք փետ-
տեալ , մի՛ զուարթութիւն դիմացն ա-
ղեղեալ , մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ ,

մի պատուհանք աչացն փակեալ, մի լուսաւորութիւն նորին խափանեալ, մի պատկերն խօսուն անկեալ։ Ահա աղաչեմ զքեզ, բարերարդ, ամենայն ողորբուլք պաղատիմ, լուր ոգլին ինձ կանխաւ, զի զանազանն մի մոռացից։ Դու առաջնորդեցեր ինձ. ըստ սաղմոսագին և այրեցուցեր. հան, Տէր. ընդ երգողին և 'ի կարծեացն կասկածանաց. յորմէ երկնչիմ։ Իսկ ես չեմ արժանի 'ի քէն և ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար և առ զըլացողս բարերարծել. Քո են զարմանալիք անճառելի բարեաց. միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութիւն, ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ օրհնեալ հանապազ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

# ԲԱՆ ՁԸ.

Վերստին յաւելուած ջրջին հեծութեան նորին հոլովոյ առ նոյն տեղեր մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Ա. Եւ արդ ջուր կարեաց և կաթ արտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս մրտաց ըզձմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի, զմարգարէին յիշեցուցանեմ զարեմաղթացուցն զՍամուէլի, զոր առեալ ենեղ 'ի սկաւառակէ յանդիման քո, ամենատես, առ ժողովրդեանն օրհնակութիւն զանձն արկանելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենդանարարդ գործակարաց։

Բ. Եւ արդ ընկալ զդս հիւսուած բանի ողբոցս հեծեծանաց, և հաստատեսցես յայս նուէր բանի անարիւն զոհի, թողալոր երկնի. և օրհնեալ պրբեա զսա մատենի այսր ողբերգութեան. և գրեալ գրոշմեսցես յանձանն յաւիտեանս ընդ հաճոյականացն սրբասացութիւնս։ Կացցէ առաջի քո միշտ անընջենաւոր, և յիշատակեսցի 'ի լուսե-

որդ քո հանապազ. բարբառեսցի շըր-թամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բե-րանովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթոռոյ քո, և ընծայեսցի 'ի սրահ սրբութեան քո. խնկեսցի 'ի սա-ճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սե-ղան փառաց քոց. պահեսցի 'ի գանձա-րանի քում, և համբարեսցի 'ի ստա-ցուածս քո : Պատմեսցի 'ի յականջս ազգաց, և քարոզեսցի 'ի լսել ժողո-վրդոց. Նկարեսցի 'ի դրունս իմաստից, և տպաւորեսցի 'ի սեամս զգայութեանց. Իբր կենդանեօք զինս պատմեսցէ խոս-տովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի : Մնասցէ սա ա-նեղծ 'ի կամս քո, Տէր, ինձ պատժա-պարտիս համբարձեալ միշտ անփուլ դատիչ, անաչառ կշտամբիչ, անպատ-կառ յանդիմանիչ, անանխայելի դա-վիչ, անողոքելի պարսաւիչ, անհամ-բոյր ծանակիչ, անմոռդաւիրելի մատ-նիչ, անվրիպելի տանջիչ, անկաշառ կա-ռափիչ, անխնամելի յայտնիչ, ապա-ռաժ հրապարակիչ, աշխարհալուր բա-



ղջիչ, փողով մեծութեան ազդման առանց լռութեան և կամ դադարման զիմոյս պարտեացս խոստովանեացի :

Գ. Այն գիր իմով ձայնիւ իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ, տարածեսցէ զըղ-ծածկեալսն, հռչակեսցէ զգաղտնիսն, կակնեսցէ զկատարածն, հնչեսցէ զըղ-մռացեալսն, յայտնեսցէ զաներևոյթ-սն, բարբառեսցէ զլռալուրսն, քարո-զեսցէ զխորոցն, պատմեսցէ զմեղացն, մերկացուսցէ զանտեսիցն, ցուցցէ զկեր-պարանս թագուցելոցն : Շօշափեսցին ամլաւ որոքն. գայլին գայթագղութիւն-քըն, յանդիմանեսցին անճառքն, քա-մեսցին չարեացն մնացուածք : Եւ թա-գաւորեսցէն կեանքդ շնորհաց ողորմու-թեան քո, Քրիստոս, 'ի գանձս պահես-տի ոսկերացն ցամաքելոց. որով 'ի ժա-մանակս կենդանականս սկզբնաւոր լու-սոյ մտի գարնայնոյն նորոգման աւուրն պայծառութեան՝ քոյովդ ցօղով յոգի աճեցեալ այսու փրկութեամբ անմահա-կանաւ, և անցամաքելի վերամբարձու-թեամբ շառաւիղս ձգեալ խմնոլեացն բարեաց՝ գործեալ դալարեսցայց և կր-կին ծաղկեսցայց ըստ քոյինաշունչ գրոյն

յուսադրութեան ։ Եւ քեզ միայնոյ փրկողի և հոգւոյդ քում հօր խնկակցի միանական տէրութեանդ և անճառ Երրորդութեանդ խորհրդական գովես-տիւ փառք և երկրպագութիւն յաւի-տեանս. ամէն ։

---

## ԲԱՆ ԿԹ.

Վերստին յաւելուած յիշին հեծութեան Ներքին հոգւոյս առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԱՍՏՈՒԱԾ և Տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, եր-կայնամիտ, անոխակալ, մարդասէր, ա-մենագութ, պարգևատու. փրկիչ, օրհ-նեալ, գովեալ, բարեբանեալ ։ Դարման անբուժութեան, պատսպարան վտանգու-թեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհաս-նելեաց հնարք, անմատչելեաց հպաւոր,



անյուսութեան ելք, անուն քո խոս-տովանեալ Աստուծոյ Որդի. և Հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և Հոգ-ւոյդ ամենակալի, և ընդ քեզ երկրպա-գելւոյ՝ փառք և պաշտօն գոհաբանու-թեանս յաւիտեան. ամէն ։

---

## ԲԱՆ Հ.

Վերստին յաւելուած յիշին հեծութեան Ներքին հոգւոյս առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԲԱՐԵԲԱՆԵԱԼ Աստուած երկ-նաւոր, միայն արարիչ. Տէր ամենա-կալ, մեծութիւն անեղ. գթութիւն օրհնաբանելի. ողորմութիւն խոստովա-նելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդա-սիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքննելի, մերձա-ւոր կամարար, ապաւէն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ա-պաքինիչ ցաւոց, ապաւին վհատա-

թեանց. բարձուածն պարտեաց. փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից. յորմարիչ բանից, սանձարկու լեզուի, շրջագրութիւն շնչոյ, կացուցիչ հագագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուղմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս, եւ իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Բ. Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեղութեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանդչիս տենչանօք անճառ հրաշիւք յանձինս որբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ զթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ զդիմելոյս 'ի լոյս վերին: Ջեռնկալու մեծ վստահութեան, որ ոչ թողացուցանես զայթակղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առհաւատչեիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ. ապաւինութիւն հանգստեան, որ ոչ երբէք մատ-



նես վտանգի դատապարտութեան: Ազատութիւն շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխադրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես: Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Քաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես: Հնարաւոր դիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, ելք վստահութեան առ խոստացելոցն վայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի. Կամք անփոփոխադրելի առ 'ի քաւութիւն գերւոյս զօրացեալ ամենազօրելի. անսխալելի գեղ կենաց, որ եւ մեռելոց բնաւին եղծելոց առնես զքանչելիս: Ամենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն և զհողմոյ հոսեալն եւ զժանեօք գազանաց ծախեալն 'ի քթթել ական նովին հիւթա-

կանութեամբ անպակաս յարուցանես ։ Անհաւասար համարձակութիւն, յորում աստուածօրէն պանծանօք պարծելն է կրաւորի ։

Գ. Հայեաց, Տէր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգնեղելոյս, և արա անդորր հանդարտական դիւրաւոր 'ի բազմատագնապս հեծութենէ ։ Եւ զշարուցեալ գումարս սատանայիցն, եթէ զդառաղէնք այսական գծնեալ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց աղեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վտանգիչ և կորստական նշմարանք, մերժեսցես, հանցես, հատցես, խափանեսցես և հալածեսցես հեռի 'ի սահմանաւ 'ի տպառ տարածեալ անդարձ որոշմամբ վերագին կորստեանն. և կառուցես, կացուցես նպաստակ կենաց եւ ամուր մահարձան զնշան խաչիդ ապաւինելոյս 'ի քեզ փրկութիւն ։ Եւ յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք, կապեսցին մեքենայքն, վատնեսցին գայ-



թագղութիւնքն, խայտառակեսցին հաղրիցն գրութիւնք, յայտնեսցին երեւոյթք որսոյն, գտցին նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք, ջնջեսցին որոմնոյն բոյսք, նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք, կորեսցի լար խաբէութեան 'ի մահ որսողին, ապարեսցին պատրողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տուռունք տագնապողին. Այլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, տառակեսցին խըրախտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն, բաժանեսցին աղինք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին ամբոխք ապստամբողացն. արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրեւք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին ։ Խորտակեսցի եղջիւր գոռոզին, մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց, փշրեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն, նահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակտես-

ցին միաբանութիւնք զօրայն Բելիարայ՝ թէ անմարմինք եւ թէ մարմնաւորք. փախիցեն ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւղաց հետոց յեօթն տարակոյս. 'ի դուրն խնձ փորեալ՝ ինքեանք ընկճեսցին. Ցեղանակեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի կայն կորգութեան մշտաջան աւաղակին, նողկասցի մօտցս կայից համբոյր շողքորթին, ընդմիջեսցին մեկնեսցին նետաձգութիւնք նեղչին, կայցէ 'ի սասանման նաւ խարդախողին, խլեսցին յարմատոց անտի աւանմունք խածանողին.

Դ. Վասն փայտից օրհնութեան կենաց՝ յորում մրկեցար Աստուածդ անըմբռնելի, յիշատակաւ բեւեռացդ՝ որով 'ի գործի մահուն մածուցար արարիչդ երկնի և երկրի, արեամբդ տէրունականաւ՝ որով դիլիշտայն մեծ կարթիւ ածեալ որսացար. լեղւոյն դառնութեամբ, զոր արբեալ՝ զդեղատուութիւն կորուսչին արտաքս հեղեր. պատմաբանութեամբ ըղձական ճառիւք կըրիցն սարսափելեաց՝ որով զըրութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր. անուամբդ անհասականաւ ամե-



նայնիւ անթարգմանելւոյդ՝ յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երեւութից և աներեւութից. եղիցին այս ամենայն պարգեւք շնորհաց խառնամանելոյս 'ի պաշտպանութիւն, 'ի բըժշկութիւն և 'ի քաւութիւն. Եւ մահաբեր դառնաթոյն օձին, և որ 'ի նըմա ազգաց տխեղծրադաւ չարութիւնըն, 'ի սաստկութեն եղիցի նորին. նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանայն մատնեսցի, կապեսցի և ըմբռնեսցի. Եղիցի ողորմութիւն առեղծողին ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի.

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գուշման աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և կինտասարդի, և եթէ յաղախնաց ոք պատահեսցի աստուածախնամ, հաւասարապէս անաչառութեամբ ընկալցին 'ի քէն մասն երանութեան պարգեւաց ողորմութեան, հաստեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ դրօշմ կերպարան

անփոփոխելի ։ Ահա որպէս հնարաւոր , զօրեղ , անպատում , անհաս , անիմանալի , տեսցես աստանօր 'ի հաւաչանս կողկողանաց այսր հեծութեան , որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի , վասն Հօր քո երկնաւորի և բարերարի , Աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց ։ Զի դու ստեղծեր զամենայն , և 'ի քէն եղէն ամենայնք , և դու տիրես ամենայնի . և քեզ փառք յամենեցունց , միշտ յիսկութենէ անժամանակ Երրորդութեանդ , զուգակցապէս փառաւորեալ յանբաւս և յաւիտեանս . ամէն ։

---

## ԲԱՆ ՂԱ.

Վերստին յաւելուած երգին հեծութեան նորին հոգւոյ առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա . Տէր Տէր գթութեանց և Աստուած ողորմութեանց , անուն մեծու-



թեան , ձայն անհաւասարութեան , կոչումն սաստկութեան , լոյս անհասութեան , բարբառ զօրութեան , հնչումն հիացման , յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան , յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութիւնք եղելոց 'ի քո սպառնալեաց ահիդ պակուցման , սաւառնին սերովբէք , ամփոփին քերովբէք , պարուրին պարք լուսակերպիցն , երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն , նոյնք ցնծան զօրութեամբ մեծաւ 'ի մի նուագաւորս բերկրութեան . զարհուրին դեւք , ընկըրկին չարութեանցն գունդք , պակասին խաւարասիրացն հոգիք . անդնդոց մատնին հրեշտակք օտարին ։ Կապին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին , փակին 'ի ստորին բանտի քինաւոր ամաղեկայքն , անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին , արգելին անզերծ զընդանաւ մահաղինացն կաճառք , պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ ապստամբացն գումարք , պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութիւնք , պարաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժո-

զովք, անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւնք գերաքրիստոսին.

Բ. Ահա կարկառեմ մատամբք ձեռինս զանառնապրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանայ խաւարաւ անգիտութեան, ամենեւին տեսականութիւն, քան թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակես. Ընկալ զաղաչողս վտանգաւոր գոհաբան ընդ պահպանութեամբ թեւոց հզօրիդ, ի փրկեա 'ի ցնորից եկամուտ պղտորութեանց, առ իբր որա զզգայարան հայելեաց սըրտիս նկատմանց, անկացո փայտիւդ կենաց 'ի տխրական անդրջեաց, արեամբ քո ոսկեա զըջարկութիւնս կայից, զհետոյս եղեմոնց կաթուածոյ կենարար կողիդ գծագրեա, երգոցն պահպանարան քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի. հանդէպ տեսութեան աչաց ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի, ընդ բարաւոր յարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի, ըղձաւոյթ օրհնութեան հաւատք յուսոյ իմոյ կախիցի. Սրդեղ, տէր, սովազատակիչն հոգւոց, մինչ անխափան պաշտպանն լուսոյ, և ընդ սատանի ծան-



րութեան ցաւոցս և զբեռն պարտեացըս թեթեւացո, զոր 'ի լսարանի մըտացս ամփոփման մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահատութեանցն դառն պտղոցն. խոստովանիմ ամենակալիդ զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս:

Գ. Հանգո զխառնակեալս 'ի բաղմաձուլս աշխատութենէ, բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութիւնն ընդ կարեացն, զանձկութիւնն ընդ թշուառութեանցն, զհառաչմունսն ընդ խորտակմանցն, զբեկութիւնսն ընդ տաշութեանցն, ըզթմբրութիւնսն ընդ չարամանցն, զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն, ըզթերամտութիւնն ընդ խելագարութեանցն. զսառուցեալ սիրոյն և զհրային ջերմութիւն տղուական տխտին. Օժանդակ լեր տկարութեան բազմաղըլխուրս տարտամութեան, բարեգործ աջովդ շնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ մըշտափայլի, յարակայութեամբդ անեղծի, երեսօքդ զուարթանակի, խոկու-

թեամբ էիդ պաշտելի , բարձրութեամ-
բըդ երկրպագելի ։ Հատո զչարաչար
հեծութիւն կորստականս խեղդմանս ,
զնոր գիւտ չարին , զհին խարդախու-
թիւն բանսարկուին , զօտար ազդեց-
մունս 'ի մահ կարթողին , զանյագուրա-
բողական երեւոյթս հնարապագործեան
եղեռնագործին , զսուտ աչս հնարողու-
թիւնն դժնդակ գիւին , զողոքական
բոցաշնչութիւն ձգող կախարդին ։ Պա-
հեա 'ի տեղւոյ հանգստեան միօրինակ
այսր դադարման յաներեւոյթ մտածու-
թեանց , 'ի մանաւոր սխալութեանց ,
'ի մեծագոյն գայթագղութեանց , 'ի
փոքրագոյն սնոտութեանց , 'ի խա-
բերայ չար ծանձրութեանց ։ Հեռացո
զանհանդէպ մտածութիւնն 'ի զգայու-
թեանց ծառայիս յանցաւորի , զկիրս
բարբելիս , զվարս թշնամանելիս , զգի-
տուածս պատկառելիս , զհետս մերկե-
լիս , զպատիրս ձաղելիս , զխորհուրդս
անդօսնելիս , զաւերածանութիւնս նրշ-
կահելիս ։ Անխառն հոգւով և անշաղախ
մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդեր-
ձեա 'ի չնչմանէ հողմոց , 'ի զարկմանէ
բռնութեանց , 'ի բախմանէ փոթոր-



կաց , 'ի յոստմանէ մրրկաց , 'ի յարձակ-
մանէ գազանաց ։ Ի կախման աչաց հա-
յեցուած սրտիս մի ստուերասցի , այլ
զուարթասցի , պայծառասցի , վայելչասցի ,
ընդ քեզ փայլեսցի ։ Տէր Յիսուս Քրի-
ստոս , լուսաւոր վառմամբ անշիջա-
նելեաւ ։ Բանիւ քո որպէս զպատուա-
րանս բազմակամնիս 'ի խորամանկու-
թեանց , 'ի զբաղմանց , 'ի քո առնելի
յիշատակաց , 'ի վերնամարտ մտածմանց ,
'ի քրէական մորոսութեանց , 'ի տխրա-
նենգ անշնորհութեանց , յաստուածընդ-
դէմ հերձուածութեանց ։ Գնդիւք վեր-
նայնոցդ վերակացու ինձ լիցիս , պե-
տութեամբք , իշխանութեամբք , զօ-
րաւորօքն անյաղթականաց մաքուր մա-
տակարարաց սուրբ աստուածութեանդ ,
առաքեալքն աւետեաց աւետարանաւն ,
մարգարէքն կտակարանօքն , մաղթանք
երջանկացն 'ի կատարածի աւուրն ըն-
ծայեալ ։ Որովք նիրհեցից երկիւղիւ
ընդ քեզ արտմութեամբ , և զարթեայց
շնորհօք քո կրկին ուրախութեամբ ։ Ե-
թէ վհատութեամբ ննջեցից , յարեայց
դարձեալ հոգեւորական բերկրութեամբ ։
եթէ ընկողմնեցայց մեղանօք , կանգնե-

ցայց վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ անբծութեամբ ։

Գ. Լուր խնդրուածոց ամենահաւաչ ձայնիս հեծութեան, միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց ընտրելոց ։ Եւ քեզ փառք յամենեցունց խմբից գոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականացն դասուց, 'ի գովեստ հօր քոյ Աստուծոյ մեծի և Հոգւոյդ Սրբոյ բնաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

## ԲԱՆ ՂԲ.

Ի ծայրն երջանիկ բարեբաստութեան ժամանակին խորհրդածութեան,

Աղաչանս եդեալ ընդ յերգարանս Թարգմանութեանն ։

Ա. ԳՈՉԱՆԱՄ զքեզ, բարերարդ, միայն մարդասէր, արարիչ երկնի եւ երկրի, որդի Աստուծոյ կենդանւոյ,



այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո յիշատակի 'ի լրութիւն հնչման փայտից հրաւիրման ։ Որով բախեալ զձայնարձակութեանցն զաղօթողացս, սթափեցաք, կանգնեցաք, 'ի վեր յարուցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի բերեալ ձգեցաք 'ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդերձ հաւատացմանս բեմի ։

Բ. Ահա փառք քեզ. անսահման անուն եւ անբովանդակելի զօրութիւն, որ այսքանեօք հնարաւորութեամբք ընդ փրկութեան խնամ հոգացար. գոհաբանեալ անեղծ խոկութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստուածին զհանգերձելոցն նմանութիւն. հանդարտ գործեալ փայլշականաւ փայտի անզօթոյ առ քունս անյարիր ատտիկս որոտացեր. որպէս թէ ընդ ծուլութեաննս զանդաղութիւն զյանդիմանութիւն խրատուդ խառնեցեր. 'ի հայրենի սիրոյդ հեզութիւն՝ զուժգնութիւն ճայթմանն յարեցեր. յանդուստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդա-

սիրապէս քաղցր անձրևեցեր․ ոչ մեղմութեամբ մեղմական վանգիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութեամբ զառաւապեալ հեղխ զարհուրեցուցեր ։ Ծնրադրական երկրպագութիւն ստեղծչիդ բոլորից, որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս զօրինակ անհեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր 'ի դադարմանէ դժոխական 'անքանութենէ, 'ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս 'ի գինիդ ուրախութեան․ արարեր ըղսոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն ու սէր փեսայիդ․ երկուցեր փոքր այս խթանաւ զապարասանին զվկիթխարութիւն, լուծ սաստր կրթութեան ըստամբակին ուսոյ զայս իր գործեցեր․ վարապան վանիչ չորախօսին կղակաց եդեալ կաղմեցեր ։ Փառաւորեալ յաւէտ անքաւ բարձրութիւն մեծիդ Աստուծոյ․ որ փոխարկեցեր զփայտին պարտիս յաղթութիւն շնորհիդ կենաց, խնամանացուցեր վերստին դարձեալ զյիմարս ցնդեալ՝ հոգեւորական հանճարովդ, կարկառ կռձանամբ զանբժշկութիւն հարուածոց օձին առանց



մուացման 'միշտ' թարգմանեցեր․ ընդ Երրորդութեանդ գծագրութիւն զկապըն երեքկին իմ՝ վնասակարին 'ի կատարածին սովիմբ կրկնեցեր ։

Գ․ Գովեստ ներբողից բուրմամբք խնկոց վերաւաքեմ քեզ, ամենախնամ, զի 'ի ստապատիր կուոյն բազմաստուածութենէ աւանել յանձախագունիւք որսացար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագութիւն, խոտոր և անհարկանուիրեալ փայտիւս զճշմարտութիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պաշտամանաւ զնոր Աւետարանութեանդ պատիւ ։ Այն ինքն աղաղակ բարձրութեան գոչման սպառազինութեանդ քո, արքայ պետութեանց կայսերաց երկրի, անէր Քրիստոս․ Նշան խորախութեան աւարտման հանդիսի մարտի քո, Յիսուս, յորում խմնալին փարաւոն կապեալ ըմբռնեցաւ․ կըռփիչ հանապազորդեան գլխոյ գազաթան հպարտացեալ չարագործին՝ չերոս այս սաշեցեալ ։ Սովաւ գամարին 'ի պատերազմի որդիք Սիօնի ընդդէմ աշխարհականին խաւարի․ տօն ինն սուտուածաւանդ կրթութեան կարգեալ 'ի

հեռուստ այս դրօշուած խաղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափանման , նշանակիչ ժամանակի ապագայից հատուցման 'ի բացուստ անդր ծանուցմամբն , աղգակից հանդունանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտին Աստուծոյ . կոչաման բարուք հաւատման փոյթ ընթացիւք 'ի յարկն օրհնութեան , պատկեր տեսակի տնկոյն պխտութեան 'ի կարգ ընտրութեան բարեաց և չարի , յիշատակ մեծ տեառնադրութեան յերեաց կերպիւ Հոգւոյն Սրբոյ զնշան խաչին , նախաղեկայց աւետաւմատոյց փառաց գալստեան 'ի դշխոյն պահեալ սուրբ թագաւորին , յորդորիչ քաջալերական մաքրապարիցն խրախճանութեան , անախտական սիրարկու անձնահամբոյրն կցորդութեան , չքեղաչուք քաղընծայ ամենածին կուսին թագուհւոյ , յարդարիչ ծածուկ պճնութեան՝ որ 'ի հոգին է վայելչութիւն , նմանութիւն պատգամին Սինայ՝ որ 'ի տէրունեայն արտաքս թաւաքիւր , միշտ օրինորդ պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ փառաղարդէր .

Դ . Գերագոյն քան զներքոյին փո-



զօրն եղջերեայ զբռնութիւնն Բելիարայ սովաւ հարթեալ տապալեցեր , քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ Գողիաթու , գայլոց նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի , զի՞ խոր անձցեալ արմատս մեղայն մեքենայիւս այսու խլեցեր , զմուացեալ գործոցս իմ պաշտօնի՝ այսր երախտեօք ընդ իս կատեցեր . Զոր եթէ այլ իմն ձայն ցանից Աստուծոյ անուանեմ նախապատուեմ եկաւորութեանն , ոչ սխալեմ քան թէ ճշմարտեմ . 'ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործոյդ Յիսուսի առաւելապէս պատմեալ հռչակի . քիւրաւոր օգնականութիւնս վերնապարգեւս և քոյինատուրս 'ի յայսմ անպատապար ապաւինութենէ երկրականաց զարմանազրեցեր .

Ե . Խոստովանեալ անուանդ անքնին մարդասիրին բարեխնամութեան , խընկեալ խորհրդով սրբամանութեն անդծագրելի կերպարան լուսոյ , որ կրկնածիր նշանաւս այսու նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատարակս օդաչուս և յարմարաթափիչս ունողս յինքեան հոգի

կենդանի, որով անսխալ հանդիպմամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին զաղտնութեան յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճեցեր ։ Եբր զպատնէշս ամբարերձ բերդամարտութեան կանգնաւորս անմատչելիս՝ տապալեալ անյանօր զկնեալ գիտուածս այս փայտի զարկման, հրեշտակ կամարար, թշնամւոյն ներհակ վերյուղարկեցեր ։ Բանիւ հրամանի մեծիդ ամենակալութեան, օծութեամբ շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթիչ մոլի գոռոզին իբր զխաչիդ փրկանակ յեսանեալ ջախեցեր ։ Ի մեծ ազգմանէ այդր աղաղակի գեր քան 'ի վերնոյն քանդեալ վերացաւ զրանդն ամրութեան կամաց անփայելուչ և ամեներկչոտ խենեշութեան կարճամտին ։ ընդ հրէական որտին իմաստից և սատանայական տանն կործանութեան ։

Զ. Փառաբանութիւն քեզ վերընծայեմ, անմահ թագաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր, աղաչեմ զքեզ, կրկին ներգործեա ։ Անցուցեր ամփոփ հեղեղեալ առ 'ի մեզ զխեթ ակնդակ խորամանկութեան բանսար-



կուին, զտաժանական տապ մեղաց, ըղհողին զառնութեան շնչման խոցողին, զտարր արկածից մահու երկիւղի, զառ 'ի յօղից մնդմանէ մխատակոր բերմանս տխրեցուցիչս, զայտախտն հեծեծութիւնս թալկացուցիչս ։ Ցրուեա վերստին քոյինաշէն հեծանաւս՝ օժանդակեալ թեւօք նշանիդ՝ զամպս հրածինս, զորտամբուս կարկտաբերս, զցաւագին ցոլմունս հրախաւառ կեղծաւորութեան փչման բազմատանի վիշապին, զաւր տատակման, զձակատամարտ գխմեցման, գյարուցելոցն 'ի վերայ վայրենական խորհրդոց զլխոցն կաքաւս ։ Յորմէ զորհուրին յայսմ իրէ փոքուէ՝ աեղետուեալ մեծաւ գողութեամբ, կկրթ իմին ծանօթութեամբ յայտնի գիտացեալ, թէ յայս ազգ ձայնի յառնէ Տէր 'ի զատատան ։ Եւ խրախուսին յոգի տրութեան զրահեալ ընդդապէս սուսերաւ հոգւոյն առատուածարեալ մարտիկք ամենայն 'ի ձեւ կանոնի այսր յիշատակի, որ զամենախորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպագրելեաւ համօրէն ազանց քարոզէ 'ի յօրինաւոր աստարեղ երջանկաբար նահատակութեան ։

Ի. Հարաւ անտի փող աւագաւոր , համբարձաւ սուլաւ Աստուած օրհնութեամբ , պատմեցաւ սուլնի ամենայն երկրի , հնչեաց 'ի լսելիս բաժանմանն հեթանոսաց , ձայն պահապանաց մեծին զօրացաւ , ըստ բանին Եսայեայ , և 'ի նոյն բարբառ առհասարակ ցնծացուք ։ Ցնդեցան չրոյն առակաւ 'ի ձեռն սորին թշնամիք խաչին . անդաստանեցաւ ճաշակն պտղոյ առաջին փայտին , տնկեցաւ նիւթս այս խորհրդական կենաց անուանեալ , անարգեցաւ երկաթ ան 'ի պետս պատերազմի . իբր սրբութիւն Տեառն 'ի սանձս երիվարին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ , ամփոփեցաւ օծեալս ցըրալ հովուին երկնայնոյ սուր իշխանութեան մարդկային ձեռին ։ Ոչ գծեաց 'ի քար տաճարին մուրճ ինչ գործոյն , իսկ յաստուածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին թեւոց ոլացեալ զօրէ ։ Ոչ 'ի գլուխս ամոյն և կամ յեօթնից եօթներորդս յոբելինիցըն՝ յանկեան ուրեք խախանմամբ փազէ , այլ ընդ ծագս տիեզերաց և ընդ ծիրս եզերաց , 'ի ծոցս Ջուրց բազմու-



թեան ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ ստակութեամբ անարգել ճայթմամբ ինն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ ։ Կատարեցան սուսերք սատակիղին այս փայտի ցուցմամբ . յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ 'ի խոփս և 'ի մանգաղս ։

Ը. Ոչ արձագանգ արձանաց 'ի խարաց ինչ գանչութենէ խիստս առաքեցեալ , և ոչ դժնդակապէս ըստ խմատակի ումեմն օտարի զօդ վիրաւորեալ , ոչ անախորժ սրութեամբ ընդ ունկն մտեալ և ոչ զամն ուղղոյն անկամակութեամբ չար թնդեցուցեալ . ոչ սոկերցն փուշ խրտուցման յանձն բուսուցեալ և ոչ մտոյն այլայլ աղշութիւն առաջի արկեալ , ոչ զանդակ նիւթոյ պղնձոյ գանգաչեցուցեալ և ոչ քար ընդ վէրգս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ ։ Պարփակարան անխորտակելի նորոյս Սիոնի , մի սա 'ի սպասուցն կազմուածոյ արարչականգեցն գլխաւորաց , զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ զեւտականացն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն . օրինակ ձայնի հրեշտակին , զոր առակս-

զլն բան՝ հաւուն կոչմամբ այսու տե-սակաւ զայն տպաւորեաց. Նոր գործի շնորհի նուագարանաց աւետարանին՝ զարթուցիչ Հոգւոյն Աստուծոյ առ մեզ՝ քան առ օրհնութիւն սաղմոսարանին 'ի վերայ Եղիսէին: Սկզբնապատ նախընթացութեան աղէյարմար ջութակաց բարբառելոյ ողբերգարկու-թեանց՝ բարբաջուցական բանքան բաւացի բարառնութեանց. որինգ նորոգ այլ իմն տեսակաւ պատեալ մեզ ընդ հրնոյն փոխանորդութեամբ, ոչ հեթանոսօրէն ուրուածոյն հնչման և կամ հրէաբար խակախորհութեան զոր մարգարէն տեղամբ աղղեցոյց՝ 'ի բաց առա յինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պատահարաց:

Թ. Եւ արդ՝ ընկալեալ օրհնաբանութեամբ յարգեալ փոխեալս զայս տաւր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն, քո պաշտօն և իմ գոհութիւն, անաղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ: Մայէ ձայնդ այդ սաս-



ուածայեալ ընդ պատուանս յօդս շաղկապութեան հանել 'ի հոգւոյս ըղպատիրս դիւաց և զմուտս անիծից և մեղաց ապականութեան: Արմացես լինել զայս իր նշանակիչ ջնար ջահաւորական, անջրելի նաւակ, ջատագով անխափանական տերունական անսպինականացդ: Ահա պարգեւեա սոխաւ՝ բարեգութ, աղաչեմ, հզօր, կրկին մեզ շնորհեա պահպանութիւն 'ի դիմամարտից յանհրեւոյթ և յերեւելի: Ընձեռեա մեզ, ձեռն ամենայն, որ բանս և մատուցանես պատարագար բաշխմամբ 'ի մասունս բազմապիսիս, օգն քաղցրութիւն, անձրեւաց շայեկանութիւն: Պակասեսցին բոյոլ հրամանաւ այսու բարբառով հողմ տապախաւն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութեանց. սոխաւ խափանեսցին ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց դժնեայ մասնչին. հալեացին, հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ օծեալս այս փայտի որդն և ուտիչ, և ամենայն նմանք սոցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին: Արմատանցս մեզ սոխաւ

տունք երանութեան զյուսոյդ 'ի քեզ
մեծ պաշտպանութիւն, առեղծիչ բու-
ռոլից, Տէր արարածոց, զայս ծառ Սա-
քելայ, որ ունի կախեալ 'ի գլուակ ա-
տոյն զուանդ տարբ նորոգ այժմու
վկրութեանս ծաղկեալ քեւ. Փրկութեան
'ի պտուղ կենաց անմահականաց : Փա-
խիցեն յանհուն հեռաստան խորքն խա-
ւարի՝ այս Փայտի փառաւորելոյ բա-
րեզէկոյց ձայնարձակութեամբ՝ նեռայք
ներհակքս ստապատեքին ստորինականաց
բաղմաձեռնեան խարդաւանողաց : Մեր-
ժեցին տոլաւ 'ի յանդգոյ պաղատան-
ձական աղօթաւորութեանց մերոց սաղ-
մանաց եւ 'ի քո մշակեալ կենդանի
երկրէ՝ վէրք վատնիչք եւ հոյլք մրմն-
քեցուցիչք • կորեացին տոլաւ յաւել-
ուածք կրկնատոգեղ եւ անվայելուչ պա-
տահմանց 'ի հնարից չարին 'ի մեզ յայտ-
նելոց • ինքնակէս վանեացի տոլաւ որք
յերկրպագանչէւրոց բնութեանցս մերոց
վերբերեւին ինքնատեղծութիւնք մեր-
ձաւոր գաւաճանողայ. յումեմն օտարին
վերիպակ մոածմունս, եւ յայլումն գարշ
գործութիւնք անմաքուր զեռնոյն արա-
կանողաց • Փրկեա, տէր Յիսուս, ա-



զաչեմ զքեզ, փրկեա, բարերար, կոր-
կոռեա առ ի զաջդ ամենազօրդ, եւ օգ-
նեա ինձ տոլաւ՝ զերծեալ զիս յամենե-
ցունց ընդդիմացողաց :

Փ • Յառնեացի միացի հրաման քո
'ի սոյն՝ առ 'ի փոխարկել զանգաման-
դեալ սիրտս յիմորեալ՝ 'ի քոյին բանիդ
արդիւնաղրութիւն. հարցեա մխեսցես
զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց
'ի սիրտս ծորեալս եւ յոգիս լքեալս, եւ
հաստատեսցես կազմեալ սնդաղէս 'ի
կայումն ուղիղ անսասանելի, իսկ զան-
ընդոստն կակղացուսցես զարթնուլ եւ
զգաստ լինել յոգի հեզութեան աստ-
ուածաւանդ քո պատուիրանիդ, որպէս
զՊօղոսն եւ զՄատթէոսն, յիշեցս, մար-
դասէր, պատուեալս այս փայտիւ զե-
րախոսիս խաչիդ • որով զանձառն ներ-
գործեցեր • քարձ յինէն, կեցուցիչ • ըղ-
ձեռանդ պարտեացս պանծալի ըծակօք
ամբառնալեաց Նոր տապանակիդ : Յաց-
ցին կամօք քո • հզօր 'ի յայս ձայն կենաց՝
ըսելիք սրտից յամառեցելոց • լուիցեն
յայս մեծի բարութեան 'ի քումդ ակ-
նարկութեան՝ ականջք իմք • պարծեւ-
ցին 'ի ձեռն սորին լեզուք համրացելոց •

լուսաւորեալին 'ի սոյն տեսարանս աչաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայլաբար. զվճարցին դարձցին կազդուրեալ կամք յախրացելոց. ընձեռեալ տացես, Տէր, տագնապելոյս անձրեւ արտասուաց: Եւ կցի քեւ ըստ մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուագ հանգստեան, նուէր երանութեան, պատճառ փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խզումն խեղդմանց, ընդարձակութիւն նեղութեանց, համառօտումն խիթմանց, հալածումն հեծութեանց, թեթեւութիւն թառաչմանց, յապահովութիւն կարեաց, կարգադրութիւն կրից, սփոփութիւն վշտամանց, բժշկութիւն ցաւոց, տեւականութիւն հեշտութեանց, ուշարութիւն անտեսոյն:

ԺԱ. Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր եւ անխոտորնակ, եւ 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ որբահետ ճանփոյ երկնաշու, առ Հայր քո օրհնաբեան ահաւոր անուան ձգեալ մատուցես, բարերարդ, Հոգեւոյդ առաջնորդութեամբ միանալ 'ի քեզ անլինգմի-



ջելի. որով եւ ընդ միոյ միոյնոյ եւ միածնական տէրութեանդ եւ անեղծ արարչութեանդ 'ի կենդանեաց եւ յանշնչականաց հաստելոց վայելչական գոհութեամբ փառք եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

## ԲԱՆ ՂԳ.

### Ասօղին Նորգմանօրէնն վասն որբալոյս եկեղեցւոյն Միածնին:

Ա. ՍՈՒՐԲ ահաւոր անուն, բարձրեալ անպատում, անձկութեան փափաք յարախորժելի, 'ի սրբերգենիցն փառաւորողաց միշտ սրբաբանեալ ընդակեալդ 'ի սրբում, լի եւ ամենալցեալն բարութեամբ առատաձեռն աննուաղելի, լոյս բարի եւ ծագումն գովելի, երկրպագեալ փառաւորութիւն, ահեղ եւ անզննելի, ամէն եւ ամենայնում: Այսու դաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, Հզօր, այս, ամէն, ողջելուխ, գովեալ թագաւոր հանուրց.

Ատուած բոլորից , առաջնորդ գոյից և Տէր կամարար , միայն առիթ պատճառաւորաց , փրկիչ և օծեալ մշտապաշտելի ։

Բ . Ուստի մեկնայես Թարգմանեալ 'ի մեզ զայս գանձ անկաճառ և հարըստութիւն անփոխարինելի , Յիսուս Քրիստոս արքայ երկնաւոր , որում զոհութեամբ մեծաւ սպասեն անմահականացըն աչեղին լուսաւորեան բոցաշնչութիւնք , կրկնեալ քեզ յօժարութեամբ 'ի հաճութենէ անխառն մտաց , ծունր գոհութեան , առաջնորդ էութեանց , որ են 'ի անտանն և 'ի ծածկութեան ։ Որ եսդ և էիր միայն բովանդակ ամենեքին անպատկառելի , առեր զմեզ խնկոյես համայն . զի 'ի լուսութենէ քումմէ լըցուցես . օրհնեալ և բարեբանեալ , ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ սրբութեամբ մեզ 'ի փրկութիւն , 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ բարերարութեան ։ Սկզբնածիր օծմանս շընորհի մեծախորհուրդ հրաշագործութեան . քանզի լոյս քո մեզ ծանուցեալ ճառագայթ անհաս , ծագումն անսահ-



մանս , արեգակն անաչառատիփ , առաջնահմանիչ երկակչիւ տարրութեանց , ճրագ ոտից և լոյս հետևւմանց , որով 'ի ցոյցս խմաստից եկեալ տեսութեամբ բանիս այս յարմարութեան տօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն յլսոակամտաքար փրկչակայելուչ կնդրկաւ խընկեալ զպարգևաբաշխ առատաբութեն ամենիմաստիդ յիւղ զուարթ անբիծ գաւանման ։ Քանզի 'խկզբան անդ կազմեցելոյ ոգորմելի տխրականութեամբ 'ի փշմանէ բարձրագոյն շնորհին հոյրն իմ սկզբնաստեղծ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գլաւեցաւ կապեալ ընդ եղծման ապականութեան անզերծ հանգուցիւ , 'ի ծառայն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակործան գլորման , հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ . իսկ դու , գթած Տէր ողորմութեան , քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր բոտեղծեր , և զի չէին անկարութեամբ չեկաց յոր ինչ էին , որով անկարողանայր խկայես տեսանել 'ի լոյսն վերին անմատոյց գերակայութեան անտահմանելւոյդ . ոչ մշտափայլ յարակայ փառ-

մամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն-ստնալպիրծ մթին արհաւրաց ձեռնկալութիւն ձիթոյ՝ շարամանութեամբ նիւթոյ պատրուգի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր . զի որ 'ի ստուերս մահու տարագրեալ գոյս կանխակորուստ անկումն վարատեաց, 'ի պատճառ իւրն ազգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ 'ի նոյնըն դարձցուք խնկաւորութիւն . որպէս և փայտիւն մահու՝ մածմամբ քո 'ի նա ածեալ մածուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն միաւորեալ 'ի փայտն կենաց :

Գ. Եւ արդ որպէս ոչ է որ՝ լռմամբ առանց գիշերոյ, և ոչ անօրէնութիւն յարկի առանց ձիթոյ սիրայից խնդրոյ. քանզի իբր օրինակն հաստարանեայն ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց անսութիւն լուսաւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քոյինկաչուէնչ շնորհին ընտրութեամբ անխափանելեաւ զաներեւոյթ հոգիս միութեամբ 'ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ . Զի



որպէս յիջուամն լուսարանի սուրբ սեղանին լուացմամբ մարմնոյն զանձին հաւատամք առնուլ սրբութիւն, այնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգեւոյն զօրութիւն ունիմք և 'ի նոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի : Եւ որպէս հրամանդ տերունական օրհնաբանելի գթութիւն մեղաց ախտացելոյն նախաձեռնէիր, իսկ ոչ հաւատ ունողայն առ այն բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անգարձէյն հաստատեիր, նոյնպէս իւղս այս վերկութեան լուսով կատարեալ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս . իսկ զներքին մարդս աներեւակ ծածկապէս մնեալ նոր կենդանածնէ :

Դ. Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչէդ երկնի . քանզի որք զեւղոյն կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահընծայութիւն, և զու 'ի գովեստ քեզ զայս բան ասհմանեալ, թէ ողորմած ես Տէր . քանզի որպէս սիրոյն անուան կցորդ ես, Աստուած, նոյնպէս 'ի մասնէ և այսու զե-

ջեալ գծագրին՝ ըստ անտեսութեանն որ առ մեզ ։ Վեհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն այս ծառոյ պարարտութեան երկրի թանձրութեան հողանիւթ գոյականութեան . զի որպէս նոյն մասն 'ի կենդանւոյն ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ ըստ օրինին , այլ արարչութեանդ քողարկլին պտուղ որոշիւր . նոյն նմանութեամբ եւս և աստանօր իւր գղօրութիւն՝ Տեառն մատչելի յայս աւանդհաճութեան նիւթ. Աստուծոյ վայելչապէս տուեալ նուիրի , հոգւոյս հարազատ զուգաճանապարհ , արարողիդ պահեալ և ուխտեալ . քանզի ոչ շունչ արեան և ոչ ճենճեր ինչ զուարթութեան օրինակ հոգւոյս խնդոյ և կարոյս ընդ անդամաթիւս մայն ծախի , այլ արքայութեանց վերնում վիճակի տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի ։

Ե . Ոչ էր մատչելի 'ի նախադոհութիւն արու անդրանիկ դատիչ քննողաց , եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր . ոչ քահանայութիւն 'ի յանկախելին անզի ձեռնարկէր , եթէ ոչ այսու կատարեալ լինէր ։ Յակոբ գրքայն պատկեր Վիմին 'ի խորհուրդ երկար խորանին ընտրութեան՝ օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջուձն անճառ բարձրելոյդ տեսութեամբ ամնդղոյն յարմարութեան , և զնա 'ի վեր տանելոյն անդուզեկցութեամբն , զարձանն իւղեալ կառուցց նպատակ 'ի ցոյց ապառնեացն յիշատակի ։ Ահարոնեան քահանայութեանն պաշտաւութիւն հրամանաւ մեծիդ Աստուծոյ օծմամբն ճոխանայր . որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն զեղեալ գերախառ իւղոյն զարմանազան կենդանագրութիւն , ըստ սաղմոսողին , զփառաց նախնւոյն առաւել զանդրադարձութիւն և զշնորհիդ կենաց որդքութեան ընդ մեզ խառնութիւն ։ Թագաւորութիւն ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն ստեղծագործիդ , եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պսակաւ օծնութեան թագին յանուն քո , Քրիստոս , գլուխ ամբառնայր ։ Եւ զորդ զնախնին վեհից մուսայոյ , զծառայն մեծիդ եւ զկերպարանն անպարագրելւոյդ . ո՞չ ա-

հա Մելքիսեդեկ յօրինակ ծածկոյթ ա-հաւորութեան 'ի Զիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնոյն Աստուծոյ ղետեղեալ կացին, 'ի վերնոց անտի հրեշտակաց 'ի սրբոց տեղւոյն բղխեցաւ. ուստի շիրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական թագաւորական պատիւ ծխութեամբ 'ի քէն հանդերձեալ նուաւ. մինչև յայտնեցաւ երևեալ լմամբ համայն խոկութիւն ադամային կենագործութեանդ ։

Զ. Եւ արդ. քանզի քո են շնորհք և քեզ վայելեն գոհաբանութիւնք, օրհնաբանեալ որդի Աստուծոյ, դու ինքն յարմարեա բարենշմար աղաւաղութեամբ զաղաչանս բազմահոլովս խնկապատարս զմեռեալս պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան. նաև տէր Յիսուս, վերացո աներևութից զայս ձեռն լուսանիւթ. և արկ 'ի սոյն խորանս խաչոյ մահացուի զկաթուած օրհնութեան բղխող փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ, միութեան արարչականաւ պատրաստեալ պատմանօք քննանց, զի յիշատակարանս թարգմանօրէն բանիս



մաղթանաց՝ վայելչական ինձ յարմարութեամբ 'ի թևս Հոգւոյդ զկարգ իւր գտցէ ։ Ի վերայ Դաւթի Հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութեամբն նուիրեցաւ. Սաւուղ յայտ յայլ և 'ի մարգարէս ոմանս անտուստ խոկ գրեցաւ. յորժամ օծումն ժամանեցաւ զապաթան նորին, որքայութիւնըն Աստուածնեայց օծմամբն զրաւեալ մատուցաւ 'ի կցորդութիւն տանն Իսրայելի. կայսերս ոմանս, նշանաւորս, քէնըս և երեւելիս 'ի խծական թագաւոր ազգաց իւրոյ այս կենսացնցող ցօղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի յինստանութիւն հպատակութեան մեծիդ Աստուծոյ. բանն, որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեան՝ զօծեալն ձայն նմին մեծ վարկաւ. ձայն սաղմոսղին գեր քան զմարգարէութիւն զօծեալն անուն նախայարմարեաց, կանոնաւոր ընդ միջարկութեամբ պատուէր աւանդեալ, մի մերձենայք եւ մի մեղանչէք. առ Հեղինա ուսաքելութիւն աստուածային հրամանատրութեանն, նշանակ ինձ հանեալ 'ի պաշտմանէ անտի Եաւհաղու, զօծելութիւն

'ի Քորեբ աղբերաց Ցէուայ և Աղայէլի ։ Իւղ Թափեալ անուն փեսայիդ 'ի հոգելից բանից իմաստնոյն վերակացեալ կանխաւ իսկ գրեցաւ որպէս Հոգին Աստուծոյ յաւէտ պատկեր և Նշանակիչ , զ'ի փոքուս զմեծդ կերպագրութիւն քեւ Նկարագրեալ՝ ընդ քեղ միացուք առմամբ քո շնորհիդ ։

Է. Եւ զի՞ եւս երկարս , պատուածորէնս բացականագոյնս , դծագրականս և առակաւորս շարագրեցից առաջի մերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւնս . Տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի 'ի յօծմանէ անտի սկսաւ քարոզել զԱւետարանն արքայութեան , վկայեալ անտուստ 'ի Յովհաննէ՝ օծեալ և գառն Աստուծոյ բարձող մեղաց աշխարհի ։ Զի Թէպէտ ընդ օծմանն օրհնութեան Հոգին էր քեղ իսկաբար լրմամբ և աստուածութեանն խառնութիւն բովանդակապէս , այլ անունն պաշտելի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս աղդելոյ 'ի սուրբսն . զի զաղքատութիւն ադամեան մարմնոյն մեծանալ յաւէտ փառս. յոլովմամբ պատրաստ արասցես ։



Բացեալ զաւածս մարգարէութեանն Եսայեայ՝ դու ինքն աստուածութիւնդ մարդացեալ ընթերցար , հաւասարիմ սանել զբան ծառայից քոց , Տէր . և իբրեւ ծանուցեալ եղեր օծութեամբն 'ի կարդ անդ բանին , Թէ Հոգի Տեառն 'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս , ապա փակեցեր 'ի հանգիստափառն օծելութեննէ զորքանութիւն երկաքանչիւրոյն յայտ արարեալ խորոյս. ասհմանի՝ ընդարձակ հեռաւորութեամբ մեծաւ կնքեցեր , զմեզս կաթուածով ինչ շնորհազարդեալ , և զքոյդ իսկութեամբ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ հաւասարութեամբ Թարգմանեալ ։ Ի Նախածանօթ մերակերպութեանն պանծալի ինն գովեստիւ՝ օծեալն կոչմամբ 'ի հրեշտակացդ փառաւորեալ արարածոց երկրի ծանուցար ։ Զոր մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի Յորդանան , և յանուանեալն լեառն Թաբօրական հայրենի ձայնիդ եկաւորութիւն Թէ՝ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր . զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ տուեալ առ 'ի զաւեալդ ձեռնադրելոյ , օծ ըզ-

քեզ Աստուած՝ Աստուած քո խաղաղ ուրախութեան ։

Ը. Հոգի երեսաց մերոց, տէր Քրիստոս, որ է օծեալ անուն իսկոյն, որով զփչումն կենդանութեան 'ի դէմս մեր լոյս բարերարութեանդ քո ազդեցեր. իմաստութիւն ումեմն երջանկի մարդաւորութիւն խոստովանելի, ասելով առ ոմն, թէ եդ վկայութիւն առաջի Տեառն ծնելոյն, զնոր աւետեացս վկայելով, թէ կոչիս անգամ ոչ առի յամենայն մանկեաց ։ Երգոյն երգ խղեփեցական զինի զԱստուծով ծանուցեալ զխորհուրդն 'ի գովեստ հարսին սուրբ Եկեղեցւոյս զմուռս անուշինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և նա զմուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փոշեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անգամին և այսր յառաջաբերեաց. Գանձել զկենդանտու մանչու քո, Քրիստոս թագաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զինի վաթսուն և ինն եօթներորդացն սարանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց ։



Ճրագանկք աշտանակն Զաքարիայ Ադդովայ՝ որ 'ի Բաբելեայ իւղոյն բարեբաշխ բացատրութեամբ 'ի մասունս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անտի զօրութեամբ անեկամտաբար վիճակաւորեալ, զ'ի քոյդ լրութենէ 'ի մեզ փրկութիւն և օծելութիւն գերարփնապէս նախադեկուցեր ։ Զոր լոյս օրինակ անստուեր գուշակման 'ի խորանին, որ 'ի տաճարին՝ ամենընդել իմն կրթութեամբ տիրարար մատուցեալ լինէր. զանք բաղարջնծայք և նաշիհք իւղովք խառնեցեալք, և ղուարակք եղանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց տանց թաթաւմամբ յաղգանկից ճարպին 'ի յարիւն, այսր խորհրդոյ առձեռն տեսակք եւ նշանակիչք յարմարականք քեզ միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ Աստուծոյ. միայն դու օծեալ հօրդ եւ զարմանալի՝ ինքնութեամբ համայն էութեամբ իսկապէս լրմամբ ամենայնիւ անպակասելի ։

Թ. Եւ զի՞ եւս լսէ բազմապատկել նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ քաղց-

րութիւն , իմանալ քեւ զայս՝ թէ զինչ իցէ իւղն . եթէ ոչ զողորմութիւնն 'ի փայտն պարտեաց սովիմբ բժշկեալ՝ ըստ սաղմոսողին , զուարթ գործեցեն . և զինչ պարարտութիւնն , եթէ ոչ ընկերակուրն մեծու սովու մնացուք լցեալ 'ի սմանէ , և զինչ ծնութիւնն , եթէ ոչ զմխիթարն թշուառ տեսութիւնըն 'ի ձեռն սորին փոխարկեցուք 'ի պայծառութի յաւէժ ուրախութեան , անուամբ քո փրկեալ յոգի զօրութեան՝ Հօր անուանեցուք ։ Եւ զի՞նչ արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութիւն ամէնատենչ բաղձանայն իցէ իմանալ , որոյ ծերութիւնն առակի 'ի ձէթ պարարտութեան , և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն , եթէ ոչ զհին խաղաղութիւն սորին սատակութեան 'ի մահ կործանմանն կենդանարծեալ դեղովս այս կենաց՝ պատարարեալ օժանդակեսցէ ։ Եւ զի՞նչ ճրագին լուսաւոր եղելոյ շնորհակալութիւն եթէ ոչ 'ի մէջ իմն անյուսութեան մեղային միգի և կռապաշտութեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ 'ի յիս Էմմանուէլ , և կամ զի՞նչ մարգա-



րէն աստուածաբանեալ 'ի սփոփանս զուարթարար օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս սմանց առեալ , օծցին իւղով 'ի մրոյ պարզելոյ . և կամ իմաստունն 'ի գիմաց հարսինն ասէ օրիորդացն , հաստատեցէք զիս իւղով և գեղազարդ խնծորով յարկեալ ծածկեցէք , և 'ի պարտէզ իւղենեաց տածեալ զրդեցէք . եթէ ոչ այր ահա ընտրական նիւթիւ հոգւոյ քո լցեալ՝ 'ի սոյն լոյս տեսցուք զանխիմանալիդ 'ի մեզ բարձրութիւն գոլեալ ։ Եւ արդ՝ քեզ միայն , խնամակալ պատճառդ բարի բնաւից եղելոց , ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս , երկկամանցս գործակցութեամբ , որտիս հեծութեամբ , լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ , լոյս ողորմութեամբ . Տէր , պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս . շնորհաւորեալ այսու պարգևօք՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ , հզօր , ահաւոր , բարձրեալ , անքննելի , անփոխ փափաքմամբ միշտ համբուրեցեալ , սուրբ , սուրբ և միայն միշտ սուրբ , օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութեամբ ։ Ընձեռեա

առաւել բարերարութիւն 'ի սպառ վրիպելոյս . տուր յոյս քաղցրութեան՝ ոչ մասին միոյ մատուցման շուտ արժանաւոր ինչ հանդիպելոյս , լայնել քեւ . բարի , զնրբութիւն ծածուկ խորհրդոյս , գոհութիւն խառնեալ ընդ աղերս՝ առել ընդ Դաւթի . ընկալար , Աստուած , զողորմութիւն քո . և զծածուկս գաղտնեացդ անտեսից իմաստութեամբ քո յայտնի արարեր ։

Թ . Եւ արդ մեծութիւն քեզ . ամենակալ առատաձեռն աննուազելի , ամենափոյթ առ 'ի գթութիւն , մշտայօժար 'ի բժշկութիւն , որ միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս զհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեան ։ Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութեամբ և անդնդոց ներքնոց խորութեամբ՝ ծածուց բազմութեամբ ոչ զօրէ տանել , այլ իբրեւ ըղձոյղն 'ի մեծ բերի , 'ի փոքր գոյս անսախմանեցեր զօրութեամբ՝ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի . զի մի՛ նորոգ իմն երեւելով յայլ էութենէ՝ առ աչս հարեւանցի երեւականութիւն



ինչ մարկանիցի . վիրաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց ։ Քանզի որպէս մարմին քեզ հաւատացէս , օրհնաբանեալ որդի Աստուծոյ , ճկութիւն և ոչ օրինակ 'ի յարդեանցըն ցորենոյ արտաքնապէս միշտ հանդերձեցեր , և կայլակ կաթլիդ զարիւն խաղողոյ , և արգանդ կենաց հոգեւոր ծընընդեանն զառատութիւն ջրոյ յոլովութեան , նոյնպէս հոգի անմահից փչման՝ տալով և 'ի սոյն արդիւնարեցեր . երկաւոր կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն և ոչ հեթանոսութեամբ է փոխարկութիւն , որպէս ոչ աւառնագրութեան խաչական փայտի ինչ երկրորդութիւն , նամելոյս յերկրի խաւարի ըստ նմանութեան քո , Տէր , ծառայեցեր ։ Քանզի յոյս կերպարան շնորհի զանպակասութիւն անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր . զի մի՛ մնասցի կարօտացի և մի՛ ընչեղն բարձրամտեսցէ , ըստ օրս հաւասար բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրական վտակաց զեղման . զի հաւասարապէս բաշխիր երկրածնաց մանանայն զուգամտութեամբ՝ փրկութե-

ցըն առաւել քան մեծամեծացն ։

ԺԱ. Իսկ այս նիւթոյ ծնաւորութիւն խորին խորհրդոյ և 'ի բնութ անտուոտ հրաշապէս ունի զթարգմանութիւն. որպէս զի երկմիտ ինչ շութափութեամբ անհասատատապէս զանեզի փոխէ, և ոչ նենգաւորաբար զընակութիւն ինքեան լքանէ. քանզի ոչ վերջնականօք ածառովք հերքի, և ոչ յընդդիմակցէ ուժեքէ ողողեալ արտաքս ելանէ ։ Վասն զի որպէս պատահումն գունոյ յէութիւն մարմնոյ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ և ոչ գոլովն ապականէ, այսպիսեա իմն յարմարութեամբ իւրոյս զօրութիւն անդստին 'ի յիւրոց անտի կերպարանս զատեալն ունողի միանական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, տէր Յիսուս Քրիստոս, ընդ իւրն գոյի և զօրինակն ծածկելով. քանզի զանիմանալին ծնութեան աչաց և մտաց ըղձից 'ի դէմս բերեալ կերպարանեցեր, 'ի պտղոց երկրի ճնշեալ մզելով զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարել մեզ պատրաստեցեր ։ Մանաւանդ զի ոչ յոլովից խառնից 'ի մի ե-



կելոց խմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն և սուրբոյն բազմաբոյրեան այլայլութենէ, զայս իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ ։ Որ թէպէտ անճառ են համեղութիւնք քումդ անուշութեան, և ընդ օրինակաց իւիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց և նարդոս ընտիր և եղեգնախունկ խառնեալ հալուէիւ, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ վիթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սակ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար, փառաւորեալ անուանդ անքննին, որ զամենայն լնու, և յիւր իմեքէ ամենեւին ոչ կարօտանայ ։ Ուստի ոչ չիւթելովք 'ի հակառակաց բնադատութեանց բաժանեալ կամաց մեկին առակի, այլ 'ի սիրոյ համաձնութենէ ստտուածապէս 'ի մէնջ պարարիս վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ. առ որս ըստ բարի և հօր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ ճնշման անզը-

թակման սառնացրութեան այս զան-
գուած նիւթոյ կաթուածոյ ծիթոյ մա-
քուր մնայ տեւեալ խմնի, որով յի-
րաւի ասէ 'ի յԱստուած է միանա-
լն ։ Ընդ Սողոմնի օծելոյ պղեգրեցելոյ
Աստուծոյ երգեմ բերանով հարսինն
երկնաւոր փեսայիդ բարերան գոհաբա-
նութիւն, համբուրեալ 'ի յիղձս մտայ
զհոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս,
և իբր զբանս կենաց յաւիտենականաց
ունողի, ըստ հոգեկեց բանի իմաստնոյն
և աստուածաբան աւետարանչին, զհետ
քո 'ի հոտ իւղոյ քոյ ընթացուք լուա-
ցեալ զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր
է քան զերկին օդոյս այսորիկ, և օծեալ
դդլուխս անպատականն իւղովդ երկնա-
նով՝ յանդիմանն եղէց քեզ ուրախու-
թեամբ, զուարթացեալ և ոչ տխրաբար ։

ԺԲ. Այս իւղ խնկելի, պաշտելի և
երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սե-
նեկի, և կամ հերաց վարսից զարդաթան
նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տե-
րունական կենսատու խաչիւդ տեառ-
նագրեացի ։ Այն իւղ զարմանահրաշ
օրհնութեան լուսոյ զհրեայն և զխու-
ժըն՝ զհնգիկն և զբարբարան՝ զսկիւ-



թացին և զելևնացին՝ գդուժն դժնէա-
բար և զարհաւրատեսակ շանագլուխն
սոսկալլիթխար, զտէրն աղատ և զըլտ-
րուկն ծառայածին՝ քրիստոսեան արա-
րեալ, անուամբ քո կնքէ, և Հոգւոյդ
Սրբոյ ընծայէ, և Հօրդ երկնաւորի հա-
րազատ որդի հաստատէ ։ Բազմօրինակ
են ասէ արուեստից տեսմունք յար-
մարեցեալք նախ նիւթոյն, ապա զօրու-
թեանն ։ Քանզի իբր անօթ փայտեղէն
մինչեւ օծեալ իցէ՝ գիւղաքար հերձի
և անօգուտ եղեալ անպատուի, նոյն-
պէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշ-
տեաւ խորտակի, և մեկուսի եղեալ
առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի ։ Մասն սա
քո, Յիսուս, որով զհրաշալին զարմա-
նագրես. քանզի իբր անգծելի կաղմու-
թեամբ կարծր պահպանակաւ՝ ամենա-
պատրաստն շրջարկութեամբ պաշտպա-
նեալ ծածկէ յայլազգունակ իրթնի ե-
կամտից. մինչ զի սոսւ մաքրութեան
թաթաւեալ 'ի սմա ոչ ներկի արեամբ,
և ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի ։
Նա զի և թախանձանց իմն խառնու-
թեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն
մերոյս գոյութեան մտեալ անցանէ, զի

թէ անէծք սաղմոսողին ձիթոյ աւա-
կաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշ-
խի , մինչափ եւս Հոգիդ սոյն ճարպով
լուսոյ զաներեւոյթ ներքնոյն տեսակս
կենագործեալ ողջացուցանէ , ազդումն
տուեալ ՚ի խորոց անձի շնչման հագա-
գին՝ մինչեւ ՚ի սպառուած ծայրիցն ե-
զերաց զընաւէն ընկղմէ զյիշատակ մար-
մնոյ մահուն արկածից . քանզի կենդա-
նական զօրութիւն քո միշտ ահաւոր ,
տէր Յիսուս Քրիստոս , ՚ի սմին խառ-
նեցեալ՝ ընդ սոյն իւղ բնակէ ։

ԺԳ . Այս օծումն բարետեսիլ եւ
առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս
իբր զօրաւոր հնարից կերպարան ճգնա-
ւորական անըմբռնելի ձեռաց ներհակին
օրինօք պաշտի , դիւաց եւ ախտից հզօր
ահարկու ։ Քանզի յոգնապաճոյճ ալըճ-
նութիւն բանին Եզեկիէլի առ իմանա-
լին փարաւոնն , հենգնաւոր առակա-
գրութեամբ ողբականօք չարայարմա-
րեալ , յորժամ եղեր , ասէ , եւ հան-
գերձեցար ընդ օծելոյ քերովբէին , ուր
արձանքն հրեղէնք հաստատեալ կացու-
ցան ։ Օրհնաբանեալ ահաւորութիւն
ամենալայր ձեռընկալութեան , որ միշտ



անճառ եւ բանից եւ գերազանցեալ
քննութեանց , որ աւետարանաւն կե-
նաց խնկելոյ յորակոյ իբր նորածին օ-
ծեալ ՚ի քաղաքի Դաւթի , եւ ՚ի քա-
հանայապետին հարցմանէ , դու ես օ-
ծեալն Որդի օրհնելոյն , եւ յերանաւորն
դաւանութենէ Պետրոսի օծեալ միայն
Որդի Աստուծոյ կենդանւոյ , եւ յառա-
հաւատ քննողացն , եթէ դու ես օծ-
եալն , ասեն , ասա մեզ համարձակ . եւ
՚ի կանոնականացն քոց հաւատամք յօ-
ծեալդ ուսուցիչ եւ տէր ամենայնի . եւ
Հերովդէս յառաջ քան զսոյն զօծեալդ
անուն յայտնապէս հարցեալ , եւ զխնդ-
րեն , դու իսկ ասացեր , զօծեալն Աս-
տուծոյ զտէրն Դաւթի զանսկիզբն Որ-
դի՝ ժամանակաւ Որդի ։ Քանզի այսպէս
ընկալաք փայլչաբար զայս թարգմանե-
ցեալ , որ ՚ի մեզ բերի ծայրն կատար-
ման խորհրդական կոչմանն՝ միձակ քը-
րիստոնէից նախապատուութեան ։

ԺԴ . Այնքան ունի ահաւորութիւն
միանգամայն եւ սրբութիւն իւղաւորա-
կան խնկաւորութիւն սակայն անու-
նոս օծութեան , մինչ զի որպէս ոչ
է համարձակել ուրուք յերկրայնոցս

աստուած անուանիլ՝ այլ աստուածային ․ նոյնպէս ոչ ընդէ մարմին զՔրիստոսի անուն անձին համարել ․ այլ զՔրիստոնէայն ․ անտանելի նախնեայն մեծութեան Ակիլոսին՝ ջուրը զչոյին հրաւիրողին ․ քանզի չեմ ես ․ ասէ ․ օծեալն ․ այլ Առաքեալ առ այլն նորա ։ Ցոլաւ զրջէին ․ որպէս բանն ասէ աւետարանչին Մարկոսի ․ առաքելականացն ընթակցութիւնք ․ իբր ազգակից հարազատ ձեռնիւք Աստուծոյ՝ այսու վարեցեալք ․ քանզի խղով օծանէին և առանց մարդկային հնարից անուանք քն բժշկէին ։ Վասն զի որպէս խաւար 'ի լուսոյ և ցաւ յառողջութենէ ․ գիշեր 'ի տուընջենէ և մահ 'ի կենաց ․ այսպէս և 'ի սոյն իրէ ծերացուցեալ ամենայն չարին երեւոյթք մերժին ․ խաւարին և բնաւին ամփոփին ։ Քանզի որպէս ճանճք զաղբերք և փոքր զեռունք սարդից և ունկնամորից իբր 'ի դեղոյ մահու յայս նիւթոյ սպառեալ պակասին ․ նոյնպէս լրութեամբ շնորհի օրհնութեան սոյն իւղ զօրացեալ՝ և զայս վանէ և զմերձակս չարեաց ջրէ և ըղձից մահու պատուէ ։ Ոչ է աւազան



կատարեալ՝ առանց օծման օժանդակութեան ։ Եթէ աւազանացն մաքրութեան զմարդն առաջին ․ այս զերփրկութեան մատուցեալ տուաւ ․ եթէ անձարակ վիրացն Յակոբայ և Նոյաբելի ․ սոյն իւ պատուական յիշատակեցաւ ․ այս իւղս փափաքեալ Դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն Աստուծոյ յուսով յարակայի ․ լքեալ զթլփատութիւնն՝ անգամն զմկրտութեանս շնորհէ զուշակէ ։ Եւ զի՞ է ինձ զայսմանէ ճառել ․ և համայնին՝ կարծել հասանել ․ որ և ոչ վերինքն զօրէն ձեռնարկութեամբ ինչ բանի ըղձոյն խորհուրդ 'ի մանաւանդ ինչ ճառելով նշանակել ․ թողում ասել՝ թէ յիմարութենէ ։

ԾՆ ․ Փառք քեզ միշտ և յամենայնի անմահ թագաւոր ․ 'ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս ․ զոր արարեր և կատարեցեր առ իս ․ բարեխնամ ․ գթած և երկայնամիտ ․ հզօրուստ և առատ ամենայաղթող ․ անգամին 'ի հայրյն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ածեր զխոկութիւնս ճշմարտապէս ։ Դու լոյս էակ բնութեամբ և

արեգակն մշտապայծառ , և զաշակեր֊
տացն դաս լոյս անուանեցեր , որով
զարդարածս ամենայն երկրի ճառագայ֊
թիւք երջանիկ շնորհի նոցին լուսցեր :
Ընկալար զիւղն անուշութեան յուսեմ֊
նէ 'ի յոստ՝ յօրինակ ընդունելութեան
մաղթանաց առ քեզ , և 'ի միւսմէ
զունկէ 'ի գլուխ նշանակ սիրոյ գը֊
թութեանդ առ մեզ . մշտախախտ
բաղձանօք անսահմանելիդ 'ի սոյն հա֊
ստատեալ՝ մինչ զի ուխտիւ անխախտ֊
րելեաւ օրէնս յարակայ օրհնաբանե֊
լիս՝ քրիստոնահրաման պատուէրս կենաց
ընդ համօրէն աշխարհ քարոզել զա֊
կուածեան իւղոյն յարգաւորութիւն ,
զարմանս հրաշից լուսոյն առ աղա֊
նեացն յուսադրութիւն : Դուք օծու֊
թիւն ունիք զսրբոյն , տալոյ երջանիկն
առաքելութեանց , մեկնեալ զխորհուր֊
դըն , որ 'ի մեզ զեղեալ յառաւելու֊
թենէ կենդանարարին անպակաս բա֊
վանդակութեան : Ուստի յաւէտ ինձ
յարմարաւոր և համգունաւոր առ 'ի
ճանաւորն նմանութիւն լուսոյդ և հո֊
գւոյդ Սրբոյ՝ այս կաթուած օրհնու֊
թեան 'ի վերնոյդ բարերարութեանց



անսպառաբար սահեցեալ 'ի մեզ , և
տալ լոյս , իբր զնախաթիւ գօղ առեղ֊
ծուածոց և արարչութեանդ պատկե֊
րակից , որով զխաւար մթութեան մե֊
ղաց հալածեա , իսկ հուր , զի ամենայն
տարր արարածոց հաւասարապէս ունին
զուգութիւն ըստ էականին կշիռ բաշ֊
խութեան , ծածուկ և յայտնի , լեալ
և ծանուցեալ . և եթէ ոչ ընդհարցի
'ի հակառակէն , ոչ 'ի յինքնատատ
յօժարամտութենէ բաղձայ բորբոքիլ :
Դարձեալ և օծումն , զի արքայաբար
որդեգրեալ ընդ քեզ 'ի ժառանգու֊
թիւն Հօրդ մատուցես , ողորմութեա֊
նըդ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղ֊
ծանելի՝ 'ի համդերձեալ փառսն փայ֊
լեցուք . դարձեալ և հողի , զի մաք֊
րեալ զարկածս խարէութեանն՝ որ 'ի
բանսարկուին ներգործութենէ , նորոգ
փոփոխմամբ հոգւով և ճշմարտու֊
թեամբ Հօրդ երկնաւորի երկրպագես֊
ցուք , բեւեռեալ ընդ քեզ յուսոյն
հաւատովք , ամենապարգև :

ԺԶ . Ահա արդարեւ յաւէտ խոկա֊
ցես իւղս այս լուսապատար ինկալեր՝
վերնականին սիրոյ տեսութիւն : Կան

որոյ և Պօղոս իսկ [illegible] վարկաւ 'ի ճառ գոհաբանութեանն՝ ասելով յայտնի․ որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս Յիսուս՝ Աստուած է, որ եւ կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր․ և դարձեալ մի՛, ասէ, տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան․ Պատկառելի և անվանելի օծութեանս յորջորջութիւն՝ իբր 'ի նորումն յաւէտ քան 'ի հնումն․ քանզի յայնն Դաւթեան սաղմոսին զտիրական տնօրինականացդ սկզբնաւոր կլիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար վերաստահմանէ․ ժողովեցան հաւաքեցան իշխանք ժողովրդոց վասն Տեառն և վասն օծելոյ նորա։ Մարգարէութիւն մեծ տօնաւորեալ ղանօրքէլի արեանդ պարտոս հրէախումբ չար մոլեգնութեանն՝ որ 'ի Տէրդ յանդգնութիւն, ո՞վ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն Տեառն և քաւեսցի․ քանզի թէ և յազգային տպանու Սաւուղ․ այլ ոչ 'ի տպաւ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց, մինչև արեանդ Աստուծոյ հալածեալ գտան։ Դրաւական մեծ յիշատակի ա-



պագայնոյն ժառանգութեան աղօթանուէր աղերսարկութիւն առել սաղմոսիւն․ վասն Դաւթի սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ․ և դարձեալ, Նայեաց և տես յերեսս օծելոյ քոյ, և այս աղերսութիւն ընդ օծելոյ քոյ։

ԺԿ․ Ձեթն քո, Քրիստոս, երկրպագեալ պարգեւատուութիւն այս հիւթ լուսակիր․ քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յարքայութեանն ձիթութենէ ասէ մարգարէն 'ի դիմաց քոյ, Տէր, քան թէ գտի զԴաւիթ ծառայ իմ՝ և իւղով սրբով իմով օծի զնա։ Ուստի կիրթ իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն, տէր Յիսուս Քրիստոս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութիւն․ թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն թագաւոր թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իւղելոյ․ փառաբանեալ երկրպագութեամբ երէկ և այսօր․ Քանզի զոր օրինակ պատրոյգ թացեալ 'ի ճարպոյ ոչ երբեւեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչեւ հուրբ լուցեալ վառիցի, այնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղեալ 'ի

հանդերձելոյն չարչարուի ։ Այս է կեր-
պարանին մեկնաւոր բացերեւութիւն,
'ի նախնեացն և այսր բերեալ բարեկր-
շան իմն յարմարութեամբ՝ հրաշագոր-
ծու երանգաւ գունեալ։

ԺԸ. Արդ այսոցիկ պատճառ վեհա-
գոյն մասանց կեցուցչաց աստուածակա-
նաց արարչութեանդ հարազատաց ա-
ւանց որոյ ոչ է գրել քրիստոնեան, և
ոչ նազովրեցի անուանիլ, և ոչ յիշա-
տակիլ յորդիս Յուդայի, և կամ խրա-
խոյս բառնալ յանուն Աստուծոյ Յա-
կովբայ. այս հեթականութիւն օրհ-
նութեան ձիթոյս, յորում ասէր Եր-
րորդութիւնդ խառնեցեալ միաւորի,
ճառագայթ շնորհաց, շուք մերոց գի-
մաց, նկարագրութիւն երեսաց, բարե-
ձեւութիւն պատահմանց, լուսաւորու-
թիւն աչաց, անարատութիւն բը-
քաց, վայելչութիւն պալից, զարդ կեր-
պարանաց, պահպանարան շրթանց,
հանդերձիչ կրօնից, յարմարիչ վարուց,
շաղկապ հաւաքմանց, զօրութիւն ան-
ձանց, ուժգնութիւն գիմեցմանց, խա-
ղանիչ յուսոթից, քակիչ հնացելոց,
նահանջիչ ձեռնածուաց, խայթաւա-



կիչ կախարդաց, դոլիչ աղանդից, ըղ-
ձախոյեան գիւաց, փարատիչ ցաւոց,
կատարիչ կնքեցելոց, անեղծանք երախա-
յից, անգինելին արտաքնոց, հիացումն
հեթանոսաց, նախանձարկու անհաւա-
տից, մերկացուցիչ զաղանեաց, յար-
գանք յեռանց, փառք սրբոց, պճնու-
մըն կանանց, անձեռնամն աղայոց, հըր-
ճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց,
զգուշութիւն մաքրոց, պսակ թագա-
ւորաց, ճոխութիւն արքայից, յառա-
ջադրութիւն կայսերաց ։ Քանզի զոր օ-
րինակ ամեն ինչ կնքեալ՝ նշանակիչ ի-
մըն է ներքնայնոցն մեծարանութեան,
նոյնպէս բարձրութիւն շնորհին 'ի մեզ
ասլու ծածկեցեալ յանուն քո, Աստ-
ուած տէր Յիսուս Քրիստոս, վայելչա-
կան իմն [illegible] ծանուցեալ նշանա-
կի ։ Իսկ անուանն իւրոյն անդստին 'ի
նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգեւոր
արանց իմաստնոց՝ որ յետ [illegible] ան-
տի ակնեալ 'ի դէմս ածելով զկերին կեր-
պարան՝ ահաւոր խորհրդոց պատկեր ։

Սակս որբաշոյս խաչոյն Մխառոնի ։

ԺԹ. Վասնզի միւռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զոյն ասելովեալ խնդրէր, ըստ քերթութեանն բանի որ ըստ խըստրութեանն հոմերանի, թարգմանեալ իմանի, ինձ մայր. այսինքն է՝ առ 'ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրաւէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ ըզնուրց լուծականութիւն առ առաքինին լուսաւորութիւն. և իբրև զգեղ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել զընդդէմս իմ մայրագութիւն, և զաղբերց հեղեղեալ մշտահոսութիւն։ Իսկ մաքրամաքուր որ և այս միւռոն, ըստ այլում բանի ցուցանի, այս ինքն է՝ մթին, որ և խաւարչուտ և ծածկեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն գիմաստութեան չէ օտարացեալ. քանզի արդարև յիրք անտի անուանն նշանակի. վասն զի անքըննին է այս խորութիւն յաւէտ քան զամենայն որպիսութիւն որբոց։ Զի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և



կամ հայցի բնութեամբ զմիասն հաստատէ, այլ նորոգ իւն յարմարութեամբ 'ի մասունս ալբողականացն անօրինակս ուսանողի. ուրկայն անհասութեամբն զկրնակման և զանուննն ունի անքըննին։ Վասնզի որպէս Աստուած իսկ և իսկ 'ի լոյն անմատոյց առի, իսկ անհասման փառաւորութեամբն յեղանակաւ իւն անբաւութեան 'ի խաւար անքննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ 'ի լեղուաց ունոց ճարտարաց 'ի ճահ ձեռնաթեանց գրականապէս անսուանողութեամբ մեայլ առձայնի. վասն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զնմին գիտելոյ։ Իսկ զի զերկաքանչիւրս աստուածականացն անգտին յինքեան հաբրստաբար ունիցէս ունի. քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ կրկին մեծանոյ իւրս այս նըւիրեալ ամենաբուրեան օծին կենդանաւ. վասն զի Աստուած մեր հուր ծախիչ է ըստ Մովսէսի, և դարձեալ լոյս է ըստ Յովհաննու. ուստի և Եսայի ճշմարտապէս զոյն ակնարկէ, ե-

զնչի , աւէ , ըստ խորայնի ՚ի հուր ։

Ի . Դարձեալ այլ ինն կերպացուցանելով զբանս առ՚ի նոյն պատկեր յայտնութեան իւր . վասն զի ոչ մնուանամ զինն նողկութիւն՝ որ ՚ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին զամենատիւ-օրհնեալ . քանզի Մեսայ՝ որ է զառնութիւն , այսինքն՝ նշանակ ինն յորմարակին չարչարաւոր կրից տաժանմանց , որ և Մեսեան ստուգաբանեալ մեկնայես ըստ մեզ՝ մնւեսլութեան աղգախնութիւն ։ Քանզի այսու օծմամբ հոգևորականաւ իղեալ կամ հաստեալ ՚ի մնոտխանէր մնհանկերպարան տաղտկաղաղական հեշտութեանց հակառակողին , որ օգախնաւ մեղկութեամբ դքնարս ձայնատրական և կամ զարկեւած վեղածածկութեան մնդարհեստ ու ժգնադարբառ խրոխտանենչական կողմնւածոյ թմբկիս գործականութեան չքացիր ինն գիջութեամբ անվայելուչ թուլադաշնակեալ ՚ի տարփն կրքտեան քարչէ զօրինակ մերս գոյութեան . կատիմք յուսով վերստին դարձեալ ընդ անձառ խորհրդոյ Իւոք քո , Քրիստոս , մկրտեալք ՚ի մահ կենդանւոյդ՝ անվախճանական կենացդ տոլաւ հաղորդիմք , ՚ի քեզ իսկ Աստուած համայնիւ խոստովանեալ ՚ի տպաւ ամենեւին անհասուածելի ։



ԻԱ . Այս իսկ գրոշեալն քառակուսեան յանուն քո , Յիսուս , նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ . չնորհ ընձեռեալ զուգախառ և նմանատիպ արեան կեցուցչիդ նոյն անվանելի փառօք պատկեալ մեծացուցանէ ։ Փայտ անուանի իւղոյ օրհնութեան , ըստ մարգարէին կանխաձայնութեան , զ՚ի հատորակաց կաղմեցեալ բուսոց անտառաց զօրացես ուղղեալ՝ ՚ի խաչութենէ չարին արկածից և օտար կործեաց ՚ի ընտրելոց վերաբերեալ առ նոյն նիւթ կենաց հասուն ներգործէ ։ Զի և որ ՚ի մեզ միոյն պատուհանաց մշտարացին թախանցանցութիւնք՝ յանուն մեծութեան ահաւորիդ զօրութեան ՚ի խաճական ինն համեմատութիւն քեւ տեառնագրեցեալ առ ՚ի յղձակերտ օթեւան հոգւոյդ անարգելի պատրանաց չարին խաւարահողմ խարդախողին , այսու յուսով զգեցեալ ամփոփիմք ՚ի նուագ-գոհութեան երկկրկեան պաշտաման ընդ

երկնայնոցն զամենայնոյդ՝ առ օրինակ վառ-
ման շնորհիդ․ որ 'ի մեզ․ 'ի սոյն յիշա-
տակ փրկութեան բարեայն տօնաւ տըն-
կեցեալ ծաղի, եւ ծաղկաւէտ եղեալ
պտղածնի, 'ի սպաս ընթրեացն պատ-
րաստութեան յետնում գիշերի 'ի մե-
ծիդ գալստեան․ ահա զայս ըստ ձրպէ
համբերեալ 'ի կէր արկանեմք․

ԻԲ․ Գործեալ ըստ գծագրացն գու-
մարութեան քան եւ չորիցն չարագրու-
թեան՝ որ յաղփափեսաց անտի վերա-
ծուխ մինչեւ 'ի քաններորդ երկրորդն
կարգի․ յորում զայս խորհուրդ խորու-
թեան անտառաւ թարգմանեալ՝ ճաշակ
հեշտալի որոց հաղորդին քաղցրեալ պատ-
րաստեմք ամենակալն յարմարութեամբ․
քանզի յաւթաններորդէ անտի գրոց 'ի
չորեքհարիւրն փոխաբերեալ՝ սառուցա-
բանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն ա-
նուան նիւթ ճշմարտագրի, որ է կեր-
պարան պղեան խմբոյ յինքն բերողի
զզանգուածն զօրեղագէս․ որ ոչ սա-
կաւն 'ի յոլովին պարագայի․ քան թէ
'ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետա-
բանական առակին, զամենայն առ ինքն
վերաբերեալ ամենցուն առնէ ․



ԻԳ․ Այն իւղ հեղութեան միշտ համ-
բարձման և խոնարհութեան օրինակ և
նմանութի, առ ամն կակուղ պատուա-
մատուցեալ ջամբի, հարթակչիւ և բա-
րեյարմար բանի կերպարան․ իսկ համա-
ների լուծականաց հաստնուտ և սորա-
ծորելի նիւթից գերափառ վերաշքջա-
կան հրաշափառ խորհրդոյ պատկեր․
քանզի և յաման ինչ մորթոյ արկեալ՝
ոչ ըստ գինւոյ ձեւոյ և կամ ջրոյ թա-
ցութեան մեղկէ, այլ 'ի սահման պատ-
շաճին պահէ։ Այսպէս ընկալեալ ըղ-
ձոյսդ բարեաց անհաւասար առաւե-
լութիւն, Որդի Աստուծոյ կենդանւոյ, ըղ-
որքանուէր այս օծելութիւն 'ի ճակատ
դիմացս արեամբ քո դրեմք, և 'ի բնու-
թիւն ընչայս հոգւոյդ քո տպաւորեմք,
հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ
յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցեալ
բազմաճաճանչ ծայրարձակութեամբ 'ի
տարածումն յոգնատեսիլ զօրմնահրաշ
ընդարձակութեան՝ պտուղ իւղոյ ընծա-
յեալ զայս 'ի փառս սպառնեացն հան-
դերձելոց։ Այս ճոխ հոգեւոր եւ ջա-
նիկ և վերնանշոյլ 'ի դէմս երեսաց իմ
պատկերի՝ քում նշանաւ ջահուորեսցի։

ԻԴ. Եւ քանզի իբր անհնար ոչ ըմբռնական այս մեծ զօրութիւն արարագացմամբ 'ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհունն հեռաւորն անհետ փախստեան՝ լայն իմն միջացաւ 'ի սպառուշեալ. փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութեամբ, ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ. ոչ կշռեցաւ ընկերին չափով. այլ ունի ընդ աստուածեան խաչին նշանի հաւատարմութեամբ առեան կեցուցչին հոգիապէս գերագանցեցաւ։ Եւ արդ օրհնեա զմեզ. Տէր, տուեալ եւ 'ի սոյն. եւս եւ անունդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր եւ զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անճառից մաքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքննին, անպատում, բարձրացեալ, ողորմած, վերերգեալ, ճշմարիտ, բարերար եւ սուրբ, որս սաւաւ փրկութիւն, տուր եւ քաւութիւն, պարգեւեա բժշկութիւն, համբերաւորեա շնորհ, աստուածեղէնեա երանութիւն։ Յօծումն այս ձիթոյ երկնանձրեւ լուսոյ անպատ գթոյ. յեղելոյ



յայս թեղան բանաւորական մի՛ մտցէ եւ մի՛ զրաւեսցէ տիրականութիւն աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան։ Եղիցի այն ինքն որոց մատչին օծանել սովաւ հարմարաձոյլ պանծանօք ըմբռնել գեղայօրէն սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ։ Եղիցի հուրս այս լուսափառ եւ աստուածածին՝ մերձեցելոյն 'ի սոյն ընտրութիւն՝ մուխ կրկնեալ եւ բարեփառաց ջերմութեան այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ զգեցութեամբ՝ 'ի կարծրականութ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց 'ի քեզ հաստատեալ աներկմտելի։ Լիցի նշանակ վերնամիցանակ այսր պարգեւի սովաւ վառելոյն, ոչ ողողել ջուրբ, ոչ այրել հուրբ, ոչ ցրտանալ 'ի սառնութենէ, ոչ խաւարել հողմով շիջանիլ, ոչ աղտեղել յուրուական ինչ աղծութենէ, ոչ զղջահեալն՝ չարին մատնել, եւ ոչ 'ի սարսեւ ելեյն զմթերս գանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատրաստ մնալ 'ի թեւոց քոց օգնականութենէ, եւ ոչ զերծեալն 'ի մեզ օծութիւն ան-

մաքրապէս 'ի բաց մերկանալ: Այլ եղիցուք քեւ 'ի սոյն հրացեալ, ամփոփ պարարեալ, սովու լուսաւորեալ, պայծառ արդարացեալ, ազատացեալ, պսակեալ և թագաւորեալ: Եւ քեզ միայնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, աղէրսաքրլեզուաց, հրնչմունք ձայնից, յաղթականութիւնք գովեստից, բարեբաստութիւնք շրթանց, որբարանութիւնք սաղմոսաց, ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այն իմ ձեռնարկութիւն 'ի սրբութիւն, եւ այս արձանագրութիւն 'ի սրբութեանցն՝ սրբութիւն:

---

# ԲԱՆ ՂԳ.

Վերջին յաւելուած յետին հեծութեան նորին հանգոյն առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ա. ԱՍՏՈՒԱԾ յաւիտենական, բարերար և ամենակալ, արարիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի, յոյս ակնունողաց եւ երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս անէլութեան քո խաւար գիշերոյ, որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց և հայիս յաղօթըս խոնարհաց և ընդունիս զխնդրուածս նոցա, Աստուած իմ և թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յիսուս Քրիստոս, Աստուածդ ամենայնի տէր-

բերդ հանգուցեալ 'ի հոգիս որբոց · մխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց · որ գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա · առաքեա զպահպանողական զօրութիւն աջոյ քո և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ ։ Որպէս զի զյիշատակ տօնական և սուրբ քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ · կեցից պահպանեալ ընդ այնոսիկ · որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ·

Բ. Եւ 'ի դրոշմէ խաչի քո նշանիդ · զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր · և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր · և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր · այսու պարգևօք աստուածականօք ամաշեսցէ սատանայ · քակտեսցին մեքենայքն · բարձցին որոգայթքն · պարտեսցին մարտուցեալքն · պակասեսցին զէնքն ասպարաւորք · մերժեսցի մէգն · փարատեսցի խաւարն · մեկնեսցի մառախուղն ։ Բազուկ քո հովանասցի · և աջ քո կնքեսցէ · վասն զի զթած ես և ողորմած · եւ անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց ։



Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ Սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

---

## ԲԱՆ ՂԵ.

Վերստին յաւելուած յետին հեծութեան նորին հաշուի առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Ա. ԱՐԵԳԱԿՆ արդար · ճառագայթ օրհնեալ · լուսոյ կերպարան · փափագ անձկութեան · բարձրեալ անքննելի · զօրեղ անպատում · բարւոյ բերկրութիւն · յուսոյ տեսութիւն · գովեալ երկնաւոր · թագաւոր փառաց · Քրիստոս արարիչ · խոստովանեալ կեանք ։ Եւ որդ՝ զթերութիւն վկայանաց բաղմանօք ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութեան Հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ 'ի փորձ եկիր անիծից · կերպարանեալ զիմ նմանութիւն · ամենեւին կենաց օրհնութիւն · վերնոց եւ-

ներքնոյ բարեխնամող տեսուչ համայ-
նից ։ Զի թէ յանձն առեր մեռանել
վասն իմ․ Աստուած և Տէրդ բոլորե-
ցուն , որչափ հաճեսցիս առաւել ևս
այժմ վտանգաւորս կրից կարեկցել ,
ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով
ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝
առ համապատիւդ քո Հայր ։

Բ․ Եւ վասն արեանդ պատուականի
միշտ մատուցելոյ 'ի հաճութիւն կամաց
առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ
դատապարտելոյս , թողցին պարտիքն ,
ապաքինեսցի ամօթն , մաքրեսցին պատ-
կառանքն , բարեգործեսցին դատմնի-
քըն , սատակեսցին որդունքն , վերա-
ցի լալն , հանդարտեսցէ կրծումն ա-
տամանցն , ապաւեսցին ողքն , հաս-
ցին արտասուքն , մերժեսցի սուգն ,
հալածեսցի խաւարն , վանեսցի հուրն
սաստկութեան , հերքեսցին տանջանա-
րանքն բազմօրինակք ։

Գ․ Եկեսցեն գթութիւնք կամողիդ
և պարգևողիդ կենաց ամենից ․ ծա-
գեսցի լոյս , արագեսցէ փրկութիւնդ ,
հասցէ օգնութիւնդ , ժամանեսցէ այ-
ցելութիւնդ , կանխեսցէ ցօղդ ողոր-



մութեան․ յառաջասցէ արքունեաց ղան-
դատանս պարգեւալ՝ անկեալ ոսկերացս
թշուառութեամբ 'ի վիհն մահու , ծաղ-
կեցուսցէ պաղարերեսցէ բաժակդ երկ-
նաւոր արեան կենարարիդ զերկիրս
խնամեալ աւուրն լուսոյ , որ անծախա-
պէս միշտ պատարագի յիշատակ կենաց
փրկութեան հոգւոց ննջեցելոց ։ Զի ա-
մենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս
մեղաց՝ շնորհօք քո , գթած , 'ի քեզ
զօրացեալ քեւ նորոգեսցայց , զատեալ
'ի մեղաց անմահ կենդանութեամբ 'ի
յարութեանն արդարոց ․ Հօր քում օրհ-
նեցեալ ․ Ընդ որում քեզ փառք , և Հո-
գւոյդ Սրբոյ բարեբանութիւն վայել-
չական գոհութեամբ , այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

## ՎԱԽՃԱՆ

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻՍ
## ԴՐՈՒԹԵԱՆ

Ըստ հոլովման ընթացից ամենակալոյ յառաջ շարժութեան, որ ըստ ըստարա-տային նշուլագեղն արփիաճաճանչ լու-սակիրն օրակիզին մշտափայլան ակ-նապարար ակնն արեւու՝ առեղծ ակնն արուսեկի, որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն ՚ի չափս գալուց ճնշասպառ եւ կենդանածորդ աւուրե-կան յաւիտենից, ՚ի յաւարտումն կա-տարման քննեցեալ Յոբելինին ՚ի սկիզբն սրտակելոց մտի տառեկլին յարեթական առաձին աւանորի, յետ երից ամաց ան-ցելոց՝ որ զկնի գալստեան ՚ի կոյս եւ ՚ի կոյս կողմանց հիւսիսոյ գնաց ար-ւելից՝ յաղթող եւ մեծ կայսերն հռո-մոց Բասլի, յորժամ ընդարձակ եւ ժա-կազմութ կանոնաւ ՚սփիւռ տարածեր՝ լնասահման եւ անխարոյ ՚ի սոսեկրա-կորկատ կոթողս կարծր արձանաց՝ ՚ի ձգուածն ձեւուն եւ յանխղէլ լուր սա-րանաց երկարագունից անթարթափ ՚ի նոյն մերձաւորեալ ՚ի յաջ եւ յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մա-սանց մեծակաց խմբից աշխարհաց ՚ի ծոց իւր ։ Արդ՝ ՚ի յայսմ անդորրութեան միջոցի, յորում եղերեալ ընդանեցան թշնամիք Նիկեղեցւոյ, առաջեալ հիմնե-ցի, կասւոյի, կարգեցի, կուռեցի, արձանացուցի, գիղի, բարդեցի, կա-ցուցի, ցոյց, հաստատելով ՚ի հա-շակերտութիւն միայն իւր զբաղմա-ունքեան գրուածս գրութեան այսմ ամփերի արգասաւորի, եւ Գրիգոր կը-րձնաւոր քահանայ, յետին բանահիւսոց եւ կրսեր փորձառեացս, գործակցու-թեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհան-նէս կոչեցելոյ՝ Նորեկոյ մեծախառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի մարմին բանական ՚ի յերկուց առ մի կերպարան շինելոյ գիւտոց կեն-ցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրօնք, համապատիւք ղուգահաւանք ՚ի քաւից աչաց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ ասեալք ։

Արդ՝ հայցեմք ՚ի ճաշակողացդ յայ-սմ սեղանոյ յաղնօրէն եւ ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ ՚ի մաղ-

*թանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեան սիրով 'ի միտս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեանն:*



# ԱՒԵՏԱՐԱՆՔ

## ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

# Ի ՄԱՏԹԷՈՍԻ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝
որ ըստ Մատթէոսի ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա՝ եւ քարոզէր զԱւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս ՚ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս, որ նեղեալ էին ՚ի պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս եւ զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս, եւ բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլեէ եւ ՚ի Դեկապոլեայ եւ յԵրուսաղեմէ եւ ՚ի Հրէաստանէ եւ յայնկոյս Յորդանանու եւ բժշկեաց զնոսա։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

ԱՅԼ իբրեւ էջ 'ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք ։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, եւ ասէր. Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել ։ Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց 'ի նա Յիսուս՝ եւ ասէ. կամիմ, սրբեաց. եւ վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն ։ Եւ ասէ ցնա Յիսուս. զգոյշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային, եւ մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս 'ի վկայութիւն նոցա ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

ԵՒ մտեալ 'ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա եւ ասէր. Տէր, մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ. Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ եւ բժշկեցից զնա ։ Պատասխանի ետ հարիւրապետն եւ ասէ. Տէր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկն իմ ։ Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, ասեմ սմա երթ՝ եւ երթայ. եւ այլում թէ եկ՝ եւ գայ, եւ ծառայի իմում թէ արա զայս՝ եւ առնէ ։ Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, եւ ասէ ցայնոսիկ, որ զհետն երթային. ամէն ասեմ ձեզ՝ եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք ։ Բայց ասեմ ձեզ. զի բազումք յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն՝ եւ բազմեսցին ընդ Աբրահամու եւ ընդ Իսահակայ եւ ընդ Յակովբու յարքայութեան երկնից ։ Եւ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց ։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ, եւ որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ, եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ ։

Եւ եկեալ Յիսուս 'ի տունն Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ եւ եթող զնա ջերմն. յառն եկաց եւ պաշտէր զնոսա ։

Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսոսն բանիւ, և զամենայն հիւանդս բժշկեաց. Զի լցցի բանն, որ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց. և զցաւս մեր եբարձ:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: Եւ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո, Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից արօտականաց: Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն: Եւ ասէ ցնոսա. երթայք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով, և մեռան ՚ի ջուրսն:



Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, և եկն ՚ի քաղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ՚ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ ահա ոմանք ՚ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա: Եւ ծանուցեալ Յիսուսի ըզխորհուրդ նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրին է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել արի և շըրջեաց. Այլ զի գիտասջի՛ք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, Յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի առ զմահիճս քո. և երթ ՚ի տուն քո: Եւ յարուցեալ գն-

նաց ՚ի տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան, եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վերայ նորա՝ և կեցցէ։ Յարեաւ Յիսուս եւ գնաց զհետ նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի դրօշակ հանդերձի նորա։ Քանզի ասէր ՚ի միտս իւրում, թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա՝ փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ և ետես զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ՚ի ժամէն յայնմանէ։ Իբրեւ եկն Յիսուս ՚ի տուն իշխանին, և ետես զփողարսն և զամբոխն յոյժ, ասէ ցնոսա. ՚ի բաց գնացէք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝



այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ ել ամբոխն ՚ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու. աղաղակէին և ասէին. ողորմեա մեզ. Որդի Դաւթի։ Եւ իբրեւ եկն ՚ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. հաւատա՞յք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո, Տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն, թէ և ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ

յԻսրայէլ : Իսկ փարիսեցիքն ասէին , թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս :

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս :

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս , ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա , և քարոզէր զԱւետարանն արքայութեան , և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս 'ի ժողովրդեանն : Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա , զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս , որոց ոչ իցէ հովիւ : Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր , հունձք բազում են՝ և մշակք սակաւ , Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր : Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր , ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել ըզնոսա , և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս :

---

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս :

Եւ գնացեալ անտի Յիսուս եկն 'ի ժողովուրդն նոցա : Եւ անդ էր այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր . հարցին ցնա՝ և ասեն , եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել , զի չարախօսեսցեն զնմանէ . Եւ նա ասէ ցնոսա . ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի , և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի շաբաթու . միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա . իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար . ապա ուրեմն արժան է 'ի շաբաթու բարիս գործել : Յայնժամ ասէ ցայրն , ձգեա՛ զձեռն քո . և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն : Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա :

### Առ Տէրն Մեր Յիսուս Քրիստոս :

ՅԱՅՆԺԱՄ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր , և բժշկեաց զնա , որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ : Զարմացան ամենայն

ժողովուրդքն՝ և ասէին . միթէ սա՞ ի-
ցէ Քրիստոսն Որդի Դաւթի ։ Բայց փա-
րիսեցիքն իբրև լուան՝ ասեն . ոչ իւիք
հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բեհեղզեբու-
ղաւ իշխանաւն դիւաց ։

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի ։ Եւ ահա կին մի Քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ , աղաղակէր և ասէր . ողորմեաց ինձ , Տէր , Որդի Դաւթի . դուստր իմ չարաչար դիւահարի ։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի . և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին . արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր ։ Նա պատասխանի ետ և ասէ . ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի ։ Եւ նա մատուցեալ երկրպագանէր նմա և ասէր , Տէր , օգնեա ինձ ։ Պատասխանի ետ նմա և ասէ . ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց ։ Եւ նա ասէ . այո , Տէր . քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց ան-



կելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ . ով կին դու՝ մեծ են հաւատք քո . եղիցի քեզ որպէս և կամիս ։ Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու ։

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ գնացեալ անտի Յիսուսի , եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց . ելեալ 'ի լեառըն նստէր անդ ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք , որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս , կոյրս , համերս , միակողմանիս , և այլ բազումս . և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա ։ Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին , զի համերքն խօսէին , կաղք գնային , միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին . և փառաւոր առնէին զԱստուածն Իսրայէլի ։

Առ Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ իբրև եկն 'ի ժողովուրդն , մատեաւ այր մի՝ 'ի ծունր իջանէր և ա-

սէր. Տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի 'ի հուր՝ և երբեմն 'ի ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոց և ոչ կարացին բժշկել: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. ո՜վ ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ. մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առ իս. և ածին զնա առ Յիսուս: Եւ սաստեաց զնա Յիսուս, և ել 'ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ: Յայնժամ մատուցեալ աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս, մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ. Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ: Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք:

---

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ 'ի յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ, աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի Դաւթի: Եւ ամբոխին սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, Տէր, ողորմեաց մեզ, Որդի Դաւթի: Զտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք, զի արարից ձեզ: Ասեն ցնա. Տէր, զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա:

# Ի ՄԱՐԿՈՍԻ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝
որ ըստ Մարկոսի ։

Տէրամբ Տէրոջ Յիսուսի Քրիստոսի ։

*Եւ մտանեն 'ի Կափառնաում. և իսկ և իսկ 'ի շաբաթուն մտեալ 'ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա ։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն ։ Եւ՛ էր 'ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր 'ի նմա, որ աղաղակեաց՝ և ասէ ։ Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես, սուրբ Աստուծոյ ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ. կարկեաց և ել 'ի դմանէ ։ Եւ զարկոյց զնա այսն պիղծ և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի*

նմանէ ։ Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին սմա ։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն Սիմօնի և Անդրեայ՝ Յակովբու և Յովհաննու հանդերձ ։ Եւ զոքանչ Սիմօնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա ։ Մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն, և պաշտէր զնոսա ։

Առ Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ 'ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն ։ Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէսպէս



ախտից, և դեւս բազումս եհան. և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս ։ Եւ գնաց զհետ նորա Սիմօն՝ և որ ընդ նմայն էին ։ Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ ։ Եւ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դեւս հանէր ։ Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ 'ի ծունր իջանէր՝ և ասէր. Տէր. եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ 'ի նա՝ և ասէ ցնա. կամիմ, սրբեաց ։ Եւ իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ. Ըն-

գոյշ լեր՝ մի՛ ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային, և մատո փոխան սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն. մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս 'ի քաղաք մտանել. այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ մտեալ դարձեալ 'ի Կափառնաում յետ աւուրց. լուր եղեւ եթէ 'ի տան է: Եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինէր և ոչ առ դրանն. եւ խօսէր նոցա զբանն: Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից: Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճսն, յորում կայր անդամալոյծն: Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն, որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ էին ոմանք 'ի դպրաց անդ՝ որ անդ նստէին. և խորհէին 'ի սիրտս իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի Աստուած: Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին 'ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրին է. ասել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն՝ և փառաւոր առնել զԱստուած և ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք:



Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր

գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա 'ի շաբաթուն, զի շարախօսեսցեն զնմանէ. Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի, անց 'ի մէջ. Եւ ասէ ցնոսա, զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել. և նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն Հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա.

Տէրն Մր Յիսուս Քրիստոս.

Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց 'ի ծովեզրն և բազում ժողովուրդ 'ի Գալիլեացւոց երթային զհետ նորա. և 'ի Հրէաստանէ և յԵրուսաղէմէ և յայնկոյս Յորդանանու, և որք 'ի Տիւրոսէ և 'ի Սիդովնէ, բազում ժողովուրդ իբրև լսէին՝ որչափ ինչ առնէր,



գային առ նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա, քանզի զբազումս բժշկեաց, մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ. Եւ այսքն պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին, թէ դու ես Որդին Աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա.

Տէրն Մր Յիսուս Քրիստոս.

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի 'ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ և բնակութիւն իւր իսկ 'ի գերեզմանս էր. ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա, վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայգ և զցերեկ 'ի գերեզմանս և 'ի լերինս ա-

ղաղակէր, և կոծէր զանձն իւր քա-
րամբք: Իբրև ետես զՅիսուս ՚ի հե-
ռաստանէ, ընթացաւ և երկիրպագ
նմա: Աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և ասէ.
զի՞ կայ իմ և քո՝ Յիսուս Որդի Աստու-
ծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ
յԱստուած, մի տանջեր զիս: Քանզի
ասէր ցնա. ել այսդ պիղծ ՚ի մարդոյ
այտի: Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ ա-
նուն է քո. և ասէ ցնա. լեգէոն ա-
նուն է իմ, քանզի բազումք եմք: Եւ
աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ
զնոսա արտաքս քան զաշխարհն: Եւ
անդ էր առ լերամբն երամակ մի խո-
զից արօտական մեծ: Աղաչէցին զնա
ամենայն դեւքն և ասեն. առաքեա ըզ-
մեզ ՚ի խոզսն, զի մտցուք ՚ի նոսա:
Եւ հրամայեաց նոցա. և իբրև ելին
այսքն պիղծք՝ մտին ՚ի խոզսն, և դի-
մեաց երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծովն.
էին իբրև երկու հազարք. և հեղձ-
նուին ՚ի ծովուն: Եւ խոզարածքն փա-
խեան, և պատմեցին ՚ի քաղաքին և
յագարակս, և ելին տեսանել զի՞նչ ի-
ցէ՝ որ գործեցաւն: Գան առ Յիսուս,
և տեսանեն զդիւահարն, զի նստէր ըզ-



գեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլե-
գէոնն, և զահի հարան: Եւ պատմեցին
նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղև
դիւահարին, և զի՞նչ վասն խոզիցն: Եւ
սկսան աղաչել զնա գնալ ՚ի սահմանաց
նոցա. Եւ իբրև եմուտ նա ՚ի նաւն,
աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա ի-
ցէ. և Յիսուս ոչ ետ նմա թոյլ՝ այլ
ասէ ցնա, երթ ՚ի տուն քո առ ընտա-
նիս քո, և պատմեա նոցա, որ ինչ մի-
անգամ Տէր արար քեզ՝ և ողորմեցաւ
քեզ: Եւ չոգաւ՝ և սկսաւ քարոզել ՚ի
Դեկապօլիս, զոր ինչ արար նմա Յիսուս.
և ամենեքին զարմանային:

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս:

Եւ իբրև անց Յիսուս միւսանգամ
յայն կողմն, ժողովեցաւ առ նա ժողո-
վուրդ բազում, և էր առ ծովեզերբն.
Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր,
որում անուն էր Յայրոս. և իբրև ե-
տես զնա՝ անկաւ առ ոտս նորա. ա-
ղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր
նորա մերձ է ՚ի մահ, զի եկեալ դնիցէ

նմա ձեռն՝ որպէս զի ապրեսցի և կեց-
ցէ ։ Եւ գնաց ընդ նմա ․ երթայր և
ժողովուրդ բազում զհետ նորա , և նե-
ղէին զնա ։ Եւ կին մի էր 'ի տեղատե-
սութեան արեան զերկոտասան ամ. և
յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց , և
ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր
ինչ օգտեալ , այլ եւս առաւել զայրա-
ցեալ ։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ , եկն
'ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար
զհանդերձէ նորա ․ քանզի խորհէր 'ի
մտի , թէ միայն մերձեցայց 'ի հանդեր-
ձս նորա , փրկեցայց ։ Եւ վաղվաղակի
ցամաքեցաւ աղբիւր արեան նորա ․ և
գիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ 'ի
տանջանացն ։ Եւ անդէն վաղվաղակի
գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւ-
նըն , որ ել 'ի նմանէ , դարձաւ յամբոխն
և ասէ ․ ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ ։
Եւ ասեն ցնա աշակերտքն ․ տեսանես
զի ամբոխդ նեղէ զքեզ , և ասես՝ թէ
ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս իմ ։ Եւ
շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞վ զայն ա-
րար ։ Եւ կինն զարհուրեալ և դողա-
ցեալ վասն որոյ գաղտն արար , քանզի
գիտէր զինչ եղեւ նմա , եկն անկաւ ա-



ռաջի նորա , և ասաց զամենայն իրսն
ստուգութեամբ ։ Եւ Յիսուս ասէ ցը-
նա ․ դուստր , հաւատք քո կեցուցին
զքեզ , երթ 'ի խաղաղութիւն , և ե-
ղիջիր ողջ 'ի տանջանաց քոց ։

Մինչդեռ նա զայն խօսէր , գան ո-
մանք 'ի տանէ ժողովրդապետին , և ա-
սեն՝ թէ դուստրն քո մեռաւ , զի՞ եւս
աշխատ առնես զվարդապետդ ․ Իսկ Յի-
սուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ՝
ասէ ցժողովրդապետն մի՛ երկնչիր ,
բայց միայն հաւատա ։ Եւ ոչ զոք ե-
թող ընդ իւր երթալ , բայց միայն ըզ-
Պետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝
զեղբայրն Յակովբայ ։ Գայ 'ի տուն ժո-
ղովրդապետին , և տեսանէ ամբոխ յոյժ
լալականս , և աղաղակ յոյժ ։ Եւ մը-
տեալ 'ի ներքս՝ ասէ ցնոսա ․ զի՞ խռո-
վեալ էք և լայք , մանուկն ոչ է մե-
ռեալ , այլ ննջէ ։ Եւ ծաղր առնէին
զնա ․ և նորա հանեալ արտաքս զամե-
նեսեան , առնու ընդ իւր զհայր ման-
կանն և զմայր , և զնոսա որ ընդ նմայն
էին , և մտանէ ուր դնէր մանուկն ։
Եւ կալեալ զձեռանէ մանկանն , ասէ
ցնա ․ տալիթա , կումի , որ թարգմա-

նի, աղջիկ դու՝ քեզ ասեմ. արի։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր. քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։

Տէրամբ Մերով Յիսուսիւ Քրիստոսիւ ։

Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարեթ։ Եւ իբրեւ ելին 'ի նաւէ անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ. և ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր 'ի գեօղս կամ 'ի քաղաքս կամ յագարակս, 'ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղանծս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

---

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս Տիւրոսի և Սիդովնի. և մտեալ 'ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել. և ոչ կարաց ծածկել։ Լուաւ կին մի ըզնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա։ Եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի դեւն հանցէ 'ի դստերէ նորա։ Եւ Յիսուս ասէ ցնա. Թող տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, և շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ։ Գնաց 'ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն. և զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճս։

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի և Սիդովնի, և եկն 'ի

ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի Դեկապօլիս ։ Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր. եւ աղաչէին զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա ։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ եւ եթուք անդր. եւ կալաւ զլեզուէ նորա. հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ եւ ասէ. Եփփաթա՝ որ է բացիր ։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա. եւ լուծան կապանք լեզուի նորա. եւ խօսէր ուղիղ ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին. եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ եւ համրոց խօսել.

Տէրունի Մերոյ Յիսուսի Քրիստոսի.

ԳԱՆ 'ի Բեթսայիդա. եւ ածեն առաջի նորա կոյր մի. եւ աղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա ։ Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին. եթուք յաչս նորա, եւ ձեռն եդ 'ի վե-



րայ նորա. եւ հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ ։ Հայեցաւ՝ եւ ասէր. տեսանեմ զմարդիկ՝ զի շրջին իբրեւ զծառս ։ Դարձեալ եդ ձեռս 'ի վերայ աչաց նորա՝ եբաց, եւ տեսանէր. ողջացաւ՝ եւ տեսանէր համարձակ զամենայն ։ Արձակեաց զնա 'ի տուն իւր՝ եւ ասէ. 'ի շէնդ մի մտանիցես. այլ երթ 'ի տուն քո, եւ յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես 'ի շինին ։

Տէրունի Մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ եկեալ առ աշակերտսն, տեսանէ ամբոխ շուրջ զնոքօք. եւ դպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա ։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա ։ Եւ եհարց ցնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա. Պատասխանի ետ մի ոմն 'ի ժողովրդենէն եւ ասէ. Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. եւ փրփրէ՝ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ ասացի աշակերտացն քո զի հանիցեն, եւ

ոչ կարացին հանել զնա ։ Պատասխանի ետ նոցա և ասէ . ո՜վ ազգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ առ ձեզ . մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ . ածէք զնա առ իս ։ Եւ ածին զնա առ նա . իբրև ետես զնա այսն , վաղվաղակի շարժեաց զնա , և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր ։ Եհարց ցհայր նորա և ասէ . քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղև դմա ։ Եւ նա ասէ . ՚ի մանկութենէ . բազում անգամ ՚ի հուր արկանէ զդա և ՚ի ջուր՝ զի կորուսցէ . արդ՝ եթէ կարող ինչ ես , օգնեա մեզ , Տէր , գթացեալ ՚ի վերայ մեր ։ Եւ Յիսուս ասէ ցնա . ասացեր թէ կարող ես , ամենայն ինչ հնարաւոր է այնմ , որ հաւատայն ։ Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ . հաւատամ , Տէր , օգնեա անհաւատութեանս իմում ։ Իբրև ետես Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն ՚ի վերայ , սաստեաց այսոյն պղծոյ և ասէ . համր և խուլ այս՝ ես տամ քեզ հրաման , ել ՚ի դմանէ , և այլ ևս մի մտանիցես ՚ի դա ։ Եւ աղաղակեաց՝ և յոյժ լլկեաց զնա , և ել . և եղև պատանեակն իբրև զմեռեալ ,



մինչև բազմաց իսկ ասել թէ մեռաւ ։ Եւ Յիսուս կալեալ զձեռանէ նորա՝ յարոյց զնա , և կանգնեցաւ ։ Եւ իբրև եմուտ նա ՚ի տուն , աշակերտքն առանձինն հարցին ցնա . մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։ Եւ ասէ ցնոսա . այդ ազգ ոչ ելանէ , եթէ ոչ պահովք և աղօթիւք ։

Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ գան յԵրիքով . և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովրդով , որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի ։ Իբրև լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է , սկսաւ աղաղակել և ասել , Որդի Դաւթի Յիսուս , ողորմեաց ինձ ։ Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ . և նա առաւել ևս աղաղակէր . Որդի Դաւթի , ողորմեաց ինձ ։ Զտեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա . կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա . քաջալերեաց , արի՝ կոչէ զքեզ ։ Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր , յարեաւ և եկն առ Յիսուս ։ Պատասխանի ետ նմա

Յիսուս և ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. րաբբունի, զի տեսից. Եւ Յիսուս ասէ ցնա, երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա 'ի ճանապարհին ։



# Ի ՂՈՒԿԱՍՈՒ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա 'ի շաբաթուն ։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա . զի իշխանութեամբ էր բան նորա ։ Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ, ասէ . Թուլացո, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ . գիտեմք զքեզ ո՛վ ես, սուրբ Աստուծոյ ։ Սաստեաց 'ի նա Յիսուս և ասէ . պապանձեաց և ել 'ի դմանէ . զգետնեաց զնա դեւն 'ի միջի անդ՝ և ել 'ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա ։ Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամե-

նեցուն . խօսէին ընդ միմեանս և ասէ-
ին . զի՞նչ է բանս այս , զի իշխանու-
թեամբ և զօրութեամբ սաստէ այսոց
պղծոց՝ և ելանեն ։ Եւ ելանէր հռչակ
զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ
զգաւառաւն ։

Տէառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ ան-
տի , եմուտ 'ի տուն Սիմովնի ։ Զոքանչ
Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ ,
աղաչեցին զնա վասն նորա ։ Եկաց առ
նմա՝ սաստեաց ջերմանն և եթող զնա .
և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր ըզ-
նոսա ։ Եւ ընդ արեւուն մտանել՝ ամե-
նեքեան , որոց էին հիւանդք 'ի պէսպէս
ցաւս՝ բերէին զնոսա առ նա ։ Եւ նա
իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր
ձեռս՝ և բժշկէր զնոսա ։ Ելանէին դեւք
'ի բազմաց , աղաղակէին և ասէին , ե-
թէ՝ դու ես Որդի Աստուծոյ . և նա
սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել ,
զի գիտէին զնա թէ Քրիստոսն է ։

---

Տէառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի
քաղաքացն , ահա այր մի լի բորոտու-
թեամբ իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ
'ի վերայ երեսաց աղաչեաց զնա և ասէ .
Տէր , եթէ կամիս , կարող ես զիս սըր-
բել ։ Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց 'ի նա
և ասէ . կամիմ՝ սրբեաց . և վաղվաղա-
կի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն ։ Եւ
նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել ,
այլ թէ երթ , ցոյց զանձն քո քահանա-
յին . և մատո պատարագ վասն սրբու-
թեան քո՝ որպէս և հրամայեաց Մով-
սէս 'ի վկայութիւն նոցա ։ Եւ յորդէր
առաւել բանն զնմանէ . և ժողովէին
ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկիլ 'ի
հիւանդութեանէ իւրեանց ։ Եւ նա խոյս
տայր յանապատ տեղիս , և կայր յաղօթս ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ եղեւ 'ի միում աւուրց՝ և ինքն
ուսուցանէր , և փարիսեցիքն և օրինացն
վարդապետք նստէին , որ ժողովեալ է-
ին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ և

Հրէաստանի և Երուսաղէմի, և զօրութիւն Տեառն էր ՚ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել ՚ի ներքս՝ և դնել առաջի նորա։ Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ՚ի ներքս վասն ամբոխին, ելին ՚ի տանիս և ՚ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ ՚ի մէջ առաջի Յիսուսի։ Եւ տեսեալ ըզհաւատն նոցա՝ ասէ ցնա. այր դու, թողեալ լիցին քեզ մեղք քո։ Սկսան խորհել Դպիրքն և Փարիսեցիքն, և ասեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստուած։ Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մե՞ղք քո, եթէ ասել՝ արի և գնա։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի Մարդոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո։ Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրն



յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց ՚ի տուն իւր, և փառաւոր առնէր զԱստուած։ Զարմանք կալան զամենեսեան, և փառաւոր առնէին զԱստուած. լի եղեն ահիւ, եւ ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան։

Տէառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ եղև ՚ի միւսում շաբաթուն մտանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի՝ եւ ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա Դպիրքն և Փարիսեցիք՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. արի՛ անց ՚ի մէջ. և նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա Յիսուս. հարցից ինչ ցձեզ. զի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, եւ հաստատեցաւ ձեռն նորա իբրև

գիւղն։ Եւ նոքա լուան յիմաստութենէն, և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցէն Յիսուսի ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ իջեալ նորա հանդերձ 'ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղէմէ և յայնմ կողմանէ՝ և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդոնի. որ եկին լսել 'ի նմանէ՝ և բժշկիլ 'ի հիւանդութենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին ։ Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա. զի զօրութիւն բազում ելանէր 'ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին ։

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ իբրև կատարեաց զամենայն զբանս իւր 'ի լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի Կափառնաում։ Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր 'ի վախճանիլ, որ էր նմա պա-



տուական ։ Եւ իբրև լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն 'ի Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ և ապրեցուսցէ զծառայն նորա ։ Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին, թէ արժանի է, որում զշնորհս զայս առնես. զի սիրէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շինեաց մեզ ։ Եւ Յիսուս գնայր ընդ նոսա. իբրև ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա. Տէր, մի ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես ։ Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի՝ առ քեզ գալոյ, այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ. քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում թէ՝ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա՝ զայս, և առնէ։ Եւ իբրև լուաւ զայս Յիսուս զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն, որ երթային զհետ նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան անդ-

րէն պատգամաւորքն 'ի տուն, և գըտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ :

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ եղեւ 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդք բազումք։ Իբրեւ մերձ եղեւ 'ի դուռն քաղաքին, և ահա հանէին մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրեւ ետես զնա Տէր գթացաւ 'ի նա և ասէ, մի՛ լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն, և որք բարձեալ տանէին՝ զտեղի առին. և ասէ, պատանի դու՝ քեզ ասեմ, արի։ Կանգնեցաւ և նըստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին, եւ փառաւոր առնէին զԱստուած և ասէին, թէ մարգարէ մեծ յարուցեալ է 'ի միջի մերում, եւ եթէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել զրոյց այս ընդ ամենայն Հրէաստան վասն նո-



րա. և ընդ ամենայն կողմանս աշխարհին ։

### Վասն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. դու ես, որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք. Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ, դու ես, որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք։ Եւ 'ի նմին ժամու բըժշկեաց զբազումս 'ի հիւանդութեանց և 'ի հարուածոց և յայսոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատասխանի ետ նոցա եւ ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէք և լուայք. զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. և երանի իցէ՝ որ ոչ գայթակղեսցի յիս ։

## Ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց, որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք. պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր 'ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր 'ի դիւէն յանապատ։ Եհարց ցնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ, լէգէոն, զի դեւք բազումք մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա երթալ յանդունդս։ Եւ անդ էր երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն, և աղաչեցին զնա զի հրաման տացէ նոցա



մտանել 'ի նոսա. և հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն. և դիմեաց երամակն 'ի դահէ անտի 'ի ծովակն՝ և հեղձաւ։ Իբրեւ տեսին խոզարածքն զիրսն, որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի քաղաքին և յագարակսն։ Եւ իբրեւ ելին տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի, և երկեան։ Պատմեցին նոցա, որոց տեսեալն էր՝ թէ զիա՞րդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքըն Գերգեսացւոց՝ գնալ 'ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապեյին. և նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա այրն, ուստի դեւքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա, արձակեաց զնա՝ և ասէ. դարձ 'ի տուն քո, և պատմեա, զոր միանգամ արար քեզ Աստուած. գնաց 'ի քաղաքն և քարոզէր, զոր ինչ արար նմա Յիսուս։

---

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս. և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտս Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից. և էր մերձ 'ի մահ։ Եւ ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս։ Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին. վարդապետ, ժողովուրդք ստիպեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս. քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծած-



կեցաւ 'ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ. մի՛ երկնչիր. միայն հաւատա՝ և կեցցէ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։ Լային ամենեքեան՝ և կոծէին զնա։ Եւ նա ասէ. մի՛ լայք, զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ. արի՛ կաց։

մանուկ դու : Եւ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի, և հրամայեաց տալ նմա ուտել. և զարմացան ծնողքն նորա : Եւ նա պատուիրէր մի ումեք ասել, որ ինչ եղեւն :

Տէրամբ Մերով Յիսուսիւ Քրիստոսիւ :

Եւ եղեւ ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում : Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ, աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ : Եւ ահա այս հարկանի ՚ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ եւ թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա. և աղաչեցի զաշակերտանս քո. զի հանցեն զնա, և ոչ կարացին : Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ո՜վ ազգ անհաւատ և թիւր, մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ. մատո այսր զորդին քո : Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն՝ և շարժլեաց : Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, եւ



բժշկեաց զմանուկն. և ետ զնա ցհայր իւր : Եւ զարմանային ամենեքեան ՚ի վերայ մեծամեծացն Աստուծոյ. և ՚ի զարմանալ ամենեցուն ՚ի վերայ ամենայնի, զոր առնէր, ասէր ցաշակերտան իւր. դիք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան :

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս :

Եւ հանէր դեւ մի համր. և եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն ժողովուրդքն : Եւ ոմանք ՚ի նոցանէ ասեն. բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս : Եւ այլք փորձէին՝ և նշան յերկնից խնդրէին ՚ի նմանէ : Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձնէ՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի : Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն, եթէ բէեղզէբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս : Եթէ

ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որ-
դիքն ձեր իւ հանիցենն, վասն այդորիկ
նոքին եղիցին ձեր դատաւորք։ Իսկ ե-
թէ մատամբ Աստուծոյ հանեմ զդեւս,
ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայու-
թիւն Աստուծոյ։ Յորժամ հզօր վա-
ռեալ՝ պահիցէ զտուն իւր, 'ի խաղա-
ղութեան են ինչք նորա։ Բայց եթէ
հզօրագոյն քան զնա 'ի վերայ եկեալ
յաղթեսցէ նմա, զսպառազինութիւնն
հանէ՝ յոր յուսացեալ էր, եւ աւար
նորա բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝ հա-
կառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ
իս, ցրուէ։ Յորժամ այսն ելանիցէ 'ի
մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս խնդ-
րէ հանգիստ. և իբրեւ ոչ գտանէ,
ասէ. դարձայց անդրէն 'ի տուն իմ
ուստի ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ
և յարդարեալ։ Յայնժամ երթայ եւ
առնու եօթն այլ այսս չար եւս քան
զինքն՝ և մտանէ բնակէ անդ, և լինի
յետինն մարդոյն այնորիկ չար քան զա-
ռաջինն։ Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս
ձայն եբարձ կին մի 'ի ժողովրդենէ ան-
տի և ասէ. երանի է որովայնին՝ որ
կրեաց զքեզ, և ստեանցն՝ որ դիե-



ցուցին զքեզ։ Եւ նա երանի այնոցիկ
է, որ լսեն զբանն Աստուծոյ, և առ-
նեն։

## Տէրն Մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ուսուցանէր 'ի միում ժողովըր-
դանոցայն 'ի շաբաթու։ Եւ ահա կին
մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս
ութուտասն. և էր կորկամեալ, և ոչ
կարէր ամենեւին 'ի վեր հայել։ Եւ տե-
սեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝
և ասէ ցնա. կին դու, արձակեալ ես
'ի հիւանդութենէ քումմէ։ Եւ եդ 'ի
վերայ նորա ձեռն, և առժամայն ուղ-
ղեցաւ, եւ փառաւոր առնէր զԱստ-
ուած։ Պատասխանի ետ ժողովրդապե-
տըն ցասուցեալ՝ թէ ընդէ՞ր 'ի շաբա-
թու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողո-
վուրդն. վեց օրէ՝ յորս արժան է գոր-
ծել, յայնս եկայք բժշկեցարուք. և մի՛
յաւուր շաբաթու։ Պատասխանի ետ
նմա Տէր՝ և ասէ. կեղծաւորք. իւրա-
քանչիւր ոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ո՞չ
արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ՝
և տանի տայ ջուր։ Իսկ այս՝ դուստր

Աբրահամու է, զոր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ, ո՞չ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Եւ զայս իբրեւ ասէր, յամօթ լինէին ամենեքին, որ հակառակն կային նմա. և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ գործէին 'ի նմանէ։

### Տէառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ եղեւ 'ի մտանելն նորա 'ի տուն ուրումն իշխանացն Փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց, և նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր մի էր անդ ջրգողեալ առաջի նորա։ Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցՕրինականսն և ցփարիսեցիս, եթէ արժա՞ն իցէ 'ի շաբաթու բժշկել. Եւ նոքա լուռ եղեն։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, և արձակեաց։ Եւ ասէ ցնոսա. ո՞ր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի 'ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ ըզնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

---

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ եղեւ մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և Գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կային 'ի հեռաստանէ, բարձին զձայն՝ և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ։ Եւ իբրեւ ետես զնոսա, ասէ ցընոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. և եղեւ իբրեւ գնացին, առժամայն սրբեցան. Մի ոմն 'ի նոցանէ իբրեւ ետես՝ թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն 'ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած. անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, և գոհանայր ըզնմանէ. և ինքն էր Սամարացի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝ ինունքն ու՞ր են։ Զի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս։ Եւ ասէ ցնա. արի. գնա. զի հաւատք քո կեցուցին զքեզ.

---

Եւ եղեւ 'ի մտանելն նորա յԵրիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն: Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ: Աղաղակեաց և ասէ. Յիսուս, Որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա եւս առաւել աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Զտեղի եառ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ ինք. և իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա և ասէ. զի՞նչ կամիս զի արարից քեզ. և նա ասէ. Տէր, զի բացցին աչք իմ՝ և տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն եաես, երթայր զհետ նորա՝ և փառաւոր առնէր զԱստուած. և ամենայն ժողովրդեանն տեսեալ տային օրհնութիւն Աստուծոյ:

# Ի ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու.

Տէրն Մեր Յիսուս Քրիստոս.

Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց 'ի Գալիլեա. Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի: Այլ յորժամ եկն նա 'ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն, զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ 'ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին 'ի տօնն: Եկն դարձեալ 'ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր 'ի Կափառնաում: Նա իբրեւ լուաւ, եթէ Յիսուս եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ նա և աղաչէր, զի իջցէ և բժ-

ժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր 'ի մեռանել։ Ասէ ցնա. եթէ ոչ նշանըս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն. Տէր, էջ մինչչեւ մեռեալ իցէ մանուկըն իմ։ Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կենդանի է. Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, եւ գընաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն եւ ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ. եւ ասեն ցընա. երէկ յօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու, յորում ասաց ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. Եւ հաւատաց ինքն եւ ամենայն տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս եկեալ 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա։

### Տէրն Մեր Յիսուս Քրիստոս։

ՅԵՏ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրուսաղէմ 'ի Պրոբատիկէ աւազանին, որ կո-



չէր Եբրայեցերէն Բեթհեզդա՝ հինգ սրահ, յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ 'ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ ութ ամ էր 'ի հիւանդութեան իւրում։ Զնա իբրեւ ետես Յիսուս, զի անկեալ դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամի՞ս ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն. Տէ՛ր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ մինչ ես գանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս. արի, առ զմահիճս քո՝ եւ գնա։ Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ՝ էառ զմահիճս իւր եւ շրջէր, եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրէայքն ցբժշկեալն. շաբաթ է, եւ ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։ Պատասխանի ետ նոցա եւ ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ

զմահճիճս քո՝ և գնա ։ Հարցին զնա և ասեն․ ո՞վ է այն, որ ասաց ցքեզ․ առ զմահճիճս քո և շրջեաց ։ Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ, քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի ։ Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ՚ի Տաճարին, և ասէ ցնա․ ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մեղանչէր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ ։ Գնաց այրն և պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զնա ։ Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրէայքն․ զի զայն առնէր ՚ի շաբաթու ։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա․ Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զնա․ զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և Հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէր զանձն Աստուծոյ ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ՚ի ծնէ, և հարցին զնա աշակերտաքըն նորա՝ և ասեն․ Ռաբբի, ո՞ւր վընաս է, սորա՞՝ թէ հօր և մօր իւրոյ, 



զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս․ ոչ դորա վնաս է, և ոչ հօր և մօր իւրոյ․ այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ՚ի դմա ։ Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ օր կայ․ գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել ։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի ։ Զայս իբրև ասաց, եթուք ՚ի գետին՝ և արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին ։ Եւ ասէ ցնա․ երթ․ լուա՛ յաւազանին Սելովմայ, որ թարգմանի առաքեալ․ չոգաւ, լուացաւ, եկն և տեսանէր ։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին․ ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ մուրանայր․ կէսքն ասէին՝ նա է․ այլքն ասէին՝ ոչ․ այլ նման է նմա․ և ինքն ասէր՝ թէ ես եմ ։ Ասեն ցնա․ իսկ զիա՞րդ բացան աչք քո ։ Նա ետ պատասխանի․ այր մի՝ որում Յիսուս անուն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս․ երթ ՚ի Սելովամ և լուա․ չոգայ, լուացայ՝ և տեսանեմ ։ Ասեն ցնա․ ո՞ւր է նա․ ասէ ցնոսա․ ոչ գիտեմ ։

Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ, յորժամ զկաւն արար Յիսուս, և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ ցնոսա. կաւ եդ ՚ի վերայ աչաց իմոց, և լուացայ՝ եւ տեսանեմ։ Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ։ Կէսքն ասէին. իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել։ Եւ էին հերձուածք ՚ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո։ Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հաւատային Հրէայքն զնմանէ՝ եթէ կոյր էր՝ և բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս բացելոյն. հարցին ցնոսա և ասեն. սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք՝ եթէ կոյր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ. Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա՝ և ասեն. գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. բայց զիա՞րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ՝ ո՞ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք, ինքնին ՚ի չափ հա-



սեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր։ Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին ՚ի Հրէիցն. քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա՝ թէ ինքնին ՚ի չափ հասեալ է, ցնա իսկ հարցէք։

Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն, որ կոյրն էր, և ասեն ցնա. տուր փառս Աստուծոյ, մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է։ Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ. զիա՞րդ եբաց զաչս քո։ Պատասխանի· ետ նոցա. այժմ ասացի ձեզ՝ եւ ոչ լուայք. զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա։ Նոքա հայհոյէին զնա՝ և ասէին. դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի աշակերտք եմք։ Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի՞ իցէ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա. այդ իսկ են բու- քանչելիք. զի դուք ոչ գիտէք ուստի ի-

ցէ, և զիմ զաչս երաց։ Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ, և զկամս նորա առնիցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ երաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա. 'ի մեղս խոկ ծնեալ ես ամենևին, և դու վարդապետե՞ս զմեզ։ Եւ հանին զնա արտաքս։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս, և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա. դու հաւատա՞ս յՈրդի Աստուծոյ։ Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, ո՞վ է՝ զի հաւատացից 'ի նա։ Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ.քեզ՝ նա է։ Եւ նա ասէ. հաւատամ, Տէր, և երկիր եպագ նմա։

ՀՀ Ազգային գրադարան
NL0957973

1
1003